



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1155295

— из книг
— Г. А. АРКЕРЬЯНА

Г. АРКЕРЬЯНЦ

Հ. ԱՐԵՐՅԱՆԸ

10240

111

ՊՈՅԻ ՔԱՌՈՒԹ

ԼԱՄԱՆՁԵՑԻ

III

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴՊՐԻ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ

Թող ցուրտ մմեռը նայէ խիստ աչքով
Երկնակամարդից աշխարհի վերայ,
Թող նա երկիրը պատէ սառուցով,—
Դարձեալ գեղեցիկ զարունը կը գայ:

Թող սեւ ամպերը ծածկեն մեզանից
Կենսատու դէմքը արեւի պայծառ,—
Կըգայ ժամանակ՝ աշխարհը քնից
Նա կը զարթեցնէ նոր կեանքի համար:
Գ. Բարխուղարեանց:

ՏՓԽԻՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՏԻՒՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1878

Յ. ԱՐԵՐՅԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ասպետութիւնը իւր առաջին օրերում մի ազ-
նիւ ու բարեգործական հաստատութիւն էր. այդպէս
անուանած կարգերը կամ ընկերութիւնները՝ կէս-կրօ-
նական և կէս-ղինուարական եղբայրութիւն էին կազ-
մում, որոնք ճանաչում էին իւրեանց մաքուր ու խիստ
բարյականութեամբ, կեանքի պարզութեամբ, ազնիւ
խօսքով ու գործքով և մի տեսակ բանաստեղծական
նահապետական ազնուաբարյութեամբ:

Ասպետութեան նպատակն էր՝ Քրիստոնեաններին
պաշտպանել մահմետականներից ու հեթանոսներից,
հիւանդներին ու աղքատներին օգնել ազատել նոցա
ամեն տեսակ նեղութիւններից ու հալածանքներից,—
մի խօսքով հալածեալներին ու թոյլերին՝ պաշտպա-
նել հարստահարողներից. նա մի բարեգործական
հաստատութիւն էր բառիս բուն նշանակութեամբ:
Ասպետ խօսքը մի բարձր բարյական արժանաւորու-
թեան արտայայտութիւն էր. շատ թագաւորներ պա-
տիւ էին համարում իւրեանց ասպետ անուն կրելը:
Ասպետութիւն ընդունելը առանձին տեսակ օրհներ-
գութեամբ ու կրօնական հանդիսաւոր արարողու-
թիւններով էր կատարում. նորանում ընդունուղը
նախընթաց ամբողջ գիշերը եկեղեցում աղօթքով էր
անցկացնում:

Ակայն ժամանակի ընթացքում այս ազնիւ կո-
չումը կերպարանափոխուեց բազմաթիւ դատարկ ու

Дозволено цензурою. Тифлисъ, 21 Февраля, 1878 года.



Tipografia Martirosianca, na Orbelianovskoy ulicē, d. №. 5.

կեղծաւոր ձեւապաշտութիւններով և այնպիսիները
անգործ ու աննպատակ սկսան թափառել արկածնե-
րի ետևեց ընկած: Երբ արդէն մահմետականները
վուանդաւոր չէին այլ ևս, հեթանոններն էլ քչացան,
պատերազմները համարեա դադարեցին, այն ժամա-
նակ սասպետները սկսան միմեանց վերայ յարձակուել
դղեակներում և մինչեւ անգամ մեծ մեծ փողոցնե-
րում և այս ու այն կողմ գեղերել թշնամու հանդի-
պերու մոտքով: Նոքա բոլորն էլ անգրագէտ էին մեծ
մասամբ, բոլորն ևս հաւատ էին ընծայում դիւթա-
կան առակներին և կախարդած դղեակների ու թա-
գուհիների մասին զըսցներին, ուստի և որոնում էին
կախարդներին, նոյա ջնջելու ու դիւթութեան զօ-
րութիւնը ոնչացնելու, որոնցով իր թէ մարդիք
կենդանիներ, ծառեր և ուրիշ նիւթեր էին դարձած
կամ թէ խոր քնի մէջ ընկղմուած: Այսպիսով լոյս
ընկան բազմաթիւ անբարոյական շրջմոլիկներ, որոնք
յայտնի էին օթափառ և կան ասպետաց անունով:
Եռուով երևեցան և նոյն բարոյականութեան համա-
պատասխան բազմաթիւ վէպեր ասպետների ու նոցա-
ծագման մասին, որոնք կոչում էին առսպետական
վէպեր» և պարունակում էին իւրեանց մէջ ամենա-
անվայելու մոռքեր, «առ ամենակրպիտ նկարագրու-
թիւններ ու պատկերներ, որոնք վերին աստիճանի
վերաբրում էին ազնիւ ու բարոյական զգացմունք-
ները: Այս հեղմնակութիւնները կարդում էին մեծ
սիրով ու պատմում միմեանց, որև աւելի էր խան-
գարում նոցա բարոյականութիւնը: Կոպտածաշակ հե-
ղինակներն ևս շահուելով այս հանգամնքից, իւ-

րեանց գլուածները լցնում էին գլուելի արարքների
նկարագրութիւններով, բողորովին ոսմակոխ անելով
նոցանում ազնուութեան, պատուի և բարոյականու-
թեան զգացմունքները: Հոգևորականութիւնը խիստ
ընդդիմացաւ ասպետական շրջագայութեան և անմիտ
ու կեղոստ վէպերի ընթերցանութեան, խրատներ
տուեց, պատիմներ սահմանեց, այլ և բանադրեց
յիշեալ գրքերի կարդացողներին, բայց ոչնչ բան
չօգնեց: Սա մի հասարակական ախտ էր դարձել որի
ջնջուելու սկիզբը Սէրվանտէսը դրաւ իւր ստորև ՔԻՆՕՏ
շարադրութեամբ:

Միգէլ Սէրվանտէս գը Սասպեդրան 1547 թուին
ծնուեցաւ ազնիւ՝ բայց աղքատ ծնօղներից հին կաս-
տիլիայում: Եւ որովհետեւ այն ժամանակները հոգե-
ւորականութիւնը հալասութեան աղքիւր էր, նորա
ծնօղքը կամեցան, որ Սէրվանտէսը եկեղեցական դառ-
նայ. բայց երիտասարդ Սէրվանտէսը, որ բաւական
օրինաւոր կրթութիւն էր ստացել իւր ծնօղներից,
խիստ սէր ուներ դէպի բանաստեղծութիւնը, ուստի
և մերժեց նոցա առաջարկութիւնը: Սակայն սպառ-
նալիքներից ստիպուած գնաց Հոռվլ մի կարդինալի
մօտ դործավարութիւն անելու, բայց դորա փոխա-
նակ սպասաւորի պաշտօն ստացաւ այստեղ որից
զգուելով մտաւ զինուորական ծառայութիւն և է-
պանտի նշանաւոր ծակատամարտի մէջ կրցրեց իւր
ձախ ձեռքը: Հայրենիքը մոաբերելով նա շուտով
տուն վերաբարձաւ նաւով, որի վերայ յարձակուելով
ծովային աւազակները, նորա միջի մարդոց, որոց
հետ և Սէրվանտէսին գերեցին և տարան Ալմիրիայ,

ուր այս վերջինը դառաւ մի պէջի ստրուկ. նորա
տէրը խիստ չարչարում էր նորան, գիշեր ցերեկ շըլ-
թայակապ էր պահում և ամեն չնչին բանի համար
պատժում էր նա, որպիսի նեղութիւնները նա կրեց
մօտ վեց տարի շարունակ: Վերջապէս մի յայտնի
կրօնական ընկերութիւն (Frères de la Merci), որ
բոլոր զոհաբերութիւնները գործ էր դնում մահմե-
դականների ձեռք ընկած գերիների ազատութեան
համար, գնեց Սէրվանտէսին, որը դարձեալ կարողա-
ցաւ Խս գանիայ տեսնել: Այնուհետեւ նա դարձեալ
զինուորի պաշտօն վարեց Պօրտուգալիայում և Ազո-
րեան կղզիներում: Նա խիստ սիրում էր գրականու-
թիւնը, բայց չքաւորութիւնը արգելում էր նորան
այդ գործով պարապել: Իւր ծառայութեամբ հասաւ
նահանգական տեսչի աստիճանին: Կասկածի տակ
ընկելով արքունի գրամը վատնելու մասին՝ բանտար-
կուեցաւ, սակայն արդարանալով ազատուեց: Այնու-
հետեւ նա սկսաւ փաստաբանութեամբ և թատրոնա-
կան զրուածներ հեղինակելով ձեռք բերել իւր օրա-
կան պարէնը: Բայց հանգամանքները նորան ամենին
ատելի արին. նա ապրում էր բոլորովին առանձնա-
ցած, արհամարհէլի էր ամենին և այդ իսկ միջոցին,
երբ արդէն Սէրվանտէսը այրական հասակումն էր,
գրեց իւր ընդարձակ Դօն Քիշօտը, որև չգիտէր թէ
ում ընծայէր. վասն զի հասարակութիւնը անտարբեր
էր, նա միայն ծիծաղում էր նորա: Հարայ. հակառա-
կորդները միայն ծաղըում էին նորան. նախանձոտ բա-
րեկամներն էլ դաւաճանում էին, և այսպէս նա մին-
չև խորին ծերութիւն աղքատ դրութեան մէջ էր և

բոլորովին մոռացութեան տրուած ամենքից: Այս էր
ահա Միգէլ Սէրվանտէսի կեանքի համառօտ պատկերը:

Սէրվանտէսը մեռաւ, բայց նորա միակ Դօն Քի-
շօտը անմահացրեց նորան. դորանով նա յաւիտենա-
կան նախատինքի ու ծաղրածութեան մատնեց աս-
պետական վայրենի վէպը: Նորա հեղինակութիւնը
կիզող կրակի նման շրջեց ամեն երկիր և ամաչեցրեց
ասպետութիւնն ու նորա մասին եղած վէպերը: Դօն
Քիշօտը նախ Խսպանիայում և յետոյ ամբողջ լուսաւո-
րեալ աշխարհում կայծակի արագութեամբ լսելի ե-
ղաւ ամենի ականջին, իսկ Դօն Քիշօտութիւնը մի խայ-
տառակ ու ծաղրալի անուն դարձաւ ամբողջ աշխարհում:

Դօն Քիշօտը աշխարհիս երեսին իւր ընթեր-
ցողների բազմութեամբ նշանաւոր տեղ բռնեց. նա
թարգմանուեց Գերմաներէն, Անգլիերէն, Իտալիերէն,
Ֆրանսիերէն, Հոլլանդիերէն, Դանիական ու Նվեդական
լեզուներով, Ռուսերէն և ահա այժմ ևս Հայերէն: Բոլոր
լեզուների բազմաթիւ թարգմանութիւնները
ունեցան և շատ տպագրութիւններ, ընդարձակ և հա-
մառօտած. Փրանսիական մի թարգմանութիւնը միայն
յիսուն և երկու անգամ լոյս տեսաւ: Անգլիայում մօտ
տասներկու անգամ թարգմանեցին այն, իսկ Ռուսաս-
տանում, որքան մեզ յայտնի է, նորա թարգմանող-
ների թիւը տասնից էլ անց է, իսկ տպագրութիւն-
ները բազմաթիւ: Յոյս ունինք, որ Դօն Քիշօտի մեր
թարգմանութիւնն էլ կարողանայ գրաւել իւր կողմ
բազմաթիւ ընթերցողներ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Դ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ

የኢትዮጵያ ቁጥራዊ ደንብ

ՀԱՄԱՆՁԵՑԻ

ՊԵՌԱՒ Ե.

Թէ ԱՎ ԷՐ ԴՕՆ ՔԻՇՈՏԸ, ԵՒ ԻՆՉՊԵՍ ԱՍՊԵՏ ԴԱՐՁԱՒ:

Խաղանիայի և ամսնշ քաղաքում մի անգամ ապրում էր մի գիւղացի ազնուական, որի ամբողջ կալողութիւնը կազմում էին մի հին նիզակ, մի ժանդուած վահան, մի լըար ձի և մին էլ որսի շուն: Նա իւր տարեկան եկամուի երեք քաւորդ մասը ծախսում էր իւր մննդի համար, իսկ մնացածով գնում էր իւր համար բարակ մահուդի կապայ, ներսից հազնելու շորեր և թաւշեայ զգեստ տօն օրերի՝ ու հաստ մահուդէ հանդերձ հասարակ օրերի համար: Նորա տանը բացի իւրեանից կային այլ ևս մի քառասնամեայ մառանապետ կին, իւր եղբօրադինկը, որ զեռ քսան տարեկան լրացած չէր և մի սպասաւոր, որ տան բոլոր ծառայութիւնները կատարում էր: Այն ազնուականը յիստն տարեկանից աւելի էր. նա ուժեղ էր, ամրակազմ ու նիշար, առաւօնները վաղ էր վերկենում և խիստ սիրում էր որսի գնալ: Նորա անունը կիխատ էր:

Եզատ ժամերին, այն է օրուայ երեք քառորդում; նա զբաղուած էր ասպետական վէպերի ընթերցանութեամբ և այս նա այն աստիճան սիրեց, որ իւրեան պատկանեալ հողերից մի քանի կտորը ծախեց, որպէս զի կարողանայ իւր համար մի լաւ դրադարան կազմել ամենաազատ հեղինակութիւններից: Նուտով նա նկատեց, որ ցերեկը կարծ էր իւր պարապմունքի համար, ուսաի և գիշերները անց էր կացնում իւր երեակայութիւնը զանսազան դատարկ բաներով լցներով: Նորա գլուխը լցուեց միայն կախարդութիւններով, կոփաներով, ձիարշաւով, պատերազմներով, վերաւորանքներով. նա այս բոլոր ստախօսութիւնները ճշմարտի տեղ էր ընդունում և միանգամայն ցնորուեց այդպիսով:

Վերջապէս նա մի անսովոր բան մտածեց, այն է թափառական ասպետ դառնալ և երկրէ երկիր թափառել արկածներ որոնելու, թշուառների պաշտպան հոչակելով իւրեան: Նա մի փոքր մոտածեց այս գեղեցիկ մոտադրութիւնը իրագործելու մասին: Նորա առաջին գործը եղաւ այն հին զէնքի մաքրելը, որ պատկանում էր նորա նախահօրը: Նա որքան կարողացաւ կարկատեց նորան. բայց աւաղ նոցանից միայն սաղաւարտն էր մնացել. նա մեծ աշխուժով մնացածներն ևս թղթից պատրաստեց. գլխարկի համար թուղթը անյարմար էր, բայց դորա առաջն առնելու համար ներսից երկաթէ թելեր ամրացրեց և այնուհետև նորան համարում էր ամենալաւ պողպատից շինուած: Նորանից յետոյ հոգաց և իւր ձիու մասին և թէպէտ նորա խեղճ նիհար ձին իսկապէս

կենդանի կմաղք էր, բայց նա չէր փոխի նորան Աղէքսանդր Մեծի Բուկեֆալի հետ: Նա չորս օր շարունակ մտածում էր, թէ ինչ անուն տայ նորան. նա կամենում էր հնչեղ ու երեելի անուն գտնել նորա համար և ընտրեց Ռօսինանտ անունը: Ինքն իւր անունը դրեց Դօն Քիշօտ Լամանշեցի, որպէս զի իւր հայրենիքին ևս բաժին տար այն փառքից, որ յոյս ունէր գտնել ինքը:

Մեր հերոսը այսպիսով բոլոր անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելով, չկամեցաւ այլ ևս յետաձգել իւր գործունէութեամ կատարումը: Միանգամ արեւաբացին նա ոտից զլուխ զինաւորուեցաւ, նատեց Ռօսինանտի վերայ և գուրս գնաց դաշտը: Նա գեռ հարիւր քայլ հազեւ էր անցել երբ խղճի խայթոցը կանգնեցրեց նորան.— նորան ոչոք չէր նուիրել ասպետական կոչման. բայց նա այս ցաւի գեղն ևս գտաւ, վճռելով այդ բանը առաջին անգամ պատահող մարդուն յանձնելու: Եւ այսպէս նա շարունակեց իւր ճանապարհը, թոյլ տալով, որ Ռօսինանտը որ կողմ կամենայ, այն կողմ տանի, ենթադրելով, որ սորանում է կայանում արկածքի ամբողջ էութիւնը:

Մտածելով ու գանդաղ կերպով առաջ գնալով, նա ինքն իւրեան ասում էր, որչափ ուրախութիւն պիտի պատճառեմ ես ապագայ սերնդին՝ իմ առաջիկայ քաջագործութիւնների պատմութեամբ: Եւ դու, ով և լինես, իմաստուն վհօւկ, որիդ բաժին կընկնի այս ճշգրիտ ու հրաշալի անցքերը գրել չմոռանաս իմ ազնիւ ձիու— Ռօսինանտին, իմ չարչարանաց հա-

ւատարիմ օգնականին, որ բաժանել է ինձ հետ բռա
լոր վտանգները։

Վ. Ես մտածման միջոցին արեւ այնպէս այրեց
նորա գլուխը, որ ուղեղը հալէր, եթէ միան գըլ-
խում մի փոքր մասն անդամ մնացած լինէր նորանից։
Նա համարեա ամբողջ օրը գնում էր, ոչ մի գէպքի
չպատահելով իւր ձեռքի ոյժը գործ դնելու համար.
Երեկոյի մօտերքը ինքն ու իւր ձին սովից նեղացած
կանգնեցին։ Չորս կողմ նայելով, որ որեւիցէ ամրոց կամ
խրճիթ գտնի ապաստանելու, նա տեսաւ մի հիւրա-
նոց և շտապով ճանապարհ ընկաւ գէպի նա։ Պա-
տահմամբ, պանդոկի գումնը կանգնած էին երկու
աղջեկներ, որոց Դօն Քիշօսը բարձր դասի օրիորդներ
կարծեց, որովհետեւ ամեն աեղ նորան էր որոնում,
ում մասին որ կարդացել էր ասպետական պատմու-
թեանց մէջ։ Այս պատճառաւ էլ նա հիւրանոցը ըն-
դունեց որպէս խրամատներով, շարժական կամուրջ-
ներով, բուրգերով ու թնդանօթի պատուհաններով
մի ամրոց։ Այդ իսկ միջոցին խոզաբաժը հնչեցրեց
իւր կոտրած եղեգնափող երամակը կանչելու հա-
մար։ Դօն Քիշօսը հաւատացրեց իւրեան, որ այդ ձայնը
իր գալուանն է հաշակում։ Նա ուրախ ուրախ մօտե-
ցաւ աղախիններին և առաց նոցա, բանալով իւր
նիհար ու թողոս գէմքը. ոմի՛ վախենաք բոլորովին,
տիկիններ. ասպետաթեան օրէնքները, որոց ես են-
թարկուած եմ, արգելում են ինձ անպատուել ում
և իցէ, բայց գերադասում են ծառայութիւն մատու-
ցանել ձեղք։ Աղախինները զարմացած՝ չկարողացան
ծիծաղը թաղյնել։ Մեր հերոսը սկսեց բարկանալ

բայց, բարեբաղդաբար, երեաց պանդոկապետը։ Սա
մի խորամանկ անդալուզացի էր, խաբերայ ու նեն-
գաւոր, ինչպէս մի ստամբակ։ Սա էլ հազիւ կարողա-
ցաւ իւր ծիծաղը պահէլ, տեսնելով Դօն Քիշօսի
օտարօտի գէմքը. բայց վախենալով, որ մի՛ գուցէ նո-
րան բարկացնի, մեծ յարգանքով ասաց նորան։

— Յարգելի՛ ասպետ, եթէ գուք ապաստանարան
էք որոնում, գուք այստեղ ամեն ինչ կ'գտնէք բացի
ննջարանից։

Դօն Քիշօսը բոլորովին բաւական բերդապետի
ազդարարութիւնից, որովհետեւ նա պանդոկապետին
բերդապետի տեղ ընդունեց, շտապով պատասխանեց։

— Բարձրապատիւ իշխող ամրոցի, ես աշխարհումն
ամեն բանով կբաւականանամ։ իմ զարդարանքս զէն-
քի մէջ է, պատերազմի մէջ գանում եմ հանգստու-
թիւն։

Պանդոկապետը տեսնելով, որ մի ցնորուած մար-
դու հետ գործ ունի, վազեց ձիու մօտ ասպանդակը
բռնելու Դօն Քիշօսի համար, որ գժուարութեամբ
ձիուց իջաւ և թոյլ էր, որովհետեւ առաւօտեանից
մինչև երեկոյեան ինն ժամը դեռ ոչինչ չէր կերել։
Ռոսինանտին իսկոյն տարան ախոռը, իսկ Դօն Քիշօսը
մտաւ սեղանատուն, ուր միտքը զրեց հանուիլ։ Բայց
նա որքան աշխատեց՝ չկարողացաւ իւր զրահների մի
երրորդ մասից աւելին հանել լսնջապահկն ու պա-
ղաւարտը գլխից հանելու հնար ձկար, վասն զի նա
նոցա կապկապել էր կանաչ ժապաւէններով, որոնց
պէտք էր կտրտել, բայց նա ոչ մի կերպ չկարողացաւ
համաձայնել այս բանին։ Նա վճռեց պմբող օրը այն-

պէս զլահաւորուած անցնել, որով մի ծաղրալի ձեռնէր նա: Այդ բանից յետոյ նորան հարցրին, կամենում է արգեօք ընթրել:

— Խիստ շատ, պատասխանեց բաց կերպով ասպետը:

Տարաբաղդաբար պաս ուրբաթ էր և ամբողջ հիւրանոցում ուրիշ ոչինչ չգտան, բացի անալիտան կաղամբի արգանակից ու բորբոնած հացից: Ծիծաղելի մի տեսարան էր, երբ նա սկսում էր հաց ուտել: Լանջապանակը չէր թողնում թեքուել և նա ստիպուած էր ամանը ամբողջապէս բերանի մօտ տանել: Խմելու էլ հնար չկար, եթէ որ պանդոկապետը չմտածէր մի երկար եղէջնի ծայրը կտրել, որով Դօն Քիշօտը կարողացաւ գինի ծծել: Կեղծ ասպետը այս ամենը համբերութեամբ տանում էր, որինչ է կանաչ ժապաւէնները չկտրտուին: Նորան մի միտք էր միայն տանջում, որ նա ասպետութեան դեռ չէր նուիրուած: Այս մտածմունքով տանջուած մեր հերոսը ընթրիքը վերջացնելով կանչեց պանդոկապետին, նորա հետ միասին փակուեց ախոռում ու ծնկաչոգ ընկաւ նորա առաջ:

— Քաջ ասպետ, գոչեց նա. ողորմեցէք խնդրեմ:

Պանդոկապետը զարմացած շատ աշխատեց նորան ոտի կանդնեցնել: բայց տեսնելով, որ ամեն բան իզուր էր, խոստացաւ կատարել նորա ցանկութիւնը:

— Ես այսպիսի մի շնորքի էի սպասում ձեզանից, պատասխանեց Դօն Քիշօտը.— Կցանկայի, որ վաղը դեռ չլուսացած դուք ասպետութիւն շնորհէիր ինձ, իսկ մինչև այն ժամանակ թոյլ տայիք

ինձ ձեր ամրոցի մատուռի մէջ պատրաստուելու այդ նոր կոչմանս համար:

Պանդոկապետը, ինչպէս արդէն ասացինք, լինելով խորամանկ մարդ, կամեցաւ զուարձանալ և պատասխանեց.

— Ես, այդ ցանկութիւնը արժանի է ձեր վեհ հոգուն և այն իրագործելու համար՝ ինձանից լաւ ոչոքին չէիք կարող գտնել: Ես արդէն մանկութիւնից նույիրած էի այդ յարդելի գործին: Մալագայի արուարձանը, Սեվելյի, Սեգովիա և Վալենսիայ փողոցները, նաւահանգստները, հրապարակները, հրապարակական զբուարանները, Տօլէդոյի յետին գինեսները բոլորն էլ իմ գործունէութեան վկաներն են: Ծերութեանս պատճառու քաշուեցայ այս ամրոցը, ուր ապաստանարան եմ տալիս բոլոր պանդուխտ ասպետներին. այժմ ես այնախիս մատուռ չընկիմ, ուր գուք կարողանայիք պատրաստուել այն հանդիսի համար. ես այն քանդեցի և շուտով նոր աւելի լաւը կշնեմ: Բայց դուք գիտէք, որ հարկաւոր դէպքում ուր և իցէ կարելի է պատրաստուել այս գիշեր այդ բանի համար կարող էք ընտրել ամրոցիս բակը, ուր ամեն կայ, ինչ որ կկամենաք: Վաղը մենք հանդէս կկատարենք: Հետներդ փող վերցրել էք, աւելացրեց նա:

— Փող, վրայ բերաւ Դօն Քիշօտը.— Ես ոչ մի տեղ չեմ կարդացել, որ ասպետը իւր հետ վերցնէր այդ անպիտան մետաղը:

— Դուք սխալըում էք, ասաց նորան պանդոկապետը. պատմիները այդ բանը չեն յիշում, ենթադրելով, որ արդէն մոքից հասկացւումէ. հաւտա-

ցէք, որ նոցանից ամեն մինը ունէր իւր լի քսակը:
Ուստի պատուիրում եմ ձեզ իւրեւ իմ որդուս ըստ
ասպետութեան, որ երբէք ջանապարհորդէք առանց
փողի. այդպէսով թէ ձեղ է օդուտ և թէ ուրիշներին: Վատ չէր լինի, եթէ ձեզ ուղեկցէր և միշրացանակիր:

Դօն Քիշօտը խոստացաւ հետեւ նորա խորհրդին և խակոյն դուբս տարաւ իւր գէնքերը դարսեց
մասուների վերայ, որոնք դրուած էին բակումը ջար-
հորի մօտ: Եւ բռնելով ձեռքին վահանն ու նիզակը
սկսեց բակումը մանգալ ինքն իւրեան խրախուսելով ու
համարձակ դիրք ընդունելով: Այդ միջոցին լուսինը
դուրս եկաւ ամպերի միջից: Այդ պանդոկում
իջևանած ջորապաններից մէկը կամեցաւ ջուր խմաց-
նել իւր ջորիներին և դուրս եկաւ տանից մասուր-
ները մաքրելու համար: Դօն Քիշօտը տեսնելով, որ
մէկը մօտենումէ իւրեան, զարհուրելի ձայնով աղաղա-
կեց.

— Զ’համարձակես գէնքերիս մօտենալ, յանդուգն,
արժան չես պրծնի, դիսես:

Ջորապանը ուշադրութիւն չդարձնելով այս
սպառնալիքներին վերցրեց գէնքերն ու մի կողմ ածեց:
Նոյն խակ բոպէին այս մեր հերոսը վահանը վայր
ձգեց և նիզակը երկու ձեռքով բռնելով խեղճի գըլ-
խին այնպէս սաստիկ զարկեց, որ նս անշարժ ընկաւ
նորա ոտների մօտ: Սորանից յետոյ Դօն Քիշօտը
վերցրեց իւր գէնքերը, սառնութեամբ դարսեց այն
բոլոր իւրեանց նախկին տեղը և նորից սկսեց ման-
գալ:

Շուտով յիտոյ միւս ջորապանը, ոչինչ չիմանա-
լով թէ ինչ էր անցել կամեցաւ նոյնպէս ջուր խմեց-
նել իւր ջորիներին և գէնքերը վերցրեց մսուրներիցը:
Դօն Քիշօտը առանց ուշացնելու լուռ ու մունջ վերց-
րեց նիզակը և բարձրացնելով այնպէս զարկեց նորա
վլխին, որ խեղճի գլուխը մի քանի տեղ բացուեցաւ.
Բայց այդ միջոցին վերաւորածների ընկերները քա-
րերով ընկան հերոսի ետելից: Դօն Քիշօտը իւր
վահանով պաշտպանուեց ամեն կողմից: Պանդոկա-
պետը տեսնելով, որ նորա հանաքները եղեռնական
զրութիւն են առսնում՝ ընկաւ ջորապանների ետե-
լից, պատմեց նոյց իւրեանց հակառակորդի խելացնու-
թութիւնը և հագիւ կարողացաւ նոյց համողել պա-
տերազմի գաշտը թունելու: Այնուհետեւ նա մօտե-
ցաւ Դօն Քիշօտին և ասաց նորան, թէ այս փորձերը
բաւական են և որ ասպետութեան կարգն ընդունելու
բոպէն հասել է: Դօն Քիշօտը առանց գժուարու-
թեան համոզուեց կեղծ ամրոցի տիրօջ խօսքերով
որը գնաց բերելու մի մատեան մէջը գտրմանի ծախ-
քերը գրած և վերադարձաւ մի տղայի հետ, որ ձեռ-
քին բռնած ունէր մի կիսայրեալ մոմ: Նորա հետ
գուրս եկան և այն երկու աղախինները, որոց մասին
արդէն մենք խօսեցինք: Այն ժամանակ պանդոկա-
պերը նոր ասպետին չոգացրեց, մի քանի խօսք մըր-
մընջաց, իբրև թէ գրքից է կարդում և ձեռքը բարձ-
րացնելով բաւական անշուք կերպով վայր թողեց
այն Դօն Քիշօտի վկին, որին այդ խակ բոպէին զար-
կեց այնտեղ գրած արով: Այնուհետեւ աղջիկներից
մէկը կապեց նորա մէջքին սուր, իսկ միւսը խթան-

ները կպցրեց: Այսպիսով Դօն Քիշօտը նուիրուած ասպետութեան ամենայն օրէնքների համաձայն, վառւած ճանապարհորդելու ցանկութեամբ՝ վազեց թամբելու իւր Ռուինանտը և հեծնելով նորա վերայ գրկեց պանդոկապետին, որն ուրախանալով նորա հեռանալով բոլորովին թողեց նորան, ոչինչ չպահանջելով նորանից:

Պլուխ Բ.

ՀՈՎԻԻՆ ՈՒ ՏԵՐԸ: ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԴՕՆ ՔԻՇՕՏԻՆ ՏՈՒՆ ԵՆ ՏԱՆՈՒՄ: ՆՈՐԱ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՅՐՈՒԻԼԻ: ՆՈՐ ԳՈՐԾԵՐ:

Լոյսը բացւում էր, երբ Դօն Քիշօտը հիւրանոցից դուրս եկաւ: Նա ճանապարհ ընկաւ դէպի իւր գիւղը, վճռելով պանդոկապետի խորհրդին հետեւելու փողի ու հրացանակրի վերաբերութեամբ, որոնցով նա անպատճառ պիտի շըջապատէր իւրեան: Յանկարծ անտառի խորքում նա լսեց ողորմելի ձայներ: — «Ո՛չ, այս ինչ բաղդաւորութիւն է, գոյց նա: Երկինքը ինձ թողլ է սալիս այժմ իսկ կատարել իմ կոչմանս ամենասուրբ պարտաւորութիւնը»: Նա անդանդաղ իւր քայլերը ուղղեց դէպի այն կողմը, ուր ձայները լսուեցան և տեսաւ մի երիտասարդ մարդ գոտից վերև բոլորովին մերկ: որ կապած էր մի կաղնի ծառից: Մի բարձրահասակ ու զօրեղ գիւղացի ծեծում էր նորան խրացով և ամեն կարկելս խրատում նորան: Ողորմե-

լին գոռում էր. մերեցէք, ներեցէք, այսուհետեւ ժրաջանութեամբ կարածացնեմ հօտը:»

Դօն Քիշօտը տեսնելով այս բարբարոսութիւնը՝ բարձրացրեց նիզակը և սպառնացով ձայնով գոռաց գիւղացուն. առխմար ասպետ, գուք անզգամի պէս էք վարւում, ձի՛ նստեցէք և պաշտպանուեցէք:

Գիւղացին տեսնելով, որ մահուան վտանգի մէջ է այն սպառազինած ձիաւորից՝ գողալով պատասխան տուեց. առէր ասպետ, այս տղան ինձ մօտ է վարձով և իմ գառներս այնպէս վատ է արածացնում, որ օր չի լինում, երբ գոնէ մի գառն չի կորցնում:»

— Այս ինձ նորա համար է ծեծում, պատասխանեց հովիւր, որ չի կամենում վճարել ինն ամսուայ ոռձիկս, ամսական եօթն րէալ: (*)

— Ես դորանից շատ և շատ քիչ եմ պարտ, վըսյ բերեց գիւղացին. այդ գումարից պէտք է հանել երեք զյու կօշիկների գինը և երկու անգամ արին թողնելու վարձը, որ հատուցել եմ նորա հիւանդութեան ժամանակ:

— Շուտով յետ արէք դորան, ընդհատեց նորա խօսքը Դօն Քիշօտը, և իսկոյն հատուցէք դորան հասանելի գումարը, ապա թէ ոչ իսկոյն կապանեմ: այդ հանելի գումարը թող փոխարինէ ձեր տուած հարուածներին:

— Տարաբաղտաբար մօտս բոլորովին փող չունիմ, ասաց գիւղացին, շտապով արձակելով հովիւն: բայց թող Անդրէսը հետս դայ տուն և այնտեղ կվճարեմ նորան բոլոր դրամը:

(*) Խապանական դրամէ: 12¹/₂ կ. (արծ.) արժովարժեամբ: Ծ. Թ.

— Աստուած մի' արասցէ, աղաղակեց հովելը. երբ
մենք ձեզանից կհեռանանք, դա իմ կաշխ կքերթի:
— Ես ոչինչ չե համարձակի ձեղ անել, աւելաց-
րեց մեր հերոսը. այս բանին երաշխաւոր կարող է
լինել նորա ինձ տուած յարգանքը. եթէ նա կեր-
դուի ասպետական տղին խօսքով, ես կթողնեմ նորան,
որ դայ հետդ և փողը հասուցանի:

Խսկոյն գիւղացին երդուեց ամենահզօր ասպե-
տական կարգերի անուններով և Դօն Քիշօտը զար-
կելով Ռօսինանտին՝ առաջ քշեց նորան:

Եթի նա անյայտացաւ նոցանից, գիւղացին ա-
սաց հովելին.

— Արի գնանք փողը տամ, ինչպէս որ կարգա-
դրեց այս նեղացածներին պաշտպանը:

— Աւ, ասաց Անդրէսը. ասպա թէ ոչ ես խսկոյն
կորոնեմ և այստեղ կբերեմ այն բարի ասպետին, որը
կպատժի ձեզ:

— Ի հարկէ. բայց վճարը աւելացնելու համար,
պէտք է պարտքն ևս աւելացնել...

Եւ քարշելով հովուին, նա դարձեալ կապեց
նորոն կաղնի ծառիցը և սկսեց այնպէս սաստիկ ծե-
ծել, որ խղճուկը զգացողութիւնից զրկուեց. Վեր-
ջապէս արձակեց նորան և ասաց.

— Գնա պաշտպանողիդ մնտ, տեսնենք ինչպէս պի-
տի նա պաշտպանի քեզ:

Վաղրէար բոլորովին ջարդուած գնաց սպառնա-
լիքներ տալով նորան, մինչդեռ նորա տէրը վտանգից
աղատուած ծիծաղից թուլացաւ:

Այդ ժամանակ մեր հերոսը շարունակում էր

իւր ձանապարհորդութիւնը, հպարտացած նորանով,
որ Ճնշել է մի խիստ անարդարութիւն: Հետեւ լով
բոլորովին Ռօսինանտի բնազգումին, որին Դօն Քիշօտը
չէր էլ կառավարում ամենեկին, նա մեքենայաբար
կարծես ուղղուեցաւ գէսի ամոռոը, երբ յանկարծ մի
փոքր հեռու երևացին մի քանի ձիաւորներ: Սոքա,
ինչպէս յետոյ երեաց, Տօլէդայի վաճառականներ էին,
որոնք գնում էին Մուրսեայ մետաքսի համար: Նոքա
վեց հոդի էին և խրաքանչեւրն էլ ամսկովանիով.
Վեց հոդի էին և խրաքանչեւրն էլ ամսկովանիով.
Նոցա հետեւում էին չորս ծառաներ ջորիներով և ե-
րկու էլ հետեւակներ, որոնք քշում էին ջորիներին:

Յանկարծ Դօն Քիշօտը երևակայեց, որ մի նոր
անցքի պիտի պատահի ինքը և ձանապարհի մէջ
տեղը կանգնելով, յանդուզն կերպով գուեց անցուոր-
տեղը կանգնելով, յանդուզն կերպով գուեց անցուոր-
տեղն. — Համարձակէք առաջ դաշւ եթէ որ թա-
փառական ասպետութիւնը ջնանաշէք իբրև աշ-
խարհիս ամենաազնիւ, ամենապատուական և ամենա-
սրբագն հաստատութիւն:

Ա աճառականները զարմացած այս խօսքերի
վերայ՝ կանդնեցան այս մեր հերոսի անսովոր կեր-
պարանքին նայելու, բայց նոցանից մինը, ամենից ան-
համբերը, շուտով ճաց:

— Ի՞նչ է խելքին զօռ տալիս այն ցնորուածը:

— Թափառական ասպետութիւնը յիմարութիւն
չէ, անզգամներ, պատասխանեց Դօն Քիշօտը, բարկու-
չէ, պատասխանեց: Դուք խսկոյն ձեր սոսախօսութիւն
ու հայհյութեան փոխարէնը կատանաք:

Ես ասելով նա նիզակը ձեռքին յարձակուե-
ցաւ իւր հետ խօսղի վերայ, բայց Ռօսինանտը սլաց

ու վայր ընկաւ իւր վերայ նստող մարդու հետ միասին, որը վահանի զէնքերի ու նոցա ծանրութեան պատճառաւ չկարողացաւ գետնից վեր կենալ: Թէպէտ և նորա ոյժը ոչինչ չէր կարողանում անել, սակայն բերանը չդադարեց, ամի փախչէք, վախկոտներ, աղաղակում էր նա.—թէ ձիս չէր վայր ընկել, ևս ձեզ բոլորիդ կարգով կպատճէի: Զորիներ քշողներից մէկը նորա հայհոյելուց ու պարծենալուց համբերութիւնը հատած՝ խլեց ասպետի ձեռքից նիզակը, կտոր կտոր արեց և նոյսնից մինը իբրև զէնք վերցնելով իւր համար՝ այն էլ կոտրտեց Դօն Քիշօտի մէջքին: Մի կտորի ջարդուելուց յետոյ վերցրեց միւսները կարգով և միայն այն ժամանակ թողեց նորան ծեծելը, երբ մեր հերոսին լաւ՝ սխտորի պէս ջարդեց: Զորապանը վերջացնելով իւր գործը՝ վազեց հասաւ միւսներին, որոնք արդէն շարունակում էին իւրեանց ձանապարհը:

Դօն Քիշօտը միայնակ մնալով՝ աշխատում էր ոտի կանգնել. բայց ջարդուած և համարեա նուազած լինելով, ստիպուած էր գետնին մնալ, և պառկելով մտարերեց իւրեան մսիթարելու համար այն ամեն համանաման նեղութիւնները, որոնք պատահել էին թափառական ասպետներին, իւր նման; Անկարելի է կրկնել այն ամեն պանդխտութիւնները, որ նա պատճում էր բարձր ձայնով, մինչև որ տեսաւ նորան նորա գիւղացի մի բնակիչ որ այդ ձանապարհով ջրաղացը հաճար էր տանում: Նա մօտենալով նորան քակեց թշուառ ասպետի կիսարեկ դիմակը, լուաց նորա երեսը և խակցն ձանաչեց նորան:

— Վահն, այս դոք էք եղել, Դօն Քիշօտ,

բեց նա. ով է ձեզ այսպէս արել: Բայց այս հարցերը ուրիշ ոչինչ պատասխան չտացան, բացի նոր յիմարութիւններից: Գիւղացին տեսնելով, որ ոչինչ խելօք բան չի կարելի իմանալ նորանից, մեծ դժուարութեամբ նստացրեց մեր հերոսին իւր իշել վերայ. յետոյ զէնքերի և մինչև անգամ նիզակի բոլոր կտորները հաւաքելով՝ կապեց միասին և բարձեց Ռօսինեանտի վերայ: Դորանից յետոյ նա մի ձեռքով ձիուբերանից բռնեց և միւս ձեռքով իշել սանձը և այսպէս մաածելով Դօն Քիշօտի դիւահարուելու վերայ՝ ձանապարհ ընկաւ դէպի գիւղը: Երբ նոքա տուն հասան, օրը մթնում էր: Դիս լացին Դօն Քիշօտին տարաւ նոցա տուն, ուր բոլորն էլ ալեկոծուած էին նորա երկարատեւ բացակայութեան պատճառաւ:

▲ աշտարար դատաւորն ու սափրիշը, Դօն Քիշօտի ամենալաւ բարեկամները՝ այնտեղ էին այդ միջոցին: Աղախինը ճշաց.

— Այս ինչ բան է, Պէրօ Պէրէս (այս էր դատաւորի անունը). ահա վեց օր է արդէն, ինչ պարոնս անյայտ կորել է. ա խ, նզոված ասպետական գրքեր. երկինքը վկայ, որ նա յափշտակուել է նոցանով:

— Ախ, պարոն նիկօլա, — շարունակեց նորա եղանակը գառնալով սափրիշին. պէտք է գիտենալ, բօրադիեկը դառնալով սափրիշին. պէտք է գիտենալ, որ հօրեղբայրս երբեմն պարապած էր լինում այս վտանգաւոր վիպասանութիւններով ամբողջ երկու օր ու գիշեր: Այն դէպքերին նա յաճախ յանկարծ վեր էր թուում տեղից, վերցնում էր սուկը և յարձակուում էր պատի վերայ, բոլոր ուժով գոռում էր, իբրև թէ աշտարակի գլխին յաղթել է ողոս հսկային

և երբ յոզնում էր, միքաժակ սառը ջուր էր խմում պատելով, որ այս թանկագին խմբչքը պարզեած է իւր վերքերը բժշկելու համար իւրեան քաղցր աչքով նայող եսկիֆ կախարդից:

—Մենք ուշադրութիւն չենք դարձնում այդ գըրքերի վնասակարութեան վերայ, ասաց դատաւորը: Վաղը ես նոցա ցոյց կտամ:

Այդ բոպէին Դօն Քիշօտին բերող գիւղացին դուռը բազիսեց: Դուռը բաց արին և տեսնելով այլանդակ Դօն Քիշօտին՝ վրայ ընկան համբուրելու նորան:

—Համբերեցէք, սառնութեամբ ասոց նոցա Դօն Քիշօտը, ինքը չկարողանալով իշեց վայր իջնել: Ես խիստ վերասորուած եմ ձիուց վայր ընկնելու ժամանակ: Պառկացրէք ինձ անկողնում և, եթէ կարելի է, բերէք ինձ մօտ մի իմաստուն կախարդ, որ բըժշկէր իմ վերքերը:

—Ահա, լսում էք, դուք աղախինը. ես ձեզ չասացի: Համբերեցէք, պարօնս, մենք առանց կախարդի էլ կրծշկենք ձեզ:

Ապետին պառկացրին անկողնում և երբ սկըսեցին վերքը որոնել ոչինչ չգտան:

—Ինձ միայն ոտնակոխ արաւ, ասաց նա. որովհետեւ երբ ես մարտնչում էի տասը զարհուրելի հսկաների հետ, ձիս վայր ընկաւ:

—Ուրեմն սորա աչքին հսկաներ են երեսում, նկատեց դատաւորը. —վաղը, առանց այլ ևս ուշացնելու, բոլոր զրքերը կայրուին:

Դօն Քիշօտին դարձեալ մի քանի հարցեր առա-

ջարկեցին, բայց նա ոչ մէկին չպատասխանեց, այլ առաջ միայն, որ նա սոված է և որ կամենում է քննել նորա ցանկութիւնները կատարուեցան:

Միւս առաւոտ, երբ ասպետը դեռ քնով կրշտանում էր, դատաւորը իւր բարեկամ սափրիչի հետ եկաւ հիւանդի տուն և պատուիրեց գրադարանը բանալ: Եղբօր աղջիկն ու մառանապետ կինը նորա հետ մտան այնտեղ. Նորա այնտեղ գտան մօտ մի հարիւր հաստ, ու բազմնթիւ մննի զրքեր, գեղեցիկ կազմած:

Վ ճռուած էր, որ պիտի բոլոր զրքերը պատուհանից դուրս ածէին, հսւաքէին միասին և կրակ տային, այլպէս էլ արին: Շուտով բակումը նոյն իսկ պատուհանի մօաից բարձրացաւ ծնէ սին և լսուեցաւ մտանապետի ձայնը, որ երկար փայտո՛ խառնելով մօխիրը՝ հիացած աղաղակեց.

—Փառք Աստուծոյ, մենք յաղթեցինք:

Այս ուրախութեան աղաղակները զարթեցըն Դօն Քիշօտին, որ իսկըն գոռաց իւր բոլոր ուժով.

—Ինձ մօտ եկեք, ինձ մօտ, քաջ ասպետներ, անարժանները իւրեանց են սեպհականացնում յաղթութիւնը:

Ամենքը վագեցին նորա մօտ և տեսան, որ նա անկողնի մօտ կուռւմ է օգի հետ, ինչպէս երազում Թափուեցան նորա վերայ և սուրը խլելով՝ հաղեւ կարողացան նորան նորից պատկացնել իւր տեղը. Այն միջոցին նա դարձաւ դատաւորին ու ասաց.

—Այս մեծ ամօթ չէ, որ վշուկի նորհքով սու-

սերամարտի գլխաւոր յաղթանակը պալատական ասւ
պետին մնաց, մինչդեռ բոլոր ծառայողները մեր կող-
մբն են:

— Միշտարուեցէք, ասաց նորան դատաւորը.
բաղդը փոփոխական է և ինչոր այսօր կորցնումես,
վաղը նոյնը ձեռք ես ձգում:

— Բերանիտ շաքար, պարոն արդարութեան նա-
խարար, պատասխանեց Դօն Քիշօտը, իսկ այժմ ինձ
բան տուէք ուտելու:

Նորան նախաձաշ տուին, որ ուտելով իսկոյն
քնեց:

Այն գիշերը դատաւորն ու սափրիչը, կամե-
նալով գալիք չարութեան ու կոռի առաջն առնելը
պատուիրեցին գրադարանի դռները սուաղել և նորա
եղքօր աղջկան սովորցրին, որ Դօն Քիշօտի հարցին՝
պատասխանեն թէ գրքերը վհուկը տարել է:

Երկու օրից յետոյ Դօն Քիշօտը անկողնից վեր
կացաւ և իսկոյն գնաց գրադարանը: Երեսկայեցէք
նորա զարմանքը, երբ նա դռներն անդամ չգտաւ:
Նա յետ ու առաջ էր գնում, պատն էր շօշափում և
ոչինչ չտեսնելով վերջապէս հարցրեց թէ ինչ է պա-
տահել իւր գրադարանի հետ:

— Մի զարմանալի բան, պատասխանեց եղքօրաղ-
ջիկը: — Ձեր բացակայութեան ժամանակ ամպի վե-
րայ նատած մի վհուկ իջաւ: Վիշապը բերում էր
նորան օղի միջով: Նա մտաւ: ձեր գրադարանը: թէ
ինչ արեց նա այնտեղ չգիտեմ: բայց մի փոքր ժա-
մանակից յետոյ նա ծխնելուզից դուրս թռաւ ու

ամբողջ տունը ծխովլցրեց: Թուշելիս նա յայտնեց, որ
Մուգնատօնն է ինքը:

— Կա Մուգնատօնը չէ, ասաց Դօն Քիշօտը, այլ
Ֆրէստօնն է: Նս նորան ճանաչում եմ: Նա իմ ամենա-
չար թշնամիս է, որովհետեւ կախարդութեամբ իմա-
ցաւ, որ նորա հովանաւորութեան տակ եղած աս-
պետը յաղթուեցաւ ինձանից:

— Իսկ և իսկ այդպէս կլինի, պատասխանեց եղ-
քօրաղջիկը: — բայց, սիրելի հօրեղբայր, ինչո՞ւ էք դուք
խառնուում այդ վէճերում ու երկրէ երկիր թափա-
ռում այդպիսի անցքերի համար....

Դօն Քիշօտը գոռալով չթողեց նորան խօսքը
վերջացնելու և սորանով բանը վերջացաւ:

Մէր ասպետը ամբողջ երկու շաբաթ անցկաց-
րեց ոչինչ չխօսելով նորա մասին, թէ մատածում է
մի նոր ճանապարհորդութիւն կատարել: Սակայն հան-
գամնները թոյլ չտուին այլ ևս ուշացնելու այդ
գործը: Նս ծածուկ խօսք առաւ իւր հարեւաններից
մէկից հետեւելու իւրեան ախոռապետի պաշտօնով:
Նա թէպէտեւ խեղճ, բայց մի ազնիւ ու կարճ խելքի
տէր մարդ էր: Մէր հերոսը նորան անթիւ խոստում
ներ տուեց: — Օթափառական ասպետը, կրկնում էր
նա նորան անդադար, շատ հեշտ կարող է կղզու վե-
րայ իշխանութիւն ձեռք բերելու: Սանխօ Պանչան
(այս էր զիւղացու անունը) զրաւուած այն յոյսերից,
վժուեց թողնել իւր կինն ու որդիքը և հետեւել մեր
հերոսին: Զի պահող արդէն զտնելով, Դօն Քիշօտը
մտածում էր միայն, որ պանդոկապետի խորհրդի հա-
մաձայն մի կերպ փող ժողովի: Նա գետնի մի մասը

ծախեց, միւսը գրաւ դրեց, բոլորը վնասով և իւր համար բաւականին փող ձեռք բերեց: Յետոյ ուղղ զելով իւր զէնքերը՝ նա Սանխօի հետ որոշեց ծանապարհ ընկնելու օրը: Նորան պատուիրեց վերցնել իւր հետ, ՚ի թիւս այլոց, և մի պարկէ Սանխօն խոստացաւ, որ չե մօռանայ այս և աւելացրեց, որ ինքը սովոր չլինելով ոտով երկար ճանապարհ գնալու, մօռադիր է վերցնել իւր հետ մի էշ—մի բարի ու զօրեղ անասուն: Էշ խօսքը մի փոքր վատ տպաւորութիւն գործեց Դօն Քիշօտի վերայ, բայց այնուամենայնիւ համաձայնեց, մսածելով, որ կտայ նորան այն ասպետի ձին, որին առաջին անգամ կյալթի ինքը:

Վերջացնելով բոլոր պատրաստութիւնները, Դօն Քիշօտն ու Սանխօն ճանապարհ ընկան գիշերը, առանց ոչ ոքին մնաս բարեաւ ասելու և այնպէս արագ հեռացան, որ առաւօտեան էլ երկիւղ չունեին, թէ կարող են հասնել իւրեանց: Սանխօ Պանչան հանգարտ առաջ էր քշում իւր էշը, որի վերայ երկու պարկերի մէջ աեղը նստած էր ինքը, (որսնցից մինքուտելու պաշարի համար էր, իսկ միւսը գինու) և անհամբերութեամբ սպասում էր, թէ երբ պիտի իւրեան կառավարչի պաշառն տան: Դօն Քիշօտը դարձեալ այն հովանի միջով անցաւ, ուր նորան այնպէս անհամբիստ արին առաջին ճանապարհորդութեան ժամանակ արեգական ճառագայթները:

Սանխօ Պանչան չկարողանալով երկար լուռթեանք համբերել խօսքը բացարեց առաջին անդամ: — Ազնիւ թափառական ասպետ, ասաց նա, խընդռ

լուռմ եմ ձեր ողորմանծութիւնից չմոռանալ այն կը զին, որ բարեհաճեցիք ինձ խոստանալ, որովհետեւ ես խիստ պատուական կերպով կկառավարեմ այն:

— Հանդիսաւ կաց, սիրելի Սամփօ, պատուախանեց նորան Դօն Քիշօտը, ես աւելի լաւ աչքով կնայեմ թաքեղ, քան թէ դու ես կարծում: առհասարակ թափառական ասպետները իւրեանց ախոռապետների ծառայութիւնները վարձատրելու համար՝ սպասում են, որ ծերանեան նոքա և յետոյ տալիս են նոցա մի որեւիցէ գաւառ, պարզեելով նոցա դքսութիւն կամ մարկիզութիւն: բայց ես, եթէ երկինքը կերպարեն մարդութիւն, վեց օրուայ ընթացքում այնպիսի մի մեծ տէրերս, վեց օրուայ ընթացքում այնպիսի մի մեծ տէրերս, վեց օրուայ ընթացքում այնպիսի մի մեծ տէրերս, վեց օրուայ ընթացքում այնպիսի մի մեծ տէրերս:

— Ուշեմ ես թագաւոր ՚լլինեմ, պատասխանեց Սանխօն, — Տէրէզա: Գիւտիերէսը — մեր մասուանապետը թագուհի կլինի, և իմ մանուկներս էլ իշխան — ինչ ֆանտներ:

— Ո՞վ կարող է գորանում կասկած տանել: — Ես, որովհետեւ կինս չի կամենայ թագուհի լինել: դքսուհի հօ երբէք չի գառնայ:

— Հանդիսաւ կաց, ամեն բան լաւ կերթայ: միայն տես որ լաւ հպատակներ ընտրես:

Այդ բանի համար յոյս ամբողջապէս ձեզ վերաց եմ դնում, ձեզպիսի բարի տէրս կատի, թէ ինչ պիտի վերցնեմ և ինչ թողնեմ:

Պլուխ Գ.

Թէ Ի՞նչՊէս ՄԵՐ ՔԱԶ ԴՕՆ ՔԻՇՈՏԸ ԱԽԱՐՏԵՅ ԻՒՐ
ԳՈՐԾԸ ՔԱՄՈՒ ԶԲԱՂԱՅՆԵՐԻ ՀԵՑ: ԱՆԵՐԿԻՒԼ ԲԻՍ
ԿԱՅԵՑՈՒ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԼԱՄԱՆՇԵՑԻ ՔԱԶ ՀԵ-
ՐՈՍԻ ՀԵՑ:

Այդ միջոցին Դօն Քիշօար հեռուից տեսաւ ե-
րեսուն թէ քառասուն քամու ջրաղացներ:
— Բարեկամ, աղաղակեց նա, բաղտը յաջողումէ
մեզ: Տեսնո՞ւմ ես այս հսկաների ժողովը:
— Ի՞նչ հսկաների:
— Այ նոցա, որոնք մեր առաջն են գտնուում, եր-
կու մղոն երկայնութիւն ունեցող ձեռքերով:
— Զգուշացէք, տէր, դոքա քամու ջրաղացներ են
և դուք ջրաղացների թևերը ձեռքերի տեղ էք ըն-
դունում:
— Հսկաներ են, քեզ ասում եմ: Նոցա աւարով
պիտի մենք հարստանանք: Ինձ համար աղօթիր,
մինչև որ ես կմենամարտեմ հակառակորդիս հետ, իմ
բոլոր ուժովս:

Այս որ ասաց նա զարկեց Ռօսինանտին ու ճշաց.
— Զփախչէք, անսպիտան վախկոսներ, ես մեն մի-
նակ ձեզ վերայ եմ գալիս:

Այդ միջոցին հողմը փեց և թեւերը պտոյտ ե-
կան:

— Ե՞ն, որքան կամենաք ձեռները շարժեցէք, դուք
փոխարէնը կստանաք:

Իսկոյն նա նիզակը վերցրեց ու յարձակուեց

առաջին իսկ ջրաղացի վերայ, որի թեւը նորան
իւր ձիով քսան քայլ հեռու շպրտեց և ջարգու-
փուր արեց նորա նիզակը: Սանխօն շտապեց եկաւ
նորա մօտ և իւր պարոնին համարեա անզգայ դժաւ,
հսկայի ձեռքի շնորհիւ:

— Հը, ասաց նա նորան, ես ձեզ չասացի թէ
դոքա քամու ջրաղացներ են: Դուք կասկածեցիք, որով-
հետեւ ձեր գլուխը ջրաղացի վրայ է պտոտում:

— Ասիր, սիրելի Սանխօ. պատերազմական գոր-
ծում երբեմն պէտք է հնագանդուիլ բաղադի կամքին,
մանաւանդ երբ մեզ հալածում է զօրեղ կախարդ
Ֆրէստօնը, որը գողացաւ իմ գրադարանը: Այս հըս-
կաներին նոյն իսկ նա դարձրեց քամու ջրաղացներ,
որպէս զե ինձ յաղթութեան փառքից զրկի: Բայց
մի փոքր էլ սպասիր: Սուրս կյաղթի վերջապէս նոցա
չարութեանը:

— Թօող այդպէս լինի, պատասխանեց Սանխօն, օգ-
նելով նորան նստելու Ռօսինանտի վերայ, որին էլ
ուսն էր քերձուել:

Դօն Քիշօտը ճանապարհ ընկաւ կապիցի ճա-
նապարհով, կասկած չտանելով բալորովին, որ այնտեղ
ուր շատ անցուորներ են եղած, խիստ շատ անցքեր
կարող են պատահել: Նա խիստ ցաւում էր, որ նի-
զակից զրկուեց:

— Միտո գալիս է, ասաց նա, կարդացել եմ մի
խսպանացի ասպետի մասին, որ իւր սուրբ կոտրելով
կուռի մէջ, կտրել էր կաղնի ծառից մի հաստ ճիւղ
և նորանով այնքան մալիներ է սպանել որ նորան
անուանել են ապանոց: Նս էլ կամենում եմ նորան նմա-
նել: Մեզ որ առաջին անգամ կաղնի կպատահի, կպա-

տահի, կկտրեմնորանից ինձ համար մի Ճիւղ և այն զէնքը ինձ կրաւականանայ այնպիսի երևելիք քաջադրծովթիւններ անելու, որ նոցանով աշխարհը կդարձանայ:

— Աստուած տայ որ այդպէս լինի, ասաց Սահնան, բայց մի փոքր ուղղուեցէք, դուք բոլոսովին թեքուել էք տեղից:

— Խոստովանում եմ, որ վայր ընկնելիս ես մի փոքր վիրաւորուել եմ, և եթէ ցաւս չեմ յայտնում, այդ նորա համար է միայն, որ թափառական տապետներին արգելուած է գանգատել թէպէտե նոցակիսեն մէջ տեղից:

— Սատանան գիտէ, եթէ այդ բանը թափառող զինակիրներին էլ արգելուած է, չզիտեմ թէ ինչպէս պիտի ես այդ բանը կատարեմ: Ես առաջուց արդէն ասում եմ որ, եթէ մի փոքր մասս կտրեն՝ իսկոյն գժի պէս կդուռամ ես: Բայց, տէր, ի՞նչ էք կարծում, ճաշելու ժամանակը չէ:

— Ես քաղցած չեմ, իսկ եթէ դու կամենում ես կարող ես ուտել:

— Սանիսն թոյլ չտուեց կրկնելու: Նա նատեց իւր իշխ վերայ, պարկից հանեց առաջուց պատրաստած ուտելիքի պաշարը կամաց կամաց գնալով իւր տիրոջ ետելից՝ սկսաւ անօթից իւր ծարաւը յագեցնել և այնպէս զուարձովթեամբ ուտել, որ անցորդների աւարժակը բաց էր անում:

Մթնեց: Այդ գիշերը դօքա անցրին ծառերի տակ: Դօն Քիշօար կոտրեց ծառից մի հանտ Ճիւղ և ամրացրեց նորա վերայ իւր նիզակի երկաթը, որ

ինքը կարողացել էր ազատել: Նա ամբողջ գիշեր չքնեց, այլ իւր երեւակայութեան առաջ պատկերացնում էր թափառական ասպետներին: Իսկ Սանիսն քնեց մինչև արեգակի դուրս գալը և այնպէս քաղցրը քնով, որ արեւի ճառագայթներն անգամ, որոնք ուղղակի ընկան նորա աչքերի վերայ՝ չկարողացան նորան զարթեցնել: Դօն Քիշօար ատիպուեցաւ բարձր ձայնով հինգ թէ վեց անգամ ձայն տալ նորան: Աշխատասէր զինակրի առաջին հոգոր եղաւ շշեց մի փոքր ճաշակել: Բայց ցաւօք սրտի նկատեց, որ նա առաջուանից խիստ թեթեացել էր: Իսկ ինչ վերաբերում է քաջ Դօն Քիշօտին, այն մեծագործութիւնները, որոց մասին նա ամբողջ գիշեր մտածել էր, ըստ երեւութիւն բաւական էին նորս ախորժակին բաւականութիւն տալու: Նորա դարձեւալ ճանապարհ ընկան և շղատով հեռուից նկատեցին Լապիցէ քաղքը:

— Եյ այնտեղ Սանիսն բարեկամ, գոչեց Դօն Քիշօար, — այնտեղ մենք կարող ենք ձեռքերը կօխել այն բանի մէջ, ինչ որ կոչում է արկածք: Բայց ամենից առաւել մտքումդ պահիր, որ գու երբեք չպէտք է սուրդ տեղիցը շարժեն, թէպէտ ինձ ամենազարհուրելի վահնդ լինի սպառնում: Դու այն ժամանակ միայն կմենամարտես, երբ ինձ վերայ յարձակուողները քեզպէս ստոր արարածներ կլինեն: Բայցի այդ գեպքից, ուրիշ ժամանակ արգելում է քեզ իմ գործերում խառնուիլ:

— Հանդիպ կացէք, պատմախանեց Սանիսն: Երբեք ձեր ոչ մի հրամանը սորա պէս ճշութեամբ

Հեմ կատարի: Ես խաղաղասէր բնաւորութիւն ունիմ և աղմուկից ու կռուից փախչում եմ: Սակայն ես ոչ ոքի չեմ թոյլ տայ, որ քեզ ձեռք տան, այլ իսկըն բռնովս պատասխան կտամ նորան:

— Այդ բանի հրաման տալիս եմ քեզ: Սակայն քո բնական քաջութիւնդ քեզ պահիր:

— Օ՛հ, հանգիստ կացէք, կպահեմ այս, հաւատացէք, որ ձեր կարգադրութիւնը ճշտութեամբ կկատարեմ:

— Այդ իսկ միջոցին Դօն Քիշօտը տեսաւ անցնելիս երկու բենեդիկտեան կրօնաւորներին, որոց նա միասապատ ուղարկեր կարծեց: Նոքա իւրեանց հետ ուշ նէին հովանոցներ և ձանապարհի դիտակներ: Նոցա ետեից գնում էին երկու ծառաներ և անցնում էր մի կառք, շրջապատած չորս թէ հինգ ձիաւորներով: կառքում նստած էր մի բիսկայեցի տիկին, նա գնում էր Սէվիլիսց իւր մարդու մօտ, որը մտագիր էր գնալ Ճնդկաստան: Երկու բենեդիկտեանները թէպէտե նոյն ձանապարհով հետեւում էին նոցա, բայց այն տիկինը խմբից հեռու էին: Դօն Քիշօտը նոցա տեսնելով՝ առաց իւր զինակրին.

— Կամ ես սաստիկ խաբուած եմ և կամ սա մի նոր հրաշալի անցք է: Այս սև երկոյթները, որոնք դէպի մեղ են գալիս, անպատճառ կախարդներ պիտի լինին, որոնք յափշտակել են մի իշխանուհի և տառ նում են նորան գերի այս կառքով: Անգատճառ պիտի աղատենք նորան:

— Է՛հ, պարոնս, ինչե՞ր էք ատում, այսոել ի՞նչ երկոյթներ կան: Նոքա միայն երկու կրօնաւորներ են,

իսկ գերուած իշխանուհին— ձանապարհորդ տիկին: Իզուր բարի Սանխօն աշխատում էր նորան համովել. Դօն Քիշօտը արդէն հեռու էր և գնում էր բենեդիկտեանների մօտ. Ձանապարհին կանգնելով՝ նա հպարտ հպարտ ձայն տուեց.

— Է՛յ, դուք, այն աշխարհից եկողներ, իսկոյն ազատ թողէք այն երեւելի իշխանուհիներին, որոց դուք ակամայ փախցնում էք, իսկ եթէ ոչ պատրաստ կացէք ձեր չարագործութեան արժանի պատիժը ստանալու:

Իշարի կրօնաւորները զարմացած կանգնեցրին խրեանց ջորիները:

— Պարոն ասպետ, պատասխանեցին նոքա, մենք միւս աշխարհից չենք գալի, այլ ձանապարհորդ Բենեդիկտեան կրօնաւորներ ենք և չգիտենք, թէ ոյս կառքում ովէ, գերած իշխանուհի թէ...

— Լաւ անգամ չեմ կամենում ձեր դատարկ խօսքերը, ընդհատեց նոցա խօսքը Դօն Քիշօտը. պաշտպանուեցէք:

Եւ իսկոյն նա յարձակուեց կրօնաւորներից մէկի վերայ այնպիսի կատաղութեամբ, որ խեղճը հազիւ կարողացաւ ջորուց վայր իջնել: Նորա միւս ընկերը վախեցած քշեց իւր ջորին և որքան կարողացաւ շտապով հեռացաւ դէպի դաշտը:

Սանխօն տեսնելով, որ կրօնաւորներից մինը ջորուց վայր թռաւ գետին, ծածուկ վայր իջաւ իշեց ու յարձակուելով Բենեդիկտեանի վերայ սկսաւ մերկացնել նորան. Երկու ծառաները հարցրին թափա-

ռական զինակրից, թէ ինչու է կրօնաւորի շորերը
հանում:

— Կորա համար, որ սա ինձ է պատկանում օրէնքով պատասխանեց Սանխօն. Մեծն Դօն Քիշօտը յաղթութիւնը տարաւ և պարզ բան է, որ յալթուածների շորերը ինձ են պատկանում:

Ծառաները, որոնք ծանօթ չեն անպետական օրէնքներին, վրայ ընկան Սանխօն, վայր ձգեցին գետին, մի լաւ ծեծեցին և ամբողջ մօրուքը փետեցին:

Սակայն բենեդիկտեանը երկիւղից նստաւ իւր ջորու վերայ և շտապեց միանալու իւր ընկերօջ հետ, որը դաշտի մէջ տեղ կանգնած նայում էր այն անցքին: Նոքա երկուն էլ չսպասելով անցքի վերջանալուն՝ երեսները խաչակնքելով շարունակեցին իւրեանց ձանապարհը:

Եյդ միջոցին Դօն Քիշօտը շտապով մօտեցաւ կառքին և դռնակի մօտ կանգնելով հետեւալ խօսքերով ողջունեց Բիսկայեցի տիկնօջ.

— Դուք աղատուած էք, տիկին, այս ձեռքը պատժեց ձեզ յափշտակողների յանդզնութիւնը: Դուք, անկասկած, կիամենաք իմանալ ձեր աղատողի անուշը. իմացէք ուրեմն, որ ես Դօն Քիշօտ Լամանշեցին եմ, թափառական ասպետը:

Բիսկայեցի ձիաւորը, որ ուղեկցում էր կառքին, լոեց այս գեղեցիկ խօսքերը, առանց նոցանից մի բան հասկանալու. վերջապէս ձանձրանալով նորա շտամիութիւնից մօտեցաւ Դօն Քիշօտին և ձգելով նորան նիզակից ասաց տհաճութեամբ.

— Գնա, հեռացիր, ասպետ. իմարարիչ Աստուածը վկայ, որ եթէ մեզ հանդիսաւ չես թողնի, տեղնուտեղը կսպանեմ քեզ:

— Անզգամ, պատասխանեց Դօն Քիշօտը. եթէ դու ասպետ լինեհիր, ես կպատժէի քո անամեթութիւնը:

— Ես ասպետ չեմ, վրայ բերաւ ուղեկիցը, այլ Բիսկայեցի ազնուական. դու սուտես խօսում, վասնորոյ խկոյն սուրդ ու նիզակի վայր ձգիր:

Այս խօսքերից յետոյ Դօն Քիշօտը վայր ձգեց նիզակը, մերկացրեց թուրը, վահանը կրծքին կացրեց և համարձակ վրայ ընկաւ Բիսկայեցու վերայ, որ հազիւ կարողացաւ իւր սուրը հանել և վահանի վոհուրելի մենամարտութիւն:

Վոյսջին անգամ Բիսկայեցին այնպէս զարկեց մեր հերոսին, որ եթէ վահանը չլինէր՝ երկու կէս կլինէր. բայց սուրը կողքանց դիպաւ ուսին, կարսեց բոլոր զէնքերը, սաղաւարտը և կէս ականջը: Սորա համար Դօն Քիշօտը մի սուր աղաղակ պրձակեց, ասսպետութեան պահապան հրեշտակ, ասաց նա. աօդնիր ինձօ: Այս խօսքերն ասելով՝ նա սուրը բարձրացրեց և կայծակի արագութեամբ յարձակուեց բիսկայեցու վերայ: Հարուածը զարհուրելի էր: Մեր հերոսի սուրը կայծակի պէս ընկաւ հակառակորդի պլիսին: Չնայելով որ նա բարձով պաշտպանուած էր, այնուամենայնիւ հարուածը. այն աստիճան ուժգին էր, որ իսկոյն արիւն վագեց գժբաղդ բիսկայեցու քթից, բերանից ու ականջներից: Նա ձեռքերը ձգեց, ոտները ասպանովակներից հանեց, իսկ նորա վախե-

ցած ջորին խրտնելով ու աքացելով վայր ձգեց նորան գետին: Դօն Քիշօտը խսկըն Ռոսինանտից վայր թռաւ, վազեց նորա մօտ և սրի ծայրը ուղղելով նորա դէմքին՝ հրամայեց նորան անձնատուր լինել, սպառնալով հակառակ դէպքում խեղդել նորան: Թշուառ Բիսկայեցին այն հարուածից այնպէս խլացել էր, որ ձայն չկարողացաւ հանել: Եւ Դօն Քիշօտը յիրաւի կատաղած լինելով չէր խնայի նորան, եթէ կառքում նստող տիկինը, որ մինչև այդ ժամանակ այս մենամարտութեան նայելով դողումէր, չշտապէր ողորմութիւն հայցել յաղթողից իւր ծառայի համար:

— Աեանքն իւրեան եմ պարզեռում, պատոսխանեց հերոսը հպարտութեամբ, եթէ միայն դուք էք կամենում այդ, մեծապատիւ տիկին: Թող նա շահուի այն ողորմութեամբ, որին արժանի չէ նա իւր յանդրդնութեան պատճառաւ: Միայն մի պայման եմ առաջարկում նորան, այն է, որ նա ամեն տեղ հրատարակի իւր յաղթուելու ամօթը և յաղթողի մեծաշորութիւնը:

Գլուխ Դ.

Դօն Քիշօտի ՈՒ ՍԱՆԻՕ ՊԱՆՉԱԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ, ՆՈՅԱ ԳՆԱԼԻ ՀՈՎԻՒՆԵՐԻ ՄՈՏ ԵՒ ԱՅՆՏԵՂ ԲՆԱԿՈՒԼ:

Սանիօն, որ հազեւ ազատուեց Բենեդիկտեան կրօնաւորների ծառաների ձեռքից, ականատես էր նոյա մենամարտութեանը, Դօն Քիշօտի համար աղօթելով Աստծուն: Երբ նա յաղթութիւնը տարաւ,

տեսնելով որ պատրաստում է, ձի նստելու, Սանիօն ծնկաչող ընկաւ նորա առաջ և ասաց.

— Տէր իմ, եթէ դուք կամենաք ինձ տալ այժմեան նուածած կղզին, ես ամենից լաւ կկառավարեմ նորան:

— Բարեկամ Սանիօն, պատասխանեց Դօն Քիշօտը, մինչև այս օրս մեղ գեռ ոչ մի այնպիսի դիպուած չի պատահել, որով կարողանայի կղզի ձեռք բերել սուքա միայն հասարակ մենամարտութիւններ էին, որոնք յաճախ նորանով են վերջանում, որ մենամարտողները վերադառնումեն տուն զլիները պատռած կամ ականջները կտրած: Փոքր էլ համբերիր. միւս անգամ կստանաս խոստացած:

Սանիօն սրտանց շնորհակալութիւն արաւ նորան, նորից համբուրեց նորա ձեռքը և օգնելով նորան ձի նստելու՝ իւր իշով սկսաւ հետեւ նորան: Անյնելով մի փոքր տարածութիւն, մեր հերոսը մեծանապարհից շեղուեց և մտաւ անտառը:

— Ողորմած տէր, ասաց նորան զինակիրը. ես այնպէս եմ կարծում, որ վատ չէր լինի եթէ մի անվետանգ տեղ քաշուեկիք դուք: Դուք այն խեղճին, որի հետ կռւում էք, խիստ ողօրմելի դրութեան մէջ թողիք, և եթէ կառավարութիւնն իմանայ այս բանը, մեղ կարող են բանտարկել և Քրիստոսն աշխարհ կը գայ, մինչև որ մեղ կազմատեն:

— Լոիր, վրայ բերաւ Դօն Քիշօտը, ովք է իմացել որ թափառական ասպետին համարձակեն դատատի ենթարկել: Ոչնչեց մի՛ վախիր, սիրելիս, նոյն իսկ Սանիօն Գէրմանութեան *) էլ որ մեր գէմը գայ,

*) Ոստիկանական վարչութիւն, որ հսկում էր բաղարի ներքին ապահովութեան վերայ:

Նորան էլ գերի կվերցնեմ: Բայց ասա ինձ, երբ և իցէ
քո կարդացած ասպետական գլուխի մէջ տեսել ես
արդեօք ինձանից քաջն:

— Ճշմարիսն ասեմ, պատասխանեց Սանխօն, ես
այդպիսի բան երբէք չեմ կարդացել որովհետեւ ես
բոլորովին կարդալ չգիտեմ: Բայց, տէր, ականջդ
չփաթաթեն: Նորանից խիստ շատ արիւն է գուրս
դալիս, ես էլ բարեբաղդաբար, պարկիս մէջ ծուատ
(փիլթայ) էլ ունիմ ու սպիտակ սպեղանիք էլ:

— Մեղ այդ բոլորը աւելորդ կլինէին, եթէ ես
չմոռանացի պատրաստել մի արկղիկ կախարդական բա-
լասան:

— Այդ ի՞նչ գեղ է:

— Այդ բալասանով, որի շնորհ ես զիտեմ, կարե-
մի է ամեն տեսակ վերքեր բժշկել և մինչև անդամ
մեռածներին էլ կենդանացնել: Նրբ ես այն կատա-
րատեմ, Սանխօ բարեկամ, և կտամ քեզ պահելու
այն ժամանակ, եթէ երբ և իցէ մի կռուի մէջ ինձ
կտրուած տեսնես, բաւական կլինի միայն, որ դու
մարմնիս մի մասը վերցնես գետնից և կպցնես միւ-
սն արինը գեռ չսառած ժամանակ, աշխատելով,
որ կարելոյն չափ լաւ կալցնես նորանց. Նորանից յե-
տոյ ինձ կիմացնես այն բալասանից մի քանի կաթիլ
և ես իսկոյն կկենդանանամ և կլինեմ ամբողջ ու ան-
վենաս առաջուայ պէս:

— Ո՛հ, եթէ այդ ճշմարիս է, ես մեծ ուրախու-
թեամբ իսկոյն կհրաժարուիմ կղզու կառավարչու-
թինից և ամեն վարձապութեան փոխարէն կիսնդ-
րեմ միայն, որ այդ բալասանի շնորհ սովորցնէք: Ես

հաստատ համոզուած եմ, որ նորա իւրաքանչիւր
ունցը երեք բէալով կարող եմ ծախսել և այդ բանը
կարող է ամբողջ կեանքս ապահովացնել: Բայց, տէր,
թանգ չի՞նստի արդիօք ձեր բալասանի շնելը;

— Երեք բէալով վեց շնեց շտո կարելի է շնել:

— Պատմեցէք ուրեմն այժմ իսկ նորա շնելու ձեր,
որպէս զի կարողանայինք երկու կամ երեք շեշ շնել
նորանից:

— Այս գաղտնիքը դեռ ոչինչ չէ, ժամանա-
կով աւելի երեւելները կիմանաս: Այժմ ականջս
փաթաթիր. սրբամն էլ աշխատում եմ ոչինչ տեղ գնել
այնու ամենայնիւ ցաւը խիստ աստիկ է:

Սանխօն պարկից հանեց սպեղանիքն ու ծուատը.
բայց երբ Գօն Քիշօտը տեսաւ, որ իւր սաղաւարտը
ջարդած է, քիչ մնաց որ գժուէր: Նա սկսաւ յի-
մար յիմար դուրս տալ և երդուել, որ ամեն իւր-
եան պատահած ասպետներին կոպանի, մինչև որ
կտանի մի նոր սաղաւարտ նոյնկան ամուր ու թան-
կաղին, ինչպիսին էր և այն, որից այժմ զոկուեց:

Վերջապէս Սանխօն մի փոքր հանգստացրեց
նորան:

— Բարեկամ, այն ժամանակ ասաց նորան Գօն
Քիշօտը. — տես պարկումդ ուտելու ի՞նչ ունիս, որով-
հետեւ մենք զիշերս կիջևանենք մի որեւէ ամրոցում
ու բալասանը կապատրաստենք. ուղիղն ասել ականջս
խիստ ցաւում է:

— Ճշմարիսն ասեմ հետո մի քանի կտոր հաց, սոխ
ու պանիր ունիմ. բայց այդպիսի հասարակ կերակուր

չեմ համարձակում ձեզ պէս քաջ ասպետին առաջ չարկել:

— Բարեկամ, դու ինձ լաւ չես ճանաչում: Իմաց ած կաց, որ թափառական ասպետները ճաշում են միայն թագաւորների պատուական ինչոքներում: Մնացած բոլոր ժամանակ՝ նոքա կերակրում են մոտած մունքով: Բայց որովհետև ամեն բանից յետոյ նոքա մի փոքր էլ պիտի սնունդ ստանան, ուստի և պէտք է ենթալրել որ անտառներում ու անապատներում, ուր նոքա անցնում են, խոհարաններ չկան և նոցա կերակուր կազմում է միայն որևէ մի հասարակ կերակուր, որպիսին օրինակ դու ես առաջարկում ինձ: Ուրեմն թող մենք էլ նոցա օրինակին հետևենք:

— Եթէ այդպէս է, տէր, ուրեմն պարկս ասպետական օրէնքներին համաձայն կերակրներով կցնեմ: Ձեզ համար չոր պտուղներ կպատրաստեմ, իսկ ինձ, իրեն մի հասարակ զինակիլա՝ որեիցէ մի բան, որ կարողանայ ինձ կշուացնել միայն:

— Ո՞վ է ասում, որ մենք իրը թէ ստիպուած ենք միայն պտուղներ ուտել, արդարեւ ասպետների պարզ կերակուրը նոքա էին, ինչպէս և մի քանի տեսակ բանչ ջար, որոնց նոքա լաւ էին ճանաչում և ես նոյնպէս լաւ եմ ճանաչում:

— Փառք Աստուծոյ. որքան ուրախ եմ, որ դուք այն բանջարները ճանաչում էք, որովհետև ես նախազդում եմ, որ նոքա երբ և իցէ մեզ պէտք կդան:

Այսպէս խօսելով միմեանց հետ մեր բաղտախնդիրները կազդուրեցին իւրեանց՝ փառաւոր ընթրիքով: Յանկանալով գիշերը հանգստանալու տեղ

դանել իւրեանց համար, նոքա շտապեցին. սակայն, չնայելով դորան, մութը ստիպեց նոցա ապաստանարան որոնել այն հօվուական խրձիթներում, որ նոքա նկատեցին իւրեանցից մօտիկ: Այս անգամ էլ նոքա ստիպուած էին գիշերը առանց քնելու անցկացնել իւրեանց ամրոցում:

Հովհները այս մեր հերոսին ուրախութեամբ ընդունեցին. Սանխօն Ռոսինանտի ու իշխ թամբերը ծածուկ վերցնելով շտապեց այնտեղ, որտեղից խորո չած այծենու հոտ էր բուրում: Բարի զիւնակիրը մի ագահ հայեացք ձգեց նորա վերայ և անհամբերութեամբ սպասում էր, թէ երբ պիտի հովհները միար կրակից վերցնեն և դնեն՝ գորգի փոխանակ գետնին փռած կաշուի վերայ: Երբ այս զիւնական ընթրիքը պատրաստուեց, բոլոր բարի հովհները, որոնք թուով վեց էին, բարեկամարար հրաւիրեցին իւրեանց հիւրերին նստելու իւրեանց հետ: Աւելի յարգելու ու լաւ տեղ տալու համար Դօն Քիշօտին, լագանը կործեցին և մեր հերոսին նստացրին նորա վերայ: Սանխօն կանգնեց նորա ետել և պատրաստ բռնեց ձեռքին մի մեծ եղջերէ անօթնորա ծարաւը յագեցնելու համար: Ասպետը տեսնելով նորան այն գրութեամբ, ասաց նորան. — որպէս զի քեզ հասկացնեմ, Սանխօն, թէ ասպետութիւնը որքան ընտիր յատկութիւններ է պարունակում իւր մէջ, և ինչպէս ամեն ոք, որ նորա հետ որեիցէ յարաբերութիւն ունի, նա էլ յարգ ունի, ցանկանում եմ, որ դու ինձ հետ միասին նստես, որպէս զի դու

քո պարոնիդ հետ համաթռւած լինիս և ուտեսու
խմբն նորա հետ միասին:

— Հնորհակալ էր, ոզօրմած անը, պատասխանեց
Սանիսոն, բայց թող միայն գուք ոչինչ բանի կարեռ
բութիւն չընկենաք, իսկ ինձ առելի հաճելի է միայ-
նակ ուտել, կանգնած, քան թէ ձեզ պէս մի նշա-
նաւոր անձնի մօտ նատիրծ. բաց ասեմ, ես մի անկիւ-
նում նստած անշուք կերպով մեծ ախորժակով կու-
տեմ սև հացի մի կոոր սոխի հետ, քան թէ ձոխ
սեղանի մերայ խորոված հնդկահաւ, ուր կամաց
պիտի ծամեմ, քիչ իմեմ, շրթունքներս պիտի սրբ-
բեմ, և չպիտի համարձակեմ հազել կամ փոշտալ
որբան ել կադիքը ստիպելիս լինի:

Դեհ, բաւական են դատողութիւններդ, նստիր
մեզ հետ, և նորա ձեռքից բանելով՝ Դօն Քիշտոր
բռնի նստեցրեց իւր կողքին:

Հօվիները ոչինչ չհասկանալով այս խօսակցու-
թիւնից՝ լուս ու մունջ լսում էին, ուտելով և նայե-
լով իւրեանց հիւրերին, որոնք երբեմն բռն մեծու-
թիւն ունեցող մաս թիքէք էին կուլ տալիս: Երբ միաը
կերան վերջացրին, յետոյ բերին քարի պէս կարծք
սրմնիր ու շատ ընկցոց Ընթրելու ժամանակ եղջերէ
ահազին անօթը ձեռքէ ձեռք էր պատում, այնպէս
որ վերջը զինով լիքը երկու տկարներից՝ միայն մինը
մաց լիքը:

Դօն Քիշտոր լաւ կշտանալով, մի բուռն ընկոյզ
վերցրեց ու ուշադրութեամբ նայելով նոցա՝ աղա-
զակեց.

— Երջանիկ էր այն դարը, որին մեր հայրերը ու-

կեայ էին անուանում, չք թէ նորա համար, որ ոս-
կին, մեր երկաթեայ դարի կուռքը, այն ժամանակ
շատ առաջ էր, և ոչ էլ նորա համար, որ նորան
այն ժամանակ աւելի հեշտութեամբ էին հանում
երկրի խորքից. բայց միայն այն պատճառուած, որ այն
ժամանակ չգիտէին երկու վեասակար բառեր. — Ի՞ն ու
քանը, որոնք երկաստակութիւն են ձգում աշխարհին
մէջ: Այն գեղեցիկ դարումը ամենայն մարդ համար
սար իրաւունք ունէր երկրիս բոլոր բարիքների վերայ:
Վեանքը պահպանելու համար բաւականանում էին
միայն ծառի հասած համեղ ստուլներով: Նոցա աշ-
ուողջարար ըմպելիքը առուների ու ալյեւրների մա-
քուր ջուլն էր: Աշխատանէր մեղուները նոցա առաս
մեղը էին տալիս, որը նոքա շինում էին ծաղիկներից:
Տներին ու պալատներին փոխարինում էին հասարակ
խոճիթներ: Աշխարհիս վերայ թագաւորում էին խա-
ղաղութիւն ու սէր: Ոչ ոք չէր մտածում խարէու-
թիւն անելը ստախօսութիւնը անյայտ բան էր: Ար-
դարագատութիւնը ոչ կողմնապահութիւն էր ճանա-
չում և ոչ կաշառք: Այս երկու հրեշները յետազայ
դարերում ծնուեցան և մարդոց սրահը սաստիկ թոյն
լինելով խեղիցին բնական արդարութիւնը: Այժմ
բարեղոյծը, որ ամեն տեղ ատելի է, ապաստանա-
րան չէ գտնում: Յանցանքը տիրապետում է ամեն
կորմ: Աւանդ մոլութիւնների զարհուրելի յառաջա-
դիմութեան ոռեաջն առնելու, այլ և անմեղութիւնը
պաշտպանելու համար, ստիպուեցան հաստատել թա-
փառական ասպետութիւն, որի միակ նպատակն է
այրիներին պաշտպանել և որբերին օգնել: Ես այդ

կարգին եմ պատկանում, իմ սիրելի բարեկամներ, և
խնդրեմ ընդունէք իմ ամենաջերմ շնորհակալութիւնս
այն բարի ու քաղցր ընդունելութեան համար, որ
դոք ցոյց տուիք ինձ և իմ զինակրիս:

Հասարակ ընկուղով լի բուռը յիշեցրեց մեր
ասպետին ոսկէ դարը և առիթ տուեց հովիւներին
գեղեցիկ մաքեր լսելու, որոնցից նոքա ոչինչ չհասկա-
ցան: Սանիսօն լուռ էր, սակայն ժամանակը՝ ի զուր
չէր կորցնում: Նա անդադար ոտում էր ընկոյզ ու
պանիր, մի կողմից աչքը տնկելով գինու միւս տրկ-
ճորի վերայ, որը մօտիկ կախած էր ծառից սառցը-
նելու համար:

Դօն Քիշօտը վերջացնելով իւր խօսակցութիւնը,
կամեցաւ նորից շարունակել երբ Սանիսօն, որի քունը
աւելի էր տանում, քան թէ ուզումէր լսել ընդդի-
մացաւ նորան.

— Զերդ ողորմածութիւնը մոռացել է, ասաց նա
նորան, որ այս բարի մարդիքը ամբողջ օրը աշխա-
տել են և այժմ պիտի հանգստանան:

— Հասկանում եմ քեզ, Սանիսօն, գինով լեքը տրկ-
ճորին նայելուց դլուխտ ծանրացել է:

— Եկորութիւն, պարոն, չէ որ մենք ամենքս հա-
ւասար ըափով խեցինք այս գինուց:

— Համաձայն եմ, պատասխանեց հերոսը. բայց եթէ
կամենում ես գնա քնիր. իմ կոչման մարդիք միշտ
արթուն են մնում: Քնելուց առաջ ականջս փաթա-
թիր:

Հովիւներից մէկը վերքը տեսաւ և հաւատաց-
րեց Դօն Քիշօտին, որ իւր տուած գեղով նա շու-

տով կրծշկուի: Ճշմարիտ որ նա բերեց րօղմարինի
(խնկունի)(*) մի քանի տերեւ, տրորեց աղի հետ և գրեց
վերքի վերայ. շուտով ցաւն անցաւ: Յետոյ Դօն Քի-
շօտը առանձնացաւ իրածիթներից մէկի մէջ քնելու,
իսկ նորա զինակիրը, պառկելով իշե ու Ռօսինանտի
մէջտեղը յարդի վերայ, ձգուեց ու քնեց, յողնած
ու միւնյն ժամանակ կշտացած մարդու պէս:

Պատուի Ե.

Դօն Քիշօտի կՌԻՒԾ ԶՈՐԱՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ: ՀԻԽՐԱՆՌ-
ՑԻ ԱՆՑԲԸ: Դօն Քիշօտը ՅԱՂԹԻՈՒՄ է, ԻՍԿ ՍԱՆ-
ԽՕՆ ԾԱՂՐԻՈՒՄ:

Միւս օրը մեր ասպետն ու նորա զինակիրը մնաս
բարեւաւ ասելով իւրեանց հիւրասիրողներին՝ Ճանա-
պարհ ընկան դէպի անտառը և հասան այնտեղ:
Նոքա ամբողջ երկու ժամ անցնումէին անտառի մի-
ջով, երբ յանկարծ մտան մի գեղեցիկ մարդագետին,
որ ոռոգւում էր պարզ աղըիւրով: Մեր Ճանապար-
հորդները զմայլելով այն տեղի գեղեցկութեամբ՝ վայր
իջան զետին, Ռօսինանտին ու իշեն թողին ազատ
արածելու և իւրեանք նստելով թարմ կանաչ խոտի
վերայ, պարկից հանեցին ուտելիքի պաշարը ու սկսան
ուտել այնտեղ: Սանիսօն, քաջ Ճանաչելով Ռօսինանտի
խաղաղասէր բնաւորութիւնը, չկապեց նորան. այլ
թողեց այնտեղ մօտիկ արածող գալխիական ձիաների
մի խմբի հետ, որոց պահապաններն էլ նոյն մարդա-

(*) անուշանու թուփ է, որ դրծ է դրում բժշկականու-
թեան մէջ:

գետնի վերայ էին սովորական կերպով նախընթրելու
համար:

Ուստինանար տեսաւ թէ չէ իւր բարեկամներին,
չնայելով իւր չեղ բնութեանը, ցանկացաւ արշաւել
նոցա կողմք: Խմբյն առաջ քաշեց նա իւր նիշար
պարանոցը, ուրախ ուրախ առաջ վագեց և սկսաւ
թռչոտել գալիսիական ձիաների շուրջը, որոնք, անս
կսսկած, աւելի ուտելու կարիք ունենալով քան թէ
խաղալու ախորժակ, աքացեցին նորան և սմբակնե-
րով ու ատամներով փառաւոր վիրաւորեցին: Այս
տեսնելով պահապանները, վաղեցին եկան այն-
տեղ ու պակասը լրացնելու համար երկաթապատ
դադանակներով այնպէս ջարդեցին խեղճ Ռօսինանտի
կողքերը, որ սա փռուեցաւ գետնին:

Սակայն Դօն Քիշօտն ու Սանխօն շտապեցին
այն թշուառ զոհին օգնելու, սրերը մերկացըրին ու
ընկան պահապանների վերայ, որոնք, շըջապատելով
մեր հերոսներին, պատասխանեցին իւրեանց սովորա-
կան մահակներով: Առաջ առաջ Սանխօն վայր ըն-
կաւ գետին: Դօն Քիշօտը, չնայելով իւր թեթևու-
թեան ու քաջութեան, շուտով հետեւեց նորան և
մնկաւ Ռօսինանտի ոտնելի մօտ: Ձիապանները վա-
խենալով այն բանից, որ շատ խիստ են պատճել նո-
ցա, շտապով հաւաքեցին իւրեանց ձիաները և խկոյն
հեռացան: Ամենից առաջ ուշքի եկաւ տիսուր Սան-
խօն և թռյլ ու ողորմելի ձայնով ասաց,

— Աղորմանց տէր, Դօն Քիշօտ:

— Ի՞նչ ես ուղում, բարեկամ Սանխօն, պատա-
խանեց ասպետը, նոյնքան ողորմելի ձայնով:

— Զի՞ք կարող ինձ միքանի կաթիւ տալ այն ըն-
տիր կենդանաբար բալասանից: Նա օգտակար է, չէ,
ջարդու փշուր արած ոսկրներին:

— Ե՛հ, սիրելի բարեկամ, եթէ ես այդ գեղը հետա-
ռունենայի, մենք աւելի բան չէինք ուզի: Բայց երդ-
ւում եմ թափառական ասպետի պատուով, որ երկու
օրից ոչ ուշ ես կպատրաստեմ այն, եթէ միայն ձեռ-
քերս կարող կլինին շարժել:

— Երկու օրից յետոյ: Խակ ի՞նչ էք կարծում,
քանի՞ օրից յետոյ մեր ոսները գործելու կարողու-
թիւն կատանան:

— Ճշմարիտն ասեմ ինքս էլ չգիտեմ այդ բանը,
պատասխանեց ծեծուած ասպետը, խորը ախ քա-
շելով: Ա՛լս, թափառական անպետների առաքինու-
թիւնը շատ անդամ ծանր փորձերի է ենթարկուում:
Երեկու հանդիսի առաջին օրը շատ անդամ նոցա
մերձ՝ ի մահ դրութեան մէջ են ձդում:

— Երանի միայն ինձ դեռ չսպանէին, մինչեւ
որ ես կստանայի ձեր խոստացած կղզու կառավա-
րութիւնը:

— Դու այն կստանաս, Սանխօն բարեկամ, կստա-
նաս: Բայց այս բոլոր խօսակցութիւնը թողնենք ե-
տեսնենք թէ Ռօսինանար ի՞նչ դրութեան մէջ է, ոյս
զարհուրելի դիպուածքից նա էլ մասն և բաժին
ունեցաւ:

— Ճշմարիտ է, նա էլ ասպետներից պակաս չէ
թափառում: Ինձ այն բանն է առաւել ուրախացնում,
որ էշ առանց մի հարգուած անդամ կրելու պա-
տուեց այս դէպքից:

— Պորանից իմացիր, որ ամենամեծ թշուառութեանց ժամանակ էլ բաղզը մեզ ուղղուելու միջոց է տալիս: Ուսինանտի գժբաղտութեան պատճառաւ եւ անպատւութիւն չեմ համարում ինձ նստել քո իշխ վերայ և այնպէս գնալ մինչև մի որևէ ամրոց, ուր նորա վէրքերը կիաթաթենք. միտս դալիս է, մի տեղ կարգացել եմ, որ Բագոսի^(*) դաստիարակ Սիլէնը^(**) մի գեղեցիկ իշխ վերայ նստած հանդիսաբար մտել է երեկելի թէրայ քաղաքը: Աւրեմն, թող ես էլ նստեմ քո իշխ վերայ և մինչև մթնելը աշխատենք դուրս դալ այս անապատից:

Թշուառ զինակիրը վերջին ճիզը թափեց գետնից վեր կենալու համար. նա անդադար հառաչելով ու ախ քաշելով, վերջապէս ինչպէս և իցէ կարողացաւ ոտի կանգնել և գետնին կորացած սկսաւ գնալ. այսպիսի գժուարութեամբ նա հասաւ իւր իշխն, որը մանդալով մարգերի մէջ՝ ուրախութեամբ խոտ էր ու տում: Յետոյ Սանխօն բարձրացրեց Ուսինանտին, որ, իւր տիրոջ պէս, ծեծուելուց նուաղել էր. վերջապէս զինակիրը, որից քրտինքը առուի նման թափւում էր, Դօն Քիշոտին պառկացրեց իշխ վերայ, նորա պոչից կապեց Ուսինանտին և սանձը ձեռքն առնեւ.

(*) Հին հեթանոսների չասուածն էր, որի մասին զանազան աւանդութիւններ կան. Գիորդոս Սիկիլիացին ասում է, որ թէ յոյները եւ թէ՛ ուրիշ հեթանոս ազգերը պաշտում էին նորան, որովհետեւ նա ամեն տեղ, իր թէ, մտցնում էր գինեգրծութիւն, սոլորցնում էր իսպովը ջրացնելու արհեստը. նա կոչում է, ողինու չասուած: “

(**) Բագոսի դաստիարակն էր, որ ծեւակերպում է հարրած մարդու նման, իշխ վերայ նստած:

Ըսվ Ճանապարհ ընկաւ: Երեք քառորդ ժամից յետոյ նոքա մտան մի հիւրանոց, որին մեր հիւրոսը իւր սովորականի պէս ամրոցի տեղ շնորհնեց, չնայելով որ Սանխօն պնդում էր թէ հիւրանոց է:

Ա էջը զեռ շարունակուում էր, երբ զինակիրը իւր օտարոտի ուղեկիցներով ներս մտաւ զոնից:

Պանդոկապետը տեսնելով Դօն Քիշոտին իշխ վերայ պառկած, իսկոյն Սանխօն հարցրեց, թէ ինչով է նա հիւրանդ: Սանխօն պատասխանեց, թէ շատ հասարակ բան է նորա տկարութիւնը. այն է, որ նա բարձր սարից զլորուել է և ջարդուել է նորա կողքերը: Պանդոկապետի կինը պատահմամբ մի բարեսիրտ կին էր: Նա իսկոյն շտապեց Դօն Քիշոտին հարկաւոր օգնութիւնը հասցնել նորան էլ այդ բանում օգնում էր աղախինը, որի պատկերը իսկոյն կնկարացրենք: Նա լայն ու տափակ գէմք ունէր, քիթը ջարդուած էր, աչքերից մինը շիլ էր, միւսը ծուռ. երեք ոտնաչափ բարձրութիւն ունէր, և նորա ուսերը, որնք ծուռը կերպով միաւորւում էին նորան միշտ ցած պարանոցի հետ, ստիպում էին նորան միշտ նայել: Նորա անունը Մարիտորնա էր:

Այս գեղատեսիլ անձը օգնում էր պանդոկապետի կնօջը Դօն Քիշոտի վերքերը փաթաթելիս. յետոյ նոքա վերնատանը մի քանի անհաւասար բարձրութիւն ունեցող աթոռների վերայ մի քանի տախտակ գարսելով պատրաստեցին նորա վերայ անկողին նորա համար. մահիձը նոյն իսկ տախտակից էլ պինդ էր. իսկ բաստեռը աւելի կաշուի նման էր՝ քան թէ կտաւի:

Եյս հնոտի մահճումը քնեց Դօն Քիշօտը,
գլխից մինչև ոտք գեղերով փաթաթածած:

— Եղիկպարոն, ասաց Սանիսօն պանդոկապետի
կոջը. խնդրեմ մի փոքր սպեղանի էլ ինձ համար
պահես. կարծես իմ մէջքս էլ ջարդուած է.

— Ալթէ դու էլ վայր ընկար:

— Ո՛չ միայն ես տեսայ տիրօջս վայր ընկնիլը և
այնպէս վախեցայ դորանից, որ ամբողջ մարմինս կո-
տըռտուեց, կարծես թէ մէջքիս հազար անդամ մա-
հակով հարուածներ լինեին տուած:

— Բայց ի՞նչպէս է ձեր տիրօջ անունը, ընդհա-
տեց Մարիտօրնան:

— Դա Դօն Քիշօտ Լամանչեցին է, թափառական
ասպետը, մինը իմ տեսած բոլոր ամենաազնիւ ու ամե-
նաքաջ մարդկանցից:

— Թափառական ասպետ, այդ ի՞նչ նշանակում:

— Դա այնպիսի մի մարդ է, ծանր կերպով պա-
տասխանեց Սանիսօն, որ ամէն լուսէ պատրաստ է
կամ տիրապետող ախտղս և կամ գաւաղանի հա-
րուածներ ստանալու:

Դօն Քիշօտը, որ ուշադրութեամբ լսումէր այս
խօսակցութիւնը, մտտծեց, որ քաղաքավարութիւնը
պարտաւորում է իւրեան՝ խառնուելու նոցա խօսակ-
ցութեան մէջ, և ասաց.

— Անձապատիւ տիկիններ, ձեր բաղկը բերեց
բնձ այսուելձեր սպալատը: Հարցրէք իմ դիմուկիս և
նա կաէ ձեզ, թէ ես ով եմ. իսկս ինձ չեմ կարող
գովիլ, այլ միայն չորդհակալութիւն կանեմ ձեզ ինձ

տուած յարգանքի համար, որ երբէք ես չեմ մո-
ռանալ:

Արիտօննան և տանտիկինը այս խօսքերից ո-
չինչ չասկացան. սակայն ենթադրելով, որ ասպետը
կամենումէր պատուել նոցա, նոքա էլ յարգութեամբ
պատասխաննեցին, և խօրը զլուխ տալով՝ վերնատանից
դուրս գնացին:

‘Սոյն վերնատանը, ուր պառկացըին Դօն Քիշօ-
տին՝ ջորապաններից մէկը իւր համար անկողին պատ-
րաստեց իւր ջորինների թամբերից և այն, մեր աս-
պետի անկողիցն էլ լսւ: Սանկուին շատ հաճոյ
թուաց այն, որ և առանց խօսելու գնաց պառկեց
նորա մէջ և քնեց:

Աւկայն Դօն Քիշօտը, որի խելքն ու միաքը
միայն արկածների ու զիւթութիւնների կողմն էր, բո-
լորովին չկարողացաւ աչքը կպցնէլ: Ամբողջ հիւրա-
նոցում ամենքն էլ խորը քնուծ էին. միայն բակի մեծ
գոնից կախած լապտերը լուսաւ որում էր այնտեղ: Այդ միջոցին ջորապանը, որ ջորիններին գարի էր բա-
ժանել գնումէ էր քնելու և չկամենալով հարւաննե-
րին զարթեցնել առանց ձրափի ու կամաց գնաց: Նա
զգուշութեամբ էր գնում, որ ոչ մի աեղ դէմ չընկնի: Դօն Քիշօտը, որ շարունակ ականջ էր գնում, իսկոյն
երեակայեց, որ նորա մօտ գալիս է կախարդ Ֆրէս-
տոնը, նորա վերայ կատարութեամբ յարձակուելու
համար: Ամսնորոյ անկողից վերկենալով, չնա-
յելով որ կապկած էր և ցաւ էր զգում, ձեռքը
մեկնեց, որ բոնի թշնամուն և նորա հետ կատաղի
կերպով պատերազմէ: Ջորապանը ընկաւ նոյն խոկ ան-

կողմի մօտ մեր ասպետը իսկոյն վըայ ընկնելով նուրան, գոռաց.

— Ա երջապէս բռնեցի քեզ, անզգամ. այժմ դու իմ գերիս ես:

Ջորապանը կամենում էր դուրս ուղղուել, բայց ջորապանի նորան բռնելով համար արած ջանքերից համբերութիւնը հասնելով, սկսաւ իւր բոլոր ուժով բռնցքով զարկել և սարսափելի հարուածներ տալ մեր ասպետին, այն էլ ուղղակի ատամներին։ Սորանով չքաւականանալով նա վեր թռաւ մահճակալի վերայ և իւր երկաթապատ կրնկներով սկսաւ ջարդուափուր անել մեր Դօն Քիշօտին։ Մահճակալը չդիմանալով այս կրկին ծանրութեան, ձրծոաց, կոտրտուեց և ընկաւ գետին։ Բաւականացած իւր արածից՝ ջորապանը սկսաւ իւր անկողինը որոնել վերմակը բարձրցրեց և կամեցաւ պառկել բայց դորան արգելք եղաւ Սանխօն, որ խոր քնով քնած էր։ Կատաղելով այդ բանից, նա դորան էլ մի քանի փառաւոր հարուած տուեց։ Սանխօն զարթնելով և քունը գրւիխն մտածելով, որ երազ է տեսնում, սկսաւ բռնցքով այս և այն կողմ զարկել որից ջորապանը համբերութիւնը կորցնելով, լաւ ջարդեց խեղճ զինակրիքիթն ու պռունզը, այնպէս որ Սանխօն շուտով բռլրովին զարթնեց։ Երբ սա տեսաւ, որ իւր հետ այդպէս են վարւում և ինքն էլ չգիտենալով թէ ինչո՞ւ հոմար, վըայ ընկաւ իւր հակառակորդին, բռնեց նորան իւր երկու ձեռներով և դոցա մէջ մի ծիծառելիք տուր ու գրմիոց բացուեց, որպիսին ոչ ոք տեսած չէ։

Այս աղաղակը գրաւեց պանդոկապետի ուշադրութիւնը. նա լաւուերը վառեց, վերնատուն վագեց և կամեցաւ նոցա բաժանել միմեանցից. սակայն այն շարժութեան մէջ ձրագը հանգաւ և դորահամար աղմուկը տեկի սաստկացաւ։

Այդ գիշեր այդ հիւրանոցում գիշերում էր և մի մարդ ոստիկանութեան մէջ ծառայող. նա երբ մի աղաղակը, վերկացաւ, վերցրեց իւր ձեռնաւուց այս աղմուկը, վերկացաւ, վերցրեց իւր ձեռնաւուց փայտը, պաշտօնական գրութիւններով լի երկաթէ թիթեղեայ արկը և այն մթնում ընկնելով պատերազմի դաշտը, սկսաւ աղաղակել։

— Վանզնեցէք, հրամայում եմ ձեզ թագաւորի և Սանտա Գերմանդադի անունով։

Ունից առաջ նա նկատեց Դօն Քիշօտին, որ անզգայ ընկած էր անկողնի աւերակների մօտ։ Այն մթնումը նա բռնեց նորա մօրուքից և զգալով, որ նա չէ շարժեւում, աւելի բարձր աղաղակեց։

— Դուները փակեցէք, այստեղ մարդ են սպանել։

Այս խօսքերից ամենի ահը բռնեց։ Խազոյն կռիւը վերջացաւ։ Պանդոկապետը իւր սենեակը մօտաւ, Սանխօն վազեց իւր տիրոջ մօտ։ անկողնի վերայ մնաց միայն ջորապանը։ Աստիճանաւորը կամենում էր գնալ ձրագ վառել յանցաւորներին գտնելու համար, բայց պանդոկապետը ներքեւ իջնելով հանդցրեց բակի դռնից վակիսած լապտերը, այնպէս որ նա ստիպուած էր վառարանից ձրագը վառել որի վերայ մի ամբողջ ժամը շարչարուեցաւ ածուխներին փշելով։

Այդ միջոցին Դօն Քիշօտը մի փոքր ուշքի դարձով, սկսաւ ողորմուկ ձայնով ասել.

— Աիրելի Սանխօ, քնած ես, իմ սիրելի Սանխօ:
— Ե՛հ, ինչպէս կարելի է քնել պատասխանեց
Սանխօն բարկացած, երբ բոլոր դժուսային ոյժերը
իմ վրայ թափուեցան:

— Ո՛հ, մի կասկածիր: Ես գիտեմ և ասում եմ
քեզ ո՞ւ մենք այստեղ կախարդական ամրոցումն ենք:
Ես զարհուրելի դրութեան մշջն եմ անսպիտան ֆրէս-
տօնի ձեռքից, որ օգուտ քաղելով իմ թուլ դրու-
թինից, դաւաճանութեամբ յարձակուեց ինձ վերայ
և հարուածներով սպանեց:

Այս իսկ րոպէին ներս մտաւ աստիճանաւորը,
որին վերջապէս յաջողել էր ճրագը վառել: Առաջ
Սանխօն նկատեց նորան և մատը մեկնելով դէպի նա,
ասաց Դօն Քիշօտին.

— Աս չէ կախարդ Ֆրէստօնը, որ դարձեալ զա-
լիս է մեր կողքերը ջարդելու համար:

Սակայն զինուորականը մեռածի փոխանակ տես-
նելով երկու կենդանի մարդ, որոնք հանդիսաւ խօսում
էին միմեանց հետ, մօտեցաւ Դօն Քիշօտին և հարց-
րեց:

— Ե՛յ, տօ, դու ո՞վ ես:

— Ի՞նչ անքաղաքավարի ես, պատասխան տուեց
մեր հերոսը. այդպէս կիսուն թափառական ասպետ-
ների հետ:

Աստիճանաւորը, որ կռուահը բնութիւն ու-
ներ, բարկացաւ և ձեռքի լապտերը բոլոր ուժով զար-
կելով թշուառ ասպետի զլսին, դուրս դնաց:

— Այս անդամ, գույց Դօն Քիշօտը, քեզ հետ հա-
մաճայն եմ, բարեկամ Սանխօ. այս նենդաւոր մարդը
ոչ ո՞վ ոք է, բայց եթէ իմ անհաշտ թշնամի կա-

տաղի Ֆրէստօնը: Բայց վերկաց ու գնա այս ամրոցի
ափոջեց մի փոքր ձեթ, աղ գինիուռ բօղմարին խընդ-
րիր. ես իսկոյն կամենում եմ ամենապատուական բա-
լասան շինել, որով մենք մի ռոպէի մէջ կառողջա-
նանք:

Սանխօն իսկոյն հնագանդուեց. սակայն պան-
դոկապետին որոնելով նա պատահեցաւ աստիճանաւո-
րին, որ դռների մօտ ականջ էր դնուեմ:

— Ողորմած տէր, ասաց նա նորան. դուք, ո՞ւ որ
էք, բարեհաճեցէք մեզ մի փոքր բօղմարին, աղ
գինի ու ձեթ տալ աշխարհիս ամենալաւ թափա-
ռական ասպետներից մէկին բժշկելու համար, որին
ծանր վերաւորել է կախարդ Ֆրէստօնը:

Վատիճանաւորը լսելով այս խօսքերը՝ կարծեց
թէ Սանխօն յիրավի ցնուուելէ: Սակայն նա կան-
չեց պանդոկապետին և առ ուրոխութեամբ տուաւ
այն ամեն իրերը, որ պահանջել էր ասովեար: Սան-
խօն այս բաները շուապով տարաւ տուեց իւր տիրօջը,
որ այն բոլորը միասին խառնելով՝ պատոփիրեց որ
եփեն: Այսպիսով պատրաստած լմզելիքը ածեցին
մի երկաթէ անօթի մէջ, որով միշտ իւղեր պահում
պանդոկապետը: Յետոյ Դօն Քիշօտը մի քանի խօս-
քեր միմնջաց այս անօթի վերայ, հետը միասին ա-
մենաանձունի կերպով ծուրուելով և անհամբերու-
թեամբ ցանկանալով այս դեղի զօրութիւնը փորձել
միանդամից կուլ տուեց բոլորը:

Այս գեղը շատ շուտ ներգործեց նօրավերայ և
նա իսկոյն պահեց: Գործնից յետոյ կիսու քրանեց և
երեք ժամ այնպէս քաղը քնկց, որ մեր ասպետը

երբ զարթնեց, համարեա բոլորովին առողջ էր: Այսու
շետե աւելի համզուեց, որ իւր կենդանացնող բա-
լասանովը կարող էր արձակ համարձակ ամեն վտան-
գըն արհամարհել: Սանխօն զարմացած այն գեղի ա-
րած ներգործութեան վերայ՝ իսկցն խնդրեց իւր տիրօջ,
որ ամանում մնացած գեղը իւրեան տայ: Դօն Քի-
շօտը համաձայնեց դորան և Սանխօն համարեա նոյն-
չափ խմեց նորանից, որքան և մեր հերոսը: Բայց,
՚ի հարկէ, նա շատ թոյլ էր զինակրի համար: Խեղձը
այնպէս սաստիկ փսխեց և ցնցեց, որ գլորուելով գետ-
նի վերայ և կարծելով, որ այն է յետին դրութեան
մէջ է, սկսաւ հայհոյել բալասանն էլ ու խաբողին էլ,
որ իւրեան սուտ գեղ տուեց:

— Բարեկամ Սանխօ, ծանրութեամբ ասաց նորան
Դօն Քիշօտը. այդ միայն նորանից պատահեց քեզ
որ գեռ ասպետ չես: Հաւատացիր, որ այդ գեղը միայն
ասպետներին է օդուակար:

— Ինչո՞ւ ուրեմն դորա մասին առաջուց չխմացրիք
ինձ, ասաց Սանխօն տանջուելով. ինձ միսիթարելու
ժամանակ էք գտել, հա:

Սակայն Դօն Քիշօտը իւրեան բոլորովին առողջ
զգալով, չկամեցաւ մի րոպէ անգամ կորցնել, այլ շուա-
պեց արկածների ետեկից ընկնելու: Նա ինքը գնաց
Ռօսինանոր թամբելու. էշն էլ թամբեց և ինչպէս և
իցէ նստացրեց նորա վերայ իւր զինակրին, որին օգ-
նեց նոյնպէս և հաւելեիս: Ցետոյ ձի նստելով, նա
ձայն տուեց պանդոկատիրօջ, որ իւր ընտանիքով և
մօս քսան ուրիշ մարդկերանցով շրջապատած զար-
մացած և ուշադրութեամբ նայում էր նորան:

— Պարոն բերդապետ, ասաց նա նորան ծանր ու
յաղթական կերպով. երբէք չեմ մոռանալ ես ձեր
հիւրասիրութիւնը: Բարեհաճեցէք ինձ ասել, թէ որ-
եկցէ հարկաւարութիւն չունիք առաջարկելու ինձ.
երդուում եմ ասպետութեան պատով, որ ձեր ցանկու-
թիւնը իսկոյն կկատարուե:

— Պարոն ասպետ, ես միայն այս եմ խնդրում ձե-
զանից, որ վճարէք դուք ձեր գիշերելու վարձը և ձեր
զինակրին, ձիուն ու իշխն տաւած բաներիս վարձը:
— Ի՞նչ մի՞թէ սա հիւրանոց է:

— Իշարկէ:

— Օտարոտի բան է. իսկ ես կարծում էի, թէ սա
ամենապատուական ամրոց է: Բայց ինձ համար միեւ-
նոյն է. ասպետական օրէնքները արգելում են ինձ
ձեզ փող վճարելը: Թափառական ասպետներին ա-
մենքը պարտաւոր են ձրի հիւրասիրել իրու այն ան-
համար աշխատութիւնների վարձատրութիւն, որ նո-
քա կատարում են հասարակաց օգտի համար:

— Զեր յիմար խօսակցութիւնը ինձ պէտք չէ,
դեհ, շուտ վճարեցէք:

— Դու անքաղաքավարի ես ու անզգամ:

Եւ այս ասելով Դօն Քիշօտը հիւրանոցից դուրս
եկաւ անարգել չմտածելով թէ հետեւում է իւրեան
իւր զինակիրը, թէ ոչ:

Պանդոկապետը տեսնելով, որ Դօն Քիշօտը հե-
ռացաւ, կամեցաւ Սանխօից ստանալ այն փողերը.
բայց սա էլ մերժեց իւր տիրօջ պէս: Դժբաղտաբար
ժամանակ հիւրանոցում մի քանի մարդիկ կային
այդ ժամանակ հիւրանոցում մի քանի մարդիկ կային
սիվելեայից և Կորդովահից, որոնք սիրում էին զուար-

Ճամալ: Նոքա միմեանց հետ խօսելով, մօտեցան Սան-
խօփն, իշխց վայր բերին, պատուիրեցին իւրեանց
հետնելը բերած շորերը բերել յետոյ նոցա վերայ
դրին խեղճ զինակրին, և նորան իբրև մի մեծ զըն-
դակ ընդունելով՝ սկսան տասներկու թէ տասնեհինդ
ոտնաշափ վերև և ներքե ձգել: Խեղճ զինակրի զար-
հուրելի ազադակները հասան մինչև նորա տիրօջ ա-
կանջը, որև իսկոյն վազէվազ եկաւ մինչև հիւրանոցի
դուռը, բայց նոքա վակ էին: Դօն Քիշօտը պտտելով
պարապի շուրջը ուրիշ անցք գտնելու համար, տե-
սաւ միայն իւր թշուառ զինակրի թոշկոտելը Ստի-
պուած լինելով գրսից միայն նայելու այս ծաղրալի
տեսարանին, նա բաւականացաւ նորանով, որ սկսաւ
թունդ հայհոյել անխիղճ չարչարազներին, որոնք եբա-
կար ժամանակ միմիթարտում էին այն զուարձուռ
թեամբ:

Վերջապէս նոքա Սամխօին գարձեալ նստացրին
իշխ վերայ և նա էլ ջաւը պահանջեց խմելու: Գթա-
սիրտ Մարիտօրնան մի բաժակ դիմի բերեց նորա
համար: Երբ Սանխօն բերանին մօտեցրեց այն, Դօն
Քիշօտը բարձր ձայնով ասաց նորան.

— Այս որդի, զգուշացիր. այդ կեղճ խմիչքը ըլ-
խմես, թէ չէ իսկոյն կմեռնես. աւելի լաւ է իսմիրիմ
կենդանացնող բալասանից, որը քեզ մի բօնիչում կա-
ռողջացնի:

Այս ասելիս ցոյց տառեց նա իւր անագէ ամանը:
Բայց Սանխօն տհաճութեամբ նայելով նորան, պա-
տասխանեց:

— Բայց դուք մոռացաք, որ ես տսպետ չեմ: Զեզ

Համար պահեցէք այդ անիծած խմիչքը և ինձ հան-
դիստ թողէք:

Այդ խկ բովէին նա խմեց բարի Մարիտօրնի
տուած գինին:

Այդ ժամանակ պանդոկապետը բակի գռները
բացեց և Սանխօն զարկելով իւր իշխն՝ շոապով դուրս
գնաց բողորովին բաւական նորանից, որ ոչինչ չվճա-
րեց: Նորանից խլեցին իւր պարկը, բայց նա իւր ա-
րեց զատուելու համար այնքան ուրախ էր, որ այդ մինչև
անդամ չնկատեց:

Պատմական գլուխութեան մասին

Երկու ՍՈՒՐՈՒ ՈՉԻԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ԶԱՐ-
ՄԱՆԱԿԻ ԱՆՑՔԸ: ԶՐԱԴԱՅՆԵՐԻ:

Սանխօն գնումէր իւր տիրօջ համանելու համար,
այնքան թուլացած և չարչարուած, որ հավել կարո-
ղանում էր իւր էշը քշել: Դօն Քիշօտը նորան միսի-
թարեց, հաւատացնելով, որ այս բոլոր արկածները
կախարդութիւն են. բայց ՚ի զուր. յիմար զինսկիրը
իրմէ պատասխան, թուեց այն բոլոր անարդմանքները,
որոց նա համեմերեց, իւրաքանչիւր խօսքին կրկնելով
որ աւելի խելացի կլինէր տուն վերադառնալ իւրեանց
դիւը, Այս խօսակցութեան միջոցին, որ խիստ գըր-
դիւը, Այս հետապնդութիւնը, նոքա բաւա-
գրում էր մեր հերոսի ատելութիւնը, նոքա բաւա-
կան երկայն տարածութիւն անցան հիւրանոցից, երբ
յանկարծ Դօն Քիշօտը հեռուից խիտ ամպի նման
կոշի նկատեց:

— Բարեկամ, գոչեց նա, այսօր այնպիսի օր է, երբ
ես անմահ փառք պիտի ժառանգեմ: Տեսնում ես հե-
ռու, այն ահազին փոշին: Նոքա բազմաթիւ զինուոր-
ներ են, որոնք բաղկացած են աշխարհիս բոլոր ցե-
ղերից:

— Ուրեմն նոքա երկու կարգ են, որովհետեւ տես
միւս կողմն էլ նոյնպիսի մի ուրիշ ամպի պէս փոշի է
երկում:

— Ճշմարիտ ես ասում, նոքա երկու մեծ բանակ-
ներ են, որոնք միմեանց դէմ են գնում:

Կոքա երկու հօտ ոչխարներ էին, որոնք երկու
հակառակ կողմերից գալիս էին և իւրեանց շուրջը
այնպէս խիտ փոշի էին բարձրացնում, որ հեռուից
ոչինչ չէր կարելի որոշել:

Սակայն Դօն Քիշօտը այնպէս հաստատ պըն-
դում էր իրը թէ նոքա զօրք էին, որ վերջապէս Սան-
խօն հաւատաց:

— Այն բարձր տեղը գնանք, ճշաց հերոսը, ես
կոիւն սկսուելուց առաջ կամենում եմ քեզ բացա-
տրել, թէ բանը ինչումն է: Այն բանակը որ մենից
ձախ է գտնում, պատկանում է մեծ Ալիֆանֆարօ-
նին. միւսը, որ աջ կողմից է գալիս, զօրեղ հակա-
ռակորդ Պէտապօլին թագաւորինն է: Ալիֆանֆա-
րօնը մահմեղական է և կամենում է ստիպել ճշմա-
րիտ քրիստոնեայ Պէտապօլինին՝ իւր գաւանութիւնը
ընդունելու: Ուստի և ես մոտադիր եմ պատերազմել
այս վերջինին պաշտպանելու մաքով:

— Ի՞նչ Ալիֆանֆարօն և Պէտապօլին կան այս-

տեղ, որ ասում ես, ես այնտեղ մարդու ստուեր ան-
գամ չեմնկատում . . .

— Ի՞նչպէս, միթէ չեմ լսում ձիսների դրոփր և
թմբուկների ու փողերի ձայնը:

— Ես գետինը մանեմ թէ բացի գառների մայե-
լուց ուրիշ բան լսելս լինեմ:

— Երկիւղից քո զգայութիւնը թմբում է: Գնակո-
րիր, եթէ վախենում ես, ես միայնակ էլ բաւական եմ
յաղթութիւնը այն կողմ թեքելու, ուր կդորձեն իմ
ձեռքերը:

Այս որ ասաց նա խթեց Ռօսինանտի կող-
քին և նիզակը վայր թողած կայծակի պէս յարձա-
կուեց բլրից դէպի դաշտը: Սանխօն, որ արդէն պարզ
նկատում էր ոչխարների հօտը, իզուր գոռում էր նո-
րա ետելից:

— Յետ դարձիր, պարոն Դօն Քիշօտ, յետ դար-
ձիր ինզրեմ: Այստեղ ոչ ասպեսներ կան, ոչ հսկա-
ներ: Երեխ դուք կամենում էք ոչխարների հօտը կո-
տորել: Բայց փոխարէնը կհատուցանէք յետոյ: Ի՞նչ
յէմարութէ՞ն, ինչ տարաբաղտութիւն:

Դօն Քիշօտը ոչինչ ըսեց և շարունակ առաջ
վաղելով, գոռում էր:

— Եիրտ առէք, քաջ Պէտապօլինի դրոշակի տակ
պատերազմող ասպետներ: Բոլորդ էլ հետեւցէք ինձ
և ես շուտով վրէժը կառնեմ անզգամ Ալիֆանֆա-
րօնից:

Այդ միջուկ նա ներս մոտաւ ոչխարների մէջ
տեղը և սկսաւ խիստ կատալութեամբ ծակուտել խեղձ
ոչխարներին. հովհանները մօտ վաղեցին և սկսան քար-

կոծ անել նորան։ Մեր հերթուր ոչինչ ուշադրութիւն չդարձրեց սորա վերայ և սկսաւ գետինը ոչխարների զիակներով լցնել և աղաղակել։

— Ո՞ւր ես, դու, հպարտ Ալիքան Գարօն, թէ մարդ ես առաջ արի, ես մենակ կամենում եմ քեզ հետ կոռւել։

Եյդ իսկ բոպէին նորա վերայ թափուող բազմաթիւ քարերից մէկը դիպաւ նորա կողքին և կոտրեց նորա երկու կողը։ Նա իւրեան մեռած կամ դնէ ծանր վերաւորուած կարծելով՝ իսկոյն վրայ ընկաւիւր՝ կենդանացնող բալասանով ամանին։ Բայց այդ բոպէին երբ արդէն նա բերանին տարաւ, մի ուրիշ քար կոտրեց ամանը ջարդեց նորա երկու թէ երեք ասամը և կոտրտեց համարեա բոլոր մատները։ Կըս կծից նա ձիուց վայր ընկաւ։ Հովիները վախենալով թէ մի՛ գուցէ նորան սպանել են, շտապով հաւաքեցին նորա սպանուած եօթ։ Թէ ուժ գառները և շատ շուտ հեռացան։ Սանիսն, որ բլոի վերայ։ Եր մնացել տեսաւ իւր տիրոջ գործերը, իւր բոլոր մօրուքը փետում էր, անիծերպ այն ժամը, երբ միաւ այն անխելքի հետ։ Բայց տեսնելով, որ Դօն Քիշուր ընկած է գետնին, իսկ հովիները հեռացան, վազեց նորա մօտ։

— Ի՞նչ կայ, պարոն Դօն Քիշուր, ասաց նտանուրան, ես ձեզ չնսկապգուշացրի, որ այդ երկու բառ նակները ոչինչ էին, բայց եթէ գառների հօտեր։

— Աւանդ պատասխանեց մեր հերթուր, տեսնում ես, թէ ինչպէս շար կախարդը, որ ինձ ասում է, բարը գործերս խառնում է իւր կողմն է միշտ յաղ-

թութիւնը գրաւում։ Նա նախանձելով այն փառքին որ ես պիտի ձեռք բերէի, թշնամու զօրքը դառնենի փոխարկեց։ Բայց մօտ արի, Սանիսն, և վերքերս փաթաթիլ։

Սանիսն շտապով վաղեց իւր իշե մօտ պարկը վերջնելու, որի մէջ կար սպեղանիք և ծուառ, բայց կրցնելու, որ այն թողելէ թշուառ հիւրանոցում, երբ տեսաւ, որ այն թողելէ ծշուառ հիւրանոցում։ Նա նորից սկսու հայքիւ մնաց, որ ցնորում էր։ Նա նորից սկսու հայքիւ մնաց, որ ցնորում էր։ Նա նորից սկսու հայքիւ մնաց, որ նորան հոյել իւր տիրօջ և իւր յիմարութիւնը, որ նորան հետեւէլ է և վճռեց վերադառնալ իւրեանց գիւղը, հրաժարուելով այն կղզու սիրապետութիւնից, որ այնքան թանգ գնով պիտի գնէր։

Դօն Քիշուրը սկսու նորան միմիթարել։ Բարեկամ, առաջ նա նորան, մի փոքր էլ սպասուիր։ Զարութիւնը իւր սահմաննե ունի, ինչպէս և սիր։ Զարութիւնը իւր սահմաննե ունի, ինչպէս և սիր։

— Երդում եմ, պատասխանեց Սանիսն, որ տեղի լաւ է քարոզել ինէիք դուք, քան թէ թափառաւ կան սապէս։ Բայց դուք գիտէք, որ մենք սպարկ չունենք և ոդ պիտի կուլ տանք։

— Սախախնամութիւնը մեզ չի կորցնի և մեզ համոր կերպակուր կըտնենք։

— Երանի թէ այն կերպակուր ձեր խոտից չլինի կապուած։ Խոտով մեր, որ աւելի լաւ ու հակապուած։ Խոտով մեր, որ աւելի լաւ ու հակապուած։

— Անոք գուցէ դորանից աւելի լաւն էլ գտնենք մեր ճանապարհորդութեան վերջը։ Բայց, բարեկամ,

Նստիր իշխո վերայ և ինձ ճանապարհը ցոյց տուր.
այս անգամ քեզ եմ լիակատար իրաւունք տալիս այս
գիշերը անցկացնելու տեղ ընտրելու համար:

Սոքա ճանապարհ ընկան: Տիսուր Դօն Քիշօար
խիստ ցաւում էր ատամները կորցնելու համար:

— Անատամ բերանը, ասաց նա, այսպէս ասել,
առանց երկանի ջրաղաց է:

Բարի զինակիրը կամենալով խօսքը փոխել,
սկսեց նորա հետ խօսել հետեւեալ կերպիւ.

— Ողորմած տէր, բարեհածեցէք ինձ իմացնել,
թէ ով էր Մամբէնը, որի մասին դուք ինձ հետ մի
քանի անգամ խօսել էք:

— Բարեկամ, նա մավը էր և մի կախարդական սա-
ղաւարա ունէր: Սակրիպանը, յաղթելով հազարաւոր
նեղութիւններին՝ ձեռք էր բերել այս սաղաւարար:

— Ուրեմն այն սաղաւարոր խիստ թանկագին
պիտի լինի:

— Այնքան թանկագին է, որ ես մինչև վերջին
կաթիլս կպատերազմէի նորա մօտ, ով կունենար այն
անգին գանձը, մինչև որ կկարողանայի խլել նորա-
նից այն:

Այսպիսի խօսակցութիւններով անցկացրին նո-
քա այն գիշերը ընդարձակ ճանապարհին: Սովո-
նեղում էր նոցա, բայց ոչ կերակուր ունէին և ոչ
օթեան: Սարսափելի մութն էր: Յանկարծ մի փոքր
հեռու նոքա բաղմաթիւ լրցակը նկատեցին, որոնք
նման էին շարժական աստղներին: Սանխօն ահից քիչ
մնաց վայր ընկաւ. ինքը Դօն Քիշօար տիսրեց: Առա-
ջնընը սկսաւ յետ ու յետ քշել իւր էշը, իսկ երկ-

լորդը կամաց քաշեց ձիու սանձը: Կոյսերը
հետզետէ առաջ էին գալիս և որքան մօտենում էին
նոցա, այնքան մեծ, պարզ ու շատ էին թւում: Սան-
խօն բոլոր մարմնով գողում էր. Դօն Քիշօար մազերը
բիզ բիզ կանգնեցան, սակայն սա խրեան սիրու տա-
լով աղաղակեց.

— Բարեկամ, տես, սա անսպատճառ մի զարհու-
րելի գործ է, ուր պիտի ես իմ բոլոր քաջութիւնն
գործ դնեմ:

Յետոյ նա ճանապարհից մի փոքր շեղուեց, Սան-
խօն էլ հետեւեց նորան: Նուսով սպիտակ մեծ մեծ
պատկերներ երեացին, որոց առաջին անգամ նայելիս
Սանխօն այնպէս վախեցաւ, որ դողը բռնից ու սկսու
ատամները կրծտացնել: Այս սպիտակ երեսոյթները
որոնք թուով մօտ քսան էին, ձիաւորներ էին, ձեռ-
քերին վառած մոմեր ունէին բռնած և հանդարա-
գերեզմանական ձայնով մրմնջում էին. նոցա հետե-
գերեզմանական ձայնով մրմնջում էին. նոցա հետե-
գերեզմանական ձայնով մրմնջում էին. նոցա հետե-

գերեզմանական ձայնով մրմնջում էին. նոցա հետե-
գերեզմանական ձայնով մրմնջում էին. նոցա հետե-
գերեզմանական ձայնով մրմնջում էին. նոցա հետե-

— Սոքա տէրն էլ խիստ հանդիսան չէր. բայց նո-
րան սիրա էին տալիս զանազան դէպերը, որ
նա յիշում էր գրերից: Նա ինքն իւրեան ներկա-
նա յացում էր գրերից: Նա ինքն իւրեան ներկա-
նա յացում էր գրերից: Նա ինքն իւրեան ներկա-

կամ վերաւորել և որ ինքը պարտաւոր է նորա վրէժն
առնել: Վասնորոյ նո խսկոյն բարձրացրեց իւր նի-
զակը և ճանապարհի մէջ տեղը կանդնելով՝ խրոխտ
ձայնով գոռաց անցորդներին:

— Դո՞ք, ով որ էք, կանդնեցէք և ինձ ասացէք,
թէ ովքեր էք դուք, որտեղեց էք, ուր էք դում
և այդ սայլերով ինչ էք տանում: Խնչպէս ես տես-
նում եմ, դուք դաւաճաններ էք:

— Անք շտապում ենք, պատասխանեց հեծեալ-
ներից մէկը, և ժամանակ չունենք ձեր հետաքրքրու-
թեանը բաւականութիւն տալու:

— Կամ աղաքավարի եղէք, վայ բերաւ Դօն
Քիշօտը, և կամ պատրաստուեցէք ինձ հետ պատե-
րազմելու: Այս տակելով նա պինդ ձգեց սպիտակ հե-
ծեալներից մէկի ջորու սանձը. ջորին խրտնելով սկսաւ
աքացել և իւր վերայ նստողին վայր ձգեց գետին:
Յետոյ մեր հերոսը յարձակուեց ձիաւորներից մէկի
վերայ և նիզակի հարուածով վայր ձգեց նորան գե-
տին: Այսուհետեւ նո գնաց երրորդի մօտ և այնպէս
շուտ ու քաջութեամբ հարուածեց նորան, որ այն
բոլոր խելձերը, որոնք իւրեանց պաշտօնի պատճա-
ռաւ պէտք չէր, որ ուժեղ լինեին, փախան զանազան
կողմեր:

— Յաղթութիւն, ճշաց Դօն Քիշօտը:

— Յաղթութիւն, կրկնեց Սանխօն, խիստ զար-
մացած իւր ակրօջ վստահութեան ու արտրմոնքի
վերայ:

Եռաջին անգամ վայր ընկնող մարդը գեռ ևս
ջորու տակ ընկած էր գետնին և մոմը նորա մօտ

վառւում էր: Ասպետը իւր նիզակի սուր ծայրը մօ-
տեցնելով նորա կոկորդին՝ պատուիլեց որ անձնա-
տուր լինի:

— Եւաղ, ես առանց դորան էլ արդէն անձնա-
տուր եմ եղած, պատասխանեց թշուառականը. ես
շարժուել չեմ կարող վայ թէ ոսս կոտրած լինի:
Նմէ դուք քրիստոնեայ էք, մի՛ սպանէք ինձ, մեզք
է ձեզ համար, ես հոգեորական եմ:

— Եթէ յիրաւի դուք քահանայ էք, ինչո՞ւ էք
ուրեմն այստեղ:

— Աս բաղադի և բայի դորանից պարտաւուու-
թեանս պատճառաւ: Ես և միւս բոլոր քահանաները
տանում էինք մի հին ապնուականի դիակ, որ մե-
ռել էր Բակում և ցանկացել էր, որ թաղուի իւր
հայրենիքում, Սեղովիլյում:

— Իսկ ով էր սպանել այն ապնուականին:

— Զերմը:

— Ուրեմն ես պարտաւոր չեմ նորա մահուան
վրէժն առնելու: Այժմ իմացէք, որ իմ անունն է
Գիշօտ Լամանշեցի, որ ես թափառական աս-
տօն Քիշօտ Լամանշեցի, որ իմ պարտականութիւնը պատուիրում
պետ եմ, և որ իմ պարտականութիւնը պատուիրում
է ինձ թափառել ամբողջ աշխարհ և ամեն չարու-
թիւն ուղղել:

— Խիստ կցանկայի, պարո՞ն ասպետ, եթէ կարո-
ղանայիք դուք իմ ոսս ուղղել:

— Ենցածին չեկարելի օգնելու Խակ ինչո՞ւ էք դուք
գիշերով գնում այսպէս սեազգեստ, սպիտակ լեբար-
կուներով և վաւած մոմերով: Դուք մի տեսակ չեր-
ոգիներին էք նմանում:

— Խոստովանումեմ, որ ամեն բանում մեղաւոր եմ, բայց խնդրում եմ, օգնէք ինձ ջորուս տակից վերկենալու, որովհետեւ ոտս ասպանդակի ու թամբի մէջ տեղը մնաց:

Դօն Քիշօտը իսկոյն ձայն տուեց Սանխօին, որ գեռ զքաղուած լինելով արեղաների ջորիներին բարձած ուստեւերի պաշարը ցած բերելով չեկաւ: Նա իւր բաժկոնին պարկի ձեւ տուեց, որը լցնելով ամենընտիր պաշարով բարձեց իւր իշխ վերայ: Յետոյ արդէն վագեց Դօն Քիշօտի մօտ և ձայնեց.

— Եւրեցէք, տէր, միւնոյն միջոցին չի կարելի ամեն տեղ լինել:

Երբ կրօնաւորին բարձրացրին և նստացրին թամբի վերայ, Սանխօն տասց նորան:

— Եթէ ձեր ընկերներից մէկը կկամենայ իմանալ, թէ ով էր նոցա հարուածողը, նորան ասայէք, եթէ կկամենաք, որ նա էր հռչակաւոր Դօն Քիշօտը, որ նոյնպէս ասւում է պատրէ պատրէ տաղէտ:

Խեղճ՝ կրօնաւորը հեռացաւ:

— Տերու պատրէ տաղէտ ասելով ի՞նչ ես հասկանում, բարեկամ Սանխօ:

— Ե՞ս, ովորմած տէր, այդ անունը նորանից միտս ընկաւ, որ երբ ճրագի լուսով քեզ նոցեցի՝ ինձ թուաց, թէ դուք այնպիսի մի օտարոտի պատկեր ունիք, որ ես նորա հասը աշխարհիս մէջ տեսած չէի:

— Դու սխալում ես, բարեկամ, բայց ես այնպէս եմ կարծում, թէ այն իմաստունը, որ պիտի իմ քաջագործութիւններիս պատմութիւնը զրի, հարկաւոր կհամարի, որ բոլոր հին ասպետների պէս ես էլ ու

նենայի մի անուն: Սորա համար ես այն միոքը, որ քո զլսումը ծագեց, Աստուածային ազդեցութիւն եմ համարում: Այսուհետեւ ես այդպէս եմ կամենում անուանուել և որպէս զի ինձ ամեն տեղ Ճանաչեն, վահանիս վերայ նկարիր մի անբնական ու տխուր պատկեր:

— Ե՞ս, տէր, դա բոլորովին հարկաւոր չէ. բաւական է զուք երեւաք և իսկոյն կասեն թէ ահա տխուր պատկերի ասպետ:

Դօն Քիշօտը իւր զինակը այս կատակի վերայ ժպտաց և նոքա սկսան շարունակել իւրեանց Ճանաժպտակը: Երկու բլի միջով անցնելով նոքա հասան մի պարհը: Երկու բլի միջով անցնելով նոքա հասան մի պախոր հովտի, ուր հանգստացան և Սանխօն իւր պաշարը փուեց խոտի վերայ: Այստեղ նոքա լու ախորժակով միւնոյն ժամանակ նախաճաշեցին, Ճաշեցին զարդում կուրելով կոտրելու համար, սակայն նկատելով, զուր՝ ծարաւը կոտրելու համար, սակայն նկատելով, որ այն մարգագետինը, ուր որ նոքա էին գտնուում, որ այն մարգագետինը, ուր որ նոքա էին գտնուում, թէ խիստ բարձր խոտով, նոքա այդ բածծկուած առաջացի եղբափակեցին, որ այնտեղ մօտիկ նից արդարացի եղբափակեցին, որ այնտեղ մօտիկ կամ առաջ էին գտնում, որովհետեւ խիստ մութը մաց կամաց էին գտնում, որովհետեւ խիստ մութը գիշեր էր: Դեռ երկու քայլը յառաջ չգնացած՝ նոքա հեռաւոր ջրլնիցի աղաղակը լսեցին և արդէն ուս հեռաւոր ջրլնիցի աղաղակը լսեցին և արդէն ուս բախսացած էին իւրեանց այդ գիտավը, երբ յանկարձ

մի ուրիշ տեսակ ազմուկը ընդհատեց նոյա ուրա-
խութիւնը և վախեցրեց Ամփալին, որ 'ի բնէ վախ-
կոս էր: Նոքա ուժեղ ու կրկնուող հարուածներ էին,
որոց հետ միանում էին և երկաթի ու շղթաների
ձայներ, և այս էլ առաջնորդում էին նաև ժայռից
արագութեամբ թափուող հեղեղի ձայնը:

Կէս գիշեր էր արդէն և մեր բաղտախնդիրները
պատահմանը անցան բարձր ծառերի ասկից, որոց
Ճիւղերն ու տերեւները քամօւց շարժում էին:
Մութը, միայնութիւնը, անքնական ձայները, ծառերի
ու Ճիւղերի սօսաւիւնը, այս ամենը կարծես աւե-
լացնում էին սարսափր: Եայց աներկիւղ Դօն Քիշօար
չփախեցաւ, այլ նաև Եօսինանափ վերայ և թուրը շո-
ղացնելով, ասաց իւր գինակընն:

— Բարեկամ, իմացած եղեր, որ նախախնամու-
թիւնը ինձ աշխարհ բերեց յատկապէս նորս համար,
որ ես այժմեան երկաթեայ դարը ոսկու փոխարկեամ:
Իմ առաջ մեծ վտանգներ կան և փառաւոր քաջա-
զործութիւններ ունիմ սնելու: Մեղ գալիք գեպքը
որպան զարհուրելի լինի, այնքան ես սիրով կիատա-
րեմ այն: Զիռու փոկը վեր քաշեր, ինքդ այստեղ կաց
և երեք օր սպասիր այստեղ: Եթէ երեք օրից յետոց
ես չվերագտանատի, կարող ես կարծել որ քո տէրը
մեռէլ է քաջ ասպետի ձեռքով:

Սանխօն որ այս խօսքերը լսեց՝ լաց եղաւ.

— Պարոն ասպետ, ասաց նա նորան. ինչո՞ւ էք
այդպիսի զարհուրելի դործի ձեռնամուխ լինում:
Միթէ այսքան սխրագործութիւններով գեռ չէք բա-
րականացել: Մտածեցէք, որ ինձ թողնելով դուք ձեզ

անձնատուր եղած զինակիլին զըկում էք կղզու կա-
ռավարութիւնից: Ես երկիւղից հոդիս կտամ, բայց չէ
որ ես էլ կին ու որդիք ունիմ, որոնք անտաշտպան
ու անօդնական կմնան: Ֆակը Աստծու, տէր, այդպէս
խիստ մի լինէք, կամ գոնէ մինչև տռաւօտ համբե-
րեցէք:

— Ինձ համար գիշեր լինի թէ ցերեկ միմւոյն է,
երանի միայն ո՛չ քամարձակի ինձ ասել թէ ես
այս և այն պատճառով թողնեմ իմ պարտաւորու-
թիւններիս կատարելու: Նախախնամութիւնը ինձ կը
պաշտպանի վտանգներից, և կամ իմ մահից յետոց
կհոգայ քո մասին: Գեհ, Ռօսինանտիս փոկը վեր
քաշելի և սպասիր ինձ. ես շուտով յաղթող կվերտ-
դառնամ:

Սանխօն աեսնելով որ ոչինչ չի կարող այս խե-
լացնորին համոզել մնալու, մտածեց խորամնկու-
թեամբ ստիպել նորան մինչև տռաւօտ մնալու. սորս
համար Ռօսինանտիս փոկը վեր քաշելիս, նա նորս
եսեկի սնեները կապեց իւր իշխ սանձովու: Երբ Դօն Քի-
շօտը կամենում էր արշաւել նոր վտանգների կողմը,
նորս ձին փոխանակ առաջ գնալու՝ միայն տեղն ու
աեղը թաշկուայ:

— Տեսնում էք, աղաղակեց զինակիրը ինխտուրա-
խացած իւր հնարքով նախախնամութիւնն էլ իմ
կողմն է. նա չի կամենաւմ, որ դուք ինձ թողնէք և
Ռօսինանտին չի թոյլ տալիս ձեզ հնազանդուելու:

Դօն Քիշօտը զայրացաւ. բայց որքան խիստ զար-
կում էր ձիուն, այնքան կարծես քիչ էր շարժւում
նա իւր տեղից:

— Ի՞նչ անել, ասաց նա հառաջելով, մինչև առաւ-
տօռը կապասեմ:

— Առանց քնելով, հարցրեց Սանխօն:

— Այո, առանց քնելու, պատասխանեց մեր հերո-
սը. գու, քնի գաւակ, քնիր, իսկ ես կմտածեմ:

— Չբարկանաս, տէր, ես այդ վատ մռքով չասացի:

Այս ասելով Սանխօն մօտեցաւ իւր տիրօջը: Վեր-
ջապէս նա մի ձեռքով վրայ ընկաւ թամբին, իսկ միւ-
սով ագու տակից կապած կաշուին և այսպէսով պինդ
սղմեց մեր ասպետի ձախ ոտը: Սակայն երկաթների
անընդհատ շրխկըսկոցից պատճառած երկիւղը այն-
պէս սաստիկ ներգործեց նորա վերայ, որ նա յան-
կարծ ամբողջ մարմնով մի առանձին դող զգաց: Նա
ատամները սղմելով՝ ուսերը վեր քաշեց և շունչը
թագրեց, բայց նորա բոլոր ջանքը ի գուր ու անօ-
գուտ էին:

— Ի՞նչ կայ, ազաղակեց Դօն Քիշօտը:

— Ես, տէր, անկասկած էլի մի նոր գե կլինի:

— Սանխօն, շարունակեց ասպետը քիթը վեր քա-
շելով. կարծեմ հանաք բան չէր քո վախը:

— Ճշմարիտ է, բայց ես մեղաւոր չեմ նորանում:
Դուք ինչո՞ւ էք այսպէս ուշ և այսպիսի մի տեղ պա-
հում ինձ:

Դօն Քիշօտը չկամեցաւ լսել նորա միւս խօս-
քերը, սկսաւ Ռօսինանախին թռչկոտել տալ և պա-
տուիրեց իւր զինակրին մի քանի քայլ հեռու գնալ:

Սակայն գիշերն անցնում էր և Սանխօն առա-
ւոտը բացուելու պէս կամաց քանդեց Ռօսինանախ
ոտները, որ խիստ ուրախացաւ ազատուելու համար

և մի փոքր թռչկոտաց: Դօն Քիշօտը այս լսւ նշան
համարեց և կամեցաւ խկոյն և եթ օգուտ քաղել
այդ բանից:

Սա կարձեալ առաջուայ սկէս հրաժարական
տուեց Սանխօնն, աւելացնելով, որ ինքը նորան վար-
ձատրելու համար չէ մոռացել իւր կտակի մէջ: Այս
բանը այնպէս զրգուեց բարի զինակրին, որ նա եր-
գուեց երբէք չժողովել իւր տիրօջը:

Դօն Քիշօտն էլ շարժուեց սորանով, բայց վա-
խնալով քաջութիւնը կորցնելու, ձանապարհ ընկաւ
այն կողմի որտեղից աղմուկներ լսվում:

Սանխօն ոտով հետևեց նորան, սանձից ձգելով
իւր նեղութիւնների հաւատարիմ ընկերօջը: Երկար
ձանապարհութելուց յետոյ, նոքա տեսան մի քանի
խղճուկ խրճիթներ, որոնք կառուցած էին մի ժայռի
վերայ, որի վերայից հոսում էր աղբիւրը: Նոյն իսկ
սինանտը էր լսում այն զարհուրելի աղմուկը: Ոօ-
այստեղից եր լսում այն զարհուրելի աղմուկը: Ոօ-
այստեղից եւ կանգնեց ետևի ոաների վե-
սինանտը վախեցաւ և կանգնեց ետևի ոաների վե-
րայ. Սանխօն դեղնեց ու դողաց: Հարիւր քայլ հե-
րայ. Սանխօն դեղնեց ու դողաց: Հարիւր քայլ հե-

րայ. Վահ երբ տեսաւ Դօն Քիշօտը՝ զմայլելուց լե-
զուն կապուեց, սանձը թռղեց ձեռքից և զլուխը քարշ
ձկեց: Սանխօնն նայելով տեսաւ որ նա այտերը ուռ-
ցը արագացի վեց ահագին երկաններ էին, որոնք
նախընթաց օրից անընդհատ բանում էին:

աի համբերութիւնը հատաւ: Նորան աւելի անհաճոյ թուաց, երբ Սանխօն նորան նայելով՝ ծաղրալի կերպով ասաց.

— Բարեկամ, եմացած եղեք, որ երկնուր ինչ աշխաբէ բերեց յատկապես նորու համաց, որ ես այժմեռն երկութեւ ուսուր սահու փոխարքէմ. ի՞մ առաջ մեծ զատագուշը չան և փառառը ժաշագործութենանը ունիմ առելու:

Տէզի ծանր հարուածը մէջքին՝ ընդհատեց ծաղրածու վինակրի խօսքը:

— Տէր, ձաց նա, միթէ դուք չէք հասկանում, թէ ես ինչու եմ ծիծազում:

— Եսո՞ն իսկ դորա համար էլ ես կոտակ չեմ անում, պարոն ծաղրածու, ի՞նչ ես վրէս ծիծազում: Արդեօք ինձպիսի ասպետը պարտաւոր է ջրաղացի աղմուկը որոշել: Այդ քեզ պէտք է, գեղջուկ, որ մի ստոր զիւզումն ես կրթուել: Բայց հապա թող այս վեց երկանները մի մի հսկաներ զառնան ու նոքա վեցն էլ մի մի հատ կամ միասին գան իմ դէմ, թէ որ ես բոլորի գլխներն էլ չկտրտեմ: այն ժամանակ որքան կուզէս ծիծազիր վրէս:

— Հաւատում եմ ձեզ, պարոն, հաւատում եմ, բայց համաձայնեցէք, որ այս դէպքը ծաղրալի կարող է թուալ:

— Համաձայնում եմ, բայց այսու ամենայնիւ դու ինձ պիտի ծաղրէիր. սակայն խօստովանում եմ, որ ես խիստ տաք վարուեցի քեզ հետ:

— Իուք ինձ զարկէցիք, բայց ի՞նչ անենք: Ով ում խիստ սիրում է, նորան էլ թունդ ծեծում է... բայց նշանառը պարոնները իւրեանց ծառաներին ծէւ:

ծերուց յետոյ, առհասարակ պարգևներ են տալիս նոշյա: Սորանից ես եղակացնում եմ, որ այդպիսի դէպքերում թափառող ասպետը պիտի պարգևի իւր զենակրին գոնէ մի կղզի կամ թագաւորութիւն:

— Քո առաջները բոյրովին ճշմարիտ են. բայց իմ խօստացած վարձատրութիւնը իւր ժամանակին կլինի: Այն վարձատրութիւնն մնամին քաղաքականիքի կերպով սպասուիր:

— Ընդունում եմ և հաւատացնում եմ ձեզ որ ես այսուհետեւ պիտի յարգանքով կիսում ձեզ հետ, որպիսին վայելէ բարձրագոյն տիրօջ:

— Այդպիսով դու հանգիստ կեանք և երկար տարիներ կվայելսո, որովհետեւ հօր և մօրից յետոյ ամենից շատ պէտք է տիրօջը յարգել:

Պլոխ Ե.

ՄԱՄԲՐԵՆԻ ՍԱՂԱՄԱՐՏԻ ՆՈԽԱՃՈՒՄԸ: Թէ Ի՞ՆՉՊԵՍ ԴՕՆ ԳԻՇՕՏԻ ԱԶԱՏԵՑ ԱՅՆ ԹՇՈՒԱՌՆԵՐԻՆ, ՈՐՈՅ ՏԱՆՈՒՄ ԷԻՆ ԱՅՆՏԵՐ, ՈՒՐ ՆՈԲԱ ԶԵԻՆ ԿԱՄԵՆՈՒՄ ԳՆԱԼ: ԴՕՆ ԳԻՇՕՏԻ ՑԻՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

Այդ ըսպէին սկսաւ կամաց անձրեւլ Սանխօն կամեցաւ ջրաղացներում թագինով բայց Գոն Քի շատր չկամեցաւ մօտենալ նոյա: Ուստի և դէպի աջ ծուելով ճանապարհ ընկաւ: Գոն մի փոքր տեղ չանցած, նո նկատեց մի ձիաւոր, որ գլխին զրուած ունէր ունկու պէս փայլով մի բան:

— Անիսօ, աղաղակեց նա, ամեն առաջներից ճշ-

մարիսն այն է, թէ ամեն օր երկինքն ամաղած չի լինի,
մի օր էլ կպարզի: Այս գիշեր կարձատեւ վրդովմունքը
կարծես յօս կտրում էր, սակայն այսօր առաւօտ մի ա-
մենապատուական վարձատրութիւն եմ ստանալու:
Պարզ երեսում է, որ դէմուդէմ երեւացող զմնուորի
գլխին Մամբէնի նշանաւոր սաղաւարտն է, որի հա-
մար երդուեցի մինչեւ վերջին շունչս պատերազմեր:

— Ա՝ իս, տէր, պատասխանեց Սանխօն, ջրաղացները
միտներդ բերէք:

— Լոռում ես թէ չէ, անհաւատ... դու չես տես-
նում այն ասպետին, որ մոխրագոյն ձիուլ ուղեղ դէպի
մեղ է գալիս և գլխին ոսկեայ սաղաւարտ ունի:

— Ե՞ի մարդ եմ տեսնում, պատասխանեց զինակիրը,
որ նստած է մութ-մոխրագոյն իշե վերայ և գլխին
մի փայլուն բան ունի:

— Այս փայլուն բանը իսկ և իսկ Մամբէնի սաղա-
ւարտն է: Այժմ հեռու կաց և տես, թէ ինչպէս ես
մի բոպէի մէջ բանը գլուխ կրերեմ:

Սակայն վատ չէ իմանալ թէ ով էր այն ձիա-
ւոր ասպետը, որ գլխին սաղաւարտ ունիր: Շրջակայ-
քում երկու գիւղ կար այնքան աննշան և միմեանց
մօտիկ, որ միենոյն սափրիչը, որը միենոյն ժամանակ
և վերաբուժութիւն էր անում, երկուսին էլ ծառա-
յում էր: Այդ օրը մի գիւղացուց արին պիտի առ-
նէր և միւսին պիտի սափրէր: Սափրիչը գհում էր
այնտեղ իւր նշանաւով (վերահատ) ու գեղնապղնձէ
ըւացարանով և տեսնելով որ անձրեւում է, գլխարկը
չիշացնելու համար՝ այն լուացարան անօթը գրեց զըլ-
իխին, նոյնն էր որ ահագին հեռաւորութեամբ արձա-

կում էր իւր փայլը: Նա նստած էր մոխրագոյն իշե
վերայ, ինչպէս որ Սանխօն իրաւացի նկատեց:

Երբ սափրիչը մօտեցաւ նոցա, մեր հերոսը ա-
ռանց զննելու նորան, նիզակը ձեռքին յարձակուե-
ցաւ նորա վերայ: Սափրիչը տեսնելով այս յանկար-
ծակի յարձակումը, իսկոյն վայր թռաւ իշեց և իւր
գեղնապղնձէ անօթը թողնելով այնտեղ՝ եղջերուի ա-
րագութեամբ վաղեց դէպի դաշտը:

— Այդ խարեբան յիմար չէ, դոչեց Դօն Քիշօտը.
Նա որսորդներից հալածուող այն կուզեի (բէշկ մշկօ)
նման է, որ ինքն իւան զիշատում է: Սանխօն, վերց-
րու այս սաղաւարտը:

— Հաւատայնում էմ ձեղ, ասաց զինակիրը, որ այս
սաղաւարտը ըոլորովին նման է սափրելու լագանին.
սա վատ չէ և մի ատլեր կտան սորան:

— Կա այն ամանը տուաւ իւր տիրօջը, որ ծած-
կելով իւր գլխին, սկսաւ այս և այն կողմ շուռ տալ,
ասելով:

— Այս հեթանոսը, որի համար այս սաղաւարտը
շինուած է, անշուշտ ահագին գլուխ ունեցած կինի.
շինուած է, անշուշտ ահագին գլուխ ունեցած կինի.

Սանխօն շատ աշխատեց ծիծաղը թագյնել
և անպատճառ բարձր ձայնով ծիծաղելու էր, եթէ
նորա ջարդուած ուսերը չմոտերէին նորան՝ իւր
մի փոքր առաջ ստացած դասը:

— Անպատճառ, շարունակեց ասպետը, այս գիւ-
թական սաղաւարտը պատահմամբ այնպիսի անզգամի
ձեռք է անցել որ նորա արժանաւորութիւնը չճա-

նաչելով և տեսնելով՝ որ սա դուտ ոսկուց է ձուլած,
կէսը հալել է, խոկ միւս ինսից շինել է այս և որ
քո ասածի պէս խիստ նման է սափրաւէրի լուացա-
րանին: Բայց ինչի՞ն է աղէտք, թէ սա այբախի փո-
փոխութեան է ենթարկուելու կհրամայեմ որ ուղղեն
այս և այն ժամանակ իմ սողաւարտը օշնով պահաս-
չել լինի նորանից, որ Վուշինը (*) շինեց ողատերադ-
մի չաստուածի համար: Մինչև շինելը սորանով էլ
կարող եմ կառավարուել:

— Զեր կամքն է, տէր, իոկ այս մոխրագոյն ձին
ինչ անենք, որ խիստ նման է մոխրագոյն իշխ: Այն
խեղջ մարդը, որին գուք փախցրիք, այնպէս վաղ-
ալով փախու, որ չեմ կարծում թէ նու էլի վերա-
դանայ: Իսկ էշը, իմ արևս վիայ որ վաս չ:

— Ասպետական օրէնքները արգելում են յաղ-
թուածների ձիւները խղելու, ուստի այս ձիւն թէ
իշխն, ինչ կուզես ասա, թող այսեղ:

— Աս կետական օրէնքներդ ինչ կուզէ թող լինին,
միայն թէ ես խիստ կցանկայի այժ տնասունը հետո
վերցնել կամ թէ իմիս հետ փոխել, որ սորանից վատ է:
Կամ գոնէ կարելի է որ թամբերը փոխենք:

— Ճիշտ չգիտեմ, փոխել կարելի է թէ ոչ, սակայն
մինչև ես կմտածեմ գորա մասին, կարծում եմ որ
գու կարով ես փոխել:

— Եյսպէս Սանիօն իրաւունք ստանալով սափրիչի
իշխ վերայից վերցրեց բոլորովին նոր թամբը և գրեց
իւր իշխ վերայ, որ այնուհետեւ առաջուանից տեկի:

(*) Յունաց ու Հունականութիւնոց դժմգրի լաստուած է:

գեղեցիկ թուաց նորան: Վերջացնելով այս, նոքա նա-
խաճաշի մնացորդներով ընթրեցին և այս թեթև
ընթրիքից յետոյ նորից ճանապարհ ընկան. էշը յօ-
ժար կամքով հետեւում էր Ռուսինանորին: Նոքա ան-
նկատելի կերպով բաւական մեծ տարածութիւն ան-
ցան և գնում էին զանազան առարկաների վերայ խօ-
սելով: Երբ արդէն նոցա խօսակցութիւնը տաքացել
էր, Դօն Քիշօտը գլուխը բարձրացնելով՝ տեսաւ որ
գալիս են տաներկու մարդ, կարգով շարուած ու
շղթաների վզերին: Նոքա ձեռքերին էլ շղթաներ ու-
նէին: Նոցա առաջնորդում էին երկու զրահաւորուած
ձիւորներ և երկու հետեւակ զինուորներ նիզակնե-
րով ու թրերով:

— Տես, ասաց Սանիօն, սոքա յանցաւորներ են,
որոց աքսորում են:

— Ի՞նչ, գուաց Դօն Քիշօտը, աքսորականներ...
անկարելի է, որ թագաւորը իւր հպատակների հետ
վարուի ինչպէս աքսորականների հետ:

— Զեր ասում եմ, շարունակեց զինակիրը, որ այս
մարդիքը իւրեանց յանցանկների համար պիտի աք-
սորուին:

— Ուրեմն նոքա ակամայ են այնտեղ գնում:

— Ճիշտ այդպէս:

— Այդ ինձ բաւական է. ես յիշում եմ կոչմնա
պարտաւորութիւնը:

Այդ միջոցին աքսորականները մօտեցան նոցա
և Դօն Քիշօտը մեծ յարգանքով հարցրեց ձիւորնե-
րից մէկին, թէ ինչո՞ւ են նոքա այդ թշուառներին

այդ կերպով տանումն Զիաւորը նորա յարգելուց շարժուած՝ պատասխանեց.

— Այս իսկ նոցա հարցրէք, ողորմած տէր. նուքա անկասկած բաւարարութիւն կոտան ձեր հետաքրքրութեանը:

Դօն Քիշօտը այս թոյլտուութիւնից օգուտ քաղելով, թէպէտե այն չստացած ժամանակ էլ ինքն իւրեանկ կտար այդ թոյլտուութիւնը, մօտեցաւ պատորականներին և նոցանից առաջինին հարցրեց, թէ ինչ յանցանք էր գործել նա:

— Ինձ այն ժամանակ բռնեցին, երբ ես սպիտակեղններով լիքը կողովը յափշտակեցի, որը ես խիստ սիրում էի: Թէպէտե զկարողացայ այն թուցնել, սակայն ինձ պատժից չազատեցին: Բայց երբ երեք տարի ահագին մարգագետնում խոտ կհնձեմ, բանը կվերջնայ:

— Ի՞նչ է նշանակում մարգագետնում խոտ հնձել ընդհատեց Դօն Քիշօտը:

— Նշանակում է թիով խոտ հաւաքել պատասխանեց պատորականը:

— Իսկ դո՞ք, բարեկամ, հարցրեց Դօն Քիշօտը երկրորդին, որ տիտուր կերպով գլուխը կախել էր:

— Ինձ նորա համար են տանում, որ ես վշտից բարձր ձայնով երգում էի:

— Այթէ երաժիշտներին աքսոր են ուղարկում, գույք մեր հերոսը:

— Այդ բարի մարդոց համար, ընդհատեց ձիաւորներից մինը, վատից երգել նշանակում է տանջանքի ժամանակ խոստովանուիլ: Այդ չարագործին տան-

ջում էին և դա խոստովանուեց, որ անասուն է գուղացել:

Այսպիսով Դօն Քիշօտը քննեց աքսորականների մի մասին: Ամենավերջին յանցաւորը մի երեսնամեայ վայելչատես մարդ էր, թէպէտ և միւմներից աւելի մեծ զգութութեամբ էր կապկապած: Նորա ոտները երկու տակ շղթայած էին, զղին երկու վկնոց կար, որոնցից մինը շղթան ունէր բանած, իսկ միւսը երկու հաս կապանք, որոնցով ամրացած էին նորա երկու ձեռները, այնպէս որ նա ո՛չ կարողանում էր ձեռքերը բարձրացնել և ո՛չ զլուխը կախել:

Դօն Քիշօտը հարցրեց թէ ինչ համար են այս նախազգուշութիւնները:

— Նորա համար, պատասխանեց ձիաւորներից մինը, որ այս անզգամբ միւմներից աւելի շատ յանցանք է գործել: Ուստի և դատապարտուած է տանամեայ թիավարութեան, կամ որ միւնոյն է քաղաքական մասհուան: Սակայն դուք նորան իւր կոչումից պիտի ճնաւացէք. դա հոչակաւոր ժինէս Պատսամօնան է, որ էլի ասւում է ժինեսիլլա Պարապիլլա:

— Կատակը թող, պարոն վերակացու, ընդհատեց պատորականը. և իմ անունս հանգիստ թողէք: Ձեր գրութիւնը իմիցս աւելի նախանձելի է, դոք կարող էք իմ մեղքերը թուել, այն ինչ ես չեմ համարձակում ձերերը թուել: Իմ իսկական անունս ժինէս Պատսամօնան է, և ով այսուհետեւ կյանդգնի ինձ ժինէսիլլա Պարապիլլա անուանել նորա հոգին կհանաւեմ: Բայց, ողորմած տէր, շարունակեց նա, դառնալով Դօն Քիշօտին, եթէ գուք մեզ ցանկանում էք մի

բան տալ ուրեմն շտավեցէք առանց ժամանակ կողյունելու մեր պատմութիւնը լսել: Իսկ եթէ կամենում էք իմ ծագումն իմանալ, կարող էք կարդալ այն, որովհետեւ ես իմ կենազրութիւնը զրել եմ:

— Ա երջացրել էք, հարցրեց Դօն Քիշօտը:

— Ո՛չ չէք տեսնում, որ ես դեռ այստեղ եմ. բայց նա հասցրած է մինչև վերջին կէտը, աքսոր ուղարկուելու, ուր, ճշմարիսն ասած, տիտուր չեմ գնալու, որովհետեւ այնտեղ միայն կարելի է զուարձութիւն և ժամանակ գտնել զբականութեամբ պարապելու համար:

— Դուք ինձ խելօք էք թւում:

— Երանի թէ յիմար լինէի, ու բազդը ժպտար ինձ:

— Այդ ինձ բաւական է, ձայնը բարձրացնելով ասաց Դօն Քիշօտը: Իմ լսածներից ես պարզ տեսնում եմ, որ ձեզ աքսորում են բոլորովին ձեր կամքին հակառակ: Զեր մեղքերը մեծ են, սակայն զըզդումը քաւում է նոցա: Ես այժմ միայն նորա վերայ եմ ուշադրութիւն դարձնում, որ դուք Ճնշուած էք և հալածուած և որովհետեւ թափառող ասպետի առաջին պարտաւորութիւնն է հալածուածներին պաշտպանել, այդ պատճառով ես ձեզ լինդրում եմ, յարգելի՛ պահապտներ, այս թշուառներին ազատել և ոոցա պատժելը թողնել երկնային արդարագասութեան վերայ, երբ սոքա չար գործերով կսկսեն յամառիլ: Զարծեմ, թէ դուք մերժէք այս բանը. սակայն եթէ մերժէիք էլ այս սուլը, այս նիզակն ու ձեռքիս ոյժը՝ բաւական կլինէին ձեզ այն կատարել տալու համար:

— Աեցցես, գոչեց պահապան ձիաւորներից մէկը, լսւ կատակ է. վատ բան չես մտածել, յարգելի՛: Բայց ինձ լսիր, ճանաւրակիր շարունակիր և պլիիդ ծածկած սափելու ամանը ուղղիր:

— Դու անզգամ ես ու վախկոտ, պատասխանեց մեր հերոսը և իսկոյն այնպիսի արագութեամբ յարձակուեց նորա վերայ, որ նորան պաշտպանուելու ժամանակ չտալով, վայր ձգեց գետին և նիզակով ծանր կերպով վերաւորեց նորան:

Միւս պահապաննելը զարմացած այս բանից, թրերը մերկացրին և անկասկած կարգով կհարուածէին մեր պատերազմով ասպետին, եթէ որ աքսորականները օգուտ չքաղէին այդ գէպքից և Սանխօի օգնութեամբ շղթաները չքակէին: Ֆինէս Պասսամօնար յարձակուեց արդէն գետին ընկած վերատեսչ վերայ, խլեց նորա սուրն ու հրացանը և այն ուղղելով երբեմն մէկ պահապանի և երբեմն միւսի վերայ, միայն թէ չէր զարկում նոցա, շուտով ստիպեց նոցա վախչել օրոնց արգէն միւս աքա բականները սկսել էին քարկոծ անել:

Յաղթութիւնը կատարեալ էր: Բայց Սանխօն գորանով չբաւականացաւ: Նա վախենում էր Սանտա Գերմանդադից, որ շիլով այդ բանը՝ կարող էր նոցա տեղն ու աեղը բանել: Ուստի և իւր տիրօջ ասաց, որ պէտք չէ ի զուր աեղը բապէ անգամ կորցնել այլ խսկոյն և եթ թագել մօտակայ լեռներում: Սակայն Դօն Քիշօտը հաւաքեց բոլոր աքսորականներին իւր շուրջը և ասաց նոցա հետեւելու:

— Դուք տեսաք, աղումած սեալք, թէ ինչպիսի

ծառայութիւն արի ես ձեզ: Ես հաւաստի եմ, որ
դործ ունիմ աղնիւ մարդոց հետ, դորա համար էլ
խնդրում եմ ձեզանից իբրև շնորհակալութիւն մի բան,
այն է որ դուք դարձեալ կապէք ձեր շղթաները և
նոյանով ամբողջ Լամանչի նահանգը շրջելով, հռչա-
կէք տիսուր պատկերի ասպետի քաջագործութիւնները:

— Չեր խնդիրը անկարելի բան է, պարո՞ն ասպետ,
մեր աղատիչ, պատասխանեց Ժինէս Պասաամօնտը բոլո-
րի կողմից: Աթէ մենք շղթայակապ անցնենք փողոց-
ներով, մեղ իսկոյն օստիկանութիւնը կրոնի. ուստի և
բաւականացէք այն օրհնութիւներով, որ մենք մաքուր
սրտով տալիս ենք ձեզ:

— Եթէ այդպէս է, դուք Դօն Քիշօտը բարկա-
ցած, ուրեմն միայն դուք ապաշխարեցէք, Դօն Ժի-
նեսիլս Պարապիլս, այն բոլոր կապանքներով ու
շղթաներով, որոնք առաջ ձեր աղնիւ մարմնի վե-
րայ էին:

Պասաամօնտը անհամբեր բնաւորութիւն ունէր,
դորա համար էլ նշան արեց իւր ընկերներին, որնք
իսկոյն հեռացան և մեր հերոսին այնպէս սկսաւ քար-
կոծել որ այլևս վահանը չէր կարողանում պաշտպա-
նել նորան: Ռօսինանտը տեղից չէր շարժւում: Սան-
իսն իւր իշե ետել թագկացաւ: Թշուառ ասպետը
քարկոծուեցաւ և վայր ընկաւ գետին: Այդ միջոցին
աքսորականները թափուեցան սորա վերայ, վերցրին
նորու կոնքը, նորանով ուսին հինգ թէ վեց անգամ.
զարկեցին, պատկացրին և հանեցին նորանից զրահի
վերայից հագած վերնաշորը: Նոքա միւս շորերն էլ
կհանէին, եթէ զբահը արգելք չլինէր: Իսկ Սանխօին

համարեա դլիսից ոտք տկլորեցին. յետոյ այս աւարը
բաժանելով իւրեանց մէջ, նոքա ցրուեցան զանազան
կողմերը: Դօն Քիշօտն ու Ռօսինանտը միմեանց կող-
քին պառկած էին, այն ինչ Սանխօն ամբողջ մարմ-
նով գողում էր իւր իշե ուների տակ պառկած, որը
գլուխը կախած երթմն երթեմն ականջները շարժում
էր, կարծելով թէ քարէ կարկուտը դեռ էլի շարու-
նակւումէ:

Դօն Քիշօտը տեսնելով, թէ ինչպէս վարձա-
տրեցին իւր արած բարերարութիւնը, գոչեց.

— Այժմ միայն արդարացի եմ դատում այս ա-
ռածը թէ, չարերին բարութիւն անելը՝ նշանակում
է նոյն իսկ իւրեան վատութիւն անելը: Այսուհետեւ
փորձը մեզ աւելի կիսելօքացնի:

— Եթէ դուք այդ բանի մէջ արդէն համոզուած
էք, պատասխանեց Սանխօն, հետեւիր ուրեմն իսոր-
հրդիս. շուտով այսաեղից հեռանանք. ոչինչ ասպե-
տութիւն այլ ևս օգնել չի կարող, Ա. Գերմանդա-
դան կերեայ:

— Ես վախսեմ, այ դու վախկոտ:

— Չէ չփախչենք, այլ թշնամիներից հեռանանք,
որովհետեւ երբ վտանգը մօտ է, մեր ներկայութիւնը
այստեղ անխելքութիւն է: Թէ ինձ կուէք, նատեցէք,
եթէ կարող էք Ռօսինանտի վերայ և այստեղից հե-
ռանանք:

— Դեհ, լու: Այս անգամ կամքդ կկատարեմ:

Եւ նստելով Ռօսինանտի վերայ, ասպետը սկսաւ
իւր զինակրի ետեկից զնալ որը իշով նորու առաջե-
փին էր գնում: Նոքա բարձրացան Ակերրա-Մօրէնա
լեաւը, մի քանի օր այնտեղ թարելու նպատակով:

Ուտելքըի պաշարի պարկը կարծես թէ հրաշքով լցուեց աքսորականների աւարով: Սեր արկածախնակիները մտան լրաների մէջ տեղը և երբ մթնեց, այն ժամանակ միայն կանգ առան: Այնտեղ երկու բլրի մէջ տեղը մեծ մեծ ծառերի տակը քննցին նոքա: Բայց բաղար, որ միշտ հալածում էր նացա այդ իսկ միջոցին ծինէս Պասամօնտին այդտեղ բերեց, որը օգուտ քաղելով նոցա քնից, գողացաւ Սանիսօի էշը, որը նորան Ռօսինանտից ընափր թուաց:

Հազիւ արշալոյսը սկսուել էր բացուել երբ զենակիրը զարթնելով քիչ մնաց ցաւից մեռնէր, տեսնելով որ զըկուել է իւր հաւատարիմ ընկերից: Նա դառնութեամբ լաց եղաւ ու հեկեկաց.

— Ո՛հ, իմ սիրելի զաւակիկս, ասաց նա: Դու, որ իմ տանը ծնուեցար, իմ որդւոց զուարձացնում էիր, կնոջս միսիթարութիւնն էիր, իմ հարեւանների նախանձի աւարկայ և իմ աշխատանքին օգնական: Ո՛հ, սիրելի էշը, ուրեմն այլ ևս չեմ տեսնի քեզ: Ես քեզ կորցրի և և ցաւից կմեռնեմ:

Դօն Քիշօտը լսեց այն և սկսաւ նորան միսիթարել բայց իսկոյն չկարողացաւ նորա լսցը կարել այլ միայն, երբ խոստացաւ նորան իւր հինգ աւանակներից երեքը նուիրել նորան: Զինակիրը ախ քաշելով նորհակալութիւն արաւ իւր տիրօջը նորա բարութեան համար և ախուր կերպով սկսաւ ոտով հետեւել, ուսին դնելով ուտելքի: պարկը, որ նա դարձեալ բաղտաւորաբար աղատեց և որից երբեմն երբեմն կծում էր հացի ծայրերը: Այսպէս առաջ գնալով նա տեսաւ յանկարծ, որ Դօն Քիշօտը նիզովի ծայ-

րով բարձրացնում էր ճանապարհին ընկած մի պայուսակ. նա իսկոյն վրայ ընկաւ այս գիւտին: Պայուսակը բանալիքով փակած էր, բայց նորա Ճեղքը յետ քաշելով նա նորանից հանեց հոլանդական քաթանից շնած չորս շապիկ, մի ուրիշ նորանից աւելի նուրբ սպիտակեղին և թաշկինակ, որի մէջ նա բազմաթիւ սկիններ գտաւ:

— Այս օրհնուի երկինքը, գոչեց նա. ահա այն օգտակար դէպքերից մինը, որոց ես խիստ սիրում եմ:

Դարձեալ զննելով նա մի փառակագիր գրքով էլ գտաւ:

— Այս գրքով ինձ համար կվերցնեմ; ասաց Դօն Քիշօտը. և սորանում կզբերիմ քաջագործութիւններս: Իսկ փողը, այդ անարգել մետաղը թող քեզ լինի:

— Շատ շնորհակալ եմ ձեզանից, ողբանած տէր, պատասխաննեց զինակիրը. այդ անարգ մետաղը խիստ յարմար է իմ անարգ բնաւորութեանը:

Այս ասելով նա այն աւարը թագցրեց պարկի մէջ:

— Ի՞նչ կերպով է այս պայուսակը այստեղ ընկել ասաց Դօն Քիշօտը, մի փոքր մտածելուց յետոյ:

— Գոռշակելը դժուար չէ, պատասխաննեց Սանիսն: Հաւատացէք, տէր, որ դա ինքն ըստ ինքեան չէթուել այստեղ. անպատճառ մի որևէ է ճանապարհորդ է կորցրել այդ. եթէ այստեղ մի աւագակութիւն պատահ լիներ, գողերը անշուշտ կտանիին այս: Ինձ ու քեզ այդ բանը լւա յայտնի է մեր ու աքսորական ների մէջ անցած դէպէից:

— Պու ձշմարիտ ես, բարեկամ Սանիսօ: Խոստովանումեմ, որ դու երբեմն խիստ ձշմարիտ ես դատում: Բայց շարունակենք ճանապարհներս:

— Թու Քիշօար հիացած էր, որ ինքը բարձր լեռների մէջ է գտնուում: Տեղի վայրենի տեսքը, միայնութիւնը խոստանում էին նորան շատ հրաշալի արկածներ. նորա երեւակայութիւնը յափշտակուեց թափառական ասպետներին, նոյնակիսի ամայի տեղերում պատահած գէպքերով: Յանկարծ նա մի անբնական միտք յրացաւ:

— Բարեկամ, Սանիսօ, ասաց նա, ես սխալուեցի, որ այն աքսորականներին ազատեցի:

— Ես այդ շատ լաւ գիտեմ:

— Բայց դու այս չգիտես, թէ թափառական ասպետը որ սխալում է, պիտի զդայ: Այսպէս արաւ և Ամագիս Գալլիացին, թափառական ասպետի ամենակատարեալ տիսը: Նա առանձնացաւ վայրենի ժայռում, ուր ցնորուածի տեղ էր գնում իւրեան և իւր անունը դրաւ տիսուր ասպետ: Ես ևս կամենում եմ նորան նմանել. ուստի այստեղ կմնամ և ցնորուած ու խիստ կատաղած կճեանսամ, մինչև որ իմ մեղքերս բոլոր կքաւեմ: Ուրեմն, քեզ յայտնում եմ, բարեկամ Սանիսօ, որ ես ցնորուած եմ, բոլորովին ցնորուած:

— Ձշմարիտ է, պատասխանեց Սանիսօն, հաւատում եմ այդ բանին: Մանաւանդ որ ես չեմ սիրում ուրիշ գործերում խառնուել: Եթէ ձեզ այդ հաճելի էր, ինչպէս կամենաք այնպէս արէք: Դաշար դռներունք վակուի: Ում ինչը ցաւում է, նորա վե-

րայ է խօսում, ամենքն իւրեանց գարդն ունին:

— Տէր Աստուած, աղաղակեց Գօն Քիշօար, ի՞նչ են նշանակում այդ բազմաթիւ առածները:

— Դոքա նշանակում են, պատասխանեց Սանիսօն, որ մինչև դուք այս լեռներում յիմարութիւններ կանէք, ես գիւղը կվերադառնամ իմ կնօջս ու զաւակներիս մօտ:

— Դու այդ կարող ես անել, բայց չմուանաս ինձ մօտ գալ երկու շաբաթից յետոյ, ես այսքան միջոց եմ նշանակում ապաշխարութեանս համար:

— Թու Քիշօար այս խօսքերն ասելիս մօտեցաւ մի բարձր լեռան ստորոտին, որը միւսներից հեռու բարձրանում էր ծաղկալիքու աղբիւներով ոռոգուող մարգագետինների մէջ տեղը: Այս տեղը խիստ հաճոյ թուաց տիտուր պատկերի ասպետին, որև վճռեց այդտեղ մնալ: Նա խկոյն ձիուց վայր իջաւ, Ռօսինանտի վերայից թամբն ու սանձը վերցրեց և ձեռքը նորա մէջքին զարկելով՝ ասաց:

— Գնա՞ս, ուրախացիք, իմ աղնիւ ձի և մեծագործութիւններիս ու աշխատանքներիս մեծահոգի ընկեր:

— Մի բոպէս սպասեցէք, ընդհատեց Սանիսօն, դուք գիտէք, պարոն ցնորուած ասպետ, որ էշ գողացան. Ռօսինանտը խիստ լաւ կիտիսարինէր նորան ճանապարհորդելու համար, որ ես մոտագիր եմ անել որովհետեւ ոտով չեմ կարող մանգալ:

— Ընդդէմ չեմ այդ բանին. միայն քեզ առաջարկում եմ մի կամ երկու օր այստեղ մնալ, ականատես լինելու այն ամեն յիմարութիւններին, որ ես անելու եմ:

-Ես առանց այդ էլ շատ հմտեսել:

-Զէ, գու գեռ բոլորը չես տեսել:

-Տեսնելու ի՞նչ ունիմ, աւելի լաւ է այժմ՝ զնամ: Քայց, ողբարձ տէր, խնդրեմ ձեր գրքոյի մի թերթի վերայ մի ընծայական գրեցէք այն երեք աւանակների մասին, որ դուք խոստացաք ինձ: Խնդրեմ մաքուր ստորագրէք նորան, որ նորա ճշտութեան մասին չկասկածեն:

-Ահծ ուրախութեամբ

Եւ Դօն Քիշօաը խսկոյն գրեց.

«Ալիրելի՛ եղբօրաղջեկա»

«Պատուիրում եմ ձեզ նամակաբերիս տալ ձեր հսկողութեան տակ գտնուած երեք հատ հնգամեռայ աւանակները. նոցա ծախը կդրէք և յիշեալ Սան-խօի ստացականը ինձ կներկայացնէք: Գրուեցաւ Սի-երբա-Մօրէնա լեռներում, սոյն տարուայ օգոստոսի 26-ին:

-Շատ գեղեցիկ է, ասաց Սամիսն, դուք մինչեւ կստորագրէք, ես Ռօսինանարը կթամքիմ: Իրաւ, զի-տէք, տէր, որ ես վախում եմ թէ չկարողանամ ձեզ այսուղ գտնել վերադարձին. այս տեղը ծածկուած է և անմերձենալի:

-Քարեկամ, գու լաւ ես մոտածում: Խորհուրդ եմ տալիս քեզ չմոլորուելու համար ծխւղեր թա-փել ճանապարհին մինչեւ հարթ տեղ համելը. վե-րադառնալիս նոցանով ճանապարհը կդանես:

Սամիսն ընդունեց այս, աշագին կապ ծառերի ճիւղեր կարտեց և իւր ակրօջ օրհնութիւնն ու Ռօ-սինանտին զգուշանալու խորհուրդն ընդունելով՝ հա-

նապարհ լնկաւ: Հազիւ նարանից հարիւր քայլ ան-ցել էր, երբ շտապով յետ դարձաւ:

-Դուք Ճմարիտ էք ասում, ասաց նա, ինձ թւում է, որ ես անպատճառ պիտի ձեր յիմարու-թիւններից մի քանիսը տեսնեմ, որ հարկաւոր դէպ-քում խղձմտանքով ասեմ երդմնելիս:

Ես դեռ չեր վերջացրել այս խօսքերը, երբ Դօն Քիշօաը զէնքերը վայր ձգելով, մերկացաւ բոլորովին և այսպէս երկու անգամ թռչողոտաց ու երկու ան-դամ էլ զիսի վերայ կողը պատցա արեց: Սամիսն այս էլ բաւական էր, նա ձին շուռ բերեց և ծիծա-ղեց թուլացած՝ շտապով ճանապարհ լնկաւ:

Գլուխ Բ.

Տիոնի Պատկերի ԱՍՊԵՏԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԲ: ՄԻԿՈՄԻԿՕՆԻՆ ԻՇԽԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: ՀԻՒՐԱՆՈՅ ՎԵՐԱԴԱՌԱՆԱԼ: ԶԱՐՀՈՒԹԵԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՈՐԻ ՄԵԶ ԴՕՆ ՔԻՇՕՏԸ ՅԱՂԹՈՂ է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ:

Թողնենք ախուր պատկերի ասպետին իւր յի-մարութիւնների մէջ, և տեսնենք, թէ մեր Սամիսն ինչ է անում: Բարի զինակիրը յաջող կերպով դուրս եկաւ Սիերբա-Մօրէնի քարտնձաւից և իւր տիրոջեց բաժանուելուց մի օր ու գիշեր յետոյ հասաւ... զի-տէք ուր—նոյն վտանգաւոր հիւրանոցին, ուր նորան ծաղըցին և զնդակի ուկս խաղացրին: Նա նորան ճանաչելուն պէս՝ խսկոյն ամբողջ մարմնով զողաց: Սա-կայն սոված լինելով նա կանգնեց ու սկսաւ նայել

բակի գոնսերին, չկամենալով մանել այնտեղ: Այդ իսկ ըսպէին հիւրանոցից երեք մարդ գուրս եկան, որոնցից մինը ասաց միւսին:

— Պարոն դատաւոր, սա այն Սանխօն չէ, որ մեր հերոսի հետ ման էր գալիս:

— Այս իսկ նա է, պատասխանեց հաշտարար դատաւորը, այ տես, այս էլ Դօն Քիշօտի ձին: Յետոյ դատաւորն ու սափրիչը (խօսողները սոքա էին) մօտեցան մեր Ճանապարհորդին:

— Սանխօն բարեկամ, ասաց նորան դատաւորը, քո տերն ի՞նչ եղաւ:

Համեստ զինակիրը սկզբում չէր կամենում իւր ասպետի գաղանիքը բանալ. բայց շուտով բանտարկուելու երկիւղից նա ամենը յայտնեց և մանրամասնօրէն պատմեց Դօն Քիշօտի անմիտ արարքները, վերջն աւելացնելով, որ տիտուր պատկերի ասպետը, երբիւր քառութիւնը կվերջացնի, վճռել է, որ մի տեղ տիւրապետի, իսկ ինչ իւրեան—Սանխօն է վերաբերում: Նա ևս մտադիր է շուտով այրիանալուն պէս պսակուիլ պալատական օրիորդներից մէկի վերայ, որ իբրև օժիտ մի կտոր լաւ երկիր կբերէ, մանաւանդ որ իւր ունեցած յոյսը կղզու տիրապետութեան վերաբերութեամբ, արդէն չի գրաւում իւրեան:

Սանխօն այս բողոքը այնպէս սառնութեամբ ու հաստատութեամբ պատմեց, որ դատաւորն ու սափրիչը չկամեցան վիճել նորա հետ դորա մասին, և նորան էլ նոյնպիսի խելացնոր կարծեցին, որպիսին և նորա տիրօջը:

— Բարե վայելես այդպիսի փայլուն ապագադ, ա-

սաց բարի դատաւորը ժալտելով բայց իմ կարծիքով ամենից լաւն այն է, որ այժմ քո տիրօջդ աղատենք այն անսապատ տեղից և համոզենք նորան հրաժարուելու այն խիստ ապաշխարհից, որ նորան մի օգուտ անգամ չի բերիլ: Մենք սորա մասին ճաշին կլուսենք: Գնանք միասին հիւրանոցը,

— Ու պատասխանեց Սանխօն, եթէ կթոյլ տաք, ես այստեղ կմնամ: Ժամանակով ես սորտ պատճառը կասեմ ձեղ (պիտի խոստովանել որ Ճշմարտակը Սանխօն հարկաւոր ճամարեց իւր զլխի անցքը նոցապատմելու): Իսկ այժմ այստեղ ինձ համար ճաշ ու զարկեցէք և Ռուսինանտին էլ կերակուր:

— Նորան այլևս չխօսացրին և սափրիչը պատուիրեց որ նորան ճաշ տան:

Եյդ միջոցին դատաւորը մի լաւ հնար գտառ Դօն Քիշօտին տուն վերադարձնելու համար: Սափրիչ Նիկոլան պիտի սափրէր իւր մօրոքը, երեսը ներկէր մութը գոյնով և մատաղահաս թափառական իշխանի շորեր հագնէր, իսկ ինքը կձեւանայ իբրև նորա զիւնակիր և ընկնելով մեր ասպետի ոտները, կինդրի վրէժինդիր լինել նենգաւոր ասպետին, որ հօրից յետոյ որբացած մատաղահաս իշխանին զըկել է իւր թագաւորական գահից. այսպիսով՝ ՚ի հարկէ, կյածողի Դօն Քիշօտի մտադրութիւնը փոխել ու զիւլը տառնել, ուր մի անգամ ևս կփորձէն նորա ցնողքը բըժըշկել:

Սափրիչ Նիկոլան դատաւորի մտածած հնարքը շատ հաւանեց և իսկըն կամեցաւ ՚ի կատար ածել այն: Նա իւր դէմքը ներկեց և իշխանի շորեր հա-

գտաւ, այն է, ոսից գլուխ մի ու շոր՝ սպի նշան։ Իսկ բարի մասնագէտ-Ասուուածարան Պէրօ Պէրէսը իբրև մօրուք կովի մի շիկամազ խիտ ապի կպցրեց, որը պանդոկապետին ծառայում էր սանրներ մաքրելու համար։ Պանդոկապետի կինը ցանկացաւ այս դիմակաւորութեան պատճառն իմանալ և երբ պատմեցին նորան Դօն Քիշու անունով մարդու ցնորդուելու պատմութինը, նա խկոյն իմացաւ, որ այն ամսահ բալսանի հերոսի և նոցա ծաղրած զինակրի մասին է խօսքը։ Նա պատմեց թէ բանը ինչպէս էր, չմոռանալով և այն հանգամանքը, որ Սանխօն կամենում էր ծածուկ պահել։ Երբ սափրիչն ու մասնագէտը վերջացրին իւրեանց գործը, նստան իւրեանց իշաների վերայ և մնաս բարեաւ ասացին պանդոկապետին, նորա կնօջ և Մարիտօրնախն, որ խոստացաւ ազօթել նոցա յանձն առած գործի յաջողութեամբ վերջանալու համար։

Սանխօն, որ նոցա սպասում էր, տեսնելով այս դիմակաւորներին՝ չկարողացաւ զսպել իւր ծիծաղը։ Նոքա պարզելով իւրեանց խկական նպատակը, նորան հաւատացրին, որ այս դիմակաւութիւնը պիտի օգնէ ասպետի խոստման իրագործումը շտապեցնելուն, միայն թէ սորա մասին Դօն Քիշուին ոչինչ չասի։ Սանխօն երգուեց, որ կը է, և նոցա հետ ճանապարհ ընկաւ դէպի Սիրերա-Մօրէնա։ Նոքա միւս օրը հասան այն անստառին, ուր զինակիրը թափել էր ծառի Ճիւղերը ճանապարհը մտարերելու համար և որտեղից մի փոքր հեռու մեր արկածախնդիրները պայուղից մի փոքր համակաւորութիւնից, թէպէտե անմեղ

դակցելու համար և վճռեցին, որ Սանխօն առաջ գնայ Դօն Քիշութին որոնելու համար։ Նա իւր երկու ընկերներին թողնելով աղքեւրով ոռոգուող մարգերում մեծ մեծ ծառերի ստուերների տակ առաջ գնաց։ Օդոստոս ամսին էր այս, կէսօրից յետոյ երեք ժամի մօտերքը, երբ տաքութիւնը իւր ամենավերին աստիճանին էր։ Դատաւորն ու սափրիչը նստելով ստուերի տակ աղքեւրի ափին, խօսում էին միմեանց հետ այն գժուարութիւնների մասին, որոնք մատաղահաս մարդու առաջելը կային, երբ յանկարծ մի փոքր հեռու իւրեանցից՝ լսեցին հետեւեալ խօսքերը.

— Անիծեալ պայուսակ, սակայն ես կարծում եմ, որ այստեղ պէտի կորցրած լինիմ։

Դատաւորն ու սափրիչը խկոյն վերկացան, գընացին այնտեղ, որտեղից կարծես ձայնը լսում էր և տեսան մի ճանապարհորդ, որ, ըստ երեւութին՝ տասնեւութին կամ քանի տարեկան էր։ Նորան նշան անելով սոքա կանեցին իւրեանց մօտ։ Նա խկոյն մօտ վազեց և գատաւորը ապահովացրեց նորան պայուսակի վերաբերութեամբ, որովհետեւ Սանխօն նորան ասել էր, թէ մի պայուսակ է գտել։ Այդ իսկ միջոցին նոքա հաղորդեցին նորան այն պատճառները, որոնք բերին նոցա Սիրերա-Մօրէնաի կողմերը և իւրեանց դիմակաւորութիւնը։ Ճանապարհորդը իսկոյն նոցա առաջարկեց, թէ ինքը կընդունէ մատաղահաս իշխանի գերը։ Նորա առաջարկութիւնը ուրախութեամբ ընդունեց հաշոարար գատաւորը, որ վախենում էր իւր դիմակաւորութիւնից, թէպէտե անմեղ

էր, որ իւր անունը չարատաւորի: Ուստի և սափրիչ Նիկօլան կպցրեց իւր ծնօտին երկար մօրուքը, իսկ ճանապարհորդը, որ Կօրդէլիօ էր ասւում, հազար իշխանի շորերը և ներկեց իւր գէմքը: Այդ միջոցին Սանխօն էլ եկաւ և աղաղակեց.

— Ի՞նչ եղաք.... ես Դօն Քիշօտին ամենատիտուր դրութեան մէջ գուայ. նա միայն մի ներքնաշորով էր, նիշարացած, գժգոյն, գեղնած և սովոր մեռնելիս: Նոտապենք նորան այն տեղից ազատելու, որովհետեւ յիրաւի նա այստեղ երբէք թագաւորութիւն չի կարուղ ձեռք բերել: Սակայն ովէ այս անծանօթը, հարցրեց նա ցյց տալով Կօրդէլիօին:

Սափրիչ Նիկօլան ծանրութեամբ պատասխանեց.

— Բարեկամ, սա Գվինէայի Միկօլիկոնեան մեծ թագաւորութեան օրինաւոր ժառանգն է, որ գիտութեամբ եկել է այստեղ ինդրելու հռչակաւոր տիտուր պատկերի ասպետից վրէմինդիր լինել այն հսկային, որ զրկել է սորան իւր գահից:

— Աերեցէք, գոչց զինակիրը հաւատացնելով նորան, որ նա չի զղջայ: Իմ պարոնս մի անգամով կապանի այն չարագործ հսկային: Բայց ի՞նչ է այս թշուառի անունը:

— Աս տուում է Միկօլիկոնին իշխան, որովհետեւ Միկօլիկօն թագաւորութեան իշխողն է:

— Այս, հասկանում եմ Գվինէայումն էլ ուրեմն, ինչպէս և մեր կողմերը, իւրեանց գիւղերի անուններովն են անուանում:

Կօրդէլիօն նստեց գատաւորի, իսկ սափրիչը իւր ջորու վերայ, վերջինս չարունակ կրելով կովի

ագուց շինած մօրուքը: Դատաւորը, որ այլ ևս կարեոր գեր ըռներ խաղալու, պատուիրեց Սանխօնին՝ իշխանին առաջնորդել և խիստ կերպով արգելեց նորան Դօն Քիշօտին որևէ բան ասելու՝ նորա ու սափրիչ Նիկօլաի մասին, հաւատացնելով նորան, որ եթէ այդ ամենը գաղանի չի մնայ, Դօն Քիշօտը չի կարող թագաւորութիւն ձեռք բերել: Սանխօն նորից խոստացաւ լուել և նոքա երկուսն էլ ճանապարհ ընկան:

Երեք քառորդ մղնն անցնելով, նոքա տեսան ասպետին հագնուած, միայն առանց զըաշների: Կօրդէլիօն ջորու կողքին խթեց: Երբ նա հասաւ Դօն Քիշօտին, մորուեղ զինակիրը իսկոյն ջորուց փայր թռաւ և օգնեց իշխանին էլ վայր իջնելու: Իշխանը ծնկազոդ ընկաւ ասպետի առաջ:

— Ո՛հ, թափառական ասպետութեան փառքն ու պարծանք, աղաղակեց նա, Լամանշեցի մեծահոգի հսկայ. դիմում եմ ձեր մեծահոգութեան և խնդրում եմ, որ վրէմինդիր լինէք ինձ տուած անարդանք ներին:

— Խոստանում եմ կատարել այդ, պատասխանեց Դօն Քիշօտը, եթէ միայն այդ բանի մէջ ոչինչ չկայ ընդդէմ թագաւորական ծառայութեան և իմ հայրենին այց շահներին:

Սանխօն այս գատարկարանութիւնից համերութիւնը կորցնելով՝ փափաց իւր տիրօջ ականջում:

— Այս գործը բոլորովին կազ ըռնի Խաղանիացի թագաւորի հետ. բանը միայն նորանումն է, որ պէտք է մի չարագործ հսկայի սպանել, որի մասին ձեզ

ինդրում է իշխան Միկոմիկօնինը, Գլենէայի Միկոմիկօնեան մեծ տէրութեան ժառանգը:

— Անիր, պատասխանեց Դօն Քիշօար, ես զիտեմ իմ կոչմանս պարտաւորութիւնը: Վերկացէք, իշխան, ես ձեր ինդիրը կիատարեմ:

— Ուրեմն խնդրում եմ, անյաղթ ասպետ, որ նոյն իսկ այժմ հետեւէք ինձ, որպէս զի դեռ վրէժը չառած այն գաւառնանից, որ ամենոյն օրէնքներին հակառակ յափշտակեց թագաւորութիւնս, ուրիշ դործի ձեռնամուխ չլինէք:

— Երդում եմ, որ ձեր ասածի պէս կամեմ: Ճաշ նապարհ ընկնենք իսկոյն: Փառքի համար կողցրած մի բոպէն անդամ՝ գժուար է այլ ևս գտնել:

Այդ ժամանակ իշխանը կամենում էր ասպետի ձեռքը համբուրել, սակայն Դօն Քիշօար քաղցրութեամբ զրկեց նորան և իսկոյն Սանխօին պատուիրեց զէնքերը բերել և Ռօսինանոր թամբել: Սափրիչը ծունկ չոգած լինելով, չեր համարձակում ոչ խօսել և ոչ տեղից շարժուել վախճանով, թէ մի՛ գուցէ կողցրած մօրուքը վայր ընկնի: Երբ նա տեսաւ, որ Դօն Քիշօար ձի նստեց, իսկոյն վերկացաւ, վագեց Կօրդէլիօի մօտ օգնելու նորան ջորու վերայ նստելու և յետոյ ինքն էլ հետեւեց նորան: Միայն խեղճ Սանխօն էր ոտով գնում և ամեն անդամ իւր էշը մոտերդիլի՛ ծանր ախ քաշում: Սակայն նա այնունային միմիթարում իւրեան: Միայն իսկ մասն էր հետեւ մասնակի մացառից դուրս եկաւ ուղղակի մեծ ճանապարհի վերայ և տեսնելով մեր հերոսին՝ զիտութեամբ մեծ զարմանք յայտնեց և գրկաբաց վաղելով նորա մօտ՝ ազաղակեց:

ստորագրեաները նեզըներ պիտի լինէին: — Աւելի լաւ, մի փոքր մասածելուց յետոյ ասոց նա ինքն իւրեան, զա ինձ համար արշեանց ազեփեր կալող է լինել: Ես իմ հապատակներիս Խապանից կուզարկեմ, ուր նուցա կծախեմնազդ փողով որով էլ կգնեմ ինձ համար մի արդինաբեր տեղ կամ ծառայութիւն, և անհոգ կանչնեմ կեանքիս մնացորդը: Հը, զուք ինձ դեռ չէք ճանաչում, միբելի՛ ստորագրեաներս, ես ձեզ բոլորից կծախեմ, թէ մեծիդ ու թէ փոքրիդ, և սատանից էլ որ մել լինէք, ազիտակ արծաթներ կդարձնեմ ձեզանից:

Անխօն ոտով Ճանապարհ գնալուց նեղացած՝ այսպէս էր միմիթարում իւրեան: Սակայն հաշտարար գաւառնորը մացառների տակից, ուր թագ էր կացել տեսնելով այս եկաւորներին՝ վճռեց միսնալ նուցա հետ: Կասկածից ազատուելու համար նա ամենահօտիկ մացառից դուրս եկաւ ուղղակի մեծ ճանապարհի վերայ և տեսնելով մեր հերոսին՝ զիտութեամբ մեծ զարմանք յայտնեց և գրկաբաց վաղելով նորա մօտ՝ ազաղակեց:

— Այս գուք էք, ուրեմն սխալուած չեմ: գուք էք, իմ քաջ հայրենակից, երեւելի Դօն Քիշօտ Կամանշեցի, նեղացածների նեցուկ ու պաշտամն և թափառական ասպետութեան փառքն ու պարծանկը:

Դօն Քիշօար զարմացաւ, բայց վերջապէս ճաշնաչեց նորան և իսկոյն առաջարկեց նորան իւր ձին: բայց գաւառորը մերժեց և նստեց սափրիչը ջորու վերայ, որ առանց սպասելու հրամանին, իսկոյն վայր իջաւ նորանից: Ճանապարհն Դօն Քիշօար խնդրեց

Միկոմիկօնին իշխանին իւր թշուառութիւնները պատմել:

—Ես պարտաւորութիւն եմ համարում պարզել ձեզ այդ բոլորը, ողորմած տէր, պատասխանեց Կօրդէլիօն, և պատրաստ եմ ձեր ցանկութեանը բաւականութիւն տալու:

Այս ասելով նա ուղղուեց իւր ջորու վերայ, յետոյ հազար, թքեց, փռշտաց ու սկսաւ պատմել:

—Ողորմած տէարք, ամենից առաջ յայտնում եմ ձեզ, որ իմ անունս Միկոմիկօնին է: Հայրս, որ Միկոմիկօնեան մեծ պետութեան իշխան էր, անուանուում էր Տինակիր իմաստուն: Այսպէս անուանում էին նորան իւր հմտութեան պատճառաւ մոգութեան մէջ: Նա այս գիտութեան շնորհիւ իմացաւ, որ իմ մայր Քսամարիլան իւրեանից առաջ պիտի մեռնէր, և որ ինքն էլ ինձանից վաղ կմեռնի և ինձ որբ կթողնի: Նորան աւելի տիրացրեց այն, որ նա իւր գերբնական իմացականութեամբ տեղեկացաւ, թէ իւր տէրութիւնը պիտի նուածէ մօտակայ մեծ կղզու իշխան Փիլատեան Պանդաֆիլանդն, որովհետեւ նա խէթ էր նայում իւրեան: Հայրս այն էլ իմացաւ, որ ես ազատուել կարող եմ միայն Պանդաֆիլանդօի աղջկայ վերայ պատասխովը. բայց գիտենալով, որ ես երբէք յանձնառու չեմ լինի այնպիսի մի տւագակի փեսայ գառնալու, նա ինձ խորհուրդ տուեց իսկոյն իւր մահից յետոյ թագչել, և Խապանիսայ գնալ ուր ես հզօր պաշտամութիւն ու հովանաւորութիւն կարող եմ գտնել մի հուշակաւոր թափառական ասպետից, որ Գօն-Ծիկոտ, Գօն Խիդօտ թէ Քիշօտ է ասում: Նա աւելացրեց և

այս, որ այն քաջ մարտիկը բարձրահասակ է, նիհար և աջ ուսին սև նշան ունի:

Այս որ լսեց Գօն Քիշօտը ձայն առեց իւր գինակրին:

—Բարեկամ, ասաց նա նորան, իսկոյն շորերս հանիր:

—Ի՞նչ հարկաւոր է այդ, հարցրեց Կօրդէլիօն:

—Զեզ հաւաստիացները համար, իշխան, որ նոյն խել ասպետն եմ ես, որի մասին ձեր ձնողը խօսել է ձեզ հետ:

—Այդ անօգուտ է, պատասխանեց Սանխօն, գիտեմ որ ձեր կրծքին սև բիծ կայ. դա քաջութեան նշան է:

—Այդ էլ բաւական է, պատասխանեց իշխանը, հօրս նախագուշակութիւնը միանգամայն կատարեաւմ է: Արտաքին տեսքը, գեմքի գծագրութիւնը, հասակը և բոլոր նշանները բոլըրովին երեւում են ձեզ վերայ. ձեզ է ուրեմն նախախնամութիւնը ընտրել իմ գահս յափշտակողին արտաքսելու: Մոռացայ ձեզ ասել, որ Տինակիր թագաւորը յունարէն թէ արաբերէն գրած նամակ թողեց, որ ես չկարողացայ կարգալ, և որով նա ինձ պատուիրում է, թէ երբ արդէն յիշեալ ասպետը կապանի Պանդաֆիլանդօին, իսկոյն իմ թագաւորութիւնս նորան տամ, ինդրելով որ ինձ իւր ժառանգը համարի, որովհետեւ այն ասպետը ինձ որդու աեզ պիտի ընդունի:

—Է՛ս, հիմի ի՞նչ ես կարծում, բարեկամ Սանխօն, ասաց Գօն Քիշօտը, հիմի էլ ես վախում որ չենք կարող թագաւորութիւն ձեռք ձգել:

— Ճշմարիտ էկը առօւմ, ողորմած տէր, պատսաւ խանեց Սանխօն ուրախութիւնից խելքը կորցնելով. համաձայն եմ ձեզ հետ ամեն բանի մէջ: Միայն շտապեցէք այն անգամ հսկայ Պէնդարդոխ վեզը կոտրելու:

Այս որ ասաց զիւրահաւան զինակիրը երկու անգամ թռչոտաց և մօտեցաւ Միկոմիկօնին իշխանին ձեռքը համբուրելու, որը իւր պատմութիւնը հետեւալ խօսքերով վերջացրեց.

— Ահա, ողորմած տեալք, իմ թշուառութիւններիս պատմութիւնը: Իմ թագաւորութիւնից ինձ ուղեցող բոլոր խմբերից միայն մի երկարմօրուք զինակիրս մնաց. մնացածները ծովի կատաղի մրգին զոհ գնացին: Ես ու զինակիրս էլ հազիւ կարողացանք նաւի բեկորների վերայ աշատուել:

— Ա՞ի վշատուեք, իշխան, գոչեց Գօն Քիշօտր, ձեր թշուառութիւնները շուտով կվերջանան. դարձեալ երգումեմ, որ ձեռք չեմ վերցնի ես ձեզանից, մինչեւ որ նենգաւոր Պանդաֆիլանդի գլուխը կէս չանեմ:

Այս միջոցին նոքա Ճանապարհին իշխ վերայ նստած մի մարդ տեսան, որ բօշայի նախն էր: Սանխօն, որ ամեն անգամ էշ տեսնելիս սիրաը թրթրում էր, տեսաւ թէ չէ այն, իսկոյն ճանաչեց իւր իշխին, և նորա վերայ նստող ծինէս Պասսամնախին:

— Այ գուղ Փինեսիլլա, աղաղակեց զինակիրը, յետ տուր իմ բարիքը, իմ կեանքը, բաղտաւորութիւնը, մէրը, իմ միակ ուրախութիւն: Իմ էշ յետ տուր, աւաղակ:

Ճինէսը տեսնելով Սանխօնին ահազին բազմու-

թեան հետ, խօսքերը չկրկնել տուեց և իշխ վայր թռչելով շտապով վաղեց դաշտը:

Սանխօն արդէն իւր իշխ մօտ էր և քնքշութեամբ դրկել էր նորան:

— Ուրեմն, ես գարձեալ տեսայ քեզ, զաւակս, ընկերս, բարեկամն:

Է՛ն էլ լրիկ մնջեկ թռոյլ էր տալիս նորան գըրկելու իւրեան: Ամենքը միասին ուրախացան զինակիրի հետեւ նա Գօն Քիշօտր հաւաստիացրեց նորան, որ թէպէտեւ նա իւր էշը գտաւ, բայց այնուամենայնիւ գարձեալ կնուիրէ նորան իւր խտացած երեք իշուկները:

Վոքա հասան մի վճիռ աղբւրի, ուր և վըճուեցին մի փոքր հանգստանալ: Մեր ճանապարհորդները վայր իշխան գետին, նստեցին խոտի վերայ և թեթեւ նախաճաշեցին գատաւորի հիւրանոցից վերցրած պաշարովը:

Այդ միջոցին գոցա մօտով մի պատանի անցաւ, որ տեսնելով Գօն Քիշօտին՝ իսկոյն մօտեցաւ նորան.

— Բարեւ ձեզ, պարոն. ասայ նա նորան ողորմուկ ձայնով. ինձ չէք ճանաչում. գուք ուրեմն մօսացել էք այն Անդրէասին, որին ձեր ողորմածութիւնը բարեհաձեց կաղնի ծառից յետ անել:

Գօն Քիշօտը նորան ձեռքից բռնեց և ներկայացրեց իւր ուղեկիցներին:

— Ինձ շատ հաճելի է, գոչեց նա, ներկայացնել ձեզ թափառական ասպետութեան բերած օգուտների կենդանի օրինակը: Սորանից մի փոքր ժամանակ առաջ անտառով անցնելիս ևս ողորմելի ձայներ լսեցի և տեսայ այս մասաշահոս պատանուն, որին մի

տմարդի գիւղացի փոխանակ սորա վաստակած փողերը տալու՝ իրացով ծեծումէր: Նս իսկոյն պատուիրեցի յետ անել սորան ծառից և սորա տիրօջը երդմնեցրի, որ մինչև վերջին դրամը կհատուցանի սորան իւր հասանելեքր: Այսպէս չէ, Անդրէաս բարեկամ, այդպէս չէր բանը:

— Ճիշտ այդպէս էր, պատասխանեց պատանին, բայց երբ դուք գնացիք.....

— Այն ժամանակ պարոնդ իսկոյն տուեց բոլորը:

— Այս, իրաւ է, միայն սարսափելի փող տուեց: Նա ինձ նորից կապեց ծառից և այնքան հարուածեց, որ հոգիս գուրս եկաւ: Այսուհետեւ ես հիւանդանոցից գուրս չեմ եկել: Եթէ դուք չխառնուէիք, պարճն ասպետ, այն ժամանակ առաջին պատժովը կազատուէի և փողս կատանայի, բայց դուք իմ տիրօջ բարկութիւնը աւելի շարժեցիք և նա ձեր պատճառաւ ինձ վերայ թափեց իւր բարկութիւնը:

— Անիսօ, շուտ Ռօսիկանոս թամքիր, աղաղակեց մեր հերոսը, բարկութիւնիցը կատաղելով: Նս կամենում եմ իսկոյն գնալ և ամենախիստ կերպով վրէժիրնդիր լինեմայն չարագործներից:

— Հանդիստ կացէք, ինդրեմ, տէր, պատասխանեց Անդրէասը. ես աւելի շնորհակալ կլինեմ, եթէ մի բան տաք ինձ դորա փոխարէն:

Անիսօն նորա ձեռքը դրեց մի կտոր հաց ու պանիր:

— Եօր, վերցրու, բարեկամ, ասաց նա. Աստծուն էլ յայտնի է, որ ես քեզ բոլորովին առանց մի ակընկալութիւն ունենալու օգնումէր, որովհետեւ թափա-

ռական ասպետների զենակիրները միշտ պիտի քաղցի ու ծարաւի դիմանան:

Անդրէասը տեսնելով, որ իւրեան աւելի բան չեն տալիս՝ զլուխը կախած հեռացաւ և վագելով սկսաւ աղաղակել.

— Աստանան թող տանի բոլոր զզուելի թափառական ասպետներին, որոնք ցանկանալով մեզ օգնել փայտի հարուածներ են տալիս:

Դօն Քիշօար կամենում էր վերկենալ այն յանդուղն առաջին պատժելու համար, բայց տեսնելով որ անկարելի է նորան համնել ծանր նստեց իւր տեղը. նա այնպէս խիստ բարկացած էր Անդրէասի յանդուղն կատակի վերայ, որ ոչ ոք չէր համարձակում ծիծակատակի վերայ, որ ոչ ոք չէր համարձակում ծիծակատակի վերայ, որ ինդ մի գուցէ նորան աւելի ևս զպրացնեն:

Երբ լնիթրիքը վերջացրին, բոլորեքեան ձանապարհ ընկան և միւս օրը հասան հիւրանոցին, որից Սանիսօն շատ վախենում էր: Պանդոկապեար, նորակինը և Մարիտորնան Դօն Քիշօտին ձանաշելով՝ դուրս եկան նորա առաջ: Ասպետը նոցա իւր սովորական վեհանձնութեամբ լնդոնեց և պատուիրեց, որ իւր համար առաջուանից աւելի լու անկողին պատրաստեն, թէպէտեւ պանդոկապեաի ձեռքը ոչ ոք քընեց, երբ սա նոյնպիսի անկողին պատրաստեց և միենոյն սենեկում, ուր որ իջևանած էր առաջին անդամ: Մեր հերոսը բոլորովին յոգնած ու չարչարուած լինելով այն ամեն յիմարութիւններից, որ նա արեց լեռներում, շռառով պառկեց և քնից: Այդ միջոցում վերցրեց իւր կեղծ մօրուքը, որովհետեւ սափիրիը վերցրեց իւր կեղծ մօրուքը,

գատաւորը նորա ձեւափոխութիւնը բոլըրովին անօս գուտ համարեց: Որոշեցին Դօն Քիշօտին ասել, որ Միկոմիկօնին իշխանը իւր զինակրին ուղարկել է իւր տերութիւնը՝ ազատողի գալուստը ինաց տալու համար:

Յետոյ սկսան նախաճաշի պատրաստութիւն տեսնել: Երբ արդէն զբաղրւած էին նորանով, Սանխօն վախեցած վաղեց վերնատնից, ուր պառկած էր Դօն Քիշօրը, և սկսաւ բարձր ձայնով ծալ:

—Օգնեցէք, օգնեցէք, պարոնս սարսափելի կռուի մէջ է. ինչ կամենաք արէք ինձ, թէ ես չաեսայ, որ նա թրով հարուածում էր Միկոմիկօնին իշխանի հսկային և կարեց նորա գլուխը:

—Ի՞նչ ես ասում, Սանխօ, հարցրեց գատաւորը. հսկան այստեղեց երկու հազար մլնից աւելի հեռու. է գտնւում, իսկ քո տէրը հեռուից մարդիք չե կարող սպանել:

Այդ բոպէին նոքա լսեցին Դօն Քիշօտի աղաղի:

—Կանգնիր, գող աւազակ, գոռում էր նա, վերջապէս գտայ քեզ. ոչ սուրդ և ոչ էլ բոլոր ոյժու չեն կարող քեզ աղատնել:

Միւնոյն ժամանակ նա զարկում էր պատերին, որոնք նորա թրի հարուածներից թնդում էին:

—Օ՛հ, բանը վերջացած է, շարունակեց Սանխօն, այն չարազործը մնշուշտ հողին տուաւ, որովհետեւ ես տեսոյ թէ ինչպէս նորա արինը զետի պէս վազում էր և հսկայի տճկորի չափ գլուխը վայր ընկաւ ներքեւ:

—Ա այ, գոչեց պանդոկապետը, տունս քանդեցին: Այն անպիտանը, Դօն Քիշօտ է, թէ Դօն սատանայ, երեսի նորա սենեկում կախած զինով լիքը տճկորները թրով կտրտել է. իսկ էս յիսորն էլ զինին արին է կարծել:

Ամենքը վառած ճրագներով վաղեցին պատերազմի դաշտը: Մեր հերոսը միմիայն ներքնաշրով կանգնած էր իւր երկայն ու բարակ ունիւրով. գլխին ծածկած ունէր պանդոկապետի տուած գործած կարմիր գիշերազիլսարկը. ձախ թեր վերմնկով ունէր փամթաթած: Այսպիսի հագուստով և թուրը ձեռքին բանած, աչքերը չուած նա գոչումէր և աղմուկ էր անում սենեկում, երեւակայելով, թէ Պանդաֆիլանդո հսկայի հետ է մենամարտում և իւր թրով անխնայ կարտումէր տիճորնելլը, որոնցից կարմիր գինին առուի պէս թափեռում էր նորա շուրջը: Պանդոկապետը այս որ տեսաւ, այնպէս կասազեց, որ վրայ ընկաւ նորան և սկսաւ փառաւոր հարուածներ տալ: Նուազով նա ընդհատեց նորա մենամարտութիւնը հսկայի հետ և մի լաւ կ'ջարդէր մեր հերոսին, եթէ չազատէին սորան պանդոկատիրօջ ձեռքից: Ամեն ջանքերը, որ գործ դրին պատերազմող ասպետին զարթեցնելու համար, անօգուտ անցան և նա մինչեւ տառաօտ կքնէր, եթէ սափրիչը մի կուժ լիքը սառը ջուր չածէր նորա գլխին: Մինչեւ որ նոքա պարապած էին Դօն Քիշօտին զարթեցնելով Սանխօն շարունակ որոնում էր հսկայի գլուխը, բայց ոչ մի տեղ չկարողացաւ այն գտնել:

—Այս անիծուած տանը, բարկացած գոչեց նա,

ոչինչ դրական բան չկայ. այսուեղ ամեն բան դիւթած է: Ինքս տեսայ որ գլուխը վայր ընկաւ ներքեւ, իմ աչքովս տեսայ, թէ ինչպէս կարեցին նորան, աղբիւրների պէս վազող արիւնը տեսայ—և այժմ ամեն բան անյայտացաւ:

—Միթէ դու չես տեսնում, անդամ, աւազակ, պատասխանեց պանդոկապետը կատաղած, որ քո կարծիքով աղըիւրի պէս վազող արիւնը գինի էր, որով ամբողջ սենեակը ողողուած է: Ուր է մի սատաշանները քո տիրոջն էլ այդպէս արիւնշաղախ անէին դժոխի մէջ:

—Եյդ բոլորը շատ լսւ է, ասայ Սանխօն, բայց ես տեսայ որ գլուխը վայր ընկաւ և որովհետեւ ետայն չդտայ՝ պիտի դքսութիւնս կորցնեմ:

Ա երջապէս Դօն Քիշօռը զարթնեց և զարմացած նայեց իւր չորս կողմբ: Յանկարծ նա զառնաշլով կորդէլիօն՝ ասաց.

—Իշխան, այլ ևս մի վախէք: Ձեզ ատող հսկան չկայ այլ ևս. այս ձեռքով ես նորան փոշի գարձրի:

—Լ սում էք, գոչեց Սանխօն, հսկան այս պարկի մէջ է: Այժմ դքսութիւնս ոչ մի տեղ չի գնալ:

Ամենքը ծիծաղեցին պարոնի խելացնորութեան ու ծառայի յիմարութեան վերայ, բացի պանդոկապետից, որ կամենում էր յարձակուել նոցա վերայ և բռնում էին նորան իւր կինն ու Մարիաօնան, որոց աղաղակը նոյն իսկ Պանդաֆիլանդոին էլ կարող էր զարթեցնել, եթէ յիրաւի նա սպանուած լինէր առապետից: Վերջապէս դատաւորը հաշութիւն ձգեց, նա Դօն Քիշօռին խնդրեց, որ անկողնում պառկի և

պանդոկատիլոջ խոտացաւ բոլոր վնասը վճարել: Կորդէլիօն էլ միսիթմարում էր Սանխօնին, հաւատացնելով, որ նա թէպէտե հսկայի դլուխը կորցրել է, բայց չնայելով դորան այնուամենացնիւ կատանայ մի ընտիր դքսութիւն իւր տէրութիւնից, երբ ինքը կվերադառնայ իւր թագաւորութիւնը: Դօն Քիշօռը քննեց:

Գլուխ թա.

Հիմքանոցի Անջրը:

Ա մենքը ներքեւ իջան. պանդոկապետը կանգնած էր դուների մօտ ու նայում էր մեծ ձանապարհին. յանկարծ նա ձայնեց:

—Մի քանի ձևաւորներ են գալիս. եթէ նոքայսուեղ կիջևանեն՝ այսօր լաւ վաստակ կունենամ:

Կորդէլիօն մօտ վազեց և իսկոյն յետ դառնալով ասաց.

—Իմ բարեկամներս են գալիս, որոց ես սպասում էի. նոքա մեղ հետ կմիանան:

Յետոյ դառնալով գէպի դատաւորը՝ աւելացրեց.

—Յարդելի՛ պարոն, ահա մեղ մօտ դարձեալ օգնականներ են գալիս: Սոքա երիտասարդ մարդիք են, որոց հետ ես միասին ձանապարհորդում էի: Մենք այն ժամանակ բաժանուեցանք միմեանցից, երբ ես գնացի լեռները՝ կորցրած պայուսակս որոնելու համար: Մենք որոշեցինք այս հիւրանոցը հաւաքուել միմեանց գանելու համար:

Սանխօն լսելով այս խօսքերը՝ դեղնեց և աւելի

վախեցաւ այն ժամանակ, երբ դատաւորը ասաց նորան, թէ պայուսակը պիտի վերադարձնի. նու ախքաշելով գնաց նորա հտեւից:

Եյդ միջոցին ճանապարհորդները հիւրանոցը մտան և սկսոն Կօրդէլիօին հարցուփորձ անել պայուսակի մասին: Նորան չորհաւորեցին դանելու համար և իմացրին, որ նոցա մի քանի բարեկամ ներն էլ շուտով կդան այս հիւրանոցը, և նոցա հետ միասին ճանապարհ կընկնեն:

Բայց դիմէք թէ այդ միջոցին Սանխօն ինչ էր անում: Նա ծեծում էր, հառաջում էր, ու ասում դեռ նոր զարթնած Դօն Քիշօտին:

—Դուք, տէր, նորից կարող էք քնիլ դուք այլ ևս կոռւելու ոչինչ չունիք հսկայի հետ և իշխան Միկոմիկոնինին իւր տէրութիւնը վերադարձնելու. ամեն բան վերջացած է ու վճռուած:

—Ճշմարիտ է, պատասխանեց տիսուր պատկերի ասպետը. ես այն զարհուրելի կուուի մէջ կորեցի ահագին հսկայի գլուխը և նորանից առուի պէս թափող արիւնը հոսում էր ոտներիս տակ:

—Եյդպէս չէ, տէր, այդպէս չէ: Այն հսկան, որին դուք կէս արիք՝ գինով լիքը տկճոր է եղել խկ նորանից հոսող արիւնը՝ զինի. կտրած գլուխն էլ բոլորովին սուտ է եղել:

—Ինչե՞ր ես ասում, Սանխօ, հօ չե՞ս ցնորուել:

—Դեռ մի բան էլ աւելի եմ ցնորուածից. վերկացէք, տէր, վերկացէք, դուք լու լու բաներ կը տեսնէք, թէ ինչպէս իշխան Միկոմիկոնինը յանկարծ փոխարկուել է մի ինչ որ Պ. Կօրդէլիօի:

—Դորա վերայ չեմ զարմանում, բարեկամն, այս անիծած տանը ամեն ինչ կախարդած է:

—Ան, պարո՞ն Դօն Քիշօտ, դորա համար ձեզ հետ չէի վիճի, եթէ համզուած չլինէի, որ ինձ այսուել խաղագնդի պէս պարեցնելը երևակայական կամ ցնորք լինէր, և եթէ ես ստիպուած չլինէի իմ գտած պայուսակին ու նորա միջի սկիները վերադարձնելու: Դուք ինչ կամենաք ասացէք, տէր, իսկ ինձ այս վերջին հանգամանքը բոլորովին խելքից հանեց:

Այն ժամանակ, երբ Սանխօն ասպետին հազցնում էր, դատաւորը Կօրդէլիօի բարեկամներին հազորդեց Դօն Քիշօտի ցնորքները, նորա հետ պատահած դէպքելը, և այն խորամանկութիւնը, որ իւրեանք գործ դրին նորան անապատից գուրս բերելու համար: Ամբողջ խմբի ամենաուրախ երիտասարդը, որի անունն էր Դօն Ֆէրնանդ, որ մի կուշտ ծիծաղեց այդ պատմութիւնը լսելիս, Կօրդէլիօին համոզեց, որ այն հնարքները շարունակի, մինչև որ նորան տուն կհասցնեն:

Փէրնանդը դեռ շարունակում էր իւր խօսքերը, երբ Դօն Քիշօտը եկաւ ոտից դուխ զինուորուած: Նորեկ հիւրերը խիստ զարմացան, տեսնելով նորա երկայնաձև, նիշար ու թուխ դէմքը, սաղաւարտի փոխանակ զիսին դրած կոնքը, և այն հռարտ ու ծանր շարժուածքը, որ նա ունէր Կօրդէլիօին հետեւալ խօսքերն ասելիս.

—Իշխան, ես իմ զինակրից իմացայ, որ ձեր պայտառափայլութիւնը մի փոքր ստորացել էք և հզօր

թագաւորութիւնից յանկարծ իջել էք հասարակ մարդկանց կարգը: Եթէ այս բոլոր ձեւակերպութիւնները լինում են ձեր հօր— այն մեծ կախարդ թագաւորի հրամանով, վախենալով, որ իբր թէ իմ բազուկս կարող չէ վերադարձնել ձեզ ձեր թագաւորութիւնը, այն ժամանակ ես ոչինչ չունիմ պատասխանելու, բայց միայն, թէ այն կախարդը ինչպէս երևում է լաւ ծանօթ չէ ասպետութեան պատմութեան հետ: Իմ նախկին գործերս վկայում են, որ ես ձեզ ձեր գահը վերադարձնելուց դեռ շատ գժուար գործեր կարող եմ կատարել: Ինձ այլ ևս խօսելու բան չի մնում: միայն կրկնում եմ, գահազուրկ իշխան, որ դեռ ժամանակը չի անցել: Մի խօսք միայն ասացէք, և ձեր բոլոր թշնամիքը մի քանի օրից յետոյ բոլորն էլ յաղթուած կլինին:

Կօրդէլիօն բոլորովին սառն կերպով պատասխանեց.

— Քաջ ասպետ. մի հաւատաք նորան, որ իբր թէ ես փոխարկուել եմ: Ես այժմ նոյնն եմ, ինչ որ երեկ էի: Սակայն այս իրաւ է, որ ես մի անակնկալ միիթարութիւն ունեցայ, ես ձեզ արդէն ասացի, որ միայն մի զենակիրս ազատուեց այն զարհուրելի մրրկից, որ կուլ տուեց նաւս ու բոլոր ուղեկիցներս: Այժմ տեսնում եմ, որ նախակնամութիւնը ողորմել է մի քանի հաւատարիմ ընկերներիս ու նոցա ևս ազատել է մրրկից: Ահա, պարոն ասպետ, պատիւ ունիմ նոցա ձեզ ներկայացնել նոքա ինձ հետ միացան դարձեալ: Դեռ իմ բոլոր յոցս ձեզ վերսայ է և մարդիր եմ վաղն և եժ ձեզ հետ միասին ճանապարհ ընկնել:

Կօրդէլիօն լոեց: Դօն Քիշօտը դարձաւ իւր զենակրին և բարկացած ասաց.

— Տեսնում ես, Սանխօ, որ ես օրէցօր նորանոր փաստեր եմ ստանում այն բանի համար, որ դու ամբողջ նապանիայում ամենամեծ անզգամն ես: Դեհ այժմ ասա ինձ, այ աւագակ, ով ասաց քեզ թէ այս իշխանը դառել է Պ. Կօրդէլիօ, թէ ես պատուել եմ զինով լիքը տկանորը, որ իմ սպանած հակայի գլուխը դեր տարել է և սորա պէս հազարաւոր յիմարութիւններ: Քեզ նման ստախօս-զինակիրներին ես գիւտեմ թէ ինչպէս պիտի պատժել:

— Հանգստացէք, տէր, իրնարհաբար պատսախանեց Սանխօն: գուցէ Միկօմիկօնին իշխանի մասին ասածներիս մէջ միալուած լինեմ: իսկ գինով լիքը տկանորի ու հակայի գլխի մասին ասածներիս մէջ այն ժամանակ կարծեմ կհամոզուէք, երբ հաշիւր կներակացացնեն ու կատիպեն մնասը վճարել: Նոյնպէս կը համոզուէք և պայուսակի մասին ասածներիս մէջ երբ կատիպուենք վերադարձնել այն:

— Վերջինս շատ հասարակ ու պարզ կերպով է բացատրւամ: վրայ բերաւ Դօն Ֆէրնանդը. երբ իշխանը նաւարեկութիւնից յետ ճանապարհ ընկաւ հոչակաւոր Լամանշեցի ասպետին որոնելու, այն ժամանակ նորին պայծառափայլութիւնը անցնելով այն լեռների միջից, կորցրեց իւր պայուսակը— այն միակ երը, որ մնաց նորան նախկին հարստութիւնից, դու այն գտել ես և օրէնքով պիտի յետ դարձնես:

— Դեհ, այս էլ բաւական չէ քեզ, անզգամ ճաց Դօն Քիշօտը:

— Եթէ ձեզ բաւական է, ինձ էլ բաւական է, Տանր ախ քաշելով պատասխանեց թշուառ զիսակիրը:
— Ուրեմն մաս բարեաւ. իմացիր միայն, որ դու զարհութելի հողմարած ես:

Գիշերը վրայ հասաւ և պանդոկապետը փառաւոր ընթրիք պատրաստեց: Ամենքը նստեցին ընթրելու: Չնայելով Դօն Քիշօտի մերժելուն՝ նորան պատուաւոր տեղ նստացրին: Նա կամեցաւ, որ Միկոմիկօնին իշխանը իւր կողքին նստի, որովհետեւ ինքը նորա հովանաւորութեան տակ էր գտնւում: Հացկերոյթը ուրախ էր անցնում և վերջը պտուղներ չայելելիս՝ ասպետը սկսաւ հետևեալ խօսքերն ասել.

— Զարմանալի չէ, ողորմած տեալք, որ այս ամբոցի մէջ միասին հաւաքուել էք այսքան նշանաւոր մարդիք: Զհաշուելով ձեզանից իւրաքանչիւրի արժանաւորութիւնները մանրամասնաբար, ով կարող է գուշակել տեսնելով ինձ մօտ նստող այս երիտասարդին, թէ սա մի երեւելի իշխան է, որ զրկուել է իւր գահից և որ ես այն ասպետն եմ, որի փառքը ամբողջ աշխարհ տարածուել է: Այս հրաշքների համար դիտէք թէ ումն ենք պարտական: — Թափառական ասպետութեան, այս ազնիւ արհեստին, որ իւր աշխատանքով ու վտանգներով ամենիցն էլ բարձր է:

Իսկոր հիւրերը զովեցին նորա այս խօսքերը և ընթրիքը նոյնպէս յաջող վերջացաւ, ինչպէս և սկսուեց, այն է ընդհանուր ուրախութեամբ ու զուարձութեամբ: Խօսակցութիւնը այդ կերպով մի փոքր միջոց շարունակուեց. իւրաքանչիւրը ինքն իւրեան զարմանում էր ասպետի ձարտարախօսութեան վերայ,

մինչև որ վերջապէս դատաւորը յայտնեց, որ արդէն հանգստանալու ժամանակն է, մանսւանդ որ օրը այնպէս Տանր էր եղել: Դօն Քիշօտի առաջարկեց գիշերուայ մասը պահպանութիւն անել չստրկախրդակիշներին կամ անզգամ հսկաներին, որնք կհամարձակեին այնուեղի բնակիշների խաղաղութիւնը վերդուել: Նորա առաջարկութիւնը շնորհակալութեամբ ընդունուեց և մեր ասպետը գլխից ոտք զինաւորուելով ու նստելով Խօսինանսի վերայ՝ հրւանոցից դուրս եկաւ: Ամենքը քննեցին, բացի աղախին Մարիտօրնից, որ իմանալով մեր հերոսի բնաւորութիւնը՝ որոշեց զուարձանալ նորանով: Ամբողջ սենեկից դաշտի կողմը ուրիշ պատուհան չկար, բայց պատի մի անցքից, ուր յարդ էին ածում ախտոի համար: Նա այնտեղից տեսաւ Դօն Քիշօտին, որ նստած էր ձիու վերայ, նիզակի վերայ յեցած էր ու երբեմն երբեմն աշքերը գէպի երկինքն էր ուղղում, կարծես նորանից օգնութիւն խնդրելու և հովանաւորութիւն դժբաղւութեան ժամանակ:

Մարիտօրնան նորան ցածր ձայնով կանչեց ու ձեռքով նշան արեց: Մեր ասպետը խփցն յետ նայեց և լուսնի լրւավ նկատեց վերնատան ծակը, որին նա վանդակապատ պատուհան կարծեց և երևակայեց, թէ այնտեղ մի գերի է բանարկուած, որ ինսպրում էր նորանից ազատել: Այսպէս մտածելով նա Խօսինանսին առաջ քշեց պատուհանի մօտ, կանգնեց թամբի վերայ և ձեռքը ներս տանելով անցքի մէջ՝ աշխատում էր մի բան բռնել և նորա օգնութեամբ ներս մտնել այն կեղծ-բանար: Խակոյն Մարիտօրնան բռնեց

Նորա ձեռքը, կապեց Սանխօի իշխ սանձով, յետոյ
առանց ժամանակ կորցնելու սանձի միւս ծայրը ամ-
րացրեց դուն կողպէ քին: Վերջացնելով այս բանը,
նա ծիծաղից թուլանալով դուրս վագեց վերնանդից:

Դօն Քիշօտը զգալով, որ ինքը կապուած է և
այլ ևս ոչին չի տեսնում, կարծեց թէ անշուշտ
այդուն դարձեալ մի տեսակ դիմութիւն կայ
թագցրած: Նա կանգնած լինելով Ռօսինանտի թամ-
քի վերայ և ձեռքի դաստակը ամուր կապած ունե-
նալով՝ դողում էր և վախենում, որ ձին տեղիցը
չշարժուի, որովհետեւ այդ դէպքումնա պատից կա-
խուած կմնար:

՚Ի զուր նա իւր բոլոր ծանօթ կախարդներին
ու իւր հաւատարիմ զինակիր Սանխօին օգնութիւն
էր կանչում: ոչ մի կախարդ չերեաց, իսկ նորա հա-
ւատարիմ սպասաւորը խորը քնած էր ու միանդա-
մայն մոռացած իւր տիրօջ: Տիուր պատկերի տապեալը
յուսահատութիւնից սկսաւ եղան պէս բառանցել.
Ռօսինանտը, այն խաղաղ կենդանին, հանդիսաւ կանդ-
նած էր իւր տեղը. նորա տէրը չէր կասկածում, որ
նոքա երկումն էլ մինչեւ յաւիսեան կախարդուած են:

Վերջապէս արշալոյսը վրայ հասաւ: Չոյս ձի-
աւորներ մօտեցան հիւրանոցին և սկսեցին գոները
ամուր բաղլսել:

— Ասպետներ էք թէ զինակիրներ, գուք, աղա-
ղակեց Դան Քիշօտը ձիու վերայ կանգնած տեղից,
միթէ չգիտէք որ ամրոցի դաները արել ծագելուց
առաջ չեն բացում: Հեռացէք և սպասեցէք մինչ

լուսանալու, իսկ այն ժամանակ կտեսնենք ձեզ կա-
րելի՞ է ներս թողնել թէ չէ:

— Ի՞նչ ես զուվսդ քարով տալիս քու ամրոցից
հետ միասին. մի՞թէ պանդոկը մանելուհամար այդ-
պիսի դժուարութիւններ կան: Նթէ դուք էք պան-
դոկապետը, շուտով դռները բացէք:

— Խնդրեմ մի փոքր քաղաքավարի լինէք, ես
պանդոկապետի նման եմ:

— Մեզ ի՞նչ պէտք, թէ դուք ումնման էք:

Եւ այլ ևս չսեղով նորեկները մեր հերոսի խօս-
քերը սկան այնպէս պինդ բաղլսել դռները, որ ա-
մերին զարթեցրին և պանդոկապետը դուրս եկաւ
նոցա առաջ:

Այս աղմուկի ժամանակ Ռօսինանտը գլուխը
բարձրացրեց ու ականջները սրեց: Նա մի փոքր շար-
ժուեց թէ չէ տեղից, իսկոյն Դօն Քիշօտի սաները
թամքից սկսուեցան ու նա վայր կրնկնէր գեախն՝ եթէ
ձեռքը կապած չունենար թոկով: Նա պատից կա-
խուեց և այնպէս զարհուրելի ցաւ զգաց, որ նորա
նիհար մարմինը ծանրութիւնից ձգուելով համա-
րեա հասաւ գետնին, որի վերայ նա սաները քսում
էր. նորա տանջանքը մանաւանդ աւելացաւ այն ժա-
մանակ, երբ նա աշխատում էր մի կերպ աղասաւել:
Նորա զարհուրելի աղաղակը լսելով պանդոկապետը
իսկոյն վագեց նորա մօտ: Մարիտօրնան զարթնելով
ու լսելով հերոսի ձայնը՝ բարձրացաւ վերնատունը
ու քակեց նորա կապանքը. մեր ասպետը աղատուե-
լով իւր կապանքից պատի վերայից վայր ընկաւ գե-
տին պանդոկապետի ու մօտեցալ ձանապարհութերի

Ներկայութեամբ: Նա իսկոյն վեր թռաւ նատեց Աօս-
մինանտի վերայ, վազեց գաշտը և յետ դառնալով
այնտեղց՝ զարհուրելի ձայնով աղաղակեց.

— Զարաքար կախալուի նա, ով կհամարձակի ա-
սել թէ ես արժանի էի այն բանի, որ ես կախար-
դուած եմ, և եթէ Միկոմիկօնին իշխանը թոյլ կտայ-
ինձ, ես նորան մենամարտութեան կկանչեմ...

Ճանապարհորդները զարմացած լուռ ու մունջ
նայում էին նորան, երբ յանկարծ Կօրդելիօն երեաց
ու իւր բարեկամներին (իբր թէ որոց սպասում էր՝
սոքա էին) յայտնեց, թէ ով էր այլանդակ Գօն Քի-
շոտը: Նոքա խիստ ծիծառելի անցք համարելով այն,
մեծ սիրով ցանկացան Միկոմիկօնին իշխանի մասին
հնարած կատակերգութիւնը շարունակել: Կօրդելիօն
նոցա ներկայացրեց ասպետին և յայտնեց, որ նոքա
ևս աղասուել են նաւաբեկութիւնից: Գօն Քիշոտը
մեծ համակրութեամբ ընդունեց նոցա և ամենքը
բաւական էին երեւում:

Հիւրանոցում խորին խաղաղութիւն էր տիրում:
Գօն Քիշոտը դարձաւ Կօրդելիօն ու ասաց.

— Վ սեմափիայլ ու հռչակաւոր իշխան. ձեզ յայտ-
նի է, որ պատերազմի մեջ շտապեն ամենից շատ
օգնում է յաջողութեան: Ինչո՞ւ ենք ուրեմն մենք
այս ամրոցում այսքան երկար մնում: Գուցէ Պանդա-
Փիլանդօն այս ժամանակից շահուելով՝ ամրանայ մի
անմատչելի ամրոցի մեջ:

— Պարո՞ն ասպետ, պատասխանեց Միկոմիկօնին
իշխանը. ես իմ բաղդս ձեր քաջութեանն եմ յանձ-
նում, արէք ինչպէս արժան կդատէք:

— Եթէ այդպէս է, շուտով ուրեմն, Սանխօ, Աօ-
մինանան ու իշխանի ձին թամբիր, որ ճանապարհ
ընկնենք:

Սանխօն չ'շտապեց, այլ գլուխը շարժելով՝ պա-
տասխանեց.

— Ինչպէս ուզում են, այնպէս են մեզ յիմարեց-
նում ու ծաղրում:

— Ինչո՞ւ և ով է այդ անում:

— Ե՛յ ինչու. այն մարդը, որ իւրեան անուանում
է Միկոմիկօնին մեծ պետութեան իշխան, Ճիշտ այն-
պիսի թագաւոր է, ինչ որ հանգուցեալ հայրս էր:
Նա ձեզ մօտ Միկոմիկօնին է ասւում, իսկ ձեր բա-
ցակայութեան ժամանակ Կօրդելիօն են կանչում նո-
րան: Ուստի և ես կարծում եմ, որ աւելորդ է Աօ-
մինանան ու այս պարոնի ձին թամբելը և որ վատ
չէր լինի, եթէ գեռ էլի այստեղ մնայինք:

Թժուար կգտնուին այնպիսի գրիչ ու խօսքեր,
որոնք կարող լինեն արտայայտել Գօն Քիշօտի զար-
հութելի բարկութիւնը: Նա կատաղութիւնից գեղ-
նելով, յոնքերը կնձռած ու կրակու աչքերով զար-
հութելի կերպով նայում էր Սանխօին ոտից գլուխ,
յետոյ աղաղակեց:

— Վ չքիցս հեռացիր, անպիտան շարախօս, ստա-
խօս ու չար կեղանու արարած, ստոր խելացնոր, վախ-
կոտ, անամօթ, ուխտազրուժ ու քանդող աղնուու-
թեան ու յարգանքի, որ մենք պարտաւոր ենք տալ
պատկաւոր մարդոց: Կօրիր, թէ չէ....

Խեղձ Սանխօն երկիւղից փախաւ թագկացաւ:
Կօրդելիօն աշխատում էր հանգստացնել Գօն Քիշօտին
այս խօսքերով.

— Աերեցէք ձեր բարի զինակրին, պարո՞ն առաջի տիսուր պատկերի: Զէ՞ որ այդ ամեն յիմարութիւններին միայն նա է հաւատում: Յիշեցէք միայն, որ այս ամրոցում ամենքը կախարդուած են: Գուցէ և Սանխօին այնպէս է թուացել իբր թէ այն բոլոր, ինչ որ ինքն ասաց այժմ, տեսել է:

— Ասպետութեան անունով եմ երգուում, որ ձերդ պայծառափայլութիւնը ճշմարիտ է ասում և որ իմ թշուառ զինակիրը անշուշտ զոհ դարձած կլինի մի որևէ կախարդի, որովհետեւ նա բամբասելու սովորութիւն չունի:

— Ուրեմն ներեցէք նորան, աւելացրեց Դօն Ֆերնանդը:

Դաստաւորը բերեց Սանխօին, որ ծնկաչող ներողութիւն ինդրեց իւր տիրօջից, համբուրեց նորա ձեռքը ու խոստովանեց, որ այն տանը իսկական ու արժանահաւատ ոչինչ բան չկայ, բացի այն բանից, որ իւրեան խաղաղնորի պէս վեր ու վայր թոցրին:

Գլուխ Ժ.

Դօն ՔիշօՏԻ ԿԱԽԱՐԴՈՒԻԼ: ՎՍԵՄ ՈՒ ՏՀԱՃ ԳԵՊՔ: ԳԻՒՊ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ:

Այսպէս երկու օր անցաւ: Ամենքը հաւաքուեցան հիւրանոցը թողնելու ու Կօրդէլիօին և ւր բարեկամներին ազատելու՝ Դօն Քիշօտին իւր գիւղը հասցնելու դժուարութիւնից: Սորա համար մոտածեցին մի մեծ վանդակ շնորհ որի մէջ մեր հերոսը կարողանար տեղաւորուել: Այն վանդակը պիտի դրուեր

մի երկայն սայլե վերայ, որի մէջ լծուած պիտի լինէին եղներ: Երբ այս ամենը պատրաստուեց, Կօրդէլիօն, նորա ընկերներն ու պանդոկատէրը չար ոգիների կերպարանքով զիմանակաւորուեցան, Դօն Քիշօտին քնած ժամանակ ձ' ոնկերն ու ոտները կապեցին ու փակեցին նորան վանդակի մէջ: Մեր հերոսը քնից զարթնելով ու տեսնելով այն օտարոտի պատկերները՝ այս անգամ բոլորովին հմայած կարծեց իւրեան: Կեղծ զեերը գերուն վանդակի մէջ փակելուց յետոյ՝ վերցրին ու տարան սայլե վերայ դնելու համար:

Այդ միջոցին, երբ դոքա սենեկից դրւու էին գալիս, սափրիչ նիկօլան բարձր ու փոխուած ձայնով աղաղակեց.

— Քաջ ասպետ՝ տիսուր պատկերի: Թող քո մեծահոդի սիրաբ չվշտանայ, որ քեզ գերօմենք: Դուռիւ կերպ չէիր կարող վերջացնել այն ձեռնարկութիւնը, որին ձգտում էիր այնպէս անվախ: Խսկ գու, աշխարհիս բոլոր վինակիներից ամենաաղնիւ ու ամենահաւատարիմ, միսիթարուիր նորանով, որ զըրկուում ես թափառական ասպետութեան պարծանքից: Դու շուտով մեծութեան ու հարստութեան ամենավերին աստիճանի կհամնես: Հաւատա՛ Լգունիանի խօսքին. հետեւ այս կախարդած ասպետին ու մընաս բարեւաւ....

Վերջին խօսերին ասելիս ձայնը փոքր առ փոքր նուազում էր և վերջապէս լրեց: Դօն Քիշօտը հանգըտացած այս մարդարէութեամբ՝ հառաչելով պատասխանեց.

— Պու, ով որ էլ ես, իմաստուն կախարդ, աղա-

չումեմ, որ երկար ժամանակ չթողնես ինձ այս ա-
մօթալի բանոի մէջ: Ես անտրտունջ իտանեմ ամենը,
եթէ միայն այն առնջանքները բանային ինձ համար
փառքի ճանապարհը: Իսկ ինչ վերաբերումէ իմ բա-
րի զինակրին, եթէ բաղար այնպէս է բերում, որ ես
անկարող եմ գտնելում նորան խոսացած կզզին կամ
թագաւորութիւնը տալու, այն դէպքում ես չեմ մո-
ռանայ նորան կոտակիս մէջ և նորանով արժանապէս
կվարձատրեմ նորա ծառայութիւնը:

Սանիօն քնքութեամբ չնորհակալութիւն արաւ
իւր տիրօջը, հետը միասին կասկած առնելով,
թէ նա հանաք է անում: Դիմակաւորները իսկըն
տարան վանդակը ու գրին սայլի վերայ: Այդ միջո-
ցին դոցա մօախց անցան երկու ձիաւորներ, Ս-Գեր-
մանդադի սատիկանական հետախոյզները: Նոցա յայտ-
նեցին բանի էութիւնը ու գատաւորը վարձատրու-
թիւն առաջարկեց նոցա, եթէ միայն նոքա կհամա-
ձայնէին վանդակով սայլակին ուղեկցել: Նոքա ու-
րախութեամբ համաձայնեցան: Երբ արդէն Ռօսինանան
ու Սանիօն էշը պատրաստ էին, Կօրդէլիօն Դօն Քի-
շօտի վահանը Ռօսինանարի թամքից, իսկ սափ-
րելու կոնքը միւս կողմից: Սանիօն իշխ վերայ նրա-
տեց ու ձիուն էլ սանձից քաշում էր իւր հետ: Պան-
դոկապետի կինն ու Մարիտօրնան դուրս եկան մնաս
բարեաւ տալու տապետին, խիստ վշտացած ձեաց-
նելով իւրեանց նորա թշուառութեան համար: Սափ-
րիչ նիկօլան ու գատաւորը հրաժարական տուին
Կօրդէլիօն ու նորա բարեկամներին, չնորհակալու-
թիւն յայտնելով ու խոսանալով նոցա Դօն Քիշօտի

մասին տեղեկութիւն տալ: Այս ամենը աւարտելուց
յետոյ՝ նոքա նստեցան իւրեանց ջորիների վերայ,
աշխատելով դէմքերը ծածկել որ գերին ջնանաչի
նոցա:

Ճանապարհին այս դիրքով սկսան գնալ.

Վենից առաջ եղների քշողն էր գնում, յե-
տոյ սայլը, որի երկու կողջերին գնում էին սատիկա-
նական հրացանակիր զինուորները: Սայլի ետեկից
գնում էր Սանիօն իշխ վերայ նստած, քաշերով իւր
հետ Ռօսինանատին, իսկ Սանիօնի ետեկից սափերին ու
դատաւորը, որոնք իւրեանց ջորիների ընթացքը
յարմարեցնում էին եղների գանդաղ քայլերի հետ
Դօն Քիշօտը ձեռքերը կապած ու ոտները ձգած քարի
պէս հանդիսաւ ու անշարժ նստած էր վանդակի մէջ:
Այս ձեռով նոքա առանց կանգնելու երկու մղն ճա-
նապալհ անցան այն փաքրիկ հովազին հաննու նր-
պատակով, ուր սափիթի խօսքով ջուր ու խոտ պիտի
գտնէին: Մինչև որ սափիթը սայլեց մի փոքր հեռու
այդ տեղի մասին խօսում էր գատաւորի հետ, Սան-
իօն մօտեցաւ վանդակին իւր տիրօջ հետ խօսելու
համար:

Տէր, ասաց նա նորան կիսաձայն, պարտք եմ
համարում ձեր կախարդութեան վերաբերեալ ամեն
հանգամանք բացատրելու ձեզ: այս երկու մարդիք,
որոնք դէմքերը ծածկած գալիս են մեր ետեկից, մեր
հաշխարար դատաւորն է ու գիւղական սափիթը նիշ-
կօլան: սորանից դուք կարող էք իմանալ թէ այս-
տեղ ոչինչ կախարդութիւն չկայ և որ անամօթ մար-
դիք մեղ խարում են:

— Աչքերիդ մի՛ հաւատար, բարեկամ՝ Սանխօ՛, շարունակեց ասպետը. շատ հնարաւոր ու խելքին մօտիկ բան է, որ կախարդները սափրիչ նիկօլայի ու մեր գատաւորի կերպարանքն են ընդունել մեզ աւելի լաւ խաբելու համար: Այդ կերպարանափոխութիւնը նոցա համար ոչինչ նշանակութիւն չունի:

— Եթէ ես համարձակուէի ձեզանից մի բան հարցնել տէր, այն ժամանակ պարզ ցոյց կտայի ձեզ, որ այսուեղ խաբէութիւն կայ:

— Պարզ ասա՛, բարեկամ: Ես էլ բաց կերպով կ'պատասխանեմ:

— Ես կցանկայի իմանալ թէ ձեր կեղծ կախարդուելուց յետոյ ոչինչ կարիք չէք զգացել:

— Ինչպէս չէ... ես զգացի սորանից դուրս գալու կարիքը:

— Դուք ինձ չէք հասկանում: Լսեցէք. ամենայուսահատ թափառական ասպետները երբոր աղբիրի մաքուր ջուր շատ են խմում, երբեմն ստիպուած են լինում.... դեհ հասկանումէ՞ք, այսպէս չէ:

— Հա, այժմ հասկանում եմ և խոստովանում եմ, որ նոյն խակ միջոցին.....

— Ահա բռնեցի: Դուք ինձ հարիւր անգամ ասել էք, այնպէս չէ, որ կախարդուածները ոչ խմում են, ոչ ուտում են, ոչ քնում ու ոչինչ այնպիսի բան չեն անում, ինչ որ անում են միւս մարդիք: Ձեր այժմեան ասածն ապացուցանում է, ինչպէս որ երկու անդամ երկուսը չորս է, որ դուք ամենեին կախարդած չէք.....

Այս խօսակցութեան ընթացքում սայլը հասաւ

հովտին, ուր սափրիչը, դատաւորն ու ոստիկանարանի ծառայողները ճաշի նստան: Եղներին արձակեցին: Սանխօն դատաւորին խնդրեց, որ թոյլ տան իւր տիրոջը վանդակից գուրս գալ մաքուր օդ ծծելու համար: Յարգելի Պէրօ Պէրէսը համաձայնեց սորան, սակայն պահանջեց, որ մեր հերոսը ազնիւ ասպետական խօսք տայ, որպէս զի ոչ մի տեղ չգնայ:

— Տալիս եմ, ճշաց Գօն Քիշօար, և խիստ զարմանում եմ, պարոն կախարդներ, որ դուք պահանջում էք ինձանից այդ, որովհետեւ դուք մի խօսքով կարող էք ինձ գետնին կպցնել:

Իսկոյն դուրս թողին նորան վանդակից: Ամենից առաջ նա ձգձգեց իւր երկայն կռներն ու նիշարմարմինը: Յետոյ վազելով Ռօսինանտի մօտ՝ նա թեթև զարկեց նորան մէջքին ու ասաց.

— Օ՛հ, իմ երեելի ձի, յոյս ունիմ, որ մենք շուտով դարձեալ կտեսնուենք ու դարձեալ կսկսենք մեր նշանաւոր գործերը:

Այս խօսքերից յետ, որ նա արտաքերեց հպարտութեամբ, նա հեռացաւ և շուտով վերադառնալով նստաւ յիշուած խմբի հետ ճաշելու: Նա իւր սովորութեան համաձայն խօսք ձգեց ասպետութեան մասին, սկսաւ գովել նորան ու ամենապատուական հողմէ ամրոցներ կառուցանել, չնայելով որ ինքը այն ժամանակ կախարդուած էր:

— Այստի, մի քանի օրից յետոյ, աղաղակից նա իւր պատմութիւնը վերջացնելով, ես իմ բազկի ուժի շնորհիւ մեծ տէրութեան իշխան կդառնամ և այն ժամանակ կկարողանամ իմ սովորական առատաձեռ-

նութիւնս ցոյց տալ, մի փոքրիկ թագաւորութիւն
նուիրելով իմ հաւատարիմ զինսկրին:

— Հը, լո՞ւմ էք, պարոններ, գոչեց Սանխօն, լը-
սո՞ւմ էք: Նուտով իմ տէրս կայսր կդառնայ, չայե-
լով շատերի նախանձուելուն: Իսկ ես էլ թագաւոր
կամ դուքս գառնալով մտադիր եմ իմ եկամուտներով
ապրել. երկիրս կապալով կտամ ու յետոյ ինչ կամե-
նամ՝ կանեմ: Յետոյ կամեցածիս պէս կապրեմ և
այդպէս բաւական կլնեմ: բաւական լինելով՝ այլ ևս
ուրիշ բանի ցանկութիւն չեմ ունենայ ու բոլըովին
երջանիկ կլնեմ: Ահա այս է իմ կարծիքս:

Սանխօն երբ այս ամենը ասեց՝ մի մեծ բաժակ
զինի խմեց և մի կոպիտ հայացք ձգեց սափրիչ ու
դատաւորի վերայ: Բայց յանկարծ փողի տիսուր ձայնը
զրգուց Դօն Քիշօտի ուշադրութիւնը. նա իսկոյն վեր-
կացաւ իմանալու թէ որ կողմից է ձայնը հնչում:

Երկիրը, որ վաղուց արդէն կիզեւ արեկից չ-
բացել էր, անձրեկի կարօտութիւն ունէր: Գիւղացի-
ները թարօր էին կատարում, որ երկնքը զթայ և
անձրեւ տայ իւրեանց: Այդ միջոցին մօտակայ գիւ-
ղերի ժողովուրդը իւրեանց քաշանայի հետ հաւա-
գուել էին լերան զառիվայրի վերայ գտնուած ժա-
մատանը: Գիւղացիների մեծ մասը եկեղեցական
սպիտակ հանգերձներ էին հագել իսկ մի քանիսներն
էլ սեազգեստ էին: Դօն Քիշօտը նոցա կախարդներ
կարծեց, որոց մշշ իբր թէ գտնուումէ և մի իշխա-
նուհի, որին նոքա յափշտակում են և որին ինքը
պարտական է աղատել: Իսկոյն վրայ ընկաւ Ռուի-

նանախին, վեր թռցրեց վահանը, սաղաւարաը, թռւրը,
ձի նստեց և աղաղակեց.

— Խակոյն ես ձեզ կհասկացնեմ, թէ որքան հար-
կաւոր են աշխարհիս համար թափառական ասպետ-
ները: Սաացէք, ինդրեմ, ի՞նչօրի կլիներ այն թշրւառը,
որին շար կախարդները յափշտակում են, եթէ ես
այսուղ չպատահէի նորան աղատելու համար:

Ես ասայ նա ու տուլեց ձիուն և սկսաւ ար-
շաւել սպիտակազգեստ վանականների կողմբ: Դ գուր
տեղը գատաւորը, սափրին ու Սանխօն աշխատում
էին կանգնացնել նորան ու գոշում էին.

— Կանգնեցէք, պարոն ասպետ, գուք հոգեորա-
կանաց դասի վերայ էք յարձակում, հաւատն էք
անսպատում զգոյշ կացէք, կատակի տեղը չէ:

• Մեր հերոսը ոչինչ չսեց:

Հոգեորական դասից քասան քայլ հեռու կանգ-
նելով նա՝ բարկութիւնից խոպոտ ձայնով ճաց.

— Կանգնեցէք, գուք ուղղուեցաք, որ ձեր չար
արարքը թագցնէք: Լսեցէք, ինչ եմ ասում:

Գիւղացիներից միքանիաը կանգնեցին ու նոցա-
նից մինը երգեցողութիւնը ընդհատելով՝ պատասխա-
նեց ասպետին:

— Եղայր, մենք շոգից ու յոգնածութիւնից նե-
ղացած ենք. եթէ մեզ ասելու բան ունիս, շտապիր
ու երկու խօսքով վերջացրու.

— Մի խօսք միայն բաւական է, շարունակեց Դօն
Քիշօտը: Իսկոյն այն ամեն գերիներին աղատեցէք,
որոց գուք տանում էք: Գիտէք, որ ես աշխարհ եմ
եկած նորա համար, որ բռնեմ ու պատժեմ յան-

ցանքները. Տեղերից շարժուեք, մինչև որ գերիներին չ'ազատեք:

Ենդհանուր ծիծաղը եղաւ Դօն Քիշօտին միակ պատասխան: Այս բանը առաջուանից աւելի գրգռեց նորա բարիտութիւնը. նա մերկ սուրը ձեռին յարձակուեց աստուածապաշտների վերայ. բայց գիւղացիներից մինը, որ գիւնաւորուած էր եղանով, առաջ եկաւ ու ուղղակի դէմ յանդիման կանգնեց մեր հերոսի առաջ: Դօն Քիշօտը թրի մի հարուածով կիսեց եռամառը. բայց գիւղացին ձեռքին մնացած կտորով այնպէս սաստիկ զարկեց ասպետի աջ ուսին, որ նու անզգայացած ձիուց վայր ընկաւ: Սանիօն առաջ վաղեց ու խնդրեց նոցա, որ խնային իւր տիրօջը, ասելով, թէ նու մի խեղճ կախարդուած ասպետ է, որ ՚ի բնէ ոչքին չար չէ կամեցել: Գիւղացին տեսներից որ Դօն Քիշօտը անշարժ ընկած է գետին, կարծեց թէ նորան սպանել է և երկիւղեց շուտով հեռացաւ: Այդ միջոցին մօտ վազեցին դատաւորը, ստիրին: ու ոստիկանարանի զինուղները: Թափոր դուրս եկած մարդիքը կարծելով թէ նոքա իւրեանց վերայ են յարձակուում՝ շուտով հաւաքուեցան ու պատրաստուեցան պաշտպանուելու: Սակայն, բաղաւաւորապէս, հաշտարար դատաւորը ծանօթ էր նոցա տանուատէլի հետ. նոքա իւսուեցին միմեանց հետ, հատկացան միմեանց ու խաղաղութիւնն ձգեցին միմեանց մէջ: Անմիանը ընկած էր իւր տիրօջ մարմնի վերայ ու դամբականին ձեռվագուած էր արտասուելով.

— Ավագ ասպատութեան ծանօթ էր ապահով պատասխանից յաղթահարեցար. ով դու, հայրենիքի

փառք ու պարծանք, և ամանշ նահանգի ու ամբողջ աշխարհի զարդը, որոնք այժմ որբանում են քո մահով ու ենթարկուում չարագոյների կատաղութեան: Օ՛հ, իմ բարի տէրս, որ նոյն իսկ Աղեքսանիք Մակեդոնացուց առատաձեռն լինելով, խոստացար ինձ իբրև վարձ եօթնամնեայ ծաւայութեան՝ մի ընտիր երկիր շնորհել: Ես ամբողջ կեանկում պիտի ողբամքեղ համար, որ միշտ չարդոց թշնամի էիր, բարի մարդոց պաշտպան, հեղերի հետ հպարտ, ու հպարտների հետ՝ հեզ, մի խօսքով—կատարեալ թափառական ասպետ:

Սանիօն լայն ու կոծը Դօն Քիշօտին մաշքի բերին: Նա աչքերը բացեց ու ծանր միս քաշեց.

— Բարեկամ, ասաց նա, օգնիր որ կախարդած սայլի վերայ նստեմ, ուսիս ցաւը չի թողնուաց որ նստեմ իմ առողջ ձիուս վերայ....

— Ես, այս, տէր, պատասխանեց Սանիօն, երբ մեռ զիւղը կվերագանանք, մի փոքր կհանգստանանք այնտեղ ու յետոյ գարձեալ կճանապարհորդենք:

Սափրին ու դատաւորը հեռանալով աստուածապաշտներից՝ օգնեցին Սանիօնին ու այլպիսով Դօն Քիշօտին նստացրին սայլի վերայ. յետոյ իսկոյն եղաները լծեցին ու ոստիկանական զինուղներին վճարեցին խոստացած վարձը, որովհետեւ նոքա ուրիշ ճանապարհով պիտի գնային:

Մեծ, նշանաւոր ու անյաղթ ասպետը ձգուեցաւ վանդակի մէջ խոտի վերայ, և մեր խումբը սկսաւ առաջ շարժուել: Նոքա վեցերորդ օրը կհսօրին հասան Դօն Քիշօտի գիւղը: Կիւրակէ օրն էր. հրապա-

բակում գտնուած բոլոր զիւղացիները շրջապատեցին սայլը. ճանաչեցին իւրեանց հայրենակցին ու ուղեկցեցին նորան մինչ տուն, ուր առաջ ուղարկուած տղայն յայտնեց ամենքին նորա գալուստը:

Մառանապետն ու եղբօրաղջեկը շուտով գուրս վագեցին նորա առաջ և տեսնելով խոտի վերսց պառկած. Դօն Քիշօտին գունատ ու կմաղքի պէս լղարած՝ սուր ձայներ արձակեցին:

Սանիս Պանչափ կինը հեռուից արդէն տեսնելով իւր մարդուն՝ առաջ վագեց նորա մօտ ու հարցրեց, թէ արդեօք առողջ է իւրեանց էշը:

— Այո, այո, պատասխանեց զինակիրը, նա իւր տիրօջից առողջ է: Բայց մի փոքր էլ սպասիր, մի այսպիսի ճանապարհորդութիւն էլ կատարենք, և այն ժամանակի հաւատացած կաց, որ դու ինձ մի կղզու դուքս կամ նահանգապետ կաեսնես:

— Մի կղզու նահանգապետ, սիրելիս, այդ ի՞նչ է նշանակում. կղզին երեխ վատ բան չպափ լինի:

— Այո, վատ չէ, կարծումեմ, բայց թանգ արժէ: Այն ստանալուց առաջ գեռ շատ գագանակի հարուածներ պիտի կրել: Շատ անդամ պատահում էլ է, որ գնդակի պէս խաղացնում են քեզ: Եթէ այս հանդամնքները մի կողմ թողնենք, թափառական զինակրի պաշտօնը շոտ հաճելի մի պարապմունք է: Պէտք է սարերում թափառել իշոտ մացառներով և անտառներով այլ և ժայռերով պտտել ամրոցներ մտնել հիւրանոցներում իջեանել ու այնտեղց առանց կոպէկ վճարելու դուրս գալ թէպէտե քանի հոգի կամենան թող կերակրուած լինեն:

Այս խօսակցութեան ընթացքում մառանապետն ու եղբօրաղջեկը Դօն Քիշօտին ասրան նորա սենեակը ու պառկացրին անկողնում: Դատաւորը նոցա խորհուրդ տուեց մեծ հոգացողութիւն ունենալ նորա մասին և մանաւանդ աշխատել, որ նա գարձեալ մի տեղ չպնայ, պատմելով նոցա, թէ որպիսի գիւղարութիւններ են կրել նորան տու: գարձնելու համար:

Գլուխ Ժակ.

ԴՕՆ ՔԻՇՕՏԻ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՃԱՆԱՊԱՐՀ ԸՆԿՆԵԼԻ:
ԲԱԿԿԱԼ Ա.Վ. ԿԱՐՐԱՐԱԿՈ: ՄԱՀՈՒՄՆ ԿԱՌԻՔՅ:

Դատաւորն ու սափրիչը համարեած մի ամբողջ ամիս չտեսան Դօն Քիշօտին, վախենալով թէ մի գուցէ գարձեալ նորա միաը ձգեն իւր յիմարութիւնները: Սակայն շուտ շուտ այցելում էին նորա եղբօրաղջկան ու մառանապետին, խորհուրդ էին տալիս նոցա հիւրանդին միայն առողջարար ու մննդարար կերակոր ասալ որ ամրացներ նորա ստամբուն ու գլուխը: Նոքա էլ ծառութեամբ հետեւում էին նոցա խորհրդին ու արդէն կարծում էին թէ Դօն Քիշօտը խելքի է եկել—այնքան նա հանդիսաւ էր: Այս բանը լսելով նորա երկու հաւատարիմ բարեկամները այցելեցին նորան: Ասպեաը նոցա շատ լաւ ընդունեց: Նոքա խօսեցին զանազան սիւթերի վերայ. Դօն Քիշօտը այնպէս ուշաբերուած էր թւում, որ գատաւորն ու ասպեաը արդէն համազուեցան, որ նա արդէն բոլորին ուշքի է եկած: Բայց այս բոլորը պատել բան էր:

— Ասում են, ասաց դատաւորը, որ տաճկաց սուլթանը շատ զօրք է հաւաքում դեռ յայտնի չէ, թէ որ կողմը կփչի այս փոթորիկը, բայց բոլոր ժողովուրդը ազմկած է դորանով։ Զնայելով, որ այդ զօրքաժողովի նպատակը յայտնի չէ, արդէն հարկաւոր նախազգուշութիւնները արած են Մալտա կղզին և Նէապոլիսի ու Սիցիլիայի ափերը պաշտպանելու համար։

— Այդ շատ լաւ են անում, սառն կերպով պատասխանեց Դօն Քիշօար, բայց գուցէ թշնամիներին յաղթելու մի ընտիր միջոցը մուացէլ են, թէպէտե այդ միջոցը շատ հասարակ բան է. բաւական կլինէր միայն փող հնչել ու նորա ձայնի վերայ իսկոյն կհաւաքուէին Խոպանիայի բոլոր թափառական ասպետները արքունիքում։ Վեց հաս էլ որ հաւաքուէն, նոքա ևս բաւական են տաճիկներին ջարդելու համար։ Մինչեւ անգամ ես մի այնպիսի ասպետ գիտեմ, որ միայնակ կարող է այդ բանը անել։

— Տէր իմ Աստուած, աղաղակեց եղբօրաղջիկը, կորսծ ենք. հօրեղքայրս դարձեալ կամենումէ թափառական ասպետ գառնալ։

— Այս կամենում եմ, վրայ բերաւ Դօն Քիշօար. ես թափառական ասպետ էի, այժմ էլ եմ և այսպէս էլ կմեռնեմ, եթէ միայն երկինքը այդպէս կցանկայ։

— Խեղճ մարդ, ցածր ձայնով ասաց դատաւորն ու ուսերը վեր քաշեց։ Եթէ չեմ սխալում որ դարձեալ ցնորուել ես։

Այս բոպէին դրաից աղմուկ լսուեց. մառանապետն ու եղբօրաղջիկը դուրս գնացին իմանալու թէ

ինչ կայ։ Աղմուկ անողը Սանխօն էր, որ կամենում էր իւր տիրօջ մօտ մոնել։

— Ուս ի՞նչ է ուզում, ձայն տուին երկու կանայքը։ Տնին յետ դարձիր բարեկամ, ու մի դար այստեղ քո նախակին տիրօջդ դրգուելու ու նորան դարձեալ երկրէ երկիր շրջեցնելու։

— Ենիսիղճ ու յիմար մառանապետ, սուտ ես խօսում, պատասխանեց Սանխօն։ Նա ինքը խարեց ու գրգաեց ինձ, խոստանալով մի ընտիր կղզի ընծայել որ մինչեւ այս օրս դեռ չեմ ստացել։

— Հա, գու կղզի՞ ես ուզում սպասիր ահա իսկոյն կտամ քեզ յիմար անպիտան։

— Յիմար, չէ, ես գեռ այնքան խելօք եմ, որ կարող եմ։ ինձ խոստացած կղզին ինչպէս հարկն է կառավարել։

— Գնա յիմար անասուն, քո տունը կառավարիր։ Գնա քո դաշտը հերկիր, ծոյլ ու հանգիստ թող մեզ էլ ու քո կղզիդ էլ։

Դատաւորն ու սափրիշը սրտանց ծիծաղեցին այս զուարձալի խօսակցութեան վերայ, բայց երբ Դօն Քիշօար հրամայեց ներս թողնել իւր վինակին, նոքա խկոյն գուրս գնացին, հաւատացած լինելով, որ ոչինչ յոյս չկայ նորան բժշկելու համար։ Սանխօն իւր աէրը երբ միմեանց տեսան խկոյն փակուցան սենեկում։

— Ամսխօն, ասաց Դօն Քիշօար, ինձ խիստ ցաւեցըին քո այն խօսքերը, որ իբր թէ ես քեզ խարել եմ։ ինձ դուրս չեկաւ այդ բանը։ Մենք միասին ձանապարհ ընկանք պատերազմի, միասին տարանք մի-

Անյն դժուարութիւններն ու վտանգները, բաժանեցինք նոյնատեսակ ուրախութիւններ: Ուրեմն մենք միմեանց ատելու տեղիք չունենք: Բայց թողնենք այս ու այժմ ուրիշ բանի վերայ խօսենք: Գիւղումն ի՞նչ են ասում իմ մասին:

— Թոյլ կտաք որ ամենը պարզ ու ճշմարիտ ասեմ:

— Այն, ամեն բան ճշմարիտ ասա ինձ:

— Ուրեմն լսեցէք ասեմ, այստեղի բոլոր բնակիչները, թէ ասպետները, թէ կալուածատերերն ու թէ ազնուականները, ձեզ ցնորուած են համարում իսկ ինձ՝ խելացնոր ու յիմար:

— Ձեմ զարմանում դրան վերայ, Սանխօ. զըպարտութիւնը մեծ մարդոց անգամ չի խնայում: Նախանձը կեսարի, Աղէքսանդրի և մինչև անգամ Հերքուլէսի վերայ էլ ազդեց: Բայց մի՞թէ ոչ ոք չպաշտպանեց ինձ:

— Ոչոք, բացի Սալամանքի համալսարանի մի երիտասարդ ուսանողից, որ Բարդուղիմէսս Կարրասկօի որդին է. նա գեռ երեկ է եկել և, ինչպէս ինքն ասումէր, մեծ ցանկութիւն ունի ձեզ՝ հետ խօսակցելու:

— Այսուեղ կանչիր նորան, գոչեց Դօն Քիշօար. շուտ կանչիր:

Սանխօն իսկոյն և եթ դնաց Բակկալավրին կանչելու և մի քառորդ ժամից յետոյ նորա հետ միասին վերագրածաւ: Այդ Կարրասկօն մի կարճահասակ մօտ 24 տարեկան մարդ էր, նիշար ու գունատ, թափանցիկ աչքերով, կողոր դէմքով, տափաքիթ, և մեծաբերան. ուրախ էր նա, զուարձական և սրամիտ: Մտնելով նա իսկոյն ծունկ չողեց Դօն Քիշօարի առաջ:

— Թոյլ առուէք ինձ, ողորմած տէր, համբուրել

ձեր քաջագործ ձեռքը: Դուք ներկայ, անցեալ ու գալոց բոլոր թափառական ասպետներից ամենանշանաւորն ու աներկիւզն էք: Ձեր գործքերի փառքով ամբողջ աշխարհ լցուել է և ամեն տեղ ձեզ կամանց նահանգի փառքն ու փարձանկն են համարում:

— Եթի կացէք, քաղաքալարի պատասխանեց նորան Դօն Քիշօար. վերկացէք, պարոն Կարրասկօ, ես շատ ուրախ եմ, որ մի արժանաւոր գնահատող դտայ այն ազնիւ պարագմոնքի, որին ես ինձ նուիրեցի:

Երբ նա վերջին բառերն էր արտասանում՝ Խօսինանար ախոռում խրինջաց: Ասպետը դորանից վեր թռաւ և այդ խրինջալը իբրև մի բազանաւոր նշան կարծելով՝ յայտնեց նորան, որ մասդիր է երեք կամ չորս օրից յետ ճանապարհ ընկնել պատերազմելու: Զուարձական Բակկալավրը շատ հաւանեց նորա մոտագրութիւնը և նորան խորհուրդ տուեց Սարագօսա գնա, ուր ժողովրդական մի տօնի օրը ձիարշաւ պիտի լինէր:

Կարրասկօն բաժանուեց նորանից, խոստանալով նորա մոտագրութեան մասին ոչպին բան չասել:

Այդ իսկ միջոցին Սանխօն էլ գնաց ճանապարհի կարեւոր պատրաստութիւնները տեսնելու: Երբ նա միւս օրը վերագրածաւ, Դօն Քիշօար գրկարաց հանդիպեց նորան և գրկելով նորան՝ փակուեցաւ նորա հետ սենեկում անձամբ անձին խօսելու համար: Մառանապետը կարծիք տանելով որ նոքա գարձեալ մոտագիր են ճանապարհորդել ախտած գնաց Բակկալավրը Սիմէօն Կարրասկօի մօտ, խնդրելու նորանից, որ

սա մի կերպ հեռացնի նորան իւր կորստաբեր նպաստակից:

‘Աս նորան պատահեց բակում մանդալու ժամանակ.

— Կորած ենք ամենքս, ասաց նա յուսահասութեամբ՝ ընկնելով նորա ոտները. բանը վերջացած է. պարոնս կորչում է:

— Ի՞նչպէս թէ կորչում է, չլինի՞ թէ մեռնում է....

— Չէ, ողբրմած տէր, այդ շուզեցի տակ. նա դարձեալ ուզումէ գնալ արկածների ետևից ընկնել. բայց գիտէք, որ այս երրորդ անգամն է: Ասածին անգամին նորան բոլորովին ջարդած բերին իշխ վերայ պառկեցրած. երկրորդ անգամ վանդակի մէջ, մագաղաթի թերթի պէս գեղնած. Ասաւած գիտէ, թէ երրորդ անգամ ինչ դրութեամբ կբերեն նորան տուն:

— Ես, հանդիսատ կացէք, տիկին, տուն դարձէք և ինձ համար նախաձաշ պատրաստեցէք. ես իսկոյն կզամ և կտեսնէք թէ դորա համար ինչ եւմ մասածէք:

Պառանապեաը իսկոյն տուն դարձաւ, իսկ Կարսակօն գնաց դատաւորին իւր մտադրութիւնը յայտնելու: Մենք յետոյ կտեսնենք, թէ ինչ որոշեցին նոքա:

Վայժմ դառնանք գէպի Դօն Քիշօան ու Սանխօն, որոնք, ինչպէս արդէն ասացինք, երկուսով փակուեցան սենեկում և խօսում էին միմեանց հետ: Ահա թէ ինչպէս են տարեգիրները նոցա խօսակցութիւնը նկարագրում:

— Գիտէք, տէր, ասաց վինակիրը, ես կնօջս յայտ-

նեցի, որ այս անգամ էլ մտադիր եմ ձեր ողբրմածութեան հետ ճանապարհորդել:

— Յետոյ Տերեզադ ի՞նչ ասաց դորա մասին:

— Աս ինձ ասաց, որ անջուր չպէտք է բորբկաւնալ որ ասած խօսքիդ պէտք է տէր լինես, որ գրչով գրածը կացինով չի ջնջուի, որ տասն անգամ պէտք է չափել ու միանգամ կտրել որ այսօրուան ձուն վաղօւեան հաւիցը լաւ է: Եսկ ես էլ կասեմ, որ թէպէտ տատի խորհուրդը մի մեծ բան չի, բայց նորան ըսողը յիմար է:

— Ես էլ այդ կարծիքի եմ. բայց տաելիքդ պարզասա ու առածնելով մի հասկացնի:

— Ես ասում եմ, որ մենք այսօր կենդանի ենք, վաղը, կալող է պատահել որ կ'մեռնենք, Ասածու կամքիցն է կախուած:

— Եյդ բոլորը ճշմարիտ է, բայց ի՞նչ ես կամենում ասել:

— Եյն, որ վատ չէր լինի, եթէ պայման դնէնք մեր մէջ, և գուք ամսական մի բան վճարէիք ինձ, քանի որ ես պատիւ կոմենամ ձեզ մօտ ծառայել: Այս բանը սակայն ոչինչ չի արգելի ձեզ պատահած ժամանակ ընծայել ինձ խօսացած կզզին, որ ես չնորհակալութեամբ կրնունեմ: Աղղին սամանալուց յետոյ՝ ես ստացած ռոճիկս իմ կալուածքի եկամուտներից յետ կդարձնեմ ձեզ:

— Բարեկամ, Սանխօ, ես մեծ ուրախութեամբ կկատարէի քո ցանկութիւնը, եթէ միայն գրքերի մէջ մի որեւէ տեղ պատահած լինեմ այնպիսի մի թափառական ասպետի, որ ամսական ռոճկով վարձած

լինէր իւր համար զինակիրք ևս ամեն կողմ զինակիրք եմ տեսել որոնք ծառայում էին իւրեանց տիրոջ՝ լոկ միայն ծառայելու ցանկութեամբ, անտրասունջ ու համբերավթեամբ սպասելով, թէ երբ պիտի նոքա ողորմութիւն անեն և մի բանով վարձատրեն իւրեանց: Խմ կեանքում չեմ փոխի ես այս հին սովորութիւնը: Եթէ յուսով միայն կը բաւականանա՞ դնանք: Խսկ եթէ, Սանխօ, սորանով գու բաւական չես, յետ գարձիր տուն: Հնայելով դորան, մենք այնուամենայնիւ գարձնալ բարեկամ կլինենք:

Սանխօն մտածելով ու մազերն ուղղելով լուսմէր, երբ յանկարծ մտաւ Ակմէօն Կարբասիօն՝ Դօն Քիշոտի եղբօրտղջկայ ու մտանապետի հետ: Նա իսկոյն գրկեց Դօն Քիշոտին ու բարձր ձայնով ասաց.

— Ո՛չ, ասպետութեան ծաղիկ, պատերազմի փայլուն լրյօ և Խապանական ժողովրդի փառք ու պարծանք: Ամենակարող Սատուածը ջնջե այն բոլոր հակառակորդներին, որոնք կհամարձակեն ընդդիմանալ քո երրորդ ուղեղորութեանը: Ուրեմն, քաջալերուիր, քաջդ Դօն Քիշօա: Ուղեղորուիր վազն և եթ, կամ նոյն խակ այսօր՝ փառք ձեւք բերելու համար և եթէ որևէ բան է պակաս քեզ, եթէ զինակիրդ չե կարողանաւմ քեզ հետեւել, ես պատրաստ եմ նորան փոխարինելու:

Դօն Քիշօոը գարձաւ այդ միջոցին Սանխօին.

— Ո՛հչ, այժմ ի՞նչ կասես, հարցրեց նա նորան, կարծում ես թէ զինակիրի կարօտութիւն կզգան: Տեսնում ես, հռչակաւոր Կարբասիօն, Սալամանքի մռազաների սիրելին, ցանկանում է քաղցի, ծարաւի ու

ամեն տեսակ կարելի վտանգներին ենթարկուել հասարակ զինակիրի պաշտօնով թափառական ասպետին հետեւելու համար: Դեհ, պատասխան տուր, այժմ էլ կցանկաս ինձ թողնել:

— Ես ձեզ թողնեմ—Աստուած մի՛ արասցէ, արտասուալից աչքերով պատասխանեց Սանխօն:

Ակ տապետը ձեռքը մեկնեց ու էսի Սանխօն Պանսան և սա համբուրեց այն: Երբ արդէն հաշտուեցան՝ վճռեցին, որ Դօն Քիշօոը երեք օրից յետոյ Ճանապարհ ընկնիր: Կարբասիօն խոստացաւ նորան մի ընտիր սաղաւարտ ընծայել որ պահւում էր նորան մի բարեկամի մօտ:

— Ես զուր տեղը եղբօրաղջիկն ու մտանապետը անիծում էին Կարբասիօնն, մազերը փետում էին, գեմքերը չանկառում, գոռում էին ու գոչում, մեր ասպետը ոչնչ ուշադրութիւն չէր գարձնում նոյան Սանխօի հետ միասն հարկաւոր պատրաստութիւնն էր տեսնում: Երրորդ օրը երեկոյին մեր հերոսները Ճանապարհ ընկան, այնպէս որ ոչ ոք չիմացաւ այս, բայց Բակկալավրից, որ մինչեւ մութը ուղեկցեց նոյա: Այդ ժամանակ նա բաժանուեցաւ քաջ Դօն Քիշօոից և նորից յետ գարձաւ իւր զիւզը: Դեռ նա նոր էր բաժանուել նոյանից, երբ Ռօսինանոր սկսաւ խրիսնալ ու էշն էլ արձագանք տուաւ նորան: Դօն Քիշօալ ու էշն էլ արձագանք մի բարի նշան կարծեց, իսկ Սանխօն նկատելով, որ իւր իշել ձայնը ձիու խրիսնալ ցից բարձր է ու զել դորանից իրաւացի կերպով կերպով եղբակացրեց, որ այդ նոր արշաւանքը իւր հապով եղբակացրեց,

մար աւելի օգտաւէտ է լինելու, քան իւր տիրօջ համար:

Շարունակ ճանապարհորդելով նոքա խօսակցում էին իւրեանց յշխերի մասին: Մեր հերոսը միայն այն հարուածների ու վէրքերի մասին էր մտածում, որ պիտի ինքը ստանար ՚ի պատիւ ասպետութեան, իսկ նորա զինակիղը իւր մտածմննքը ամփոփել էր մի կղզու մէջ, որ կարգաւորում էր ու նախազծում իւր ու իւր տանտիկոջ ճաշակին համաձյն: Կէս գիշերի մօտերքն էր, երբ նոքա հասան մի փոքրիկ անտառին, ուր և վծուեցին գիշերել: Երբ տրշալցոր բացուեց, նոքա նորից ձի նստեցին և ճանապարհ ընկան դէպի Սարրագօսսա, ուր ձիարշաւ պիտի լինէր, որին շատ օտարականներ մասնակից պիտի լինէին: Այն նշանաւոր դէպքերը, որ մենք կնկարագրենք, արգելք եղան Լամանշեան հերոսին ձիարշաւին ներկայ լինելու:

Երբ մեր արկածախնդիրներն անտառի եղերքով գնում էին, Դօն Քիշօար յանկարծ մի սայլ նկատեց, որ խիստ օտարութի պատկերներով լիքն էր: Կառավարը վերին աստիճանի անձոռնի էր: Նորա եաւելից նատած էին, մարդու կմաղքի տեսքով մահը, ոսկե պատկով մի մարդ, իսկ մահուան ոսների մօտ կուպիտոնը (սիրոյ չաստուած Հռովմայեցւոց մէջ) կապարձով և նետ ու աղեղով, բայց աշքերը չկապած, ոսից զրուխ զինուորուած մարտիկներ և ուրիշ խառնիձագանձ պատկերներ: Անխօն բոլոր մարմնով դոշաց: Մեր հերոսը այս նոր վասանգից զարմացած և

ուրախացած՝ ձին կանգնեցրեց ու խրոխտ ձայնով աղաղակեց.

Ե՞յ, կառավար ես թէ գե, ով որ ես, գու իսկզն պիտի ինձ յայտնես թէ ով ես, ուր ես զընում և ինչ մարդիք ես տանում այս սայլով, որ աւելի նման է Խարոննեան (*): Նաւակին:

— Ոլղումած տէր, պատասխանեց կառավարը, մենք ժափառական կատակերգուներ ենք. այսօր այս զիմացի սարի մօտ մի տեղ տօն էր և մենք այնաեղ ներկայացումն տուինք ամուռառն պիտով լինենք: Երեկոյին մենք պիտի այս մօտակայ զիւղում խաղանք, և որովհետեւ սա մօտիկ է, մենք ևս մեր պիմականգերձը չհանեցինք, միւսոնդամ չնեղանալու նոցահագնելով:

— Յօափառական ասպետի պատուով եմ երգում, պատասխանեց Դօն Քիշօար, որ ես սկզբից կարծեցի, թէ մի երեւլի անցք է պատահելու ինձ: Ճշմրդին ասած, արտաքին կերպարանքով չպիտի դատի մարդս. գնացէք, բարեկամք, գնացէք ձեր ներկայացումը տապու:

Կորա խօսելու ժամանակ յետ մնացած դերասաններից մինը առաջ եկաւ: Նա բալրովին ծածկուած էր պապղուն կոորտանքներով ու բոժոքներով: Աջ ձեռքին բռնած ուներ մի փայտ, որի ծայրին երեք փամփուշտ կար ամրոցած, որնց նա պինդ զարկեց գետին: Ֆետը միասին թաշկուալով: Այս աղմօւկը վախեցրեց Ռուինանորին, որ խրտնելով իւրագական պատկերներ:

(*) Դիցաբանութեան մէջ. — Պատղ թիւ Մամիքս ու Ախէրօն զիանով մեռածներին անցրացնող նաւակ է:

տիրօջը վայր ձգեց դեսին։ Սանիսօն ցանկանալով Դօն Քիշօտին օգնելը իշեց վայր թռաւ ու վաղեց Ռօսին անտի կողմբ։ Բոժոժաւոր մարդը խսկյն վերթռաւ իշեց վերայ, ու փամփուշների հարուածներով սովորեց նորան վագել դէպի գիւղը։ Ստկայն Ռօսինանար, ինչպէս և միշտ, իւր տիրօջ հետ միասին վայր ընկաւ ու ձղուեցաւ դեմիին։ Սանիսօն մի կողմից տեսնելով իւր տիրօջ գետնին ընկած, իսկ միւս կողմից իւր իշեն վագելիս՝ չգիտէր ինչ անէր։ Բայց նորաքարի սիրոը աւելի լաւ համարեց իւր տիրօջ օգնել։ Անհանգիստ, շփոթուած ու ախուր զինակիրը բարձրացրեց հերոսին ու նստացնելով Ռօսինանտի վերայ՝ առաց նորան։

— Այս, տէր, նայեցէք, անպիտանի մէկը էշա փախյնում է։

— Այդ ինչ անպիտան է, հարցըց Դօն Քիշօտը։

— Ես բոժոժաւոր մարդը։

— Հանգիստ եղիր, բարեկամ, ես խսկյն յետ կրդարձնեմ քեզ. արի ինձ հետ։

— Այս, տէր, այլ ես հարկաւորութիւն չկայ գնալու. էշը մէն մինակ վերադառնում է ահա։

— Ի՞նչպէս, դուեց մեր ասպետը. դու կարծում ես որ այն անպիտանի յանդկնութիւնը անպատիժ կը թողնեմ։ Ոչ, ես խսկյն և եթ նորան ցոյց կտամ, թէպէտե նա մի նշանաւոր մարդ լինի։

Եյս ասելով նա սուլեց ձիուն և շտապով վաղեց դէպի մահուան կառքը, չնայելով որ Սանիսօն գոչում էր նորա ետեից։

— Ե՞ս, տէր, թռղէք 'ի սէր Աստուծոյ, կատակների հետ կռու ել չե կարելի, մանաւանդ որ բոլըը նորան կպաշտպանեն ու ձեզ կմեղադրեն։ Բայց նորա ձայնին ականչ գնող չգտնուեցաւ։ Դօն Քիշօտը շարունակ սպառնալիքներ էր արձակում բերանից։ Պարերգուները տեսնելով, որ նա յարձակում է իւրեանց վերայ, շտապով ներքիւ իջան կառքից, քարեր վերցրին ու կարգով շարուելով՝ համարձակ կերպով սպասում էին հերոսին։ Դօն Քիշօտը զարմացած այս բանից՝ կտնդնեց թշնամիներին նայելու։ Սանիսօն այդ բանից օգուտ քաղելով՝ վագեց նորա մօտ ու նորոգեց իւր իննդիրը։

— Ասացէք-ինձ, տէր, Ճշմարիտ չէ, այն մարդը, որ միայնակ յարձակում է այնպիսի մի զօրքի վերայ, որ բաղկացած է գեւերից ու բարի հոգիներից, և որին առաջնորդում է նոյն իսկ մահը, նա աւելի յանդկնութիւն է անում, քան թէ քաջութիւն։ Մանաւանդ որ բոլը այս զօրքի մէջ մի թափառական ասպետ անգամ չի գտնուում։

— Ճշմարիտ ես ասում, Սանիսօն, այս բանը միայն քեզ է վերաբերում։ Դեհ, բարեկամ, սուրդ հանիր ու գնա ինքդ վըէմինդիր եղիր իշեդ համար։

— Ես ու իմ էշ ներում ենք թշնամիներին, մենք հեզ ու խաղաղասէր ենք և անպատւութիւնը յօժարութեամբ մոռանում ենք։

— Եթէ այդպէս է, գնանք ուրեմն այնպիսի արկածների ետևից, որոնք աւելի մեզ կվայելեն։

Եյս որ ասաց նա սառնութեամբ հեռացաւ, այն ինչ մահն ու իւր խումբը նորից նստելով կառքի

մեջ, շարունակեցին իւրեանց ճանապարհը: Այսպէս, Սանիսօի խելք խորհրդի շնորհիւ այս զտրհութելի անցքը ոչինչ վտանգաւոր հետեանք չունեցաւ:

Գլուխ Ժ. Բ.

ԴՕՆ ՔԻՇՈՑԼ ՊԱՏԱՀՈՒՄ Է ՀԱՅԵԼՈՒ ԱՍՊԵՏԻՆ: ԹԷ
ՈՎՔԵՐ ԷՒՆ ՀԱՅԵԼՈՒ ԱՍՊԵՏՆ ՈՒ ՆՈՐԱ ԶԻՆԱԿԻՐ
ԴՕՆ ԴԻԵԳՈՆ:

ՄԵՐ ՀԵՐՊՈՆ ու ՆՈՐԱ զինակիրը կանգ առան բարձր ծառերի տակ, ուր և ընթրեցին ու յետոյ քնեցին ծառերի ստուերի տակ: Դեռ նոր էին քուն մըտել նոքա, երբ մի անակնկալ աղմուկ զարթեցրեց Դօն Քիշոտին. աս ծառերի ճիւղերի միջից դուրս նայեց և տեսաւ երկու ձիաւոր, որոնցից մէկը ձիուց վայր իջնելով՝ ասաց միւսին:

— Աանձերը հան ձիանելի բերաններից, մեր հան դըմտանալու ժամանակն էլ է կարծեն:

Այս ասելով նո պառկեց խոտի վերայ և այդ միջոցին նորա զէնքերը զետանին զիաւելով՝ ձայն հանեցին: Դօն Քիշոտը իսկոյն հմացաւ, որ նա թափառական ասպետ է լինելու: Նա խափոյն մօտեցու Սանելոյն ու Նորան ձեռքից ձգելով՝ ցածր ձայնով՝ ասաց.

— Բարեկամ, ահա մի նոր արկածը:

— Ասոււած տայ, որ դա յաջող կերպով անցնի, քնարժաթախ ասաց Սամիթոն. իսկ ուր է արկածը, ոչինչ նշան չկ երկռում այդ բանի:

— Այս կողմ նոյիր և տես այս կանաչ խոտի վերայ պառկած առաջեախն:

— Տեսնումեմ, բայց նորանցով դուք ինչ արկածք էք ենթադրում:

— Բոլոր արկածները, սիրելի՝ բարեկամ, այս ձեւով են սկսում:

Յետոյ նա մօտեցաւ անձանօթին, որ հպարտ ձայնով աղաղակեց.

— Ո՞վ է եկողը:

— Բարեկամի:

— Ուրեմն կարող էք մօտ գալ:

Դօն Քիշոտը աւելի մօտեցաւ ասպետին. նորան հետեւց և իւր զինակիրը:

— Կատեցէք ինձ մօտ, ասաց անձանօթը: Աս ենթադրում եմ, որ դուք էլ ինձ պէս թափառական ասպետ էք, որովհետեւ այսպէս ուշ ժամանակ հանգըստացէլ էք այս առանձնավայր տեղում կանաչ խոտի վերայ:

— Եյ, պարոն, պատասխանեց Դօն Քիշոտը, ես թափառական ասպետ եմ և կեսանքս անցնում եմ թոյերին օգնելով ու հալածեալներին պաշտպանելով:

— Այլ և աշխատելով մի որևէ թագաւորութիւն նուածել (աւելացրեց Սանիսօն, որ կամենում էր ինքն էլ խառնուել խօսակցութեան մէջ) և մի փոքրիկ կղզի կամ իշխանութիւն էլ իւր հաւատարիմ զինակիրին ընծայել նորա ամենաջերմեռանդ ծառայութեան համար:

— Աս ձեր զինակիրն է, հարցը անձանօթը:

— Ի՞սկ և իսկ, պատասխանեց նորան Դօն Քիշոտը:

— Ճշմարիտն ասեմ զարմանում եմ; որ զինակիրը համարձակում է իւր տիրոջ առաջը խօսել: Դորա

Հակառակ իմ զինակիրը ձայն չկ կարող հանել
ինձ մօտ:

—Օ՛հ, ես այդպէս չեմ, ասաց Սանխօն, ես որ-
քան ուզեմ կիսում թէ իմ տիրօջ և թէ ուրիշների
առաջ:

Ենծանօթ ասպետի զինակիրը Սանխօնն ձեռ-
քից ձգեց ու նորան ականջին ասաց,

—Բարեկամ, արի ինձ մօտ մի փոքր ժամանակ
անցկացնենք:

—Մէծ ուրախութեամբ, պատասխանեց Սանխօն,
ես սրտով ցանկանում եմ ցոյց տալ որ լաւ խօսելու
շնորհ.ք ունիմ ու լաւ էլ ծանօթ եմ աշխարհիս բա-
ներին:

Երկու զինակիրները թողին իւրեանց տէրերին
ու հեռացան: Մենք էլ հիետենք նոցա:

—Պէտք է խոստովանել յարգոյ պարոն, ասաց ան-
ծանօթ զինակիրը, որ մեր պաշտօնակիցները ողոր-
մելի կեանք են վարում. իւրաքանչեւր հացի կաոր-
դառն քրտինք է նստում մեզ:

—Իսկ ծարաւը կոտրելու համար, աւելացրեց
Սանխօն, մենք շատ անդամ, աւաղ, միայն աղքիւր-
ների մաքուր ջրից ու թարմ օդից աւել բան չենք
ունենում:

—Ի՞նչ, չէք կամենայ մի փոքր զովանալ ու մի
կտոր բան ուտել, հարցրեց անծանօթը:

Սանխօն ծանր ախ քաշեց:

—Հասկացայ: Խսկոյն մի պատուական դեղ կրե-
րեմ, որ միշտ հետո եմ պահում այսպիսի դէպքերի
համար:

Զինակիրը վերկացաւ և շուտով վերադարձաւ,
բերելով իւր հետ մի զինով լեքը փոքրիկ տկանը ու
մի այնպիսի մեծ կարկանդակ, որ Սանք օն կարծեց
թէ նորանում մի ամբողջ խորոված փայրի այծ կար,
մինչդեռ նորանում եղածը նապաստակ էր միայն:

—Ի՞նչ, զարմացած ձայն տուեց Սանխօն, միթէ
դուք հետներդ միշտ այդպիսի կարկանդակներ էք
ունենում:

—Ույ՞ միշտ, սա գեռ մեր ունեցած պաշարի
մնացորդն է:

—Զարմանք է ձ՛մարիտ, շարունակեց Սանխօն,
շաստով կարելով կաշկանդակն ու մի մեծ կտոր վերց-
նելով, ես համբուռմ եմ, որ դուք մի խիստ զարմա-
նալի զինակիր էք. անշափ շնորհակալ եմ ձեզմանից:
Այս կարկանդակը կարծես հրաշքով լցո ընկաւ: Քո
և իմ մէջ շատ սարեր կան. պարկիս մէջ եղած իմ
ամբողջ ձաշս է մի կտոր քարի պէս պինդ պանիր,
մի քանի սոխ ու մի քանի բուռն էլ կաղին: Խմ պա-
րսնս պինդում է, թէ ասպետները միայն չոր պատուղ-
ներով պիտի կերակրուին:

—Ի՞նչ էք ասում, պատասխանեց անծանօթը,
այդ ինչ կեղաստութիւն է: Խմ սասամնքսս այդպիսի
կերակրուներին սովոր չէ: Թող մեր տէրերը իւրեանց
ցանկացածի պէս ասլին ասպետական խիստ օրէնք-
ներին հիետելով: Իսկ ես ինձ հետ միշտ պա-
հում եմ մի լաւ պարկ չոր կերակուր ու այս տէճորը,
որին շատ սիրում եմ ու ամեն բոպէ համբուրտում եմ:

—Ողորմած տէր, ասաց Սանխօն, թողէք մի ան-
գամ էլ ես համբուրեմ դորան:

Անձանօթը իսկոյն տուեց նորան տկնորը: Սան-
խն բերանին մօտեցրեց այն. յետոյ մէջքին կախ
տալով սկսու աստղերը զննել և մօտ մի քառորդ
ժամ այս դրութեամբ մնաց: Երբ վերկացաւ ծանր
հառաչեց, կարծես թէ հոգին տալիս էր:

—Ա՛յս, տէր, ասաց նա, սա նա է, զիտեմ,
Սիուդադ Ռէտին գինուցն է:

—Իրաւ էք ասում, այն տեղի գոնի :

—Գիտեմ, զիտեմ, ես մի հոռ քաշելով իմանում
եմ թէ որտեղի զինի է, քանի տարուայ է և թէ
ինչ յատկութիւն ունի իւրաքանչիւրը, սա մեր ցե-
ղական ընդունակութիւն է: Երևակայեցէք, որ ես
հօրս կողմից երկու ազգականներ ունէի, որոնք ամ-
բողջ Լամանշ նահանգում յայտնի էին իւրեանց լաւ
զինի ճանաչելով: Մի անգամ նոցա տռաջարկեցին մի
զինու որպիսութիւնը իմանալ, նոցանից մինը բե-
րանը մի կաթիլ առաւ նորանից, իսկ միւսը միայն
հոռ քաշեց: Առաջնը ասաց՝ երկաթահամէ տալիս
զինին, իսկ երկրորդը՝ թէ կաշուէ հոռ է զալիս նո-
րանից: Դինէտէրը պնդում էր, թէ ճշմարիտ չէ այդ,
և որ նորա գինուն երբէք ոչ երկաթ է զիպել ու
ոչ էլ կաշի: Փոքր միջոցից յետոյ, երբ տակառը գա-
տարկուեց, նորա յատկում մրուցի մէջ գտան մի
փոքրիկ երկաթէ բանալիք, կաշուէ կտորով կապած:
Նորանից կարող էք գուշակել պարոն, թէ ոյդպիսի
նշանաւոր ցեղի գաւակը որ աստիճան կարող է դի-
նու համն իմանալ:

Մեր զինակիրները կոնծելուց ու խօսելուց յօդ-

նելով՝ տեղն ու տեղը քննեցին: Այժմ զառնանք աս-
պետներին:

Դօն Քիշօտն ու անձանօթ ասպետը երկար խօ-
սելուց յետոյ, նոցանից վերջինը ասաց.

—Այս, տէր, հաւատացնում եմ ձեզ որ իմ ա-
րած քաջագործութիւնների մօտ Հելքուլէսի գոր-
ծերը ոչինչ են: Նա արգէն Խապանիայի մէծ մասը
ման եմ եկել ու յաղթել ասպետներից մէծ մասին.
բայց իմ արած յաղթութիւններից ամենանշանաւորը,
որով էլ ես պարծէնում եմ, է մէծ ու հռչակառ որ
Դօն Քիշօտ Լամանշեցի ասպետին յաղթելս:

Մեր հերոար ամեն ջանք գործ զրեց այս խօս-
քերին պատասխան չտալու, սակայն չկարողացաւ
համբեկել և ասաց, որ սուր է ասում այդ բանը:

—Տէր, ասայ նա նորանի, ընդունում եմ ձեր արած
քաջագործութիւնները, սակայն ես ձեզ վաստերով
կապացուցանեմ, որ գուք ում որ Դօն Քիշօտի աեղ
էք ընդունել իսկապէս նա չի եղել, անշուշտ սիա-
լուել էք գուք:

—Ի՞չ էք հրամայում ես հաստատ զիտեմ, որ
նա Դօն Քիշօտն էր, ահա իսկոյն նկարագրեմ նորան.
Նա բարձրահասակ ու նիշար էր, տգեղ գէմքով, սա-
կայն զօրեղ ու քաջ էր, արծուաքիթ ու երկայն բե-
ղերով: Նա տիսուր պատկերի ասպետ էր կոչում ու
ման է զալիս Խօսինանտ ասուած մի քաջ ձիով: Նո-
րա զինակը անունն էլ Սանխօ Պանչա է:

—Զեր նկարագրած անձը այստեղ է և ես ենթա-
դրում եմ, որ Դօն Քիշօտին ատող կախարդները նորա
պատկերն ու ձեր տուել են որ և է ասպետին, որին

որ դուք յաղթել էք: Եթէ սորանով բաւական չէք ու գարձեալ կասկածում էք, պարզապէս կասեմ, որ ինքը Դօն Քիշօտը կանգնած է ձեր առաջ և պատրաստ է մենամարտել ստով կամ ձիով ինչպէս կրկամենաք:

Այս որ ասաց նա վեր թռաւ ու վրայ ընկաւ թրին: Անձանօթը սառնութեամբ պատասխանեց նորան:

—Ես ես պատրաստ եմ կրկն անգամ իմ բազի զօրութիւնը ցոյց տալու. ով որ ձեզ ձեւափոխուած յաղթել է, չե մերժի ուղղակի ձեզ անձամբ յաղթել: Բայց դիտէք, որ դիշերուայ քաջադործութիւնները աւաղակներին միայն վայել են: Սպասենք մինչև լուսանայ: Այս ես ասեմ, ես միայն այն պայմանով կմենամարտեմ ձեզ հետ, որ յաղթուողը բոլորովին հնազանդուի յաղթողի կամքին, եթէ միայն սա ասպետական օրէնքների ընդդէմ չի լինի:

—Համաձայն եմ այդ պայմանի հետ, պատասխանեց Դօն Քիշօտը:

Խակոյն հերոսները գնացին իւրեանց զինակիրներին գտրթեցնելու, որպէս զի ձիաները պատրաստէին միւս օրուայ կռուի համար: Սանխօն լուռ ու մունջ ականջ էր գնում այս հրամանին:

—Ընկեր, ասաց նորան անձանօթ զինակիրը. կարծեմ քեզ յայտնի կլնի անդալուզական սովորութիւնը:

—Է՞նչ սովորութիւն:

—Այն, որ երբ ասպետները մենամարտում են, զինակիրներն էլ նոյնը պիտի անեն:

—Բայց դիտէք, ես այդ սովորութիւնը չեմ ըս-

դունում: Նատ ծաղբալի բան կլինէր, որ մենք միասին այնպիսի պատաւական զինի խմելուց յետոյ՝ կռուէնք, և մանաւանդ եթէ ես բարկացած չլինեմ ով կարող է ստիպիլ որ ես անպատճառ կռուեմ:

—Եթէ բանիլ գորանում է միայն, առաջն առնելը շատ հեշտ է: Կոիւն սկսելուց առաջ ես մօտ կգամ և մի քանի ապատկ կամ ու բոռնցքով կգարկեմ վզեգ, և այդպիսով կգրգռեմ ձեր բարկութիւնը:

—Ո՛չ յարդելի, աւելի լաւ է, որ իմ բարկութիւնը չգրգռես այն առածին հետեւով, թէ վկատուին չքարկացնես, թէ չէ կըանկոին: Բաղար մեղ խաղաղ է ստեղծել և այս շատ լաւ բան է: Ո՛վ ուրիշ համար հոր է փորում, առաջ ինքն է ընկնում նորա մէջ: Կատուն նէլ վերջին շունը համնելով առիւծ է դառնում: Դուք դեռ ինձ չէք փորձել:

Սակայն արդէն լուռում էր թռչունների ճռուողիւնը, որն զուշակում էին լուսի բացուելը: Բոլոր առարկաները սկսան լուսաւորուել արեգական ճառագագայթներով: Առաջին բանը, որ ընկաւ Սանխօի աչքին, անձանօթ զինակրի քիթն էր: Այն քիթը այնպէս զարհուրելի երկայն ու հասաւ էր, որ ամբողջ երեսը ծածկում էր և բերանիցն էլ ներքեւ էր գնացած: Բայց գորանից, նա ծածկուած էր բազմաթիւ մեծ մեծ կոծիծներով և նորա կերպարանքին խիստ անձունի տեսք էր տալիս: Այս զարհուրելի տեսարանը այնպէս վախսեցրեց խեղճ Սանխօին, որ նորա գողը բռնեց և աւելի լաւ համարեց իւրեան երկիւղը զարդել այդպիսի քիթ ունեցող մարդուցը, քան թէ զրդուել նորա բարկութիւնը:

Այդ միջոցին Դօն Քիշօտը զննումէր իւր հաշառակորդին, որի գէմքը դիմակի պատճառաւ չէր երևում: Նա նկատեց, որ նա մի միջահասակ, բայց ուժեղ ու ամրակաղմ մարդ էր: Նա գէնքերի վերաշից մի շապիք ունէր հագին, որի վերայ ամրացած էին բազմաթիւ կիսալուսիններ, որոնք փայլում էին հայելների պէս: Նորա սաղաւաբարը զարդարած էր զեղին, կանաչ ու սպիտակ դոյնի փետուրներով, իսկ նիզակն էլ ծայրին ամրացած ունէր մի սանտչափ երկայնութիւն ունեցող երկաթ:

Մեր հերոսը կարծեց, թէ իւր թշնամին վեաւսուած պիտի լինի, որի վերայ ուրախացած քաղաքավարութեամբ խնդրեց նորանից դիմակը վերցնել:

—Ես իմ գէմքս կռուից առաջ ոչոքի չեմ ցցց տալիս, հպարտութեամբ պատասխանեց հայելու ապետը:

Իսկոյն նոքս երկումն էլ ձի նառեցան և պատրաստուեցան յարձակուելու: Այս իսկ ըոպէին Դօն Քիշօտի աչքերը պատահմամբ ընկան նիզակալիք զարհուրելի քթի վերայ. նա շլացաւ այս տեսարանովը: Սանիսն, որ այն զարհուրելի քթի մօտ մնալու քաջութիւնը չունէր, խնդրեց իւր ափօջը, որ օգնէ իւրեան՝ մօտակայ ծառը բարձրանալու՝ նայելու այն նըշանաւոր կռուին, բ պիտի լինէր նոցա մէջ:

—Հասկանում եմ, պատասխանեց Դօն Քիշօտը գու սիրում ես վերնայարկից նայել կռուող եզներին:

Իսկոյն մեր հերոսը սկսաւ օգնել Սանիսն ծառը բարձրանալու: Հայելու ասպետը այդ միջոցին ամենայն արագութեամբ յարձակուեց նորա վերայ: Տես-

նելով, որ Դօն Քիշօտը զբաղած է իւր զենակլուպը, կանգնեց որպէս զե սպասի նորան: Մեր հերոսը տեսնելով իւր մօտ հակառակորդին, յանկարծ շուռ եկաւ, խթեց Ռօսինանափի կողքեւին, որով և սափեց նորան առաջին անգամ իւր կեանքի մէջ չափ գցել: Անձանօթ ասպետն էլ կամեցաւ նոյնն անել բայց 'ի զուր էր խթում իւր ձիուն. սա տեղից չէր շարժում: Խեղձ ասպետը ոտներով ու ձեռներով սիպում էր նորան առաջ վազել երբ յանկարծ Դօն Քիշօտը կայծակի արագութեամբ թռաւ նորա վերայ, վերցրեց նորան թամբից ու անգայ փայր ձղեց գետին: Յեաց, ձիուց փայր թռչելով մերկ սուրը ձեռին, վազեց յաղթուած ասպետի մօտ ու թռցրեց նորա դիմակը, տեսնելու արդեօք կենդանի^օ է թէ ոչ: Սանիսն էլ շտապով փայր եծաւ ծառից և այն ժամանակ արդէն ներքե էր, երբ իւր աերը իւր հակառակորդի գէմքը բանալով տեսնել էր.... ինչ էք կարծում: — մւմ...., Բակալավը Սիմէօն Կարրասկօին: Դօն Քիշօտը հիացումից աղաղակեց.

— Տես, Սանիսն, տես, որքան մեծ զօրութիւն ունի մոգութիւնը, ու զարմացիր կախարդների շարութեան վերայ:

Ոանիսն մօտ է գնում ու ճանաչելով Բակալավըին՝ սկսում է խաչակնքել:

— Պեհ, աէր, մէջ տեղից կէս արէք զորան ձեր սրով, գուցէ այդպիսով մի անզգամ կախարդ կ'սպանէք:

Դօն Քիշօտը կամենում էր նորա խորհրդին հետեւել, երբ անձանօթ ասպետի զենակիրը, որի

մեծ քիթը արդէն անյայտացել էր, ընկառ յաղթողի սաներն ու գոչեց.

— Սպասեցէք, մի՛ սպանէք ձեր բարեկամին, — յիրաւի սա Բակկալավը Սիմեօն Կարրասկօն է, իսկ ես դորա զինակիրն էի:

— Եռաւ ես ասում, ասաց Սանխօն, իսկ քիթդ ուր է:

— Այ քիթս, պատասխանեց զինակիրը, հանելով դրանից այն. սա շինովի քիթ է:

— Ո՞վ սուրբ խաչի զօրութիւն, դոչեց Սանխօն, սա իմ կնքահայր Թովմաս Յէցիան է:

— Ճիշտ այդպէս է. բարեկամ Սանխօ, և ես իսկոյն քեզ կրացատրեմ, թէ ինչու Կարրասկօն ու ես այսպէս դիմակաւորեցինք: Բայց, 'ի սէր Աստուծոյ, տիրօջդ չժողնես Կարրասկօն սպանելու:

Բակկալավը ուշքի եկաւ և Դօն Քիշօռը իւր թուրը մօտեցնելով նորա վզին՝ աղաղակեց.

— Իսկոյն ձեզ կսպանեմ, ասպետ, եթէ չէք խոստովանի պարզութեամբ, որ ձեզանից յաղթուած ասպետը չէ թէ Դօն Քիշօռ Լամանշեցին էր, այլ նորա նման մի ուրիշը: Նո ևս իմ կողմից խոստովանում եմ, որ գուք Սիմեօն Կարրասկօ Բակկալավը չէք, այլ նորա նման մի ուրիշ մարդ:

— Խոստովանում եմ և Համաձայն եմ ամեն բանի հետ, ինչ որ գուք կկամենաք, պատասխանեց խեղճ հայելու ասպետը. սակայն խնդրեմ օգնէք որ վերկենամ, ես խիստ վերաւորուած եմ ու սարսափելի կերպով տանջւում եմ վայր ընկնելու պատճառաւ:

Դօն Քիշօռը բաւարար պատասխան ստանա-

լով՝ օգնեց իւր հակառակորդին վերկենալու. նա զինակիրների օգնութեամբ կարողացաւ նորան նստեցնել նորա ձիու վերայ ու յանձնելով նորան Թովմասի հոգացողութեամբ, որը տարաւ նորան մօտակայ գիւղը, ձմնապարհ ընկաւ դէպի Սարտգոմաս, Սանխօնի հետ միասին, որ իւր տիրօջ պէս հաւատացած էր, թէ այս գէպքի մէջ զիւժութիւն կար: Դօն Քիշօռը առաջ էր գնում յաղթական կերպով ու պարձենալով իւր յաղթութեամբ: Սորա հակառակ նորա հակառակորդը տիտոր, ամօթապարու ու զլիիկոր հեռացաւ, մտածելով իւր խորամանկ գիւտաւորութեան անյաջող հետեանքի մասին: Ծաղըաէր Կարրասկօն՝ դատաւորի ու սափրիչի խորհրդով թափառական ասպետի ձեւ էր ընդունել: Մեր հերոսի բարեկամ ները յօյները կորցնելով նորան տուն գարճնելու համար, վճռեցին թողնել նորան ու Բակկալավը էլ այդ կերպով հագնուած ուղարկել նորա ետեից:

— Մենամարտութիւն գուրս կանեցէք նորան, ասացին նոքա նորան, գուք շատ հեշտ կարող էք նորան յաղթել յետոյ երդումն առէք նորանից, որ երկու տարի շարունակ տանը կինայ ու չի թափառի: Դօն Քիշօռը, որ խստութեամբ կատարում է ասպետութեան օրէնքները, 'ի հարկէ, իւր խօսքը չի կոտրի և մէնք նորան բժշկելու ժամանակ կունենանք:

Կարրասկօն սիրով յանձն տուաւ այդ գործը, և Սանխօնի հարեաններից մի բարի ու զուարիթ երիտասարդ Թովմաս Յէցիալին հրաւիրեց իւրեան զինակիր: Բայց գործը այնպէս չվերջացաւ, ինչպէս նոքա

կարծում էին: Թովմաս Ցէցիալը ճանապարհին ասաց Կարբասկօին.

— Ի՞նչ էք կարծում, տէր, եթէ այս բոլորը խոստովանենք, մենք Դօն Քիշօտից յիմար չենք լինի՞՛ Տեսէք, նա առողջ ու ուրախ է գնում, իսկ մենք տիսուր: Բացի գորանից գուք վերաւորուած էք ու ջարդուած. ի՞նչ էք կարծում, ո՞վ է խելօքը:

— Ի հարկէ, մենք, պատախանեց Կարբասկօն, մեր յիմարութիւնները գիտութեամբ են արած, և երբ կկամենանք կարող ենք վերջ տալ նոցա:

— Ուրեմն իմացած կացէք խնդրեմ, որ ես չեմ կամենում այլ ևս յիմարութիւնները շարունակել ու մասդիր եմ տուն վերագառնալ:

— Քո կամքդ է, Թովմաս: Բայց քանի որ ես ասպետի անունն եմ կրում, չեմ դադարի, մինչեւ որ մի լաւ չեմ ջարդի պարոն Դօն Քիշօտին: Արգարեւ ես անպատուած եմ զգում ինձ: Մինչև հիմի ես կամենում էի այդ խելացնորի հետ մենամարտել նորան բժշկելու մոքով, իսկ այժմ կամենում եմ նորան յաղթել՝ միայն վրէ մինդիր լինելու համար:

Եռքա այսպէս խօսում էին մինչև որ հասան մի գիւղ, ուր ֆնաց Կարբասկօն իւր մարմինը կազդուրելու համար: Զինակիրը թողեց նորան այնտեղ առողջանալու. մենք ես կթողնենք նոցա առ ժամանակ, մինչև որ դոքա դարձնալ հանդէս կգան:

Դօն Քիշօտն ու Սանխօն գեռ գնումէին Յարագօսի ճանապարհով միմեանց հետ խօսելով: Յան կարծ Սանխօն աղաղակեց.

— Տէր ասպետ, զարմանալի է, որ գեռ իմ կնքա-

հայր Թովմասի զարհուրելի քիթը աչքիցս չեւանում:

— Միթէ դեռ այնպէս ես կարծում բարեկամ, որ հայելու ասպետը պարոն Կարբասկօն էր, իսկ նորա վենակիրը՝ Թովմաս Ցէցիալը: Դու շատ գիւրահաւան ես: Կրկնում եմ, որ այն մի խորամանկութիւն էր, որ արել են իմ թշնամի չար կախարդները:

Սանխօն թէպէտե բոլորվին չհաւատաց այս բանի, սակայն լոեց, վախենալով ասպետին բարկացնել, երբ յանկարծ մեր արկածախնդիրներին մօտեցաւ մի ձիաւոր: Նա կանաչ մնչուդէ վերարկուունէր հազին, թաւշեայ անկուածներով զարդարած, իսկ զլսին թաւշեայ զլսարկ ունէր: Նա կրում էր մաւրիսանական թուր գեղեցիկ գօսկից կախած. նորա գեղեցիկ կիսակօչեկները ունեին խթաններ. այդ ճանապարհորդի գէմքն ու բոլոր տեսքը, որ մօտ յիսուն տարեկան մարդ էր, ալեսոր մազերը ու պարզ ալմայայտութիւնը միանգամից յարգանք էին գրաւում: Նա Դօն Քիշօտի կողքից անցնելով, յարգութեամբ ողջունեց նորան ու շարունակեց իւր ճանապարհը: Մեր ասպետը ձայնեց նորան:

— Պարոն, եթէ չէք շտապում, շատ կցանկայի, որ միասին ճանապարհորդէինք:

— Ես ինքս կամենում էի ձեղ առաջարկել այդ բանը, բայց չկամեցայ անհանգիստ անել ձեզ: Յօժարութեամբ կընդունիմ ձեր առաջարկութիւնը: Այս սոսելով ձիաւորը մի փոքր առաջ գնաց ու սկսաւ զարմացած նայել Դօն Քիշօտի կերպարանքին. սա առաջնորդական աղաղակեց:

խօն ուտելիքի պաշար էր պահում նորա մէջը: Անձանօթը զարմացած մնաց նորա երկայն հասակի, նիշար ու դժգոյն դէմքի, օտարոտի զէնքի ու վերին աստիճանի երկայն ու նիշար ձիռ վերայ: Դօն Քիշօտը նկատեց նորա զարմանքը ու ասաց նորան:

— Իուք կարծեմ զարմանումէք ինձ վերայ: բայց այլ ևս չէք զարմանում երբ կիսնառք, որ ես այն ամեն նշանաւոր մարտիկներից մինն եմ, որոնք թափառում են արկածների ետեւից ընկած: Ես կամեցայ հին թափառական ասպետութիւնը նորոգել և անկասկած իմ փառաւոր գործերի ձայնը ձեր ականջին էլ հասած կլինի: Ես Դօն Քիշօտ Լամսնշեցին եմ, որ այլապէս կոչւում եմ տխուր պատկերի ասպետ:

Կնցորդ ազնուականը երբ լսեց այս խօսքերը, այլ ևս չկարողացաւ իւր ժպիտը թագյնել, ու պատասխանեց.

— Ճիշտ է, ես հրաշալի պատմութիւններ եմ լսել Խաղանիային փառք բերող հերոսի մասին, վշտացածների այդ մեծ պատապանը անմահ կմնայ անշուշտ:

— Ասուած տայ, որ քո գուշակութիւնը կատարուի, խիստ ուրախացած պատասխանեց Դօն Քիշօտը. իսկ գուք ևս իննդրեմ, ասացէք, թէ կեանքի ինչ եղանակ էք ընտրել ձեզ համար:

— Խօսառվանում եմ ձեզ, պատասխանեց ազնուականը, որ ես պատիւ չունիմ թափառական ասպետութեան կարգին պատկանելու: Անուն է Դօն Քիշօտ զը-Մերանդա և բնակւում եմ այն գիւղում, ուր այսօր մենք կճաշենք, եթէ միայն արժանի կհամարէք իջևանել ինձ մօտ: Մը կարողութիւնս բաւա-

կան է բոլոր ցանկութիւններս կատարելու համար: Ես կեանքս հանգիստ եմ անցնում կնոջու ու որդւոցս հետ միասին. իմ սովորական պարագմոնքս որսն է ու ձկնորսութիւնը, թէսկէտե ես ոչ շներ ունիմ և ոչ բարակներ: Մնացած ժամանակս նուիրում եմ ես պատմական ու կրօնական օգտակար գլքերի ընթերցանութեան: Կարելոցին չափ խիստ կատարելով մեր սուրբ կրօնի կանոնները, ես պարտականութիւն եմ համարում իմ ունեցածիցս խեղճերին մասն տալ այլ և սէր ու խաղաղութիւն պահել իմ բոլոր հարեւանների ու ընտանիքիս մէջ:

Դօն Դիեգօն լրեց: Սանխօ Պանչան, որ խիստ մեծ ուշադրութեամբ լսում էր նորան, արտասուք թափեց աչքերից. յետոյ աղաղակեց նա.

— Օրհնեցէք ինձ. ձեր օրհնութիւնը կրազտաւորի ինձ: Այս որ ասաց, վայր թռաւ իջեց ու բերանիվայր ընկաւ Դօն Դիեգօի առաջ, որը ծիծագելով նորա պարզմութեան վերայ, խնդրեց նորան վերկենալ ու ասաց նորան.

— Ես չեմ կարող օրհնել քեզ. քո խոնարհութիւնը արդէն ցոյց է տալիս, որ այլ ևս օրհնութեան կարօտութիւն ըւնիիս:

— Սանխօն խիստ բաւականացած սորանով, դարձեալ նստեց իւր իշխ վերայ ու դաշտում հովիսներ տեսնելով, մի կողմ քաշուեց նոցանից կաթ խնդրելու համար: Յանկարծ Դօն Քիշօտը հեռուից մի սայլ նկատելով, որի վերայ ծածանում էին կայսերական դրօշակները, կանչեց իւր զենակրին ու պատուիրեց նորան շուտ սաղառարտը տալ:

Պլուխ Ժ.Պ.

ԴՕՆ ՔԻՇՈՏԻ ԱՐԱԾ ՔԱԶՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԱՄԵՆԱԵՐԵԼԻ ԱՊԱՅՈՅՑՅԸ: ԴՕՆ ՔԻՇՈՏԸ ՀԻՒՐ Է ԳՆՈՒՄ ԳՈՆ ԴԻԵԳՈՒ ՄՈՏ: ՄՈՆՏԵՍՊՈՒՆՈՍԵԱՆ ՎԱՆՔՅ: Թէ Ի՞նչ ՏԵՍԱԻ ԱՅՆՏԵՂ ՄԵՐ ՀԵՐՈՍՅ:

Այն բռպէին, երբ մեր ասպետը ձայն տուեց Սանխօնի, վերջինս հովիսներից նոր պանիր էր գնում: Նա շուտով պանիրը դրեց հերոսի սաղաւարտի մէջ ու վազեց նորա մօտ:

— Բնարեկամ, ասաց նորան Դօն Քիշօտը, սաղաւարտս տուր. իմ կարծիքով այս արկածը ինձանից պահանջում է, որ ես լաւ զինաւորուած լինեմ:

Մինչեւ որ սա կիերցնէր իւր խօսքը, կտնաշ վերարկուով ազնուականը ամեն կողմ՞նայեց, և բայց դրօշակներով սայլից տւելի ոչինչ չտեսնելով, սկզբում մտածեց, թէ նա արքունի դրամիներով լի սուրհանդ գակ է, ու այս բանը յայտնեց Դօն Քիշօտին:

Սակայն Դօն Քիշօտը, որ առհասարակ յափրշտակւում էր ամեն բան տեսնելիս, պատասխանեց նուրան, որ ինքը լաւ հասկանում է, թէ ինչ է այս բանը, և թէ ինքը երևելի և աներեղյթ թշնամիներ ունի, որոնք երբ ասես զանտպան կերպարանքով յարձակւում են իւր վերայ: Միենոյն ժամանակ Սանխօն ձեռքից սաղաւարտը խելով՝ նա խսկոյն դրեց այն իւր գլխին, ու շագրութիւն չդարձնելով թէ ինչ կար նորա մէջ: Նիճուկը քամուելով սկսաւ ամեն կողմից հոսել նորա աչքերի ու միտոքի վերայ:

— Այս ինչ բան է, Սանխօն, գոչեց ասպետը: Կարծես թէ զլուխս բացուել է ու ուղելոս վայր է թափւում... Դեռ այդպիսի քրտինք կեանքում գուրս չի տուել ինձանից. աչքերս բոլորովին քուացան նորանով: Մի բան տուր որ սրբեմ:

Սանխօն դաղտնի տուեց նորան թաշկինակը, Աստծուն փառք տալով, որ իւր տէրը չիմացաւ նորա արածը: Բայց, դժբաղտաբար, մեր հերոսը սաղաւարտը վերցրեց և նորա մէջ սպիտակ թան տեսնելով, հոտ առաւ նորանից:

— Ուրբ Յակովը անունը վկայ, ասաց նա, որ սա նոր պանիր է, որը դու, այ որկրամոլ ու անզգամ դրել ես սաղաւարտիս մէջ:

— Պանիր, սառնութեամբ պատասխանեց Սանխօն, պանիր, ինձ չնորհեցէք, տէր, ես կուտեմ, կամ թող սատանան ուտի, որովհետեւ նա է դրել այն գորանում: Արդարեւ, այ քեզ պատուելի կախարդների մի փառաւոր հնարք: Այն անզգամները, անկասկած, այս ծաղրալի բանը նորա համար են մտածել որ ձերդ ողորմածութիւնը բարկանայ ինձ վերայ ու ուսերս ջարդի: Բայց նոքա սխալուել են, որովհետեւ իմ բարի տէրս գիտէ, որ ես հետս պանիր չունի և որ եթէ ունենայի էլ, խայյն փորս կածէի և ոչ սաղաւարտիդ մէջ:

— Դօն Քիշօտը չպատասխանելով նորան, դէմքն ու միտոքը մաքրեց, նորից ծածկեց սաղաւարտը զլիսին ու ուները ամրացնելով ասպանդակի մէջ, գոչեց:

— Այժմ ով կամենայ թող գայ, թէ կուզ նոյն խակ սատանան գուրս գայ ինձ հետ մենամարտելու:

Աղնուականը, որի զարմանքը հետզետէ աւելանում էր, լսում էր ու նայում, մինչդեռ սայն էլ աւելի մօտենում էր նոցա: Նորանում կային երկու հոգի միայն, որոնցից մինք ետևն էր նստած, իսկ միւր ջորիներից մէկի վերայ:

Դօն Քիշոտը կանգնեց նոցա առաջ:

— Այս ուր էք գնում, բարեկամներ, հարցրեց նա նոցա, այս ի՞նչ կառք է, ի՞նչ կայ սորանում և ի՞նչ են նշանակում այս զրօշակները:

— Այս կառքը ինձ է պատկանում, տէր, պատասխանեց սայլապանը, սորանում երկու առիւծ կան, առանձին վանդակների մէջ փակուած, որ Օբանի նահանգապետը նուէր է ուղարկում նորին մեծութեան մեր թագաւորին. թագաւորական զրօշակները նշանակում են, որ նուէրը արքունիքինն է:

— Ո՞ւծ են առիւծները:

— Այնչափ մեծ են, որ գեռ այսպիսիք Խապանիայում չեն աեմնուած: Այս վանդակում որցն է, իսկ նորա մէջ էքը, նորա խիստ սովոր են այժմ, որով հետեւ այսօր գեռ ոչինչ չեն կերել ուստի խնդրեմ մի ուշացնէք մեզ:

— Ասկանում եմ, վրայ բերաւ Դօն Քիշոտը արհամարհական ժպիտով, որ զու ուզում ես առիւծի ձագելով վախեցնել ինձ, յետոյ ես էլ վախենում եմ նոցանից: Նոցա պէտք է համոզել որ ես ամենազարհութելի առիւծներից անգամ չեմ վախենում: Ասիր, բարեկամ, վայր իջեր, բայց արա այս վանդակները ու բայց թող խեղճ անասուններին: Ինձ շատ հաճելի կինի հասկացնել այն կախարդներին, որոնք սոցա

ուղարկել են ինձ մօտ, ինչ է նշանակում—Դօն Քիշոտ Լամանշեցի:

Սայլապանը, Սանխօն ու Դօն Դիեգօն 'ի զուր էին աշխատում հեռացնել նորան այս մտադրութիւնից:

— Ինքս աւելի լաւ գիտեմ իմ բանը, գուցեց մեր հերոսը: Աթէ գուք վախենում էք, հեռացէք ուրբեմն: Իսկ զու անզգամ սայլապան, եթէ իսկոյն ևեթ վանդակը չես բացանի, այս նիդակը փորդ կիսրեմ:

Դօն Դիեգօն վերջապէս տեսնելով, որ ոչինչ չի կարողանում մեր ասպետի վճռուը խափանել արշաւեց գէպի գաշտը. ջորապանն էլ իւր ջորիներով ու Սանխօն իւր իշով հետեւեցին նորան: Սայլապանը տեսնելով, որ նոքա բաւական երկայն տարածութիւն են անցել, վճռեց կատարել մեր հերոսի ցանկութիւնը. Մինչեւ որ նա զդուշութեամբ կբանար վանդակը, Դօն Քիշոտը վախենալով թէ մի՛ գուցէ առիւծների տեսքը Ռօսինանտին վախեցնի, կամեցաւոտի վերայ կռուել: ուստի և վայր թռաւ գետին, վահանավ պաշտպանուեց ու մերկ սուրը ձեռին՝ համարձակ սպասում էր յարձակուելուն:

Վերջապէս վանդակը ամբողջապէս բացուեց և նորանից երևեցաւ ահազին մեծութեան առիւծ ցցուած բաշով և սպառնալի ու ահարկու հայեցքով: Դօն Քիշոտը ամերկիւղ նայում էր նորան: Առիւծը շուռ եկաւ, առաջ եկաւ, թաթերը վայր թողեց, բերանը բացեց ու սկսաւ իւր երկայն համարեաւ երկու ոտնաշափի չափ լեզուվ լիզել շրթունքները. յետոյ բոցավառ աչքերով նայեց Դօն Քիշ-

տին, որը սառնասրտութեամբ սկսաւ նկատել նորա ամեն մի շարժուածքը, անհամեր ցանկանալով յարձակուել նորա վերայ: Բայց առիւծը մեր հերոսից խելօք լինելով և ըստ երեւութին արհամարհելով նորան, ամեն կողմէնայելուց յետոյ՝ դարձեալ պառկեց իւր վանդակի մէջ, մէջքը նորան դարձնելով: Դօն Քիշօտը կամեցաւ, որ սայլապանը առիւծին փայտով զարկէր ու ստիպէր նորան վանդակից դուրս դալ ու յարձակուել իւր վերայ:

—Ո՛չ ես այդ չեմ կարող անել, պատասխանեց ողբամելին, առիւծը իսկոյն կտոր կտոր կանի ինձ: Մի՞թէ գեռ բաւական չէք, տէր. մի՞թէ գեռ բոլորովն չէք ցցց տուել ձեր քաջութիւնը: Հասպա՞մ մի ուրիշն էլ թող անի այդ բանը: Դուք թշնամուն մենամարտութեան կանչեցիք և նա հրաժարուեց: Յաղթութիւնը ձեր կողմն է. առիւծը փախաւ, հետեւապէս նա յաղթուած է:

—Ճշմարիտ ես առում, բարեկամ, պատասխանեց Դօն Քիշօտը, վանդակի դուռը փակիր ու ինձ քո ստրագորութեամբ մի օրինաւոր վկայական տուր, թէ դու փանդակը բաց արիր, ես սպասում էի առիւծին և թէ նա յարձակուելու փոխարէն՝ երեսը դարձնելով պառկեց իւր տեղը: Նա իմ պարտաւորութիւնս կատարեցի ու այժմ կծաղըեմ կախարդներին: Կեցցէ ասպետութիւնը:

Այս ասելով նա թաշկինսկը կապեց նիզակի ծայրին ու նորանով սկսաւ օդի մէջ շարժելով նշան տալ հետուից նայողներին, թէ կուր արդէն վերջացել է: Դօն Դիեգօն, Սանխօն ու ջորապանները շտապով վե-

րադարձան: Երբ սոքա մօտեցան, մեր հերոսը ասաց ջրապանին.

—Բա՛րեկամ, այժմ կարող ես ջորիներդ լծել ու ճանապարհող շարունակել: Իսկ դու, Սանխօն, երկու ոսկի տուր այս մարդոց, իբրև իւրեանց այստեղ կողցրած ժամանակի վարձ:

—Ա՛նձ ուրախութեամբ, պատասխանեց զինակիրը. Իսկ առիւծներն ի՞նչ եղան, կենդանի՞ն են նոքա թէ ոչ:

Այլապանը պատմեց նոցա բոլոր եղելութիւնը, խիստ ընդարձակելով այն ու մեծացնելով Դօն Քիշօտի քաջութիւնը և նկարագրեց առիւծի երկոտութիւնը, նորա հրաժարուելլ մենամարտութիւնից. յետոյ երկու ոսկի ստանալով պատրաստուեց ճանապարհը շարունակելու, խոստանալով Դօն Քիշօտին, որ նոյն իսկ թագաւորին կյայտնի իւր տեսածի մասին:

—Եթէ նորին մեծութիւնը կհարցնի, պատասխանեց Դօն Քիշօտը, թէ ով համարձակեց այդ քաջագործութիւնն անել իննդրեմ ասէք թագաւորին, որ նա Ա.ա.թ-Ա.ա.դ-ի էր, որովհետեւ այժմ այդպէս եմ կամենում անուանուել փոխանակ առաջուայ ատխուր պատկերի ասպետա անուանս:

Սորանից յետոյ նոքա բաժանուեցան: Դօն Քիշօտը, Սանխօն ու Դօն Դիեգօն միասին սկսան ճանապարհ գնալ: Վերջինս, որ աւելի ու աւելի զարմանում էր ասպետի ցնորդների վերայ, խոր մոտամունքի մէջն էր: Դօն Քիշօտը նկատեց այս բանը:

—Պարոն Դօն Դիեգօ, ասաց նա նորան, չեմ կաւկածում, որ դուք ինձ յանդուգն ու անխոհեմ մարդ

էք կարծում: Սակայն, հաւասարյանում եմ ձեզ որ ես այնքան էլ յիմար չեմ, որքան դուք կարծում էք: Թափառական ասպետութեան բուն յատկութիւնը կայանումէ անսահման քաջութիւն ցոյց տալու մէջ, ուստի և ես վտանգների եմ ման գալիս, կուռում եմ նոցա հետ, յարձակում եմ նոցա վերայ, սիրում նոցա և ամեն ըստէ աշխատում եմ երկիւղը հեռացնել ինձանից.... Այսպիսով պատահելով ճանապարհին առիւծներին՝ իսկոյն յարձակում եմ նոցա վերայ. այս արածներս գիտեմ, որ ձեզ յիմարութիւն կթուայ, բայց քաջութեան ու բարեգործութեան վերաբերութեամբ, պարո՞ն Դօն Դիեգօ, աւելի լաւ է նպատակը իրագործել, քան թէ չհասնել նորան:

— Արգարե, պարո՞ն ասպետ, բոլոր ձեր արածն ու ասածը ինձ զարմացնում են, պատասխանեց ազնուականը, բայց այժմ կանգնելու միջոց չէ, ուստի խնդրեմ շապենք, որ շուտ հասնենք մեր տուն, ուր, ինչպէս յոյս ունիմ, արժան կրատեք միքանի օր հանգստանալ:

Մեր հերոսը քաղաքավարութեամբ չնորհակալութիւն արաւ: Նոքա իսկոյն առաջ քշեցին իւրեանց ձիաները ու երկու ժամից յետոյ հասան Դօն Դիեգօի տուն: Դօն Դիեգօի ամուսին Քրիստինէն ու նորա կրտսեր որդի Դօն Լորէնսը մեծ յարգութեամբ ընդունեցին Դօն Քիշօտին: Նորան ներս հրաւիրեցին դաշիճը, ուր Սանխօն հանեց նորա զբահները, գըլուխը ջրով մաքրեց, սպիտակեղինները փոխեց և այնուհետեւ շուտով մեր հերոսը դուրս եկաւ եղծերուի մորթից կարած բաժկոնակով, որ զէնքերից մի-

անդամայն սեացել էր ու Ճիլուել մավրիտանական կիսակօշիկներով, փոկի կաշուով ուսից կախած թրով, և մոխրագոյն մահուդէ մի փոքրիկ վերարկուով: Եւ այսպէս գեղեցիկ ու պահանջանակ ձեռով Դօն Քիշօտը մտաւ հիւրասահնեակը, ուր պատրաստ էր հիւրընկալի հիւրասիրութեան արժանի ճաշը: Մինչև որ մեր հերոսը կհագնուէր, Դօն Դիեգօն իւր կնօջ ու որդուն մի կողմ տարաւ ու նոցա հասկացրեց, թէ ով էր առիւծ-ասպետը:

— Աս մի անբուժելի խելացնոր է, ասաց նա նոցա, աշխարհիս ոչ մի բժիշկ չի կարողանում նորան բժշկել: Սակայն, այդ խելացնորը զուարձալի մի բան է և երբեմն խելօք էլ է խօսում:

« Եռքա ճաշին լաւ ժամանակ անցրին: Դօն Քիշօտին թոյլ տուին իւր ցանկութեան չափ գատել թափառական ասպետութեան մասին, առանց հակածառելու նորա հետ: Նա շատ ու շատ բաւական էր: »

Այսպէս ջլրա օր անցաւ. հիներորդ օրուայ առաւօրը Կամանեցի հերոսը ասաց Դօն Դիեգօին.

— Տէր, ես ձեր արած ընդունելութիւնը երբէք չեմ մոռանայ: Իմ զլուխը, սիրոս ու ձեռքերս միշտ պատրաստ կլինեն ձեզ ծառայելու: Բայց ամենամեծ քաջութիւնն անգամ անդործութիւնից անյայտանում է: Ժամանակ է, արդէն որ բաժանուեմ ձեզանից: Նոր նոր արկածները ինձ են սպասում: Իմ զլսաւոր ցանկութիւններից մինն էլ է Մոնտեսինոսեան վանքը ներս մանել որի մասին խիստ զարմանալի բաներ են պատմում: Նա մի նշանաւոր տեղ է, ու այնաեղեց են բղիսում Ռիւդերա գետի եօթը վտակները: Դօն Դիշտիում Ռիւդերա գետի եօթը վտակները:

եգօն ու նորա որդին հաւանեցին նորա այս մտա-
դրութիւնը:

— Եթէ դուք հաւանում էք իմ ձեռնարկութիւնս,
շարունակեց Դօն Քիշօտը, ուրեմն ինդրում եմ մի
փոքրիկ ծառայութիւն անէք ինձ. այն է, ինձ մի
ուղեցոյց տաք, որ ցոյց տայ այդ վանքը տանող
մօտիկ ճանապարհը:

Խակոյն Լօրէնսօն հօր թոյլտուութեամբ առա-
ջարկեց իւրեան իրեկ ուղեցոյց: Ասպետը, շնորհա-
կալութիւն անելով իւրեան հիւրասիրովին, նստաւ
Ռօսինանտի վերայ, խակ Սանիսօն էլ իւր իշխ վերայ,
չմոռանալով իւր պարկը լաւ լինել պաշարով: Յետոյ
ասպետն ու զինակիրը Դօն Դիեզօի որդու առաջնոր-
դութեամբ ճանապարհ ընկան: Նոքա երեկոյին հա-
սան մի գիւղ, ուր և գիշերեցին: Լօրէնսօն Դօն Քի-
շօտին յայտնեց, որ իւրեանք երկու մղոնաշափ հե-
ռու են գտնւում վանքից, և որ եթէ ուզում է իջ-
նել այնտեղ, երկար պարան պատրաստեն նորա հա-
մար: Մեր հերոսը խակոյն Սանիսօնին պատուիրեց հա-
րիւր սաժէն պարան գնել և միւս օր կէսօրին երկու
ժամի մօտերքը հասան վանքը: մուտքը թէպէտե
լայն ու ընդարձակ էր, բայց այնպէս ծածկուած էր
խոտերով ու թփերով որ խիստ դժուար էր նորա-
նում անցք բանալ:

Դօն Քիշօտը շտապով իջաւ ձիուց ու հրամա-
յեց, որ իւրեան կապեն պարանով. երբ նորան պինդ
կապեցին, նա մօտեցաւ անդնդի մոքին:

— Տէր, ասաց նորան Լօրէնսօն, ինդրեմ չմոռա-
նաք այն հրաշալիքները, որ դուք կտեսնէք, որպէս
զի ես եւս կարողանամ հօրս պատմել:

— Ապահով կացէք, վրայ բերաւ Սանիսօն, ոս որ
մի բան սկսում է, վերջացնում է՛ էլ: Մեր ասպետը
սուրը մերկացրեց ու սկսաւ անցքը պահող թփերը
կտրատել սակայն այդ խակ միջոցին վանքից մի աղ-
մուկ լսուեց, ու այնտեղից գուրս թռան մի ջոկ ագ-
ռաւ ու չղջիկներ այնպիսի արագութեամբ, որ նորան
վայր ձգեցին գետին: Խակայն քաջասիրտ հերոսը
չվհատուեց այս չարագուշակ դէպէից: Նա վեր կա-
ցաւ և պատուիրելով վայր թողնել պարանը, որ
բռնած ունէին Սանիսօն ու Լօրէնսօն, իջաւ անդունքը:
Նա շարունակ ներքեւ էր իջնում, անընդհատ կըրկ-
նելով, որ պարանը թոյլ թողնեն: Ուղեկիցն ու զի-
նակիրը հնազանդուեցան. շուտով հերոսի ձայնը այլ
ևս չին լսում նոքա և ամբողջ հարիւր սաժէն պա-
րանը ներքեւ թողին: Ամբողջ կէս ժամ նոքա սպա-
սում էին նորան խօսելով միմեանց հետ: Այնուհետեւ
նոքա կարեւոր համարեցին պարանը բարձրացնել և
երբ նա ազատ բարձրանում էր, նոքա մասձեցին, որ
Դօն Քիշօտը քանդել է իւրեանից պարանը: Սանիսօն
լաց էր լինում ու հեծում. վերջապէս, երբ պարանը
ութառն սաժէնի չափ բարձրացրին, նոքա յանկարծ
նկատեցին, որ պարանը ձգուեց: Սանիսօն ուրախու-
թիւնից աղաղակեց: Մի լոպէից յետ նա պարզ որո-
շեց իւր տիրօջ:

— Կատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար, գոչեց
Սանիսօն, խակ մենք արդէն այնպէս էինք կարծում,
թէ ձեզ ներքեւն ենք թողել:

Ապահյն Դօն Քիշօտը ոչինչ չպատասխանեց: Բո-
լորովին բարձրացնելով նորան, նոքա նշմարեցին, որ

նա քնած է, իսկոյն նորան յետ արին, պառկացրին գետնի վերայ և վերջապէս զարթեցրին նորան:

—Օ՛հ, սիրելի բարեկամներս, դոչեց նա, դուք ինձ զբկեցիք աշխարհիս ամենադեղեցիկ ու ամենացանկալի տեսարանից: Աւաղ արդարեւ մեր կեանքի բոլոր զուարձութիւններն ու ուրախութիւնները երաշ զի պէս անցաւոր են:

||անխօն ու կօրէնսօն զարմացած՝ ինսդրեցին նորանից պատմել ինչ որ տեսնել էր այն վիճ մէջը:

—Սա վիշ չէ, պատասխանեց նա, այլ հրաշք ների տուն: Նստեցէք, սիրելի, լսեցէք ու ինձ հաւաացէք: Ես իջայ մուժ անդունդը, ուր յանկարծ լուսից շատ հեռու մի տեղ՝ աջ կողմը նկատեցի մի Ճեղք, որ լուսաւորւած էր միայն արելի թոյլ ճառագոյթներով: Ես այնտեղ կանգնեցի և նոյն միջոցին ձեղ ձայն տուի, —թէ պարանը այլ ես մի վայր թոյնէք, բայց աեմնելով, որ դուք իմ աղաղակներս չէք լսում, պարանը փաթաթեցի ու նստայ նորա վերայ: Իսկոյն մի քաղցր քուն եկաւ իմ վերայ: Յանկարծ ես զարթնեցի ու ինքս ինձ տեսայ մի գեղեցիկ ծաղկալի մարդագետնի մէջ ու աչքիս առջեւ երեւաց մի փառաւոր բիւրեղեայ պալատ. Նորա մի դունից գուրս եկաւ մի յարգելի ծերուկ, կանաչ պատմուձնն հագած ու փաթաթուած երկայն քղամիդի մէջ, որի փեշերը խիստ երկայն էին: Նա ձեռքին բռնած ուներ մի այնպիսի տէր ովորմեա, որի հատիկները մի մի ջայլամի ձուի չափ ադամանդներ էին... Նա մօտենալով ինձ գրկեց ու ասաց.

—Ա աղուց արդէն մենք թշուառ կախարդուած-

ներս, որ այստեղ ենք, անհամբերութեամբ սպասում էինք ձեր գալստեանը, կամանշեցի քաջ ասպետ: Որի ինձ հետ, նշանաւոր մարտիկ: Դնանք, ես քեզ ցոյց կտամ այս թափանցիկ պալատի զարմանալի շենուածքը, որի կառավարիչը ես-ինքս եմ, ձեղ հետ խօսողը՝ նոյն իսկ Մօնտէսինօսն է:

—Այս ասելով նա առաջ գնաց ու ինձ ներս տարաւ պալատի մի զահլիճը, որի պատերը ալիքաստրից էին շենած: Այստեղ ես տեսայ մի պղնձէ տապան, մի զարմանալի գործ. նորա մէջ ձգուած պառկած էր մի կենդանի մարդ: Հիացումից լեզուս կապուեց: Եւ այս նկատեց Մօնտէսինօսը:

—Դու պէտք է միմանսաս, ասաց նա ինձ, որ Ռոնսէկվօի պատերազմի մօտ հռչակաւոր կախարդ Մէրլէնը կախարդեց, անցայտ պատճառով, բազմաթիւ զինուորներին, որոնք պատերազմում էին Ռոլանդի զօրքի մէջ և նոցա հետ էլ մի քանի նոցա սիրելի մարդոց: Այս սապետը, որի գու տեսնում ես տապանում, քաջ Դիւրանդարն է, իմ ամենալաւ բարեկամը:

Այդ բուպէին Ռիւրանդարը տխուր ձայնով աղաղակեց.

—Մօնտէսինօս, սիրելի եղբայրս, ի՞նչ եղան իմ հաւատարիմ զինակիրս, իմ մայր Ռիւրէրան, աղջեկներս ու միւս ազգականներս:

—Աւաղ. այդ ձեղ յայանի է, սիրելի բարեկամ, իսկոյն պատասխանեց Մօնտէսինօն արտաստուքը աչքերին: Արդէն հինգ հարիւր տարուց աւելի է, ինչ մեղ այստեղ բերել է իմաստուն Մէրլէնը, ես, դուք, ձեր զինակիր Գվադիանան, ձեր մայր Ռիւրէրան,

նորա եօթն աղջիկները, երկու եղբօրաղջիկներն ու ուրիշ շատ թշուառներ—բոլորս առողջ ենք, բացի ձեր մօրից, քոյրերից, ու եղբօրաղջիկներից, որոնք այնքան լաց եղան, որ վերջ—՚ի վերջոց աղբիւրներ դարձնան: Ձեր գինակրին էլ դժբաղտութիւն պատահեց. նա անմիշտար հեծում էր ու լալիս ձեր մօր համար ու գետի փոխարկուեց, որ ասուեցաւ Գվաղիանս: Բայց ահա հոչակառոր Դօն Քիշոտ Լամանշեցին, որի մասին արդէն Մէրլէնը խօսեց մեզ հետ Յոյս ունիմ, որ այս հերոսը կազմատի մեզ կախարդութիւնից:

— Ա և, սիրելի՝ եղբայր, եթէ չաղատուենք էլ կարող ենք համբերել ու հները կմոռանանք, վրայ բերաւ Դիւրանդարը ու լուելով քամակը դարձրեց:

— Այս րոպէին ողորմելի ձայներ լսեցի, որոնք ստիպեցին ինձ յետ նայել և ես մի ուրիշ գահին ծում բիւրեղեայ պատի միջից տեսայ գեղեցկատես կանայք սգի շորերով, ու սպիտակ փակեղներ գլխներին:

— Տես ահա, ասաց ինձ ծերուկը, դժբաղտ Ոիւթէրի համար սղող կանայքը: Նաբաթը չորս անգամ նոքա այսպիսի հանդէս են կատարում Դիւրանդը մարմնոյ շուրջը.....

— Աս դեռ ես չէր վերջացրել իւր բացատրութիւնները, մինչ ես զգացի, որ ինձ վերև են բարձրացնում,—պալատն էլ, մարդագետինն էլ, Մօնտէսինոսն էլ ու այն բոլոր առարկաները յանկարծ անյտացան աչքիս առաջից:

— Բայց, տէր, ի՞նչպէս կարողացաք մի ժամուայ

մէջ այդ բոլորը տեսնել ու լսել հարցրեց Լօրէնսօն: — Ի՞նչպէս թէ մի ժամ, վրայ բերաւ Դօն Քիշուր, երեք օր ու գիշեր միջոց անցան:

— Տէր Յիսուս Քրիստոս, աղաղակեց Սանխօն ձեռքը Ճակատին զարկելով այս անելու բան է, որ անիրաւ կախարդները այս աստիճան խանգարել են իմ բարի ակրօջ միտքը:

— Բարեկամ, վսեմութեամբ պատասխանեց Դօն Քիշուր, ներում եմ քեզ այդ խօսքերի համար, քո դէպի ինձ ոնեցած միլայդ ու համալրութեանդ համար. դու զիտես, որ ես սուտ խօսել չեմ սիրում: Հաւատացնում եմ քեզ և կրկնում եմ, որ ասածներս խկութեամբ կատարուեցան: Դեռ ես բոլորը չեմ պատմել ձեզ. ճամանակին քեզ ուրիշ շատ սքանչելիքներ էլ կպատմեմ, որոնք կբացատրեն ու կհաստատեն բոլոր քո իմացածներդ:

Պէտք է մեր ընթերցողներին ասենք, որ այս տեղ մեծին Դօն Քիշուի հեղինակի ձեռքով զրած է հետեւեալ վսեմնկատողութիւնը.

— Մինչև այժմ պատահած բոլոր օտարուի արկածները հասկանալի են: Խսկ այս վերջինը միանգամայն խելքին մօսիկ բան չէ: Միւս կողմից, մեր հերոսի պարզմութիւնն ու անկեղծութիւնը նորանից մաքրում են ստախօսութեան կասկածը: Այս պատճառով, ամենից հաւանական է թւում այն, որ նա այդ բոլորը տեսած պիտի լինի երազի մէջ:

Այսպէս թէ այնպէս, Լօրէնսօն ընորհակալութիւն յայտնեց նորա զարմանալի պատմութեան համար և խոստացաւ այն ամենը խկութեամբ պատմել

իւր հօրը.... նոքա երեքը միասին խոտի վերայ նստելով ձաշեցին Սանկոի ունեցած պաշարովը, ու յետոյ գարձեալ ձի նստեցին: Կօրէնսօն հրաժարուեց նոցանից և զնաց Դօն Դիէգօի մօտ, այն ինչ մեր արկածախնդիրն ու նորա վիճակիրը առաջ գնացին:

Պլուխ ՁՂ.

ԿԱԽԱՐԴԱԾ ՆԱԽԱԿԸ: ՄԵՐ ՀԵՐՈՍԸ ՊԱՏՍՀՈՒՄ Է ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՏԻԿՆՈԶ, ՈՐ ՈՐՍԻ ԷՐ ԴՈՒՐՄ ԵԿԵԼ: ԴՕՆ ՔԻՇՈՑԻ ՈՒ ՍԱՆԽՈ ՊԱՆՉԱՒԻ ՀԻՒՐ ԳՆԱՎԸ ԴԲՍԻ ՈՒ ԳԲՍՈՒՀՈՒ ՄՈՏ:

Մեր ձանապարհորդները անտառումն էին արդէն, երբ մթնեց: Նոքա ձիերից վայր իջան ու ծառերի տակ քնեցին: Այս անգամ ոչնչ անբնական գէպք չվրդովեց նոցա քունը: Լուսաբացին նոքա գարձեալ ձանապարհ ընկան երթո գետի ուղղութեամբ նորա ափերի մօտից: Դօն Քիշուր հիանալով տեղի գեղեցկութեան վերսայ՝ անձնատուր էր եղած զանազան իւրեան հաճոյ մտածմունքներին, երբ նկատեց ծառի բնից կապած մի նաւակ, որ ոչ զէկ ունէր, ոչ թի և ոչ էլ առագաստ: Նա չորս կողմը նայեց և երբ տեսաւ, որ ոչ ոք չկայ, ձիուց վայր իջաւ. Սանկոին էլ պատուիրեց նոյնն անել և ձին ու էշը ծառից կապել: Սանկոն նորան հարցրեց, թէ ինչ է կամենում անել:

— Պարաքս պիտի կատարեմ, պատասխանեց նա վեհանձնութեամբ: Այս նաւակը առանց ողատճառի

չէ այստեղ: Անկասկած ինձ հրաւիրում են նստել նորա մէջ և օգնութիւն հանել վերին աստիճանի վտանգի ենթարկուած մի ասպետի կամ մի ուրիշ անձի:

Սանկոն կատարեց իւր տիրոջ պատուերը, շարժելով գլուխը ու անբաւական գէմք ընդունելով: Երբ Ռուսինանտն ու էշը պինդ կապեց ծառից՝ նա տաց.

— Պարոն Դօն Քիշուր. ձեր հրամանը կատարեցի, այժմ ի՞նչ պէտք է անկմ:

— Եյժմ քեզ պիտի յանձնես նախախնամութեան կամքին, նստես այս թեթև նաւակը և բաղտիգ հնապանդուես:

Այս որ ասաց նա թռաւ նաւակի մէջ: Զինակիրն էլ նորան հետեւեց, նաւը պահող պարանը կըտրեց և նաւակը ափից հեռանալով՝ սկսաւ հանգարտ լողալ գետի հոսանքի ուղղութեամբ: Դեռ երկու սամէնաշափ հազիւ էին ափից հեռացել երբ Սանկոն երկիւղեց սկսաւ ամբողջ մարմնով գողալ:

— Ի՞նչ եղաւ քեզ վախկոս, հարցրեց նորան Դօն Քիշուր, տեսնելով նորա թռւլութիւնը: Ի՞նչ է պատահէլ քեզ, երկրի անարգ Ճիճու: Այսպէս ես գողուսմ, կարծես քեզ սոխկում են բորիկ սոտով Ույժքէրեան լեռների մշտական սառցցները կամ թէ չէ կիրիայի հրաշէկ անապատի միջով անցնել: Ոչ զուհանդիստ նատած ես մի բապէտմ հարիւր մղոն տարածութիւն անցնող նաւի մէջ և զնում ես աշխարհիս ամենագեղեցիկ գետի ընթացքով: Հանգիստ կաց, մենք շուտով կմտնենք մի ընդարձակ ովկիանոս, զուցէ հենց այնտեղ էլ լինենք, որովհետեւ մենք առ

նուազն եօթ կամ ութ հարիւր մըսն տեղենք անցել։
Եթէ այստեղ մի աստեղագէտ լինէր, ես կորոշէի
Ճիշտ այն տեղը, ուր որ մենք գտնուում ենք այժմ։
բայց կարող եմ քեզ հաւատացնել, որ մենք գոնէ
հասարակածն արդէն անցած կլինենք։

— Հաւատում եմ ձեզ տէր, հաւատում եմ։ Բայց
եթէ այդ գիծը արդէն անցել ենք, ուրեմն քանի
մղոն տարածութիւն անցած կլինենք։

— Երկրագնդի կէսն անցել ենք արդէն։

— Ասացէք, ինդրեմ, ինչո՞ւ էք իմանում, թէ այդ
գիծն արդէն անցել ենք։

— Լսիր։ Երբ մեր նաւերը կադիքսից ձանապարհ
են ընկնում դէպի ճնդկաստան, ծովագնացները այդ
իմանում են նորանից, որ հասարակածին հսմնելով,
նաւում գտնուած բոլոր միջատները մի վայրկենում
սատակում են։

Սանխօն, որ մեծ ուշադրութեամբ լսում էր
իւր տիրօջ խօսքերը, յանկարծ ձեռքը տարաւ դէպի
իւր ոտը։

— Տէր, կոչեց նա, մենք դեռ չենք անցել այդ
գիծը, ես ահա մի լու բռնեցի, որ սարսափելի կեր-
պով կծեց……

Սակայն նա լուն բռնելու համար այնպէս շար-
ժուեց տեղից, որ նաւը թեքուեց, ջրով լցուեց ու
շուռ եկաւ։ Մեր արկածախնդիրները թափուեցան
գետը։ Դօն Քիշօտը, չնայելով իւր դէնքերի ծանրու-
թեան, կարողացաւ լողալով համեն ափին։ Սանխօն
ևս նորա օգնութեամբ ազատուեց նոյնպէս։ Երբ նո-
քա ափ դուրս եկան ու արդէն ջուրը առուների

պէս վազում էր նոցանից, ձկնորսները, որոց պատ-
կանում էր նաւը, շրջապատեցին նոցա ու աղմուկ
անելով սկսան պահանջնել կորցրած նաւակի վարձը։

— Ավագարեմ, պատասխանեց Դօն Քիշօտը, միայն
թէ ինձ ցոյց տուէք այն բերդը կամ ամրոցը, ուր
բանտարկուած է այն ասպետը, որին պիտի ես ա-
զատեմ։

— Ի՞նչ բերդ, ի՞նչ ամրոց, ի՞նչ ասպետ է, մինը
միւսի ետևեց կրկնեցին ձկնորսները։

— Ես տեսնում եմ, որ այստեղ գարձեալ կախար-
դութիւն կայ։ Ես կատարեցի այն ամենը, ինչ որ
կարողացայ։ Անշուշտ, մի ուրիշին է վիճակուած այս
նշանաւոր գործի կատարումը, ուստիև Սանխօն, վճա-
րիր այս բարի մարդոց ինչքան որ պահանջում են։

Զինակիրը հառաջելով տուեց ձկնորսներին յի-
սուն ըէալ և յետոյ ասաց։

— Երկու այսպիսի նաւագնացութիւն էլ որ անենք,
այն ժամանակ կարող ենք ասել ՚ի զուր ջանք, ան-
օդուտ վաստակ։

Մեր երկու հերոսները արևի տակ չորացնելով
շորերը, գնացին իւրեանց նժոյգների մօտ։ Ահա այս-
պէս վերջացաւ կախարդական նաւակի անցքը։

Միւս օրը, երբ նոքա մարգագետնովն էին անց-
նում, Դօն Քիշօտը նկատեց միքանի բազէակիր որ-
սորդներ։ Նոցա մէջն էր և մի մատաղահաս գեղեցիկ
կին, երկայն շքեղ ճանդերձով և նասած սպիտակ
ձիու վերայ։ Նա ձեռքին բռնած ունէր մի բազէ։
Նորան տուած պատուից ու յարգանքից իմացւում

էր որ այն կինը բարձր կոչումն ունէր. նա հրա-
մայում էր բոլոր որսորդներին:

— Բարեկամ, Սանխօ, ասաց մեր հերոսը. գնա իմ
կողմից ողջունիր այն սպիտակ ձիու վերայ նստած
տիկնօջ և ասա նորան, որ առիւծ—ասպետը թոյլ-
տուութիւն է խնդրում նորանից՝ իւր յարդանքը ան-
ձամբ տալու համար: Զգոյշ կաց, յիմար յիմար չխօ-
սես նորա մօտ. աշխատիր կարելոյն չափ լաւ կա-
տարել յանձնարարութիւնս և խօսակցութեան մէջ
առաջներ չխառնես:

— Մի վախէք, ինձանից լաւ գեսալան դուք չեք
կարող գտնել, պատասխանեց Սանխօն. մի՛ կարծէք
թէ ես առաջներով կխօսեմ նորա հետ, որովհետեւ
ես զիտեմ թէ ում հետ ինչպէս պիտի խօսել, կար-
միր ձուն զատկին կսազե. աղքատը փողի աղքատ է
և ոչ խելքի. թէպէտ իմ հազուստս մե է, բայց խելքս
հօ գէլը չի կերել. և զեսպանի պաշտօնը նոյնպէս
լաւ կկատարեմ, ինչպէս և զինակրինը:

Ասաց ու առաջ քշեց նա իւր էշը դէպի որ-
սորդները, մօտեցաւ այն տիկնօջ, վայր իջաւ իշեց և
ծունկ չոգելով ասաց.

— Մեծաղօր տիկին. իմ անունս Սանխօ Պանչա է
և զինակրի պաշտօն եմ վարում առիւծ-ասպետի մօտ,
որին դուք այնտեղ ահա տեսնում էք: Իմ տէրս, որ
առաջ տխուր պատկերի ասպետ էր ասւում, ինձ ու-
ղարկեց յայտնելու ձեզ, որ նա խիստ ցանկանում է
ձեզ և ձեր թռչնին ծառայութիւն անել: Սորա հա-
մար թոյլտուութիւն է խնդրում ձեր պայծառա-
փայլութիւնից:

— Աիրելի՛ զինակրի, պատասխանեց նորան աիկինը.
դուք ձեր ստանձնած յանձնարարութիւնը խիստ գե-
ղեցիկ կերպով էք կատարում: Վերկայէք, ազնիւ
բարեկամ, և հաւատարիմ ուղեկից տխուր պատկերի
ասպետի, որի փառքն ու մեծագործութիւնները ամ-
բողջապէս ինձ քաջ յայտնի են և ասացէք ձեր
տիրօջ, որ թէ դուքսը, այսինքն ամուսինս, և թէ ես
մեծ ուրախութեամբ կընդունենք նորան մեր ամրոցը,
որ այստեղից շատ շեռու չե:

Սանխօն, այս հաճելի պատասխանից խիստ ու-
րախացած, շտապեց այն հասցնելու իւր տիրօջը:
Դօն Քիշօր լսելով այս բանը, ուղղուելով թամքի
վերայ և ոսները ամրացնելով ասպանդակների մէջ՝
սազաւարտի ճակատնացը բարձրացրեց, Ուօփնանտին
աւելի քաջութիւն տալու համար սանձը ձգեց և
հզպարա կերպով բարձրացնելով՝ առաջ գնաց: Մինչեւ
որ սա կերթար, դքսուհին հրամացեց իւր ամուսնուն
կանչել, որպէս զի յայտնի նորան զինակրի գալու:
Պէտք է ասել որ նաքա երկուն էլ Դօն Քիշօ՛ին
վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները զիսէին:
Նոքա այն բոլոր լսել էին Դօն Դիեգօից, որը նոցա
բարեկամ էր: Այս պատճառով նոքա վճռեցին միան-
գամայն հաւանութիւն տալ նորա սովորութեան,
մոքերին ու կարծիքներին և պայման դրին նորա
հետ վարուել ինչպէս մի խսկական թափառական
ասպետի հետ:

Դօն Քիշօրը երբ որ նոցա մօտեցաւ, շտապով
վայր իջաւ ձիուց: Սանխօն շտապելով ձիու աս-
պանդակը բռնելու, նորա ուր այնպէս դէմ ընկաւ

թամբի պարաններին, որ գլխիվայր կախ ընկառ։ Մեր հերոսը չնկատեց այս բանը և կարծելով թէ Սանիսն ասպանդակը բռնած ունի, սկսաւ առանց զգուշանալու վայր իջնել ձիուց։ Սակայն Ռօսինանտի թամբը ասպետի մարմնոյ ծանրութիւնիցը սլքուեց ձիու փորի վերայ և Դօնքիշօտը յանկարծ վայր ընկառ նորա ոտների մօտ։ Այս անյաջողութեամբ յուշ սահատուելով, նա ցած ձայնով սկսաւ հայհոյել իւր զինակրին, երբ որսորդները դքսի հրամանով բարձրացրին նորան և խեղճ Սանխօին ևս ազատեցին իւր դրութիւնից։ Դօն Քիշօտը, որ վայր ընկնելիս վերաւորուել էր, կաղէկաղ միքանի քայլ արեց և ծունկ չոգեց դքսուհու առաջ, բայց դուքսը այս բանը արգելեց նորան և զրկեց։ Փոխադարձ ողջունից յետ, որ եղաւ միանդամայն ասպետական ոգուով դուքսն ասաց։

— Այժմ դնանք իմ ամրոցը, եթէ միայն հռչակաւոր տիտուր պատկերի ասպետը կկամենայ իւր այցելութեամբ պատուել մեզ։

— Ի հարկէ, ասաց Սանխօն, նա այս բանը շատ է ցանկանում, և ես էլ նորա հետ։ բայց, ձերդ պայծառափայլութիւն, մեզ տիտուր պատկերի ասպետ մի կոչէք. մեր անունը այդ չէ այլ ես, այլ այժմ աւտում ենք առիւծ-ասպետ։

Ամենքը ձի նստեցան ու ձանապարհ ընկան։ Դքսուհին զնում էր իւր ամուսնու ու Դօն Քիշօտի մէջ տեղը. վերջինս ասաց նորան։

— Տիկին, ես ձեզ պիտի առաջեւէտ յայտնեմ, որ երբէք ոչ մի թափառական ասպետ այնպէս շատա-

խօս ու յանդուգն զինակիր չի ունեցել ինչպէս ես. ուստի և ես նորա համար ներումն եմ խնդրում ձեզանից։

— Ընդհակառակին, ես շատ ուրախ եմ, ժպտելով պատասխանեց դքսուհին, վաղուց արդէն ես լսել եմ Սանխօ Պանչահ սրամութեան ու ուրախ բնաւորութեան մասին. թողլ խօսի, ուրեմն, որքան կամենայ, առանց վախենալու թէ ինձ կարող է ձանձրացնել։

Այս ասաց ու ձայն առուեց նա զինակրին, որ խօսի իւր հետ. խկոյն Սանխօն իւր էշը առաջ քչեց դքսուհու կողմը, դքսի կողքին սկսեց գնալ և անդադար խօսել։ Նրբ ամրոցին մօտեցան, դուքսը առաջ գնաց կարևոր կարգադրութիւններն անելու Դօն Քիշօտին ընդունելու համար։ Նրբ ասպետն էլ հասաւ ամրոցին՝ երկու շքեղ հագնուած ծառաներ շտապեցին օգնել նորան ձիուց վայր իջնելիս. Երկու ուրիշ ծառաներ նորա ուսին ձգեցին մի սկզբան ծիրանի։ Վերնայարկը մարգիկերանցով ու կամանցով լցուեցաւ։

— Ողջո՞յն ձեզ թափառական ասպետութեան ծաղեկ, գոչեցին նոքա։

Դօն Քիշօտը ստացած պատիւներից ուրախացած առաջ գնաց ու վառք տուեց Աստծուն, որ վերջապէս, գոնէ առաջին անգամ իւր կեանքում այնպիսի ընդունելութիւն գտաւ, որպիսին իւր կարգացած վէպերում նուիրում էին հին թափառական ասպետներին։ Նորան ներս տարան մի ընդարձակ դահլիճ, ուր սփռած էր դիպակ։ Վեց հոգի ծառաներից եկան զէնքերը վերցնելու նորանից։ Նրբ այս վերջացաւ, նա շնորհակալութիւն արաւ նոցա, կամնեց իւր զինակրին

ու նորա հետ միասին փակուեցաւ առանձին սենեկում: Նա մի քանչ: Խորհուրդներ տուեց նորան:

— Անխօ, բարեկամ, ասաց նա նորան, լեզուդքեղ պահիր, ասածդ նախ կըսիր և նայիր թէ ում հետ ես խօսում. աշխատիր, որ քեղ մի տգէտ կամ դատարկախօս չկարծեն: Սանխօն խօսացաւ նորան զգոյշ լինել և խորշել ամեն յիմար խօսքերից: Նա հազցրեց իւր բարի տիրոջ, որ զրահաւորուեց թրով, ծածկեց ծիրանեղոյն վերաբկու, գլխին դրեց կանաչ զլսարկ և մտաւ դահլիճը: Այստեղ նա տեսաւ վեց ծառայ, որոնք շարուել էին նորան ընդունելու համար. ընդունելութիւնը կատարուեց բազմաթիւ ողջոյններով: Այդ միջոցին մտան այնտեղ տասներկու ուրիշ ծառաներ նորան ճաշի հրաւիրելու: Այդպիսի շքեղ հանդիսով նա մտաւ սեղանսատուն, ուր պատրաստած էր զանազան համադամ կերակրներով լի սեղան միայն երեք հոգու համար:

Դուքն ու դքսուհին նորան էին սպասում: Երբ սեղան նատելու ժամանակը մօտեցաւ, Դօն Քիշօտը ստիպուեցաւ ամենասպատուաւոր տեղը նստել թէպէտե բաւական ժամանակ ընդդիմանում էր այդ բանին: Դքսուհին աջ կողմը նստեց, իսկ դուքսը նորա դէմը: Սանխօն շատ զարմացաւ երբ տեսաւ, որ գուքսը իւր տիրոջ խնդրումէ առաջին տեղը նստել: Մի քանի ըստէ մտածելուց յետոյ նա ասաց.

— Տէր, որովհետեւ խօսքը տեղն է եկած, ինդրեմ թոյլ տաք, որ պատմեմ ձեղ թէ միանդամ ի՞նչ պատահեց ինձ գիւղումը:

— Դքսուհի, խօսքը կտրեց Դօն Քիշօտը, դուք

այս խեղճի միտքը շփոթեցիք. Հրամայեցէք թող դուրս զնայ կորչի, որովհետեւ սա դարձեալ յիմար յիմար կսկսի դուրս տալ:

— Ո՞նդհակառակին, ասաց դքսուհին, ես նորան հրամայում եմ, որ այստեղ մնայ ու էօսի. ինձ շատ հաճելի է սորա սրամութիւնը և յոյս ունիմ որ աւել պակաս ոչինչ չի խօսիլ:

— Այս, Աստուած ձեր կեանքի մի տարին հազար անի այդպիսի քաղցր խօսքերիդ համար, պատասխանեց Սանխօն, այս է պատմութիւնս.

— Այր գիւղացի մի հարուստ ու երկելի աղնուական մի անգամ իւր մօտ ճաշի հրաւիրեց մի խեղճ գիւղացու. Երբ սեղան էին նստում, աղնուականը նշան արեց գիւղացուն, որ սա առաջին տեղը նստի: Գիւղացին չկամեցաւ այս անել սակայն տանտէրը պնդում էր նոյնը: Գիւղացին կամենալով ցոյց տալ որ քաղաքավարութիւն գիտէ ու աշխարհում ապրելու շնորհք ունի, սկսաւ վիճել, մինչեւ որ աղնուականը նորա թեկից բռնեց ու բռնի նստայրեց, բարկութեամբ տաելով նորան. նստիր, յարգելի՝ գիւղացի, և հոգս մի՛ քաշիր իմ մասին. Ես որտեղ էլ նստեմ քո վերաբերութեամբ միշտ յարգելի տեղ կունենամ: — Այս է ահա իմ պատմութիւնս, ողօրման տեարք, և ես կարծում եմ, որ աւելորդ ոչինչ շասացի:

Դօն Քիշօտը, երբ այս պատմութեան վերջին խօսքերը լսեց, սկզբում կարմինց, յետոյ գեղնեց: Դուքսն ու դքսուհին նկատելով նորա վըդովմունքը, շըմունքները կծեցին իւրեանց ծիծաղը պահելու հա-

մար, վախենալով թէ մի՛ դուցէ աւելի բարկացնեն նորան, և խօսքը փոխեցին:

Երբ ճաշը վերջացրին՝ չորս ծառաներ եկան. նոյցանից մինը բերեց արծաթէ կոնք, միւսը ջրով լիքը անօթ, իսկ երրորդը նուրբ երեսրբիչ, վերջապէս չորրորդը հոտաւէտ օճառ (սապոն): Նոքա կոնքը մօտեցրին Դօն Քիշօտի վզեն, թաշկինակ փառեցին առաջը, լուացին նորա մօրուքը, այտերը, քիթն ու մինչեւ անգամ աչքերն էլ այնպէս որ նորա ամբողջ դէմքը փրփուրով ծածկուեց. մեր հերոսը ձգեց իւր պարանոցը և թոյլ տուեց այն ամենը անել ինչ որ նոքա կամենում էին, ենթազրելով, որ այնուեղի սովորութիւնը այդպէս է: Զուրը հատաւ. ծառաներից մինը ջրի գնաց և մինչեւ նորա վերագառնալը մեր խեղձ հերոսը փրփուրով լիքը դէմքով ու աչքերը փակած սպասում էր: Անկարելի էր նորան նայել այդ ժամանակ և չծիծաղել: Սակայն ամենքը պահում էին իւրեանց ծիծաղը: Վերջապէս ջուրը բերին. ծառան լուաց վերջացրեց Դօն Քիշօտի մօրուքը, կամաց սրբեց նորա երեսը, յետոյ չորսը միասին խորը գլուխ տուին նորան և հեռացան:

Սանխօն, որ ուշազրութեամբ նայում էր այս հանգիսին, ինքն իւրեան մրմնջում էր.

— Դամ արես, վատ չէր լինի, եթէ սոքա սովորութիւն ունենային զինակիների մօրուքն էլ լուանալու: Այս բանը կանոն կդարձնեմ իմ իշխանութեան յանձնած երկրի մէջ, երբ տէրս կտայ ինձ այն կղզեն, որ, աւաղ վաղուց է ինձ խոստանում է, և որին դուցէ ի զուր եմ սպասում:

— Ո՛չ Սանխօն, 'ի զուր չէ, ասաց դուքսը, ես ինն երեւելի կղզի ունիմ և պարոն Դօն Քիշօտի պատուի համար, այսօրուանից քեզ կարդում եմ նոյցանից ամենաերեւելի մէկի նահանգապետ:

— Ծունկ չոգիր, Սանխօն, գոչեց Դօն Քիշօտը ու լիզեր նորին: պայծառափայլութեան սաները, իբրև շնորհակալութիւն նորա այդպիսի բարեբարութեան համար:

Զինակիրը իսկոյն կատարեց նորա հրամանը:

— Ուրեմն լաւ տասցի, ասաց նա, որ զինակիների մօրուքը լուանալու հանգէսը ինձ շատ հաճոյ կլինի, թէպէտե պատուհէր, որ ծառաները սափրէին էլ նոցա մօրուքները

— Բարեկամ, ասաց դքսուհին, բաւական է միայն հրամայել և իսկոյն ծառաները մօրուքդ էլ կլուանան և եթէ կամենաք տաշտի մէջ էլ կնստեցնեն ձեզ:

— Օհ, տաշտի համար շատ շնորհակալ եմ, տիկին, ես կեանքիս մէջ չեմ լողացել:

— Տես, ասաց դքսուհին սեղանապեախն, որ Սանխօն ցանկութիւնները միանգամայն կատարուեն:

Սեղանապետը խոստացաւ կատարել այն բոլոր և զինակին տարաւ իւր հետ:

Գոտքն ու դքսուհին մնալով միայնակ Դօն Քիշօտի հետ, ինդքեցին նորանից մանրամասնաբար պատմել իւրեան պատահած արկածների պատմութիւնը նորա վլրջին ձանսապարհորդութիւնից յետոյ: Մեր ասպետը շտապեց նոցա ցանկութեանը բաւարութիւն տաղու: Նա արդէն պատմել էր նոցա Մօնտէսսինոսեալ, այրի անցքը, երբ յանկարծ ներս

վաղեց Սանիսօն խոխարարի գոգնոցը առաջը կապած, նորան մղում էին տասներկու ծառաներ, որնցից մինը տաք ջրով լիքը պղինձ ունէր ձեռքին:

— Տիկին, պատասխանեց ծառաներից մինը, մենք կամենում ենք դորա մօրուքը սափրել ինչպէս որ ձերդ պայծառափայլութիւնը հրամայեց, իսկ պ. զենակիրը չե թողնում:

— Ո՛չ երբէք չեմ թողնի, աղաղակեց Սանիսօն, նորին պայծառափայլութիւնը ձեզ այնպէս ըպատուիրեց, որ կոնքի փոխարէն պղինձ վերցնէք, ու անուշահոտ օձառի փոխանակ էլ մոլորաջուր: Մանաւանդ որ այդպիսի կատակներից ես խիստ ձանձրացած եմ, և ով ձեզանից ձեռք կտայ մօրուքիս, այնպիսի մի փառաւոր հարուած կստանայ, որ մի տարի չի մռանայ:

— Անիսօն ճշմարիտ է ասում, ասաց դքսուհին, խելք ունիք հանդիսա թողեք սորան, թէ չէ իսկոյն բոլորիդ էլ կարտաքեմ:

Այս խօսքերից բոլոր ծառաներն էլ փախան: Սանիսօն պարանոցով գոգնոցը կապած ծունկ չոգեց դքսուհու առաջ ու ասաց.

— Տիկին, դուք ինձ յաղթեցիք. դուք այնքան բարի էք, որ ես մտադիր եմ թափառական ասպետ դառնալ միայն նորա համար, որ ամենքին հասկացնեմ և համոզեմ. թէ ձեզանից բարի ու մեծահոգի ոչ ոք չկայ աշխարհում:

— Ես շատ շնորհաշալ եմ ձեզանից, բարեկամ Սանիսօն, և յոյս ունիմ, որ իմ գոհունակութիւնս շու-

տով ցոյց կտամ, խնդրելով դքսից, որ որքան կարելի է շուտով յանձնի քեզ խոստացած կալուածը:

Այս խօսակցութիւնից յետոյ Դօն Քիշօտը գնաց հանգստանալու. Սանիսօն էլ գնաց իւր էշը տեսնելու. դքսուհին հեռացաւ որ հանգստանայ, իսկ դուքսը դուրս գնաց իւր մարդոց պատուէրներ տալու, թէ ինչպէս պիտի վարուին Դօն Քիշօտի հետ, բոլորովին շշեղուելով թափառական ասպետութեան կանոններից:

Գլուխ ԺԵ.

ԴՕՆ ՕՐԻԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: ԿԱԽԱՐԴԱԾ ՁԻ:

Դքսի սեղանապետը մի հնարագէտ ու ուրախ մարդ էր: Նա գիտենալով, որ իւր տերերը կամենում են իւրեանց հիւրի յիմարութիւններով զուարձանալ մոտածեց մի զուարձալի բան: Նա նոցա ներկայացրեց իւր նախագիծը և երբ դուքսն ու դքսուհին հաւանութիւն տուին, հարկաւոր պատրաստութիւնները տեսաւ:

Ամրոցի մի կողմը մի պատուական պարտէզ կար. հրամանացին այդ օրը սեղան պատրաստել նորանում:

Ճաշը նոր էին վերջացրել երբ հեռուից սրնգի ու թմբիկի ձայներ լսուեցան: Այս բազմազան երաժշտութիւնը բաւական դանդաղ էր առաջ դալիս: Յանկարծ մի հսկայ երեւաց, որ փաթթուած էր սև վերաբեր կարծ մէջ լայն թուրլը ուսից կախ ձգած: Նորա ակուի մէջ լայն թուրլը ուսից կախ ձգած: Նորա առաջից գնում էին երկու թմբկահարներ, ու փող

փչողներ, որոնք նոյնպէս սեեր ունէին հագած։ Նորա դէմքը ծածկած էր դիմակով, որի միջից երեւում էր երկայն ու ձեան պէս սպիտակ մօրուքը, որ հասնում էր մինչև գոտիկը։ Այս հսկան գանդաղ ու հանդիսաւոր կերպով առաջ էր գնում և վերջապէս ծունկ չոգեց դքսի առաջ։ յետոյ վերկացաւ ու բարձր ձայնով ասաց։

— Մեծազօր իշխան։ քո առաջ կանդնողը ալեզարդ Տրիֆալդինն է, Տրիֆալդա կամ Դօլորիդա իշխանուհու զինակիրը։ Այն թշուառականը սոտով եկել է Կանդայեան թագաւորութիւնից այն յուսով միան, որ քեզ պատմի իւր զարհուրելի պատմութիւնը և քեզանից տեղեկութիւններ ստանայ անյաղթ Դօն Քիշօտ Լամանշեցու, այն միակ ասպետի մասին, որ միան կարող է վերջ տալ նորա թշուառութեանը։

Տրիֆալդինը վերջացնելով այս խօսքերը՝ հազաց ու ուղեց իւր երկար մօրուքը։

— Վաղուց արդէն, քաջ զինակիր, պատասխանեց գուքսը, յայտնի են մեզ դժբաղդ Դօլորիդի թշուառութիւնները։ Դուք նորան կարող էք իմաց տալ, որ մենք նորան ենք սպասում։ Իբրև միսիթարութիւն այս էլ ասացէք նորան, որ նորա բաղտից հռչակաւոր Դօն Քիշօտը այստեղ է գտնւում։

Այս խօսքերը լսելուց յետոյ Տրիֆալդինը նորից ծունկ չոգեց ու յետոյ հեռացաւ իւր տիրաձայն երաժշտութեան հետ միասին։

— Տեսնո՞ւմ էք, գոչեց գուքսը, դառնալով մեր հերոսին, ատելութիւնն անդամ չի կարողանում ձեր քաջագործութիւնների փառքը նսեմացնել։ Դեռ վեց

օր հազեւ է անցել ինչ այստեղ էք ու տեսէք, թէ ինչ հեռու տեղերից թշուառներն ու վշտացածները լսելով ձեր անունը, գալիս են ձեզ մօա ձեղանից պաշտպանութիւն ու հովանաւորութիւն ինդրիլով։

— Խոստովանում եմ, պատասխանեց Դօն Քիշօտը, որ իմ ասպետական կոչումովս երբէք այնպէս չեմ պարձեցել և երբէք այնքան ընտիր պաշտօն չեմ համարել այն, ինչպէս այժմ։ Թող գայ այդ դժբաղդ կինը ու պատմի ինձ իւր վեշտը։ Նա կարող է յոյս գնել բազկիս վերայ։

Շուտով Տրիֆալդի իշխանուհին էլ եկաւ։ Նորան առաջնորդում էին տասներկու ուրիշ կանայք, որոնք խիստ լայն շորեր ունէին հագին, ու այնչափ երկար ծածկոցներ, որ համարեա գետնին հաւասար էին։ Նոքա զոյտ զոյտ էին գնում։ Դօլորիդի սեազգեատը երեք վերջաւոր ունէր, որ բռնած ունէին երեք սպասաւորներ։ Խշանուհու դէմքը, ինչպէս և նորան ուղեկցող տասներկու կանանց դէմքերը սքոլած էին, և նա առաջ էր գնում յենած իւր զինակիր Տրիֆալդինի ձեռքին։ Դուքսը, դքսուհին ու Դօն Քիշօտը խիսյն, երբ իշխանուհին մօտեցաւ, ոտի կանդնեցին։ Դօլորիդան երեսը ծածկած ընկաւ դքսի ստներն, և սա շտալով վերկացրեց նորան ու նստացրեց դքսուհու մօտ։ յետոյ նա յարգութեամբ հարցրեց նորան թէ ինչո՞վ կարող կլինի ինքը իւր ծառայութիւնը մատուցանել նորան։

— Քաջազօր իշխան, պատասխանեց նա, և դուք գեղեցկափայլ դքսուհի ու մեծապատիւ պալատականներ, անկասկած իմ զարհուրելի տանջանքների պատ-

մութիւնը կշարժի ձեր բարեգութ սիրտը: Բայց ամենից առաջ ես կցանկացի խմնել, թէ այս նշանաւոր խմբի մէջ չէ արդեօք մեծահոգի ասպետ Դօն Քիշօռ և ամանշեցին ու նորա մեծանուն զինակիրը:

— Այս այստեղ է, տիկին, ընդհատեց Սանկտոն, ահա անցալթ Դօն Քիշօռն ու իւր զինակիրը, որոնք երկուան էլ պատրաստ են ծառայել ձեզ, նազել տիկին:

Պարանից յետոյ Դօն Քիշօռը ծանօթացաւ նորա հետ ու խոստացաւ ամեն հնար գործ զնել վեշտալի իշխանուհուն օգնելու համար, վերջինս կամեցաւ մեր հերոսի ոտներին փաթաթուել բայց նա չթոյլ տուեց նորան այդ բանը և միայն ինդրեց պատմել նորան իւր քաշած դժբաղսութիւնները: Դօլորիդան էլ սկսեց հետեւել կերպով.

— Ձեզ, անշուշտ, յայտնի կլինի Կանդայեան հըռչակաւոր թագաւորութիւնը, որ գտնւում է Հարաւային Ովկիանոսի ու մեծ Տրապօբանի մէջ, Կօմօրեան հրուանդանից վեց հազար մղոն հեռու: Այստեղ թագաւորում էր Մագօնա թագուհին—Արխիալիէլ թագաւորի կինը, որ մեռնելով թողեց ինձ այդ լնդարձակ տէրութիւնը իրեւ ժառանգութիւն: Նատ իշխաններ իննգրեցին ինձ իմ ձեռքը, բայց աւաղ բոլոր այն նշանաւոր թագաւորագներից ինձ հաճոյ թուաց մի հասարակ ասպետ: Նա մտասալահա էր ու գեղեցիկ, բանաստեղծ, երաժիշտ: Բազմագան առաջանաների հետ նա ուներ և հոգեկան ամենագեղեցիկ յատկութիւններ: Դօն Քլավիխօն (այս էր ասպետի անունը) այն աստիճան հաճոյ թուաց ինձ, որ

ես երգուեցի բացի նորանից ոչ ոքի հետ չամուսնանալ: 'Ի զուր մայրս հակառակեց այս բանին. իմ խընդիրներից ու լայ լինելուց սահպուած նա համաձայնեց դորան: Մեր հարսանիքը սովորական հաղէներով կատարուեցաւ: Սանկայն, Մագօնս թագուհին այն աստիճան զայրացաւ այս բանի վերայ, որ նա երեք օրից յետոյ գերեզման իջաւ: (Այստեղ Դօլորիդան իւր աչքերի արտասուքը սրբեց):

— Ուրեմն նա մեռաւ, հարցրեց Սանկտոն:

— Մեռաւ, պատասխանեց Տրիֆոլդին զինակիրը. Կանդայեան թագաւորութեան մէջ սովորութիւն կայ, որ միայն մեռածներին են թաղում:

Դօլորիդան շարունակեց.

— Երբ թագուհին մեռաւ, մենք սկսեցինք նորա թաղման պատրաստութիւնը տեսնել որպէս զե վերջին պարտականութիւններս կատարէինք գէպի նա նրը ես վերջին անդամ համբուրում էի նորան, յանկարծ օդի մէջ նոյն խակ նորա դադաղի մօտ աեսայ մօրս հօրելքօրորդի զարհուրելի կախարդ հոչակաւոր Մալամբրուն հսկային: Նա նստած էր փայտեայ ձիու վերայ: Մալամբրունը կարծելով թէ թագուհին իմ անհոգացոլութիւնից է մեռել վրէմն առնելու համար, իսկոյն կախարդեց մեզ: Դօն Քլավիխօն յանդգնութիւնը պատժելու համար, նա նորան դարձրեց մի անյայտ մետաղից զարհուրելի կոկորդիլոս, որի մօտ կախած էր մի մարմարիօնէ սիւն և սորա վերայ ասորոց տառերով գրած էր: Եանցաւոր Քլավիխօն այն ժամանակ միայն իւր նախկին կերպարանքը

կստանայ, երբ հռչակաւոր ասպետ Դօն Քիշօտ Լաւ-
մանշեցին կ'համարձակի մենամարտելինձ հետ:

— Այդքան միջոցում ես թագնուած էի իմ խմբի
կանանց մէջ: Մալամբրունը մօտեցաւ ինձ, մի քանի
դիւժական խօսքեր ասաց, և թէ իմ բարեկամու-
հիներս ու թէ ես կղակների վերայ հազարաւոր ա-
սեղների ծակծկոց զդացինք. մենք ձեռքներս տարանք
կղակներիս ու տեսանք, աւաղ.... այն, ինչ որ դուք
այժմ կտեսնէք:

Կայտ միջոցին Դօլորիդան ու տասներկու ուղե-
կիցները բոլորը միասին բարձրացրին իւրեանց դէմ-
քերի քողերը ու ցյց տուին իւրեանց դէմքերը, ո-
րոնցից մէկը սև խիտ մօրուք ունէր, միւսը շէկ,
երրորդը խարտեաշ, ալեւոր և այլն: Սանխօն վեց քայլ
յետույետ գնայ. իսկ դուքսը, դքսուհին ու մեր հե-
րոսը զարմացած նայում էին միմեանց:

— Եհա, շարունակեց իշխանուհին, ահա մեզ ինչ
զրութեան հասցրեց անսպիտան Մալամբրունը:

Կայտ որ ասաց նա ուշաժափ վայր ընկաւ գետին:
— Իմ պապիս արել վկայ, աղաղակեց Սանխօն,
որ կեանքում այս առաջին անգամն է ինչ ես այս-
պիսի անբնական անցք եմ լսում: Ա՛խ, շարագործ,
անիծած Մալամբրուն: Եթէ ձեռքս ընկնէիր, ես քեզ
ցոյց կտայի.....

— Հանգիստ կացէք, ասաց Դօն Քիշօտը մօրու-
քաւոր կանանց: Ես ձեզ կազատեմ այդ չարչարանքից
ու իսկոյն և եթ այդ գործի ձեռք կտամ:

Կայտ ժամանակ Տրիֆալդի իշխանուհին ուշքի
եկաւ: — Այժմ կենդանացայ, ասաց նա, ձեր խոստում-

ները հոգիս նորոգեցին: Այս ևս իմացէք, անյաղթ
ասպետ, որ Մալամբրուն հսկան անցայտանալուց ա-
ռաջ ասաց ինձ, որ ես ամբողջ աշխարհ թափառե-
լու դատապարտուած պիտի լինիմ, մինչև որ կգտնեմ
քաջ Դօն Քիշօտ Լամանշեցուն: Երբ որ, ասաց,
կգտնես նորան, ես նորան մի փայտեայ ձի կուղար-
կեմ, որ աշխարհիս ամեն ձիաներից լաւն է, որպէս
զի գնայ կանդայեան թագաւորութիւնը (որի հեռա-
ւորութիւնը այստեղից հինգ հազար մղոն է ցամաքի
ճանապարհով իսկ ուղղակի օդի միջով 3227 մղոն
կլինի):

— Կայս ձին, որին երբէք չեն պայտում, որ երբէք
չեն ուտում ու չեն քնում, կառավարում է մի մեխով,
որ գտնւում է նորա ճակատին: Նա զարմանալի ա-
րագութեամբ թռչումէ ամպերից էլ բարձր. այս գե-
ղեցիկ գործի գիւտը պատկանում է իմաստուն Մէր-
լէնին: Այսպէս խօսեց Մալամբրունը և յետոյ իսկոյն
թռաւ այն ձիու վերայ նատած, որին կախարդական
զօրութեամբ իւրեան էր սեպհականել: Յոյս ունիմ
և չեմ կասկածում, որ մի կէս ժամից յետոյ այն
ձիուն այստեղ կգտնէք և նորա վերայ էլ Մալամ-
բրունը կլինի:

— Քանի՞ մարդ կարող է այդ ձիու վերայ նատել
անհամբերութեամբ հարցրեց Սանխօն:

— Երկու հոգի, պատասխանեց Դօլորիդան, մինը
թամբի վերայ, իսկ միւսը թամբի ետեր: Առհասա-
լրակ նորա վերայ նատում են ասպետն ու նորա գիւ-
նակիրը:

— Իսկ ի՞նչ է կոչում այն ձին:

— Կարգավորէ չէ:

— 188 —

— Դեհ, ուրեմն ես խոնարհ ծառան եմ Արագաթովիք ձիուն։ Սակայն պատիւ ունիմ ձեզ յայտնել որ ես երբէք չեմ նստի նորա վերայ։ Մանաւանդ որ իմ մասնակցութիւնը միանգամայն աւելորդ է այդ գործի մէջ։

— Ընդհակառակն, այդ խիստ հարկաւոր է, պատասխանեց Գօլորիդան։ բաղար որոշել է, որ այդ գործքը առանց ձեզ չպէտք է կատարուի։

— Ուրեմն այդ գործը դլուխ չի դալ, տիկին Գօլորիդա, որովհետեւ ես վճռողաբար հրաժարում եմ իմ տիրօջ հետեւելուց։

Սակայն, արեի վերջին ճառագայթիները արդէն թոյլ էին լուսաւորում առարկաները, երբ յանկարծ այգիում երեւեցան չորս թողոսած վայրենիներ, նորա ուսերին գրած բերեցին մի մեծ փայտեայ ձի, վայր դրին գետին ու նոցանից մինը դռեց։

— Քաջն Մալամբրունը աղնիւ խօսք է տալիս, ովոր կհամարձակի նորա հետ մենամարտել որ բացի իւր սրից ուրիշ ոչինչ գէնք չի գործ դնի։ Թող այդ աներին ասպետը նստի այս ձիու վերայ իւր զինակրին էլ իւր ետեւ նստացնի, յետոյ բաւական կլինի այս մեխը պտոյտ տալ և խկոյն սա կբարձրանայ օդի մէջ ու կժռչի այս կողմ, ուր նոցա սպասում է Մալամբրունը։ Բայց զդուշութեան համար որպէս զի արագութիւնից ու բարձրութիւնից նոցա զինսերը չպտոյտ դայ, անշուշտ հարկաւոր է, որ նոցա աչքերը կապած լինին մինչեւ որ ձին իւր խրխնջալը կրայտնի թէ ճանապարհորդութիւնը վերջացել է։

փախան այն կողմ, որտեղից եկան։ Դօն Քիշօտը անհամբերութիւնից կամեցաւ նատել նորա վերայ ու Սանխօին էլ պատուիրեց հետեւել իւրեան։

— Ո՛չ տէր, պատասխանեց զինակիրը, ո՞չ այս ձին իւն հաճոյ չէ թւում, և ես մոտղիր չեմ այստեղից հեռանալ։ Մանաւանդ որ ես այժմ երկրի իշխող եմ, պարտական եմ իմ ժողովրդի կեանքը պաշտպանել և չեմ կարող նոցա վանդի ենթարկել։

Ես այդոցին դրաբար խառնուեց նոցա խօսակցութեան մէջ ու ասայ, որ այդ օդային ճանապարհորդութիւնից յեայ, ևս կարող է այդ երկրի կառավարութիւնը ձեռք առնել։ Նա նորան խորհուրդ տուեց այնպէս վարուել որ իւրեան արժանի ցոյց տայ այդ երկրի տիբապէտութեան, որ սպասում է իւր վերադարձին։ մի խօսքով, նա այնպէս համոզեց Սանխօին, որ սա չկարողանալով այլ ևս ընդդիմանալ գոչեց, որ պատրաստ է թռչելու։ Խոկոյն, երբ նա իւր մասպերութիւնը յայտնեց, Դօն Քիշօտը գրալանից թաշկինակը հանելով, Գօլորիդին ինդրեց, որ իւր աչքերը կապի։ Երբ այս վերջացաւ, նա նստեց արագութիւն ձիու վերայ, որի վերայ նա իւր երկայն գաթուիլ էլու կապած նստերով մի ծիծապիկի տեսք ունէր։ Սանկալը նկած խոկոյն հնետեւեց նորան և իւր համար բարձ պահանջեց, բայց բացասութիւն ստացաւ։ Նա ևս պահանջեց, բայց բացասութիւն ստացաւ։ Երբ ամեն բան պատրաստուեց, Գօլորիդան իւր կանանց հետ և բոլոր հանդիսականները սկսան մի ժամանակ էլու կապահցներին խնդրելով աղօթել իւրեան աղաստելու համար։

Երբ ամեն բան պատրաստուեց, Գօլորիդան իւր կանանց հետ և բոլոր հանդիսականները սկսան մի ժամանակ էլու կապահցներին խնդրելով աղօթել իւրեան

Ան անդամակը ոց բա նոյն այն ուն ուն զո

ասին աղաղակել նախախնամութիւնը թող պահապանի քեզ քաջդ ասպետ. քեզ ևս աղատի նա, անվեցեր զինակիր. դուք այնպիսի արագութեամբ կտրում էք օդը, որ աչքով անգամ չի կարելի այն տեսնել: Արիացիր, քաջդ Սանխօ, եթէ դու վայր կընկնես, հանգուցեալ ֆայէտօնից վատ չես մեռնի, որն որ փորձում էր Ապօղոնի կառքը կառավարել: Սանխօն լսեց այս ամենը և բոլոր ուժով կպաւ իւր տիրօջը:

—Դու ինձ խեղգում ես, ասաց նորան Գօն Քիշօաը, ի սէր Աստուծոյ, թող շունչ առնեմ: թող այդ յիմար վախկոտութիւնդ: Ես երբէք այնպիսի ձի չեմ հատել որի գնացքը այսպէս հանգիստ լինէր: Մենք արդէն հազար մղոնից աւելի հնք անցել բայց կարծես տեղներիցս գեռ չենք շարժուել բայց, տես, հողմ է փչում:

—Այո, իրաւ է, պատասխանեց Սանխօն, ես այս կողմից հողմեմ զգում, որ կանոնաւոր կերպիւ փչում է մեր կողմը:

Սանխօն ճշմարիտ էր ասում. դքսի սպասաւորը մի քանի ծառաներին հրամայեց, որ մեր հերոսների դէքերին դարրինների փուքսերով օդ փչեն:

—Անկասկած, ասաց Գօն Քիշօաը, երբ հողմ զգաց, —մենք օդի միջին շերտի մէջ ենք գտնւում, ուր անձրև, կարկուտ, հողմն ու որոտումն են գոյանում: Եթէ մենք շարունակ դարձեալ այսպիսի արագութեամբ կթռամնք, շուտով կրակէ շերտին կհասնենք: Չգիտեմ ինչպէս պիտի այս մեխը պտոյտ տամ, որ մեր ձիու ընթացքը մեղմացնեմ:

Այդ իսկ րոպէին փուքսերին փոխարինեցին խըծուծէ վառած մոմերը, որոնցով շրջապատեցին մեր ձանապարհորդներին:

—Թող ինձ կախեն, աղաղակեց Սանխօն ջերմութիւն զգալուց յետոյ, եթէ մենք արդէն այնտեղ չլինենք, որի մասին դուք ասում էիք, կամ դոնէ եթէ նորա մօտիկ չլինենք. մօրուքիս կէսը արդէն այրուեց. թաշկինակս կվերցնեմ:

—Աստուած մի' արասցէ, ասաց Գօն Քիշօաը. այդ անհնազանդութիւնը մեզ մի դժբաղտութիւն կարող է պատճառել: Գուցէ մենք շուտով հանենք Կանդայեան թագաւորութեան, ուր այնպէս ներս կթափուենք, ինչպէս մուկը կատուին է վրայ ընկնում:

—Իերամիկ շաքար, տէր, բայց արդէն հանելու ժամանակն է, այս ձեւի ձանապարհորդութիւնը յոդնեցրեց ինձ: Անիծած փայտէ մէջքը ինչքան կարծը է:

Դուքսը, դքսուհին ու նոցա խումբը բառ առ բառ լսում էին նոցա խօսակցութիւնը ու ծիծաղից թուլանում էին, թէպէտ ո՛չ բարձր ձայնով՝ կատակը չընդհատելու համար: Գործողութիւնը ինչպէս յաջող սկսել էին, նոյնպէս արժանաւոր կերպով աւարտելու համար նոքա հրամայեցին կրակը ձիու ագու. մօտ տանել և որովհետեւ փայտեայ ձիու ներսը դատարկ էր և վառօդով ու զանազան նիւթերով լցուած, նա իսկոյն ճայթերով օդը բարձրացաւ և Գօն Քիշօաը ու Սանխօի հետ միասին դարձեալ վայր ընկաւ գետին:

Դոլորիդան ու մօրուքաւոր կանայքը այգուց դուրս գնացին, իսկ դուքսը, դքսուհին ու նոցա մարդ դիքը խոտի վերայ պառկեցին, քնած ձեւացնելով իւրեանց:

Դօն Քիշօտն ու նորա զինակիրը վերկացան,
խլացած իւրեանց վայր ընկնելուց, աչքերի կապերը
յետ արին և խիստ զարմացած դարձեալ իւրեանց
նախկին տեղը գտնուելու վերայ, տեսան իւրեանց
առաջ դետնի մէջ ցցած մի նիդակ. նիդակից կախէր
ընկած մագաղաթ, որի վերայ խոշոր տառերով դրած
էին հետևեալ խօսքերը.

— Այէծն Դօն Քիշօտն Լումանշնցին վէրջայիւց Դօլըրիւ աւ-
նուանուծ Տըբէտուցիւ եշնառունուն երեսւնիւ անցէլ. Մոլովը-
րունին այս էլ բաւական էր, որ նո որոշեց ճանապարհուրդնէւ
նորս համար: Իշխանուածին ու նորս կինոյչը արդէն առանց
հօրութիւն այժմ. Դօլըրիւն ու Դօն Քիշօտն արդէն էր-
ւոնց գահի վէրայ են. դուռս ու պատիւ առեւծ-սոսպետին:

Դօն Քիշօտը հիացած ու ուրախացած վաղեց
գքսիր մօտ, որ միւսների պէս, ըստ երևութին,
անզգայ պառկած էր:

— Տէր, ասաց նորան մեր հերոսը, ուշքի՛ եկէք.
ամեն բան վերջացած է, ապացոյց ձեզ այն թերթը,
որ այս նիդակից կախած է:

Դուքսը, դքսուհին ու նոցա ծառաները ձեաց-
նելով իբր թէ նոր են ուշքի դալիս, զարհուրած պատ-
մեցին, որ այդ լուպէին, երբ որ փայտեայ ձին բոցա-
վառ վայր ընկաւ այգիում, Դօլորիդան ու նորա բա-
րեկամուհիները յանկարծ անյայտացան: Յետոյ աշ-
մենքը շնորհաւորեցին Դօն Քիշօտին, գովերով նորա
քաջութիւնը:

Դքսուհին սկսաւ հարց ու փորձ անել Սանխօին,
թէ ինչ վտանգների պատահէլ էին ճանապարհին:
Զինսկիրը ստացած գովասանքներից հպարտանալով
պատասխանեց.

— Ես խիստ շատ չարչարուեցայ, տիկին, երբ
հրային շերտի միջովն էինք թռչում. մինչեւ անդամ,
աիրօջ ոչինչ չասած՝ ես մի փոքր բարձրացրի աչ-
քակապս և երկիրը մի գնդասեղի չափ երևաց ինձ:

Որովհետեւ ամենքը զարմացած էին ձեւանում
այս խօսքերի վերայ, ուստի և նա, աւելի համոզե-
լու համար՝ աւելացրեց.

— Արագիքն էլ որոց ես պարզապէս տեսայ, մի
մի ընկուզի չափ էին:

Կա բացի գորանից ուրիշ շատ մանրամասնու-
թիւններ ևս պատմեց իւր տեսած հրայալիքների
մասին, և երբ զարմացած Դօն Քիշօտը կամեցաւ
նոցա ընդդիմանալ, խայըն թափառական զինակիրը
մօտեցաւ իւր տիրօջն ու ականջին ասաց նորան.

— Տէր, ես հօ կասկած չոտարայ Մծնտէսսինոսեան
վանքում տեսածներիդ մասին. ինդրումեմ, որ այժմ
էլ գու հաւատաս թռչելու ժամանակ տեսածներիս:
Երկարաբանել չեմ կամենում, հասկանում էք ի՞նձ:

Գլուխ Ժ. Ω.

Գօն Քիշօտի ՏՈՒԱԾ ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԸ ՍԱՆԽՈՒՆ
ԿՂՋՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ: Թէ ԻՆՉՊԵՍ է
ԸՆԴՈՒՆԻՈՒՄ ՍԱՆԽՈՒՆ ԻՒԻ ՄԱՅՐԱԲԱՂԱՔՈՒՄ: Թէ
ԻՆՉ ՊԱՏԱՀԵՅ ՆՈՐԱՆ ԲԱՐԱՏԱՐԻԱՅ ԿՂՋՈՒՄ:

Դուքսն ու դքսուհին, ցանկանալով օգուտ քա-
ղել իւրեանց հիւրերի թեթևամտութիւնից, միայն
մտածումէին նոր նոր գուարձութիւններ գտնել: Նո-

քա հրամայեցին, որ Սանխօին տանեն նորան խոս-
տացած կղզում, և օդային ձանապարհորդութեան
հետևեալ օրը գուքար հրամայեց զինակրին պատրաստ
լինել իւր կղզին գնալու համար: Այդ միջոցին Դօն
Քիշօտը վրայ հասաւ ու կամենալով Սանխօին մի
քանի խորհուրդներ տալ նորա ապագայ կենցաղա-
վարութեան համար, գքսից թոյլտուութիւն խնդրեց
նորան իւր սենեակը տանելու: Նորա հետ միայնակ
մնալով նա դուռը փակեց ու իւր զինակրին ստիպեց
իւր կողքին նստել: Յետոյ ծանր կերպով ասաց
հետևեալը.

«Ենորհակալ եմ երկնքից, բարեկամ Սանխօ, որ
տեսնում եմ քեզ բաղտաւորութեան մէջ, թէպէտե
դու դեռ ոչինչ չես արել դեռ ոչինչ աշխատանք չես
գործ դրել նորա համար և որ դու արժան ես
ձեռք բերել: Ահա դու այժմ կղզու կառավարիչ ես,
նորա համար միայն, որ մի փոքր յարաբերութիւն ունիս
թափառական ասպետութեան հետ և հեռուից հե-
տեւում ես նորա շաւղին: Ճանաչիր ուրեմն այդ աղ-
նիւ արհեստի գերազանց լինելը ու ուշադրութեամբ
լսիր այն խորհուրդները, որ ես կտամ քեզ, նորա
կարող են քեզ պաշտպանել նաւաբեկութիւնից այն
ստորջրեայ քարերի վերայ, որոնցով լցուած է աշ-
խարհի ընդարձակութեան մրրկալից ծովը»

«Կախ և առաջ, զաւակս, Աստծուց վախեցիր.
Աստծու երկիւղը իմաստութեան հիմքն է:
«Խիստ քննիր ինքդ քեզ և աշխատիր ինքդ քեզ
ճանաչել:

«Մի՛ ամաչիր ստոր ծագմանդ համար. առհասա-

րակ հպարտութեամբ յանցանքն է հետեւում միշտ,
իսկ խաղաղութիւնը զարդարում է բարեգործին:
«Քեզանից նշանաւոր իշխաններին մի՛ ատիր.
յիշիր, որ ազնուականութիւնը ժառանգական է, իսկ
բարեգործութիւնն ու արժանաւորութիւնը անձնա-
կան: Սորանից կարող ես իմանալ, թէ ո՞ն է նոցա-
նից մեծը»:

«Եթէ կղզիդ մտնելս ով և իցէ քո ազգական-
ներից այցելիք քեզ մի՛ արհամարհիր նորան, այլ
ընդունիր այնպէս, ինչպէս նորան կընդունէիր քո
խրձթիդ մէջ: Քեզ այնքան խելօք մի՛ կարծիր, որ
քո կարծիքով օրէնքներ սահմանես: Սա ամենամեծ
յանցանք է, որ կարող է յառաջանալ միայն հպար-
տութիւնից»:

«Հարստների խոստումներին ուշք մի՛ դարձնիր:
Կարեկից եղիր աղքատների արտասուքներին: Մէկին
շատ մի՛ սիրիր ու միւսին ատիր, այլ ամենքի հետ
ևս հաւասարապէս արդարութեամբ վարուիր: Այս
բոլոր գէպքերում ճշմարտութեան հետեւիր միայն:
«Երբ ողորմածութեան հետ կարող ես միաւորել
և արդարութիւնը, եղիր ուրեմն ողորմած:

»Երբէք ոչ կաշառք վերցրու և ոչ նուեր:
«Եթէ թշնամիդ պահանջում է քեզանից արդա-
րադատութիւն, դատիր նորա գործը անկողմապա-
հութեամբ:

«Երբէք ոչ ոքի չասես, մինչև անդամ պատժա-
պարտ յանցաւորներին էլ անպատիւ խօսքեր չասես.
պատիքը քաւում է մեղքը, իսկ թշուառութեան
վերայ չպէտք է ծիծաղել:

— 197 —

վերողամիտ եղիր միշտ, երբ քո ներողամուռ
թիւնը ոչ պի չի վնասի, և յիշիր, որ ողջմածու-
թիւնը աստուածային յատկութիւններից մինն է:

«Եժմ քեզ պէտք է մի քանի խօսք ասեմ, բա-
րեկամ, ընտանեկան կառավարութեանդ վերաբերեալ
մի քանի մանրամասնութիւնների մասին.

«Միշտ մաքուր հագնուիր, թէպէտե ոչ պէճնուած:
«Գծութիւնից հեռու կաց, խնայողութիւն սի-
րիր. որքան կարող ես շուտ շուտ ստուգիր հաշիւներդ:
«Ծանր կերպով մանարի ու խօսիր, ասկայն այն-
պէս, իբր թէ ինքդ ես քեզլուում. մեծամտութիւնը
ոչ մի ժամանակ հաջելի չէ:

«Չափաւոր կեր և զգյշ կաց, որ չ'արբես: Քիչ
քնիր.—գործունէութիւնը երաշխաւոր է յառաջա-
դիմութեան. ծուլութիւնից են ծնում ամեն յան-
ցանքներ:

«Մոռացիր խօսակցութեան մէջ բազմաթիւ ա-
ռածներ մէջ բերելը, որոց դու անդադար գործ ես
դնում: Որպէս զի առածները լաւ ազդեցութիւն ու-
նենան, չպէտք է մէկը միւսի ետելից հարիւներով
շարել: Այդպէս շատը միասին ասելով, դու նոցա
արժանաւոր նշանակութիւնից զրկում ես:

— Ինչ այս վերջին խորհրդիր է վերաբերուամ,
ընդհատեց նորան զինակիրը, կարող է արդեօք մի
որևէ ներքին ազդեցութիւն փոխել իմ սովորութիւնը
և ստիպել ինձ նոցա չետելել: Իմ գլուխն առածնե-
րով լիքն է: Իսկըն որ ես սկսում եմ խօսել, նոքա
ինքն ըստ ինքեան բերանից դուրս են թռչում: Սա-
կայն, խոստանում եմ զգուշանալ: Բարի խորհրդիր

«Երողամիտ եղիր միշտ, երբ քո ներողամուռ
թիւնը ոչ պի չի վնասի, և յիշիր, որ ողջմածու-
թիւնը աստուածային յատկութիւններից մինն է:

«Եժմ քեզ պէտք է մի քանի խօսք ասեմ, բա-
րեկամ, ընտանեկան կառավարութեանդ վերաբերեալ
մի քանի մանրամասնութիւնների մասին.

«Միշտ մաքուր հագնուիր, թէպէտե ոչ պէճնուած:

«Գծութիւն սիրու կաց, խնայողութիւն սի-
րիր. որքան կարող ես շուտ շուտ ստուգիր հաշիւներդ:
«Ծանր կերպով մանարի ու խօսիր, ասկայն այն-
պէս, իբր թէ ինքդ ես քեզլուում. մեծամտութիւնը
ոչ մի ժամանակ հաջելի չէ:

«Չափաւոր կեր և զգյշ կաց, որ չ'արբես: Քիչ
քնիր.—գործունէութիւնը երաշխաւոր է յառաջա-
դիմութեան. ծուլութիւնից են ծնում ամեն յան-
ցանքներ:

«Մոռացիր խօսակցութեան մէջ բազմաթիւ ա-
ռածներ մէջ բերելը, որոց դու անդադար գործ ես
դնում: Որպէս զի առածները լաւ ազդեցութիւն ու-
նենան, չպէտք է մէկը միւսի ետելից հարիւներով
շարել: Այդպէս շատը միասին ասելով, դու նոցա
արժանաւոր նշանակութիւնից զրկում ես:

— Ինչ այս վերջին խորհրդիր է վերաբերուամ,
ընդհատեց նորան զինակիրը, կարող է արդեօք մի
որևէ ներքին ազդեցութիւն փոխել իմ սովորութիւնը
և ստիպել ինձ նոցա չետելել: Իմ գլուխն առածնե-
րով լիքն է: Իսկըն որ ես սկսում եմ խօսել, նոքա
ինքն ըստ ինքեան բերանից դուրս են թռչում: Սա-
կայն, խոստանում եմ զգուշանալ: Բարի խորհրդիր

որ այդ իսկ երեկոյին նոր նահանգապետին տանի այնտեղ որին նա կոչում էր կղզե: Նա հանդիսաւոր կերպով մօտեցաւ զինակրին, որ մի առանձին տեսակ կաբայ ունէր հագած ու գլխին էլ ծիրանեղյն զըլխարկ: Այսպէս հագնուած Սանխօն բազմաթիւ ուշեկիցներով, բաժանուեց դքսից ու դքսուհուց, որի ձեռքը համբուրեց նա. յետոյ լցուած սրտով ու արտասուալից աչքերով փաթաթուեց իւր տիրօջ ուսներին: Վերջապէս բարի զինակիրը մի գեղեցիկ ձիու վերայ նստած ձննապարհ ընկաւ իւր իշխ հետ միասին, որ գեղեցիկ կերպով զարդարած էր: Սանխօն շուտ շուտ յետ էր նայում ու ինքնաբաւական կերպով նայում նորան: Այդ միջոցին նա իւր վիճակն ու երկիրը ամբողջ գերմանական տէրութեան հետ չէր փոխի:

Մի փոքրիկ կտոր գետին, որ մօտ հազար հոգի բնակիչ ունէր ու պատկանում էր դքսին, այն հզօր թագաւորութիւնն էր կազմում, որ Սանխօն պիտի կառավարէր. նորան ասացին, որ այդ տեղը Բարտարիայ կղզե է կոչում:

Իւր մայրաքաղաքի գուներում նա տեսաւ երեւելի քաղաքացիներին, որոնք դուրս էին եկել նորատուած, զանգահարութեան ու բոլոր ժողովրդոց գոռում գոչումի ձայնը լսելով:

Նորան հանդիսաբար ներս տարան քաղաքի հրապարակը, որտեղ շնորհակալութեան օրհնութիւններ երգեցին: Այնուհետև տուին նորան քաղաքի բանալիները և մունետիկները ծանուցին ամենին Սանխօի նահանգապետութիւն ստանալը Բարտա-

րիայ կղզում: Բարի Սանխօն քաղցր ակնարկութեամբ ընդունեց այս յարգութիւնները և կարծես չէր զարմանում ամեննեին: Բայց ժողովրդներից նոքա, որոց գաղանիքը չյայտնեցին, զարմանում էին նոր նահանգապետի տեսքի, խիտ մօրուքի կարճ ու հասա մարմնի ու առաւելապէս նորա օտարութի շորերի վերայ: Հրապարակից Սանխօին տարան դատաստանական դահլիճը, ուր նորան նստացրին գլխաւոր դատաւորի տեղը: Յետոյ դքսի սպասաւորն ասաց նորան. տէր. այս երկում հին ու ընդունուած սովորութիւնն կայ, որ նոր կառավարութիւն ստանձնող նահանգապետը իւր վարչութիւնը սկսումէ մի քանի խճճուած գործերի վճռելով, ժողովրդին իւր ընդունակութիւնն ու խելքը ցոյց տալու համար և որ նա այդպիսով սկզբիցն և եթ ուրախանայ կամ լայ նորա համար:

— Լաւ, պատասխանեց Սանխօն, թող տան այդպիսի գործեր, կաշխատեմ որքան կարելի է լաւ վճռել նոցա:

Այդ րոպէին երկու մարդ ներս մտան, որոնցից մինը գիւղական շորեր ունէր հագած, իսկ միւսը ձեռքին բռնած ունէր մլրատ:

— Պարո՞ն նահանգապետ, ասաց վերջինը. Ես գերձակ եմ: Այս մարդը երեկ ինձ մօտ եկաւ խանութս ու մի կտոր մահուդ ցոյց տալով. ասաց ինձ. — կարող ես ինձ համար այս կտորից կապայ կարել: — Կարող եմ, պատասխանեցի ես իսկցն: — Սա զարմանալով որ ես իսկոյն համաձայննեցի և անկասկած կարծելով թէ ես նորանից պիտի կտոր գողանամ՝ շարունակեց. — Չեն կարող ինձ համար երկու կապայ

կարել: — Ես նորա կասկածը նկատելով՝ ասացի կարող եմ: Այն ժամանակ նա խնդրեց երեքը կարել և այսպիսով շարունակեց նա կապաների թիւը մեծացնել, որքան ես դրական պատասխան էի տալիս և պայման դրինք, որ ես նորա համար հինգ կապայ կարեմ: — Այժմ որովհետեւ կարել վերջացրել եմ կապաները ես նորանից պահանջում եմ կարելավարձ, իսկ առ չէ թէ միայն հրաժարում է դորանից, այլև պահանջում է ինձանից, որ ես նորա մահուդը վերադարձնեմ կամ վճարեմ:

— Այսպէս է, հարցրեց Սանիսօն:

— Ես, տէր, պատասխանեց գիւղացին, հրաժայեցէք ինպրեմ, որ ցոյց տայ ձեզ այն հինգ կապաները:

— Յօժարութեամբ, պատասխանեց գերձակը, վերարկուի տակից հանելով ու մատներով ցոյց տալով հինգ՝ փոքրիկ տիկինների հագնելու կապաները:

— Ես սոքա են կապաները, աւելացրեց նա, խըզ ձիս առաջ երգուում եմ, որ ամեռով կտորը դործ եմ դրել նոցա վերայ: Բոլ կարձաներս բանիմաց անձանց ցոյց տան, եթէ սուտ եմ ասում:

— Ամենքը ծիծաղեցին: Իսկ Սանիսօն մի փոքր մտածելուց յետոյ հետևեալ կարծիկ դատողութիւնը տուաւ.

— Գործը այսպէս եմ վճռում, որ դիւղացին զօրկում է իւր մահուդից, իսկ դերձակը կարելավարձից: Բոլոր ներկայ դտնուողները ծիծաղեցին այս դատողութեան վերայ, բայց կատարուեցաւ նոյնութեամբ:

Յետոյ առաջ եկան երկու ծերունիներ: — Տէր, ասաց նոցանից մինը, ես այս մարդուն տասը ոսկի փոխ տուի այն պայմանով, որ առաջին իսկ պահանջին հատուցանի: Մի քանի օրից յետոյ ես այն յետ պահանջեցի սորանից: Բայց որքան զարմացայ, երբ ես սորանից լսեցի, որ իբր թէ վաղուց հատուցել է ինձ: Այժմ ինձբրում եմ ձերգ պայծառափայլութիւնից, որ պարտատիրօջս երդմնեցնէք, ես նորան միշտ աղնիւ մարդ էի ճանացում և դժուար թէ սուտ երգուի:

— Դու ինչ ես ասում, հարցրեց Սանիսօն միւս ծերունուն, որ լսիկ մնջիկ ականջ էր դնում՝ հաստ ձեռնափայտի:

— Ես պատրաստ եմ երգուելու, որ այս մարդուն վերաբարձրել եմ իւր ինձ տուած տասն ոսկիքը:

Սանիսօն թէքնց իւր գաւազանը. պարտապանը իւր ձեռնափայտը խաչաձև փրեց գաւազանի վերայ, որի մի ծայրը տուեց իւր պարտատիրօջ և ձեռքը դնելով այդ խաչի վերայ՝ երգուեց, որ նորա պահանջած գումարը արդէն հատուցել է. յետոյ նոյնց իւր ձեռնափայտին ու ամենքին՝ իւր անմեղութիւնը ցոյց տալու համար: Միւս ծերունին այս լանի վերայ զարմանալով, մի քանի բոպէ շարունակ աչքերը չէր հեռացնում պարտապանից, որին աւելի կարեկցաբար էր նայում, քան բարկութեամբ և արդէն կամենում էր առանց ձայն հանելու դուրս գնալ երբ Սանիսօն ձայն տուեց նորան: Սանիսօն, որ ուշադրութեամբ նայում էր նոցա ամեն մի շարժուածքին, յոնքերը կնձուած բաղդատում էր երկու ծերունիների դէմ-

քերը և նոցանից մէկի վերայ շատ պարզ նկատեց
ազնուութիւն:

— Դեռ բանը չէ վերջացել, ասաց նա, ծերուկ,
դու որ երգուեցիր, հապա մի ձեռնափայտդ ինձ տուր:
Եւ առ դու վերցրու, շարունակեց նա, փոխատուին
դառնալով. և այժմ գնա. դու քո պարտքդ տուացար:

— Ի՞նչպէս, տէր, պատասխանեց խեղճը. մի՞թէ
այս ձեռնափայտը տասն ոսկի արժէ:

— Այո, այո, 'ի հարկէ, վրայ բերաւ Սանիօն,
բայց քեզ այդ բանը հաւատացնելու համար, հրա-
մայում եմ, որ խսկոյն այդ փայտը միջից կոարես:

Հրամանը խսկոյն կատարուեց և ձեռնափայտի
փորուածքից տասը ոսկի թափուեց գետնին: Ամբողջ
ժողովուրդը ծափահարեցին ու գովեցին Սանիօն և
կղզու բնակիչները կարծեցին, որ նոր նահանգապետը
մի առանձին իմաստութեան շնորհ ունի: Զարմանքը
վերին աստիճանի մեծ էր, և այն մարդը, որին գաղտնի
հրաման էր առուած Ճիշտ օրագիր կազմել մեր զե-
նակրի գործողութիւնները արձանագրելու, այս եղե-
լութեան բոլոր մանրամասնութիւնները ներկայաց-
րեց դքսին:

Ամսիօնին դատարանի դահլիճից մեծ հանդիսով
տարան ամրոցը, որ որոշուած էր նորա բնակութեան
համար: Այնտեղ մի ընդարձակ դահլիճում սեղան էր
պատրաստած ամենընտիր կերակրներից: Խսկոյն, երբ
նա մտաւ այնտեղ, բազմաթիւ երաժիշտներ երգեցին
զանազան ուրախալի երգեր, և չորս սպասաւորներ
բերին նահանգապետին մի կոճք, որի մէջ նա լուաց
ձեռքերը: Երաժիշտները լոեցին և Սանիօն սե-
իւր ձեռքերը:

զան նստեց, ուր միայն մի հոգու պատրաստութիւն
կար: Նորա մօտ կանդնած էր մի իշխան սեազգեստ
ու ձեռքին երկայն ձեռնափայտ: Սպասաւորը մօտ
բերաւ աւելի լաւ կերակրները:

Մեր նահանգապետը խիստ սոված լինելով՝
շտապով վերցրեց իւր համար ափսէի վերայ մի լաւ
բաժին, բայց խսկոյն, երբ նա մի պատառ բերանը
տարաւ, իշխանը վայր թողեց իւր գաւաղանը և
ափսէն ու բլիւդը խսկոյն անյայտացան: Սեղանապետը
ծածուկ մի ուրիշ կերակուր մօտ բերեց, բայց նորան
էլ նոյնը պատահեց: Սանիօն խիստ զարմացած հարց-
րեց, թէ ինչ է նշանակում այդ և մի՞թէ այդ երկ-
րում հստով են կշտանում մարդիք:

— Տէ՛լ, պատասխանեց սեազգեստ պարոնը. ես
պատիւ ունիմ այս կղզու նահանգապետի բժիշկը լի-
նելու: Իմ պաշտօնս պարտաւորում է ինձ զգուշաց-
նել ձեզ այն ամեն կերակրներն ուտելուց, ինչ որ
կարող է ձերդ ողորմածութեան առողջութեանը վնա-
սել: Սորա համար էլ ես միշտ ներկայ եմ լինում
նահանգապետների ձաշելիս և նոցա թոյլ եմ տալիս
միայն նոցա յարմար կերակրներն ուտել: Առաջին
կերակուրը ձեր ստանօքսին յարմար չէր եփած, երկ-
րորդը ընդհակառակն խիստ տաք էր, որ ծարաւ կը-
զարթեցնէր ու կարող էր ստամօքսի բորբոքումն յա-
ռաջացնել և խանգարել կեանքի հիմք կազմող սկզբնա-
կան խոնաւութիւնը: Ձերդ ողորմածութիւնը այժմ
բացի մի փոքրիկ բաժին թոքապուրից աւելի ոչինչ
չէ կարող ուտել խսկ եթէ շատ սոված էք, կարող
էք դորան աւելացնել մի զյուդ բիսկվիտ:

Այս խօսքերը լսելուց յետոյ Սանիսօն ձգուեցաւ
իւր ամթուի մէջ ու բժշկին մի անգամ ոտից զլուս
նոյելով՝ հարցլեց.

—Պարոն բժիշկ, ասացէք ինդրեմ ի՞նչ է ձեր
անունը:

—Անունն է, պատասխանեց նա, բժիշկ Պէդրօ
Ռէզիօ դը-Ագուէրօ, ևս ծնուել եմ Տիրտէաֆուէր
քաղաքում, որ գանուում է Կարակէլի ու Ալմօդովար
դէլ-Կամպօի մէջ տեղը և բժշկական մրցանազիրս
պոացել եմ Օսմանեան համալսարանում:

—Շատ ուրախ եմ, ասաց Սանիսօն, բարկացած
նայելով նորա վերայ; Դէհ, պարոն Պէդրօ Ռէզիօ
դը-Ագուէրօ բժիշկ, որ ծնուել ես Կարակէլի ու Ալ-
մօդովարի միջն Տիրտէաֆուէրում ու բժշկական մրց-
անագիր սոսացել Օսմանում, կորէք այստեղից, թէ չէ
արևս վկայ կհրամայեմ, որ կախեն ձեզ: Կորէք,
անգամ ու թորէք ճաշեմ: Ես մեծ նեղութիւննե-
րով եմ այս ճաշը ճեռք ձգել:

Բժիշկը երկիր դից կամենում էր դուրս գնալ,
երբ յանկարծ դեսպանի փողի ձայն լսուեց: Սեղա-
նապետը պատուհանից դուրս նայելով՝ աղաղակեց.

—Անկասկած նորութիւններ կլինի գքսի կողմից:

Դեսպանը թողոսած ներս մտաւ և մի ծրար
տուեց Սանիսօնն, որ տալով այն սեղանապետին հրա-
մայեց հասցէն կարդալ. նորա վերայ այստես էր գրած.
Քարտապարեայ էղ զառ նահանգատուետ Դօն Սանիսօն Պանչակին համ
նորս տուեստուին:

—Իսյց ովհէ ատենադպիրս, հարցրեց Սանիսօն:
—Ես եմ, տէր պատասխանեց մի երիտասարդ, որ

իօսում էր բոլորովին Բիսկայեան արտաքերութեամբ:
—Ահ, այս առաջին անգամն է, որ ձեր երկրացի
ատենադպիր եմ տեմնում. դէհ, կարդա, տեսնեմ:

Ամենքը դուրս գնացին և ատենադպիրը կսիքը
կօտքելով՝ կարգաց հետեւեալը.

Ա ուր հասաւ ինձ, պարոն Դօն Սանիսօ, որ իմ
ու ձեր թշնամինները կամենում են ձեզ վերայ գիշե-
րով յարձակուել. ուստի և զգոյշ եղիք: Բացի սորա-
նից, ես լսեցի յուսալի լրտեսներից, որ շրս կերւ
պարանախուսած մարդկասպաններ են մտել ձեր քա-
ղաքը՝ ձեզ սպանելու համար: Լաւ գննեցէք ձեր
շորջը գտնուած մարդոց և մանաւանդ ինչ որ ձեզ
կտան, սմենեւին չուտէք: Կաշխատեմ ձեզ օգնութիւն
համել, եթէ այս անհրաժեշտ կլինի: Մնաք բարեաւ,
յոյս ունիմ ձեր քաջութեան ու խելքի վերայ.

«Ձեր բարեկամ գուքսը»:

—Պարոն սեղանապետ, ասաց Սանիսօն, իմ առա-
ջին պարտքս է բանտարկել Ռէզիօ բժշկին. նորան
սաորեկրեայ բանուը դրէք, որովհեամե եթէ իմ կեան-
քիս վեստող մէկը կայ, այդ տնշուշունա է, վասն զե-
նա ինձ սովոր կամենում էր սպանելը:

—Տէր, պատասխանեց սեղանապետը, համարձաւ-
կում եմ ամենախոնահարչաբար խնդրել ձերդ պայծաւ-
ուափայլութիւնից չմօտենալ այս սեղանի վերայ գլո-
ւուած կերակրներից ոչ մէկին, որովհեամե սոցա պատ-
րաստող մարդոց համար երաշխաւոր չեմ կարող լինել:

—Լաւ, պատասխանեց Սանիսօն, բայց այդ դէպ-
քում տուէք ինձ մի կտոր հաց ու մի քանի ֆունդ
խաղող: Ինչ և իցէ ես պիտի մի բան ուտեմ, մոնա-

ւանդ կռուելուց առաջ. կուշտ մարդը ուժեղ է լինում: Դու, ատենագպիր, դքսին պատասխանիր, թէ նորա բոլոր ինձ գրածները կկատարուին, և որ ես խոնարհ ծառան եմ թէ նորա և թէ նորա ամռախն դըքսուհուն: Չմոռանաս նոյնպէս մի բան գրել Դօն Քիշուին. նա գեռ ապերախտ ևս կկարծի ինձ, և այս բոլորը գրիր գեղեցիկ խօսքերով, Բիսկայեան ոճով: Դեհ, կորցրէք այս կերակրները, տուէք ինձ խալող. Հապա թող տեսնեն, թէ ես լրտեսներից, կախարդներից ու մարդասպաններից վախենում եմ:

Այս ըոսէին ծառան ներս մտաւ և յայտնեց, որ մի զիւղացի թոյլտուութիւն է խնդրում նահանգապետի հետ մի երևելի գործի մասին խօսելու:

— Աստուած սիրէք, այս ինչ բան է, ինձ այնքան հանդիստ չեն թողնում, որ մի կտոր հայ ուտեմ: Նթէ այսպէս կշարունակուի, սատանան թող տանի այն ժամանակ այսպիսի վարչութիւնը: Ներս թողէք այն անիծեալ զիւղացուն:

Խնդրագործին ներս թողին: Նա ամենից առաջ հարցրեց, թէ որն է նոյանից նահանգապետը: Սեղանապետը ցոյց տուեց նորան Սանխօին, որի առաջ ծունկ չոգեց զիւղացին, խնդրելով ձեռքը համբուրելու թոյլ տալ:

Սանխօն համաձայնելով սորան, հրամայեց նորան վերկենալ և շուտով վերջացնել իւր ասելիքը:

— Տէր, ասաց զիւղացին, ես երկրագործ եմ, Միգուել-Տուրլա ազգից և Սիուդադ Ռէալից երկու մղն հեռու գտնուած զիւղից:

— Դարձեալ Տիրտէաֆուէրի կրկնութիւնը, վրայ

բերաւ Սանխօն. Էհ, ես գիտեմ ուր է Միգուել-Տուրլան, ասացէք շուտով բանն ինչումն է:

— Ուրեմն, պատիւ ունիմ հաղորդել ձերդ պայծառափայլութեան, որ ես երկու զաւակ ունիմ ու սումնարան տուած. նոցանից փոքրը պատրաստումէ իրաւաբանութեան, իսկ միւսը Աստուածաբանութեան համար: Այժմ իմ իրաւաբան որդիս կամենումէ ամուսնանալ մեր զիւղացի Կարա Պէրլէրինո անունով աղջկայ վերայ, որի հօր անունը Անդրէաս Պէրլէրինո էր, սորա հայրը Թովմաս Պէրլէրինօն էր, իսկ սորտնն էլ.....

— Այս սատանի ձուտ, ընդհատեց նորա խօսքը Սանխօն, գու ինձ զզուացրիր քո Պէրլէրինօներով. ինչ ես ուզում ասել շուտ ասա:

— Այս իսկըն: Անդրէաս Պէրլէրինօն հարուտ է և իւր աղջկը չի կամենում որդուս տալ որովհետեւ սա աղքատ է: Այժմ ինդրում եմ ձեզ մի նամակ գրել ապագայ խնամուս ու պատուիրէք, որ իւր աղջկը տայ որդուս:

— Այդքան է միայն, եղբայր:

— Ես, տէր, եթէ համարձակէի ձեղանից մի ողըրմութիւն ևս խնդրել.....

— Դեհ, թոյլ եմ տալիս, ասա տեսնեմ:

— Տէր, ես կցանկայի, որ դուք այս ամուսնութիւնը յաջողեցնելու համար ողըրմութիւն անէիք և ինձ կամ իմ որդուս հինգ կամ վեց հարիւր ոսկի նուիրէիք հարսանիքի համար. այդ բանը գուցէ կօգնէր նորան տնտեսաբար վարուելու:

— Այլ ևս բան չես կամենում դու ինձանից, բարեկամ, ասա, մի' ամաջեր:

— Դուք շատ բարի եք, ամբ, ես այլ ևս բան չեմ ցանկանում:

Այս խօսքերից յետոյ Սանխօն վերկացաւ և թռցնելով իւր աթոռը յարձակուեց գիւղացու վերայ, որը երկիւլից սկսաւ փախչել:

— Ենզգամ, գոչեց նա, խակըն գլուխալ կջարդեմ, որ քեզ վեց հարիւր ոսկի խնդրել սովորցնեմ: Ես որտեղից բերեմ: Վեց հարիւր: Այս, 'ի հարկէ, եթէ ունենայի, կուղարկէի Միգուէլ Տուրրա, ինչ որ Պէրլէրինօ ընտանիքին և քու իրաւաբան ու աստուածաբան որդուոց: Զլինի՞ թէ իմ կղզես յիմարների կատարան է: Այլ ևս ոչ ոքի ներս չժողնէք, գոնէ մինչև ճաշել:

ՊԼՈՒԽ Ժ. Է.

ԴՕՆ ՔԻՇՕՏԸ ԱԶԱՏՈՒՄ Է ԴՔՍՈՒՀՈՒ ԿԵԱՆՔԸ:

Մինչդեռ Սանխօն սկսում էր իւր կոչման անպիտանութիւնն զգալ Դօն Քիշօտը նեղանում էր հաւատարիմ զինակրից զըկուելու համար: Նա խորին մտածման մէջն էր: 'Ի զուր ամրոցում աշխատում էին նորան ուրախացնել շարունակ տօնախմբութիւններով.

— Սանխօն Պանչա, գոշում էր նա ժամանակ առ ժամանակ, ու խորը հառաջում: Սանխօն Պանչա, երբ պիտի դու վերադառնաս:

Դուքսը կամեցաւ ծպտեալ կերպով այցելել Բարատարիսյի նահանգապետին, ուստիե մի առաւօտ ձանապարհ ընկաւ գէպի այնտեղ բացի գքուն հուց ոչ ոքին չյայտնելով այս բանը: Նորա՝ ամրոցից դուրս գնալուց կէս ժամ հազեւ էր անցել երբ զըքսուհին մի խիստ նշանաւոր լուր ստացաւ, որը անշուշտ հարկաւոր էր իսկոյն իւր ամուսնուն հազորդել: Վասնորոյ նա հրամայեց լծել կառքը ու շտապեց իւր ամուսնուն հանձնել, իւր սովորական խմբի հետ միասին, որոնք էին զինակիրը, կառավարը, սուրահանդակին ու ուրիշ չորս ծառանիր: Դեռ նոր էր կառքը մասել անտառը, որտեղից մինչև ամրոցը երեք քառորդ մղոն հազեւ լինէր, և ահա վեց աւազակներ յարձակուեցան կառքի վերայ, չորս անգամ հրացաններն արձակեցին նորա վերայ, սպանեցին զինակրին ու կառավարին, ծառանիրից մէկին վերաւրեցին և դքսուհուն այն աստիճան վախեցրին, որ սա անզգայ վայր ընկաւ: Բաղաւորաբար, Դօն Քիշօտը Ռօպինանտի վերայ նառած՝ դուրս էր եկել այդ խիկ անտառում զքօննելու ու երեւակայութիւնը զրդուելու: Նա պարզ տեսաւ աւազակների արածները:

Ըազակները կարծելով թէ դքսուհուն սպանել են, մտածում էին միայն թէ ինչպէս ազատուեն, ուստի և սկսան կառքի ձիաները յեա անել որպէս զի նստեն նոցա վերայ ու փախչեն: Առւրհանդակն ու երկու ծառանիրը, որոնք կենդանի մնացին, զըլսապատառ վազեցին անտառը բարձրաձայն գոռալով: Մեր հերոսը փախստականներից մէկին կանգնեցրեց և նորանից իմանալով, որ աւազակները դքսուհուն

սպանել են, կայծակի արագութեամբ յարձակուեց չարագործների վերայ, որոնք դեռ ևս չեին կարողացել ձի նստել: Աւազակներից երկուսը, որոց հրացանները դեռ ևս լցուած էին, համարձակ սպասում էին նորան և երբ մօսեցաւ, ուղղեցին նորա վերայ: Բայց, ինչպէս և միշտ լինումէ, չարագործների ձեռքերը դողդողում էր. նոքա արձակեցին հրացանները և գնդակները Դօն Քիշօտի շորի միջով անցան: Նա չվերաւորուեց, սակայն այն աստիճան ջարդուեցաւ, որ նորա շունչը կտրուեց և ընկաւ Ռօսինանտի պարանոցին: Աւազակները նորան սպանած կարծելով՝ սկսեցին նորից լցնել հրացանները, երբ արդէն Դօն Քիշօտը ժամանակ ունեցաւ ուշքի գալու. այն ինչ դքսուհին էլ ուշքի եկաւ ու տեսաւ, որ ազափէ է հասել իւրեան:

Իսկոյն, երբ մեր հերոսը սմթափուեց, նորից կատաղութեամբ յարձակուեց աւազակների վերայ, որոնք, սպանած կարծած մարդու յարձակուելու վերայ զարմանալով, յուսահատ կերպով սկսան պաշտպանուել: Դօն Քիշօտը բոլոր ուժով յարձակուեց նոցավերայ և շուտով չարագործներից երկուսին ծանր կերպով վիրաւորեց: Այս բոլորը կատարուեց կառքի ձիաների մօտ ու դքսուհու աշքի առաջ, որը ձանաչեց իւր քաջ պաշտպանին: Աւազակներից մինը նկատեց նորան ու կատաղի կերպով յարձակուեց նորա վերայ և անշուշտ կսպանէր նորան, եթէ Դօն Քիշօտը նիշակի հարուածով վայր չճգէր աւազակին գետին ու ձիու ոտների տակ ջարդուփշուր շանէր նորան: Դըք-

սուհին աղատուեց միայն մէկ երկիւլով ու մին էլ ձեռքին մի փոքրիկ վէրք ստանալով:

Այդ միջոցին շտափով մօտ վաղեց մերկ սուրը ձեռքին մի ձիաւոր ու կանգնեց Դօն Քիշօտի կողմէն: Դուք աւազակները յուսահատութեամբ պաշտպանում էին. նոցանից ոչ մինը չազատուեց, այլ ամենքը սպանուեցան ու իւրեանց յանցանքներին փոխարինեցին իւրեանց կեանքները:

— Թող միշտ այսպէս ոշնչանան քո վտանգաբեր մտագրութիւնները, անզգամ Ֆրէստօն, ուխտագրուժ կախարդ, գոչեց քաջ Դօն Քիշօտ Լամանշեցին: Մի կասկածէք, տիկին, որ այս անզգամները ուղարկած էին իմ անհաշտ թշնամի անիծեալ կախարդից, որը անկասկած, այս չար պատժի ենթարկել է ձեզ այն քաղցր ու ուրախ ընդունելութեան համար, որ դուք արել էք առիւծ-ասպետին:

Այս անդգամ ՚ի հարկէ գուքսն ու դքսուհին այլ ևս շմտածեցին մեր հերոսով զուարձանալ: Նոքա սրտանց շնորհակալութիւն յայտնեցին նորան:

— Ընկիւ դքսուհի, պատասխանեց հերոսը, ինձ աշխարհիս բոլոր թափառական ասպետներից երջանիկ եմ կարծում, որովհետեւ դէպք ունեցայ ձեզ ազատել անպիտան յափշտակողների ձեռքից և նորհակալ եմ երկնքից, որ ինձ կարողութիւն տուեց ձեզ այդ ծառայութիւնն անելու:

— Ես այսպէս խօսում էր դքսի ու դքսուհու հետ, երբ նոցա ծառաները տեսնելով որ վտանգը անցել է դարձան պատերազմի դաշտը ու սկսեցին ձիաները լծել:

Ո՞եր հերոսը այնպիսի քաղաքավարութեամբ
ու մտածելով էր խօսում, որ չգիտեին ինչ համա-
բեին այսպիսի մարդուն, որ թէպէտե իսկապէս ցնո-
րուած էր, սակայն իսկատ խելօք էր թւում և կըռ-
ւում էր աներկիւզ ու սրամնց: Այդ ժամանակ
դուքսը յայտնեց, որ հրացանաձութեան ձայներ լսե-
լով նա վերադարձել է խմանալու թէ ինչ կայ:

— Երեակայեցէք զարմանքս, աւելացրեց նա, երբ
տեսայ Դօն Քիշումին աւազակների հետ կոռուելիս և
իմ զարհուրանքը, երբ ես կառքի մէջ նկատեցի
դքսուհուն, որի շուրջը թափոծ էին մի քանի սպա-
նած ու վերառուած մարզիք:

Յետոյ կառքն ուղղեցին, ձիաները լծեցին և
դուքսն ու դքսուհուն նատեցին նորա մէջ: Դօն Քի-
շումին հրաւիրեցին իւր հաւատարիմ Խօսինանտով
ուղեկցելու նոյա, և միասին ամրոցը վերադարձան,
ուր ամենքը շինթուեցան, երբ պատահած անցքի
մասին լուր առան:

Պարզ բան է, որ այս անցքից յետոյ դուքսը
այլ ևս չէր էլ անզամ մտածում այցելել Սանխօմին:

Գլուխ Ճ.՝

ՍՊ.ՆԻՕ ՊԱ.ՆՉՈՒ.Ի ԿՍ.ՌԱՎ.Ռ.ՐՈՒԹԵԱՆ Ա.ՆՑԱԶՈՂ Վ.ԵԲ-
Ջ. ՆՈՐԱ. ՀՐԱԺԱՐՈՒԵԼ. ԲԱՐԱ.ՏԱՐԵ.Յ.Յ ԿԴ.ԶՈՒՅ, ԵՒ
ԹԷ ԻՆՉ ՊԱ.ՏՈ.ՀԵ.Ց ՆՈՐԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ:

Մէկք մեր նահանգապետին թողենք իսկատ բար-
կացած ձանձրացնող գիւղացու վերայ ու շատ անբա-
ւական իւր դրութիւնից այն իսկատ պատճառ-

ուաւ, որ ստիպում էին նորան պահել: Սեղանապետը
նորան մի փոքր քաջալերելու համար ասաց, թէ
բժիշկ Պէդրօ Ռէղիօի թոյլատութեամբ և նորա վե-
րահայեցորութեամբ ինքը ընթրիք է պատրաստել
որը աներկիւզ կարող է ուտել:

— Ե՛հ, ուր է այդ բարի բժիշկ Պէդրօ Ռէղիօ
դէ-Ագուէրօն, Տիրուէավուէրի բնակիչը: Թող գայ
մի գրկեմ նորան, աղաղակից Սանխօն, — այ, այժմ
տեսնում եմ, որ նա այնքան վատ հոգու տէր չէ,
որքան թւում է:

Եւ սեղան նստելով նա դարձեալ ուրախացաւ:
— Ես ուրախութեամբ սրատրաստ եմ աշխատել
անընդհատ ուտելով ասաց նա, միայն թէ ինձ ու իմ
էլ պահեին: Ես օրինաւոր ինրպազ կփառավարեմ
երկիրս, վաղ կվերկենամ ու ամեն բան կտնեմ, միայն
թէ, ամենքը երջանիկ ու բաւական լինեն, բայց այս
էլ անհրաժեշտ է, որ ես ես երջանիկ ու բաւական
լինեմ: Ամեն բան լրաւ կերթայ, երբ ամենքը իւրիանց
պարտականութիւնները կ'կատարեն. Հակառակ դէպ-
քում ոյարեաւ հովիւ, փախեան ոչխարքն առածը
կ'կատարուի: Ես ամենքին թոյլեմ տալիս իմ գործերա-
զնել: Մի խելքը լրաւ է, երկուսը առաւել լաւ:

Երբ նա հաց կերաւ վերջացրեց, սեղանապետը
առաջարկեց նորան շրջել կղզով զանազան մասները
պահպանութիւն անելու:

— Մէծ ուրախութեամբ, սրտատախանեց Սանխօն:
Նախ և առաջ ձեզ յայտնում եմ որ ես մասպիր
եմ իմ կղզիս մաքրելովոր շրջմուկներից ու դատար-
կաշընկներից, երկրագործներին կ'պաշտպանեմ: Կը-

ստիպեմ յարգել կրօնն ու բարոյականութիւնը և
անխնայ պիտի պատժեմ աւազակներին։ Լաւ չեմ
ասում, բարեկամներս։

—Այնքան լաւ է, պատասխանեց սեղանապետը,
որ մենք միայն կարող ենք ձեզանով հիանալ և մեզ
հետ կհիանան նաև այն մեծ անձինքը, որոնք ձեզ ուշ
զարկեցին այստեղ, դուցէ և չհասկանալով իւրեանց
մեզ տուած պարզեի գինը։ Բայց արդէն ժամանակ
է, որ ձերդ պայծառափայլութիւնը սկսի շրջել իւր
երկրում։

Սանիսն իսկոյն գաւազանը վերցնելով ճանա-
պարհ ընկաւ իւր ատենադպրի, սեղանապետի ու
վեպագրի հետ միասին, այս վերջինս նորա բոլոր գոր-
ծունեութիւնը զրի անցնելու համար։ Նոցա ուղեկ-
ցեցին և բազմաթիւ զինուորներ։ Դեռ հազիւ թէ
երկու փողոց էին անցել երբ յանկարծ հրացանի
ձայն լեցին։ Պահապանները հաւաքուեցան այնտեղ
ու երկու մարդ բռնեցին, որոնք սրերով կռւում էին
միմեանց հետ։

—Տէր, նոցանից մինը ասաց նահանգապետին,
պատիւ ունիմ յայտնել ձեզ, որ այս ազնուականը
այս բոսէիս դուրս եկաւ խաղատնից, ուր սա հազար
բէալ տարաւ։ Ես այս բանիս վկայ էի, դորան օդ-
նում էի խաղալիս։ Երբ փողոց դուրս եկաւ, ես մօ-
տեցայ սորան և խնդրեցի իրեւ շնորհակալութիւն
ինձ բաժին հանել իւր տարածից։ Իսկ այս ագահը
չորս բէալից աւելի չկամեցաւ տալ ինձ, թէպէտ և
գիտէ, որ ես ոչինչ բան ու գործ չունիմ, և ապ-
րուստս դանում եմ խաղատանը, խաղացողներին օդ-

նելով ու խաղի մէջ ծագած վէճերին վՃիռ տալով;
Ես բարկացած՝ սուրա հանեցի, սորան քաղաքավա-
րութիւն ու ազնուութիւն սովորցնելու համար։

—Դո՞ւք ինչ կամէք սորա մասին, հարցրեց Սան-
իսն հակառակորդին։

—Ես, պատասխանեց վերջինս, փողը օրինաւոր
կերպով տարայ և ոչինչ կարօտութիւն չունէի սորա
օգնութեան։ ուստի և չեմ կամենում տալ և չեմ էլ
տալ տորան չորս բէալից աւելի։

—Դուք սորան իսկոյն հարիւր բէալ կտաք, ընդ-
հատեց Սանիսն, որ սա այն փողերը աղքատներին
բաժանի։ Բացի սորանից երկու հարիւր բէալ տու-
գանք կտաք յուգուտ բանտարկեալների, և այնուհետեւ
Դուք ու ձեր հակառակորդը իրեւ ծոյլ շոջմոլիկներ
կարտաքսուէք իմ վիճակից։ Իսկ եթէ երբ և իցէ
կհամարձակէք ոտք դնել այստեղ, ես ձեզ կկախեմ։
Համանում էք ասածներս։ Վերջացաւ, թող այսպէս
էլ կատարուի։

—Եսն միջոցին մի ուրիշ գիշերապահ մի երե-
խայ բերեց, որ պահապաններին տեսնելով փախել
էր։ Նոքա մեծ դժուարութեամբ բռնել էին նորան։

—Խնչու էիր այդպէս շտապով փախչում, հարցրեց
նորան Սանիսն։

—Նորա համար, որ ինձ չբանեն։

—Լաւ։ Բայց այսպէս ուշ ո՞ւր էիր դնում։

—Շարունակ ուղեղ ճանապարհով, տէր։

—Դու ծշմարիս ես ասում. բայց նպատակի ինչ էր։

—Ես կամենում էի թարմ օդ շնչել։

—Շատ լաւ. բայց ո՞ւր էիր գնում թարմ օդ շնչելու։

— Այնուել, որ կողմից հողմ է վշում:

— Եատ գեղեցիկ, պարոն ծաղրածու: Բայց երես ակայիր, իբր թէ ես եմ հողմը, և վշում եմ ուղղակի քո երեսին ու ուղղակի քշում եմ դէպի բանարը:

— Է՛յ, սորան ուղղակի բանտը տարեք:

Թողնենք Դօն Քիշօտի նշանաւոր զմնակին պատահած ուրիշ բաղմաթիւ անցքեր, որոց մէջ նա նոյնքան խելօք վարուեց, որքան և արդարացի էին նորա դաստողութիւնները և դառնանք այն զարհութելի եղելութեան, որ Բարձատարիսյ կղզին զրկեց մի ամենալաւ, ամենաողօրմած ու ամենաարդարադատ նահանդապետից:

Աշխարհում յաւիտենական ոչինչ չկայ: Ժամանակը, որ մի բոսկէ անդամը չի կանգնում, անդադար թռչում է, ամեն բան քանդելով: Օրուան փոխարինում է գիշերը, լուսին՝ խաւարը: Ամեն բան անցաւոր է, ամենը փոխում է, բացի մարդկային կեանքից, որը, աւաղ անդարձ է անցնում:

Եօթն օր էր անցել ինչ Սամինծն ստանձնել էր կառավարութեան զէկը և նորան արդէն յաջողել էր այնպիսի խմատուն օրէնքներ հաստատել ու կարգադրութիւններ անել որ նոքա այժմ ես ոյժ ունին այն երկրում, ուր նոցա անուանում են.— Բէջ ստիւգութէու Սանկտ Պանչակ օրէնքներ:

Նա յոգնելուց, քիչ ուտելը ու զանազան կարգադրութիւններ անելուց նեղացած լինելով օգուտ քաղեց գիշերային խաղաղութիւնից և այդ միջոցին հանգստացաւ: Յանկարծ զարհութելի աղաղակներն ու զանգահարդութիւնը զարթեցրին նորան: Նա վեր-

կացաւ, նստեց մահճակալի վերայ և սկսեց ուշադրութեամբ ականջ դնել: Աղմուկը ստատկանում էր, զարհուրելի սուր աղաղակների հետ միաւորուեցան և փողերի ու թմբուկների ձայները: Վախենալով ու հիանալով նա անկողնից վայր թռաւ ու շապկանց վաղեց իւր սենեկի դռան մօտ: Նոյն խակ բոսկէին մօտ վաղեցին քան հողի լապտերներ ու մերկ սրեր ձեռներին ու գոշեցին.

— Զէնք առէք, զէնք, պարոն նահանգապետ, շուտով զինաւորուեցէք: Թշնամին պատել է կղզին: Կորած ենք, յոյներս ձեր քաջութեան վերայ է:

— Զէնք առէք, զէնք, վրայ բերեց զարմացած Սանկտոն: Ոյդ իմ գործս չէ, ոտ իմ տիրօջ— Դօն Քիշօտին կվերաբերի. Նորան դիմեցէք: Խս ձեզ խօսք եմ տալիս, որ նա մի բոսկում կղզին կազատի թրշնամուց: Իսկ ես, հաւատացնում եմ ձեզ, որ կռուելու մէջ վարպետ չեմ:

— Ոյդ ինչպէս էք համարձակում ասիլ տէր. դուք մեր կառավարիչը, մեր նահանգապետն էք, դուք պարտաւոր էք մեզ առաջնորդել: Մենք ձեզ համար զէնք ենք բերել ահա վերցրէք:

— Է՛յ, եթէ դուք այդ բանը, պարոններ, անպատճառ կամենում էք, հառաչելով պատասխանեց Սանկտոն, հրամայեցէք, Ճարտ ինչ է, զէնք տուեք ինձ:

Խակոյն նորան շապկի վերայից երկու վահան կապեցին, մինը ետև, միւսն առաջ, կապկապեցին ու ձեռքերին էլ բաներ հագցրին: Այսպիսով սղմուած նա չէր կարողանում. շարժուել ու մանշալ: Նորա

ձեռքը նիղակ տուին, որի վերայ ամբողջ մարմնով
յեցաւ և շուտով միասին դոչեցին.

—Առաջ գնանք, առաջ:

Սանխօն կամեցաւ քայլելն առաջ գնել բայց
հաւասարակշռութիւնը կորցնելով՝ վայր ընկաւ գե-
տին: Անխիղձ ծաղրածուները չտեսնելուն տուին նո-
րա ընկնելը, լապտերները հանգցրին, աղմուկը բարձ-
րացրին, սկսան յետ ու առաջ վազել յարձակուել
միմեանց վերայ, սրերը զարկելով վահաններին ու
սաղաւարտներին: Իւրաքանչիւր հարուածին Սանխօն
վեր էր թռչում: քրաինքը հեղեղի պէս վազում էր
նորանից, որ նեղն ընկած, իւրեան Աստուծոյ կամքին
յանձնեց: Կոռուզներից մինը, նորան աւել վախեց-
նելու համար, կանգնեց խեղձ նահանգապետի վերայ
ու այնտեղից սկսաւ հրամաններ արձակել, գոռալով.

—Տաք ջուր ու խեժ բերէք, այս դուռը փակե-
ցէք. մի՛ վհասուէք, բանը լաւ է գնում:

—Միայն ոչ ինձ համար, ինքն իւրեան ասաց խեղձ
Սանխօն: Աստուած տայ, որ յիրաւի թշնամին տիրէ
իմ անիծած կղզուն. նա ինձ այդպիսով կազատէր
այսպիսի կառավարութիւնից և ես նորանից շատ
չնորհակալ կլինէի:

Այդ լուսէին նա լսեց.—յաղթութիւն, յաղ-
թութիւն, շուտով վերկացէք, պարոն նահանգապետ,
և յաղթանակ վայելեցէք:

Սանխօն վերկացրին և նորան ոյժ տալու հա-
մար՝ զինի խամացրին: Յետոյ նա մի փոքր հանգատա-
ցաւ գիշերուայ չարչարանքից. առաւօտը նա վաղ
վերկացաւ, շորերը հագաւ, ուղղակի ախոռը գնաց իւր

զարմացած ծառայի հետ: Այնտեղ նա մօտեցաւ իւր
իշխն և նորա ճակատին համբուրելով, արտասուալից
աչքերով ասաց.

—Ի՞մ բարեկամ ու վաղեմի ընկերս, որ անտըր-
տունջ կրել ես ինձ հետ ամեն չարչարանքն ու վը-
տանգները, այստեղ արի: Քանի որ ես զբաղուած էի
միայն քեզ կերակրելով կամ քո թամքը կարկատելով,
կեանքիս ժամերը, օրերն ու տարիները երջանիկ էին
անցնում: Բայց այնուհետեւ, երբ ես քեզ թողի
և բարձրացայ պատուամիութեան ու մնափառու-
թեան աստիճանը, միայն ցաւ ու անբաւականութիւն
զգացի:

Այսպէս խօսելով իւր իշխ հետ, նա թամքեց
նորան, նատեց նորա վերայ և մի հայեացք ձգելով
սեղանսապետի, ատենագլորի, Պէրա Ռէզի բժշկի ու
բոլոր շըջապատողների վերայ՝ ասաց.

—Պարոններ, հրամայեցէք, որ գոները բանան ու
տուէք ինձ դարձեալ իմ նախկին ազատութիւնս,
առանց որի ինձ երջանկութիւն չկայ: Նահանգապե-
տական սանձը խիստ ծանր է ինձ համար: Ես աւելի
լաւ կհամարեմ բորբոսած հացով կերակրուել քան
թէ լնտիր կերակուր ուտելու համար մի որևէ ան-
տանելի բժշկի թոյլուութեանը սպասեմ: Աղքատու-
թիւն, հանգստութիւն ու անկախութիւն—սոքա են
աշխարհիս միակ գանձերը: Մնաք բարեաւ, պարոն-
ներ: Դատարկ եկայ ու դատարկ ել գուրս եմ գնում:
Ես որ կառավարութիւնը յանձս առայ, մի կոպէկ
անգամ չընէի, և այժմ գնում եմ դատարկաձեռն,
բոլորովին հակառակ միւս բոլոր նահանգապետներին:

Ձեր խոնարհ ծառան եմ, պարոններ, թղթլ տուեք
գնամ. ողջոյն ձեզ և մնաք բարեաւ: Ես, անարդ
միջատս, այս ախոռում թողնում եմ թեերս, որոն-
ցով յօս ունեի թուշել բայց քիչ մնաց, որ ծիծեռ-
նակի ճանեկն ընկնէի: Այլ ես չեմ կամենում թուշել,
այլ ոտքով մանդալ գետնին, չեմ թէ ընափր կօշեկնե-
րով, այլ տրեխոներով: Մարդ ո՞չպէս է ի-ը վերնակն համե-
նառ սպառնելով չէի: Վերջին անդամ էլ մնաք բարեաւ,
ժամանակը անցնում է, իսկ ես հեռու տեղ պիտի
գնամ:

Ի դուր էին աշխատում Սանխօնն հեռացնել
իւր մոտադրութիւնից:

— Ես Պանչաների ազգից եմ, պատասխանեց նա,
մի կամակոր ազգից. երբ նոքա ասեն ո՛չ այլ ես
սատանան չի կարող Այր ասել տալ: Մնաք բարեաւ:

Այնուհետեւ նորան խնդրեցին, որ ինչ իւրեան
հարկաւոր է հետք վերցնի: Բայց Սանխօն, բացի մի
պարկ գարուց իշե համար և իւր համար ևս մի
կտոր հայ ու պանրից ոչինչ չվերցրեց: Արտասուտ-
լից աշքերով հրաժարական տալով ամենին, նա Ճա-
նապարհ ընկաւ, թողնելով իւրեան շարչարող չար ծաղ-
րածուներին զարմացած որքան նորամտութեան,
նոյնքան և բոպէական վճռի վերայ: Սանխօն կէա-
տրում, կէս-ուրախ կամաց կամաց գնում էր, մոա-
ծելով ոյն ուրախութեան մասին, որ նա պէտի ու-
նենար դարձեալ տեսնելիս իւր բարի տիրօջը: Ճանա-
պարհի կէսն անցնելով նա հանգստացաւ անտառի
մէջ և Ճաշեց, նախընթաց գիշերուանից դադրած լի-
նելով՝ քնեց ծառերի տակ և արեաբացին զարթնե-

լով՝ դարձեալ ճանապարհ ընկաւ: Դեռ ևս կէս մըմն-
չեառ էր գքսի տանից, երբ գիշերը վրայ հասաւ-
նորան: Նորա թշուառութիւնների պակասը լրաց-
նելու համար, խեղջը դաշտումը մոլորւելով՝ իւր
իշե հետ միասին ընկաւ մի խորը գրի մէջ, որ գըտ-
նուումէր մի հին ու աւերակ ամրոցի մօտ: Մեր զե-
նակիրը կարծեց թէ բոլորովին կորած է և թէ մինչեւ
անդինդի յատակին հասնելը կաոր կաոր կլինի: Բայց
երկու երեք սաժէն ներքեւ ընկնելով՝ իւրեան զգաց
միանդամայն անվտանգ և այն դրութեան մէջ. ինչ-
պէս առաջ էր, այսինքն իշե վերայ նստած: Նա
Ասածուն շնորհակալութիւն արաւ այս հրաշքի հա-
մար և սկսաւ այս ու այն կաղմ'նայել իմոնալու թէ
արդեօք առանց ուրիշ օգնութեան չի կարող դուրս
գալ այն գրից. սակայն նկատեց, որ գրի զարիվեր
ու հարթ կողքերը արգելում էին նորան այդ, ուստի
և ստիպուեցաւ զիշելը այդ գրի մէջ անցնելը ողոր-
մելի ձայներ ու հառաջանքներ արձակելով: Վերջա-
պէս առաւօտեան աւելի համազուեց մեր զինակիրը
թէ անհնարին էր զբից դուրս գալ: Նա սկսաւ ո-
ղազակել յուսալով որ մէկը կլի նորա ձայնը: Բայց
այդ ես 'ի զուր տնցաւ, ոչ ոք չեկաւ նորան օգնելու:
Այլ ես չկասկածելով թէ ինքը մահու է դատապար-
տուած, նա աւելորդ համարեց իւր ունեցած մի քիչ
հացը, ու տուաւ իւր իշեն: Այդ բապէին Սանխօն
ներքեւ մի անցք նկատեց, որի միջով ինքն ու իւր
իշե կարող էին անցնել: Այս փոսը տանուում էր մի
երկայն ստորերկրեայ անցք, որի ծայրից լցու էր ե-
րկում: Նա յուսով լցուած բռնեց իւր իշե սանձը և

Ներս տարաւ նորան ստորերկրեայ անցքը, որի մէջ նա յարմար ձանապարհ դտաւ: Այս ձանապարհով կէս մզոնաշափ տեղ գնաց. երբ տեսաւ, որ ստորերկրեայ անցքը բոլորովին լուսաւորուեց, նա դարձեալ յուսաց լցու աշխարհ մոնել:

Առ ժամանակ մենք նորան այնտեղ թողնենք և դառնանք Դօն Քիշօտին:

Գլուխ Ճ.Թ.

Դօն Քիշօտն ՈՒ ՍԱՆԻԾՆ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՆ ԴՔՍՒՑ
ՈՒ ԴՔՍՈՒՀՈՒՑ: ԲԱՐՍԵԼՈՆԱ ՀԱՄՆԵԼԲ: ՍՊԻՏԱԿԱ-
ԼՈՒՄԻՆ ԱՍՊԵՏԸ: ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԲ:

Մեր հերոսը ձանձրանալով իւր երկարժամա-
նակեայ անգործութեամբ, վճռեց հրաժարուել իւր-
եան հիւրասիրողներից: Նա ամեն առաւօտ ման էր
գալի Ռօսինանտով, որպէս զի սա չսովորի նստակեաց
կեանքի: Մի առաւօտ այսպէս զբօնելիս, նա վանքի
կողմը գնաց, որի մէջ անշուշտ կընկնէր իւր ձիովը,
եթէ շտապով սանձը չճգէր ու չկանգնեցնէր սորան.
Հետոքրքրութիւնից շարժուած, նա գլուխը կախեց,
անդնդի մէջ նայելու մոքովի երբ յանկարծ լսեց.

— Աւաղ այստեղ մի բարի մարդ չկայ արգեօք,
մի որ և է կարեկից ասպետ, որ օգնութիւն հասնէր
կենդանի թաղած թշուառ յանցաւորիս, մի խեղձ
նաշանդապետին, որ չկարողացաւ ինքն իւր գլուխը
կառավարել ու բոլորովին ջարդուիշուր եղաւ:

Զարմացած Դիօն Քիշօտին այնպէս թուաց, թէ
այդ ձայնը իւր զինակրինն է:

— Այդ ովէ է, գոչեց նա.

— Աւաղ ուրիշ ովէ կարող է լինել, բայց եթէ
Սանխօ Պանչան, Բարատարիայ կղզու յանցաւոր նա-
հանգապետը, հոչակաւոր թափառական ասպետ Դօն
Քիշօտ Լամանշեցու նախկին զինակրիրը:

Այդ բոպէին նորա էշը կարծես ձանաշելով իւր
իշխանի ձայնը, բարձր ձայնով խրինջաց:

— Անկասկած, պատասխանեց Դօն Քիշօտը, Սան-
խօի ու իւր իշի ձայնն է: Սպասիր, բարեկամ, ես
իսկոյն ամրոցն եմ զնում օգնութիւն խնդրելու:

Մեր հերոսը վազեց, շտապով պատմեց այն
անցքը դքսին ու դքսուհուն: Նոքա շատ զարմացան,
երբ իմացան թէ Սանխօն թողելէ իւր կառավալքրու-
թիւնը և իսկոյն բազմաթիւ մարդիք ուղարկեցին,
սանդրողքներով ու պարաններով հանելու նորան այն
ստորերկրեայ անցքից, որ այդ կողմերը վաղուց
արդէն յայտնի էր: Վերջապէս, մեծ ջանքով Սան-
խօին ու նորա իշին հանեցին այնտեղից. երկուսն ևս,
լցու աշխարհ ընկնելով՝ խիստ ուրախացան: Ամրոցը
հեռու չէր: Երբ հասան նորան, Սանխօն ծունկ չոգեց
դքսի առաջ, որը դքսուհու հետ պատշգամբում
սպասում էր նորան:

— Զերդ պայծառափայլութիւն, ասաց նա նորան,
դուք բարեհաջեցիք ինձ անարժանիս Բարատարիայ
կղզու նահանգապետ կարգել և ես այդ ծանր լուծը
կարողացածիս չափ լաւ տարայ: Թշնամիք յարձա-
կուեցան նորա վերայ, ինձ հաւատացրին, որ ես նո-

ցա յաղթել եմ. կցանկայի, որ այդ Ճիշտ լինէր. բայց Աստծուց խնդրում եմ, որ նա ինձ այն սրտով օգնի, ինչ սրտով ես թշնամու հետ վարուեցի: Ես այսքան միջոցում մոտածում էի, թէ անընդունակ եմ նահանգապետի պաշտօնը կատարելու և ձեր ինձ արտաքսելուց առաջ, ինքս յօժար կամքով թողի այն: Աղքատ զնացի ես այնտեղ, և աղքատ դուրս եկայ այն տեղից իշովս, որը սակայն դժբաղստաբար մի դուք ընկաւ, ուր, եթէ պ. Դօն Քիշօտը չլինէր, մինչեւ ցայժմ էլ կմնայինք:

Երբ Սանխօն խօսքը վերջացրեց, դուքսը դրկեց նորան և հաւատացրեց, որ նա ցաւում է նորա պյաղէս շուտ հրաժարուելու վերայ նահանգապետական պաշտօնից, բայց որ նորան ուրիշ տեղ կտայ, աւելի թեթև կառավարելու ու օգտագեր: Դքուհին իւր կողմից հրամայեց Սանխօնն լաւ կերակրել մի փոքր թեթևացնելու նորա վշտերը: Դօն Քիշօտը զազտնի ուրախանալով իւր զինակիրի վերադառնալովը, որոցից միւս օրլ ճանապարհ ընկնել: Դքուհին ցաւակցութիւն յայտնեց նորան այդ մասին, հրամայեց իւր սպասաւորին Սանխօնն թագուն տալ երկուհարիւր ոսկի, որ մեր զինակիրը համբուրելով ծոցումը պահեց: Միւս օր առաւօտեան Դօն Քիշօտը իւր Ռօմինանտով երեւաց ամրոցի դռներին, ոտից գլուխը զինաւորած: Նորա մօտ էր և զինակիրը իւր իշխ վերայ նստած: Ամրոցի բոլոր բնակիչները հաւաքուել էին պատշգամբի վերայ ու պատուհաններում, և նայում էին մեր հերոսներին, մնաս բարեաւ ասելով նոցաւ: Դօն Քիշօտը նիզակը ցածրացնելով դքսի ու

դքսուհու առաջ, խորը գլուխ տուեց նոցա և շուռ գալով՝ իւր զինակիրի հետ միասին ճանապարհ ընե կաւ դէսի Բարսեղնա: Դուքսը իւր մի քանի բաշ ընկամներին, որոնք բնակուում էին այն քաղաքում, նամակ գրեց ու պատգամաւորներ ուղարկեց նոցա մօտ: Դօն Քիշօտն ու Սանխօնն Ս. Յովհաննու տօնի երեկոյեան վերջարավունի հասան հռչակաւոր Բարսե լոնտ քաղաքը: Ամբողջ քաղաքը շարժողավեճեան մէջ էր տօնի պատճառաւ: Բազմաթիւ լաւ հագնուած ձիաւորներ արշաւում էին փողցնելու: զինուորա կան երաժշտութեան հետ խառնուում էին հրացա նաձգութեան ձայները և ամրոցներից արձակուող ձայններին արձագանք էին տալիս նաւից արձակուող թնդանօթների ձայները: Դօն Քիշօտն ու մանաւանդ Սանխօն խոտ զարմացած էին այս տեսարանովը, երբ յանկարծ տեսան, որ նոցա դէմ են գալիս մի քանի ձիաւորներ: Սոքա դքսի բարեկամներն էին, որոց նա առաջուց իմացրել էր Դօն Քիշօտի գալու նոցանից մինը մօտ գալով գոչեց:

Բարեաւ ձեզ, թագիառական տաղետութեան պատկեր ու աստղ քաջ ու անյալթ մեծդ Դօն Քի շօտ Լամանշեցի:

Մեր ասպետը չկարողացաւ նորան պատու խանել: Նորան քաղաքի միջով հանգիսով տարան դքսի բարեկամ հարուստ Անտօնիօ Մօրէնի տունն Այստեղ ամեն բան պատրաստ էր հերոսին ընդու նելու համար: Անտօնիօն նորան իջևան տուեց իւր ամենալաւ սենեակիներում և շատ պատիւ տուեց ու զգուշաւոր հօգացողութիւն արտաւ նորա վերայ: Սան

իոն էլ, որին ևս չմոռացաւ նա, ուրախացաւ, որ նոյնպիսի լաւ ընդունելութիւն զտաւ, ինչպէս և Դօն Դիեգօի կամ դքսուհու ամրոցում: Վեց օր արդէն անց էին կացրել բաւականութեամբ ու զուարձութեամբ, երբ մի առաւօտ Դօն Քիշօտը զրահաւորած ու նստած Ռուինանտի վերայ, գնաց զքօսնելու Դօն Անտօնիօի ու նորա բարեկամների հետ: Նոքա միմեանց հետ խօսելիս, յանկարծ տեսան ոտից դլուխ զինաւորած ու մի փառաւոր ձի նըստած մի ասպետ, նորա դէմքը դիմակով էր ծածկած ու լայն վահանի վերայ նկարած էր փայլուն լուսին: Այդ անձանօթը շտապեց առաջ եկաւ ու կանգնելով Դօն Քիշօտի առաջ, բարձր ու հպարտ ձայնով ասաց.

— Հռչակաւոր ասպետ, քաջդ Լամանշեցի: Ես սպիտակալուսին ասպետն եմ, որի անասելի քաջագործութիւնների ձայնը անշուշտ ձեր ականջին էլ հասած կլինի: Ես գիտութեամբ եմ եկել այստեղ քեզ հետ կռուելու ու ոյժս փորձելու քո ոյժերի հետ: Չեմ կասկածում, որ յաղթութիւնը իմ կողմ կմնայ, ուստի և առաջարկում եմ, որ սկզբիցն և եթ հնազանդուես ինձ:

Դօն Քիշօտը զմայլած անձանօթի գոռողութեամբ, բարձր ձայնով պատասխանեց.

— Անշուշտ ցնորուած է նա, ով կարծում է, թէ Դօն Քիշօտ Լամանշեցին առանց կռուելու յաղթուած կ'համարի իւրեան: Դեհ, պատրաստուիր, հպարտ ու գոռող ասպետ, որի գործերը ինձ միանգամայն անձանօթ են: Ցոյց տալու համար թէ ես բոլորովին չեմ վախենում քո սպառնալիքներից, ինքդ որոշեր

յաղթութեան պայմանները. Ես կընդունեմ նոցա: — Ուրեմն լսիր, քաջդ առիւծասպետ. եթէ ես քեզ յաղթեմ, դու տուն կվերադառնաս և մի ամբողջ տարի առանց զէնք վերցնելու տանդ կ'անցկացնես. իսկ եթէ զու ինձ կյաղթես, այն ժամանակ ես իմ զէնքս, ձիս ու բոլոր փառքս քեզ կյանձնեմ: Դօն Քիշօտը դլուխ տուեց նորան ՚ի նշան համաձայնութեան, և մի կողմ քաշուեց յարձակուելու համար: Հակառակորդը հետեւեց նորա օրինակին: Դօն Անտօնիօն տեսնելով այս տեսարանը, և թագաղեց որ անշուշտ այս գործը Բարսելոնի բնակիչներից մէկի հնարազիտութիւնն էր: Նա ժպտելով նայեց իւր բարեկամներին ու ցածր ձայնով հարցրեց, թէ զիտեն արդէօք այս անցքի նշանակութիւնը. բայց նոցանից ոչ ոք չճանաչեց սպիտակալուսին ասպետին:

Հակառակորդները յարձակուեցան միմեանց վերայ, անձանօթի ձին Ռուինանտից լաւ էր ու քաջ, նորանից կրկնապատիկ արագ էր թռչում: Նա կայծակի պէս յարձակուեց դժբաղտ Դօն Քիշօտի վերայ և նորան իւր ձիու հետ միասին քան քայլ հեռու շպրտեց աւազի վերայ: Իսկոյն յաղթողը նիղակի ծայրը մօտեցրեց հակառակորդի դէմքին ու ասաց.

— Իուք յաղթուած էք և եթէ ձեր պայմանը չէք կատարի՝ կսպանեմ:

Եյս որ ասաց անձանօթը ձին պտոյտ տուեց, առաջ քշեց ու քաղաքը վերադարձաւ: Դօն Անտօնիօն, աւելի ու աւելի զարմանալով, առաջ վազեց ու աշխատում էր նորան համանել այն ինչ նորա բարեկամներն ու Սանխան խիստ վշտացած, բարձրացրին

Դօն Քիշօտին, պատգալակի վերայ դրին ու տարան տուն: Ո՞վ պիտի լինէր արդեօք սպիտակալուսին ասպետը: Ոչ այլ ոք, բայց եթէ Սիմէօն Կարրասկօն, որին մեր հերոսը մի փոքր առաջ յաղթեց Հայելու առպետ անունը կրելիս: Նա ամեն բան յայտնեց Դօն Անտօնիօնին, խնդրելով իբրև գաղանիք պահել:

—Ես ուրիշ նպատակ չունեի, ասաց նա, բայց եթէ զիւղը վերագարձնել այս բարի աղնուականին, որին ամենքս սիրում ենք ու յարգում և որի խելացնորութիւնը վաղուց արդէն շարժել է իմ ցաւակցութիւնս:

Դօն Անտօնիօն խոստացաւ ոչ ոքի չասել նորա գաղանիքը և փոխագարձ ողջունից յետոյ բաժանուեց Բակկալավրից: Կարրասկօն այնտեղ ևեթ վերցրեց իւր զէնքերը, բարձեց ջօրու վերայ, ձի նստեց և ճանապարհ ընկաւ գէպի տուն: Դօն Քիշօտը վեց օր պառկեց անկողնում, խիւտ տանջուելով վայր ընկնելուցը, բայց աւելի վշտացած, իւր յաղթուելու վերոյ: ՚Ի զուր Ասնիօն, Անտօնիօն ու նորա բարեկամները աշխատում էին սիրու տալ նորան և քնքոյշ հոգացողութիւն անել նորա վերայ: Նա չէր կարողանում միիթարուել: Եօթներորդ օրը նա ճանապարհ ընկաւ գէպի տուն առանցութեան վերայ, որև նա ծանր կերպով խոստացաւ կատարել: Մառանապետը շատ օգտակար խորհուրդներ տուեց նորան. Նա լսեց այս ամենը, առանց պատասխան տալու: Նորա մտածմոնքը օրէցօր աւելանում էր:

Կոյն երբ նպա տեսան նորան, գրկաբաց վրայ ընկան նորան: Դօն Քիշօտը ձիուց վայր իջաւ, նոյա սղմեց իւր կրծքին և երկուսի ձեռքերից բանելով գնաց իւր տուն, որին հետեւում էին բազմաթիւ մանուկներ, գոռալով նորա ետևից.

—Ես պարօն Դօն Քիշօտը իւր չորացած ձիով այ Սանկտ Պանչան էլ իւր իշովը, որ բարձած բերում է տիուր պատկերի ասպնտի զըահները:

Դօն Քիշօտի մառանապետը և նորա եղբօրացնեկը, որնոք դուրս էին եկել սրահը, մեր հերուսին հանդիպելու մոքով, նոյան տեմնելով հիացան. Դօն Քիշօտը խիստ շարժուեցաւ այս բանից:

Նա շատապով պատմեց նոյա, թէ ինչպէս յաղթուեց և ինչպէս երդուեց մի ամբողջ տարի զէնք չվերցնել: ՚Ի զուր Բակկալավրը, գատաւորն ու սափրիչ նիկոլան աշխատում էին նորան միիթարել. ոչինչ չկարողացաւ նորա գէմքի տիսուր արտայայտութիւնը փոխել: Վերջապէս երեք բարեկամներն ևս թողին նորան, խորհուրդ տալով զգուշաւոր խնամք տանել իւր առողջութեան վերայ, որև նա ծանր կերպով խոստացաւ կատարել: Մառանապետը շատ օգտակար խորհուրդներ տուեց նորան. Նա լսեց այս ամենը, առանց պատասխան տալու: Նորա մտածմոնքը օրէցօր աւելանում էր:

Գլուխ Ե.

Դօն Քիշօտի Հիւսնդութիւնն ՈՒ ՄՌԱՅ:

Մի քանի օր անցաւ այսպէս: Կոիկ մնջեկ Դօն Քիշօտը կարծես ոչինչ բանի ուշադրութիւն չէր դարձ-

նում: Նա իւր քունն ու ախորժակը կորցրեց և շուտով ջերմեց, այնպէս որ սոխուած անկողին մտաւ: Նորա ամբողջ հիւանդութեան ժամանակ, դատաւորը, սափրիչ Նիկօլան և Կարրասկօն չէին հեռանում նորա անկողնի մօտից: Բարի Սանխօն տխուր ու անհանդիստ էր և չէր հեռանում սենեկից: Բժիշկն ասաց, թէ նորա հիւանդութեան միակ պատճառը սրտնեղութիւնն է: Սանխօն, չնայելով իւր նեղութեան, սկսաւ ամեն ջանք գործ դնել իւր տիրօջ ուրախացնելու համար: Նորա բոլոր կատակներին հիւանդը միայն մի փոքր ժպտում էր, յետոյ քընքը շութեամբ նայում նորան ցոյց տալու, որ հասկանումէ նորա բարի միտքը: Հիւանդութիւնը շուտով սաստկացաւ և մի շաբաթից յետոյ բժիշկը յոյսը կարեց նորա առողջանալու վերաբերութեամբ: Դօն Քիշօտը զգում էր իւր զրութիւնը: Նա խնդրեց, որ իւրեան հանդիստ թոյնեն, որովհետեւ կամենում էր քնել: Եւ յիրաւի քնեց և նորա քունը մօտ եօթժամ տեւեց: Մառանապետն ու եղօրաղջիկն սկսան լալ երբ յանկարծ Դօն Քիշօտը զարթնեց ու նոցա կանչեց.

— Այրելիներս, ասաց նա նոցա, փառք տուէք ամենակարող Աստծուն, որ նա իւր ողորմածութեամբ ինձ մեծ բարերարութիւն արաւ: Նա վերադարձրեց ինձ խելքը, այս անգին գանձը, որ ես կորցրի, այն յիմար կախարդական զգքերը կարդալիս: Բայց ես կարծ միջոց կվայելեմ իմ խելքս, մահս արդէն մօտ է, ուստի և կամենում եմ իմ կիւանքիս մնացորդ մի քանի բոպէներից օգուտ քաղել ըստ կարելոյն ուղելու իմ երկարժամանակեայ խելացնորութեան սիսալս: Խնդրեմ այստեղ կանչէք իմ բարեկամ՝ Սի-

մէօն Կարրասկօին, Նիկօլա սափրիչն և հաւատարիմ Սանխօնիս, որից ես պիտի ներողութիւն խնդրեմ իմ ցնորդներիցս նորան մասն տալու համար: Խսկոյն չորսըն ևս ներս մտան:

— Բարեկամնե՞րս, ասաց մեռնողը, ո՞ս կանչեցի ձեզ: Շտապեցէք ինձ շնորհաւորել. ես այլ ևս Դօն Քիշօտ Լամանշեցին չեմ, այլ Ալօնսօ Քիխանսօ, որ երբեմն կոչ ում էի բարի: Այլ ևս մի՛ որոնէք ինձանում թափառական տսպետութեան ու չեղած հերոսների նմանութիւն, որոց ես ցնորուած ժամանակս եղած էի համարում, այլ նայեցէք ինձ իրեւ ձեր հարկանի, բարեկամի և եղբօր, որի թոյլ միտքը վաղուց արդէն խանգարուած է և որը իւր կեանքի վերջին ոպէներին այնքան ոյժ ունի, որ կարողէ քաւել իւր մեղքերը:

— Վենքը լուռ ու մունջ լսում էին և զարմանքով ու ցաւակցութեամբ նայում միմեանց: Սանխօն, որը մինչև այդ ժամանակ չէր հաւատում, թէ իւր տերը վտանգաւոր զրութեան մէջն է, մահձակալի մօտ ծունկ չոգեց ու արտասուզով լցուեցան նորա աչքերը: Դօն Քիշօտը շարունակեց:

— Զգում եմ, որ հետույնէտէ թուլանում եմ: Խնդրեմ նօտարիուսին կանչէք, կտակս հաստատելու համար:

— Եյս որ լսեցին մառանապետն ու եղօրաղջեկը սկսան ողորմելի կերպով գոչել ու լաց լինել: Խսկ Սանխօնի յուսահասութիւնը մնասելի էր: Նա կարծես համրացաւ: Երբ նօտարիուսն եկաւ, մեռնողը իւր վերջին ոյժը հաւաքելով նստեց անկողնում և թոյլ ձայնով թելադրեց հետեւեալը:

— Իմ բարեկամ Սանխօն, որին ցնորուած ժամանակս իմ զինակիր էի կանչում, թոյնում եմ երկու հարիւր ոսկի, որ խսկոյն կհատուցանէք իմ սեպականութիւնիցս:

— Ոչ տէր, ընդհատեց Սանխօն. դուք չեք մեռնի,

ես, դժբաղտս, ես եմ մեղաւորը, որ իմ տէրս այս
դրութեան մէջն է, ես ձեր վերջին մենամարտու-
թեան ժամանակ վաս թամբեցի Ռօսինանոր, տէր.
իմ մեղն էր, որ գուք յաղթուեցաք:

— Ծնորհակալ եմ, իմ բարի Սանխօ, Հնորհակալ
եմ, ցածր ձայնով ասաց հիւանդը. գու այնքան եր-
կար ժամանակ ես ինձ յնորուած տեսել որ այժմ
այլ ևս չես կարող հաւատալ թէ ես ինձքի եմ ե-
կել: Թողնենք մեր հին յիմարութիւնները, առանց
հին բարեկամութիւնը մոռանալու: Այժմ քեզ լսողը
նախկին Դօն Քիշօտը չէ, թոյլ տուր ուրեմն, բարե-
կամ, որ ասելիքս շարունակեմ:

Այսուհետեւ Դօն Քիշօտը իւրեան ժոռանդ կար-
գեց իւր եղբօրադղկան այն պայմանով, որ նա տարե-
կան ոռօճիկ տար պառաւ մառանապետ կնօջ և 'ի
յիշատակ բարեկամութեան մասնաւոր նուելիներ տուաւ
Սիմէօն Կարրասկօին, Նիկօլս սափրիչին ու զատաւու-
րին, որին և նշանակեց իւր կտակակատար: Նա վեր-
ջուցը իւր խօսքը, ներողութիւն խնդրելով իւր ցոս-
րուած ժամանակ նոյա տուած վաս օրինակների հա-
մար: Եզր նօտարիուսը կատարեց իւր տիտուր պար-
տաւորութիւնը, Դօն Քիշօտը կամեցաւ ճաշակուել և
այս պարաքը այնպէս ջերմեռանդութեամբ ու բարե-
պաշտութեամբ կատարեց, որ լնդհանուր զարմանք
ու ցաւակցութիւն զարթեցրեց ամենի մէջ: Երեկո-
յեան բոլորվին թուլանալով, նա հոգին աւանդեց:
Լամանչեցի հերոսին փառաւոր կերպով թաղեցին ու
Սիմէօն Կարրասկօն տապանագիր զրեց նորա գերեզ-
մանի վերայ: Խոկ նորա զինակիր Սանխօն առաջուած
պէս սկսաւ երկրագործութեամբ պարապել և ապ-
րում էր երջանիկ Հնորհիւ այն ժամանդութեան, որ
թողեց նորան իւր տէրը և դքսուհու ընծայած եր-
կու հարիւր ոսկու, որնոր այնուհետեւ ևս չմոռացաւ
Բարատարիայ կղզու նախկին նահանգապետին:



- 31.000 -

ՀՀ Ազգային գրադարան



NL0935443

11

10240

H